ՀԱՅՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմողներ՝ Լիլիթ Աշոտի Տեր - Գրիգորյան
Անժել Ներսեսի Քյուրքչյան

ԷԴԻԹ
ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ՀՏԴ 908
ԳՄԴ 63.3
Հ 304

Հայրենի պատմություններ/ Կազմողներ՝ Լիլիթ Աշոտի Տեր-Գրիգորյան,
Հ 304 Անժել Ներսեսի Քյուրքչյան,- Եր.: Էդիթ Պրինտ, 2017,- 312 էջ:

ՀՏԴ 908
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-75-157-3

Կազմի վրա՝ դրվագներ Ջ.Ֆուզարոյի «Տիգրան Մեծը իրեն շրջապատող չորս թագավորների հետ» նկարից և Պ.Մուլիար-Սանսոնի «Երկրային դրախտի քարտեզն ըստ Մովսեսի» քարտեզից:

We express our deepest appreciation to Amos Chappel, a photographer from New Zealand, for kindly providing us the stunning photographs of Historical Armenia [See pages 21, 55/Al.Tamanyan/, 69, 70, 138, 139, 166, 251 (Geghard), 277, 283].

© Էդիթ Պրինտ

Հայրենի պատմությունների այս հավաքածուն մաս է կազմում «Ճանաչի՛ր երկիրը քո» մատենաշարի և հասցեագրված է ձեզ, սիրելի՛ հայ պատանիներ:

Հայրենիքին ու ժողովրդին նվիրված զավակ լինելու համար մարդը պետք է ճանաչի իր երկիրն ու իր ժողովրդին, նրա պատմության հերոսական էջերն ու իրենց կյանքը արժանապատվորեն ապրած՝ հայրենիքին ու ժողովրդին ծառայած որդիներին:

Մարդկային ազնիվ ու վեհանձն արարքները, անձնազոհ ու բարձր արժեքների հետևող մարդկային կերպարները ձեր մեջ անպայմանորեն կծնեն ոչ միայն հիացումի, հպարտության ու խոնարհումի զգացումներ, այլև այդ վեհին հետևելու և հավերժորեն ճշմարիտ արժեքները կյանքում որպես ուղենիշ ընտրելու ու դավանելու համոզում:



ԳԻՐՔԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻՆ

Մի օր Հայությունը պիտի նորի թրքության, բայց ո՛չ ծունկի եկած նրա առջև՝ պարտվելուց հետո, այլ նրան ծնկի բերած՝ ծեծելուց հետո:

Գարեգին Նժդեհ

Արշավիր Գաբուճյան

ՔԱԼՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ

Ցո՛ւյց տվեք տեղը այն հողակտորի, զոր մերը կդավանինք: Աշխարհագրության աշակերտի նման մեր աչքերը կսահեցնենք երկրագունդի գունագեղ երկիրներու վրայեն՝ սուզվելով ծով-օվկիաններու կապույտին մեջ, կրկին նավարկելով, անցնելով նոր ափեր, նոր որոնումի տենդով բռնված: Մեր մատները զսպանակի պես արագ ու փոքր շրջապտույտով կուզեն կետ մը գտած ըլլալ ու բռնել, և այդ կետին վրա կանգնիլ: Դժվար է, չէ՞... Գտա՞ք. միգուցե... Սակայն այդ հողակտոր-հայրենիքը կետ չէ, քանզի կետը թեկուզ տեսանելի է ու ըմբռնելի, բայց ոչ կայանելի ու բնակելի... Հայրենիքը ուրվագիր թե ուրվագիծ բևեռներ չունի, ունի *ոգեղեն բևեռներ*, որոնք կհասնին այնտեղ, որտեղ մարդեր կան, մոռցված հայ մը կա... Հայրենիքը ես եմ, դուն ես՝ ընտանիք, ծնող. թավալվող պատմություն՝ ոգեղեն և նյութացյալ մշակույթ, հայեն հայը ընթացող:

Մեր Հայրենիքը ՄԱՐԴՈՒ Հայաստանն է:

Չի կանգնիր մեկ կետի վրա առանձին արձանացած. ճանապարհ է՝ անվերջանալի, քալող՝ ո՛չ իրմե դուրս, անբաժան ու անկորուստ իրմե, այլ գացող-հասնող հո՛ն, ուր հայ կա, գտնելու զինք, գուցե չբերելու իր հետ, բայց զինք դարձնելու հավերժի ճամփորդ՝ իր նման անուն անձերուն հետ թափորելով: Հայրենիքը մնացողներունը չէ՛ միայն, այլ նաև գացողներունը, հայրենիքը վերադարձողներունը չէ՛, այլ հեռացողներունը, որովհետև հայրենիքը քալող ճանապարհ է՝ հորիզոնե հորիզոն, լուսաբացե մինչ մայրամուտ, տեսածիրի մեջ հար պահած ելակետ-մեկնակետ շրջանակը՝ հավասարապես գրկելով բոլորին:

Երկրագունդի վրա դյուրին կգտնեք տեղը այս հողակտորին... Եթե փորձեք գտնել, թե ինձմե ու քեզմե անցնող այս ճանապարհը ուրկե՛ կուգա և ո՛ւր կերթա, որովհետև

Մեր Հայրենիքը «Քալող Հայաստանն» է:

Հիմա, ըսէ՛ք անունը այն հողակտորին, որ մենք ենք մկրտել: Նոյի՞ երկիր, Արարատի՞ երկիր, մեռնող-հառնո՞ղ երկիր...

Մեր Հայրենիքը ՈԳԻԻ Հայաստանն է:

Հայրենիքի ճանապարհին դիտեր եմ լուռ գյուղացին, լուռ քաղաքացին, լուռ գրողը, լուռ քահանան, լուռ բարերարը, լուռ ուսուցիչը, լուռ աշակերտը և փորձեր այդ լռությունը լսել... *Հայրենիքը մարդու և ոգիի պետք ունի:*

Հայաստանը քալող մարդու երկիր է, մարդը մարդուն բերող, հայը հայուն տանող: Այս երկարող անպարագիծ ճանապարհին վրա ամեն հայ կրնա հայանալ ու մարդանալ, երբ իր նմանին ձեռքը զգա իր ձեռքին մեջ, իր հոգին գրկված զգա հոգենման մարդով և իր նմանին աչքերուն մեջ ինքզինք տեսնե ու գտնե:

Լույսին երթալու համար ուղի է պետք, մարդուն հասնելու համար ճամփա է պետք, ինքզինքդ գտնելու համար շավիղ է պետք, և

Մեր Հայրենիքը «Քալող Հայաստանն» է:

ՄԵՐ ԴՅՈՒՅԱՁՈՒՆ ՆԱԽՆԻՆԵՐԸ

Դարեր առաջ, երբ հայ ժողովուրդը գրել-կարդալ չգիտեր, գուսանների երգած հրաշալի առասպելներից էր իմանում աստվածների և նրանցից սերվածների մասին, գեղեցիկ վեպերից՝ հայրենի հերոսների մասին։ Դրանք խորը դրոշմվում էին լսողների մտքերում և որդուց որդի անցնում՝ երբեմն ավելի գեղեցկանալով, երբեմն էլ խառնաշփոթվելով։ Այդ ավանդություններից էր միայն Հայաստանի զավակն իմանում իր աստվածների, նահապետների և թագավորների մասին։

Ըստ Ստեփանոս Լիսիցյանի



Ըստ Աստվածաշնչի

ՉՐԵՂԵՂ

Այս է Նոյի պատմությունը: Նոյը կատարյալ և արդար մարդ էր իր ազգի մեջ: Նոյը սիրելի եղավ Աստծուն: Նոյը ծնեց երեք որդի՝ Սեմին, Քամին, Հաբեթին: Ապականվեց երկիրն Աստծու առաջ, աշխարհը լցվեց անարդարությամբ: Տեր Աստված տեսավ, որ երկիրն ապականված է, որովհետև երկրի վրա ամեն էակ ապականել էր իր ճանապարհը: Տեր Աստված ասաց Նոյին. «Բոլոր մարդկանց վերջը հասել է, որովհետև երկիրը լցվել է նրանց անիրավություններով: Ես կոչնչացնեմ նրանց ու երկիրը: Արդ, դու քեզ համար քառակուսի փայտից տապան կշինես: Տապանը բաժանմունքներով կպատրաստես և ներսից ու դրսից կուպրով[1] կծեփես: Տապանն այսպես կշինես. թող երեք հարյուր կանգուն[2] լինի տապանի երկարությունը, հիսուն կանգուն՝ լայնությունը, և երեսուն կանգուն՝ բարձրությունը: Տապանն աստիճանաբար նեղացնելով կշինես, այնպես, որ նրա ծածկը մի կանգուն լինի: Տապանի դուռը կողքից կանես. ներքնահարկ, միջնահարկ ու վերնահարկ թող ունենա տապանը: Իսկ ես, ահա, ջրով կհեղեղեմ երկիրը՝ ոչնչացնելու համար երկնքի տակ գտնվող ամեն մի շնչավոր էակ. և այն ամենը, ինչ կա երկրի վրա, կոչնչանա: Ես իմ ուխտը կհաստատեմ քեզ հետ, և տապան կմտնես դու, քեզ հետ նաև՝ քո որդիները, քո կինը և քո որդիների կանայք: Բոլոր կենդանիներից, բոլոր գազաններից ու բոլոր էակներից երկու-երկու կմտցնես տապան, որ նրանք կերակրվեն քեզ հետ: Թող դրանք արու և էգ լինեն: Ամեն տեսակ թռչուններից, ամեն տեսակ կենդանիներից, երկրի ամեն տեսակ սողուններից՝ բոլորից երկու-երկու, արու և էգ, թող մտնեն քեզ հետ, որ կերակրվեն քեզ հետ: Եվ դու կվերցնես բոլոր այն ուտելիքներից, որոնցով պիտի սնվեք: Դրանք կկուտակես քեզ մոտ, որպեսզի քեզ ու նրանց համար կերակուր

---

[1] **կուպր** – հանքային վառվող հեղուկ կամ պինդ մարմին, որի տեսակն է նաև ասֆալտը:

[2] **կանգուն** – երկարության չափ՝ 51.8 սմ:

Համաշխարհային ջրհեղեղ, Հովհաննես Այվազովսկի,1864թ.

լինեն»: Եվ Նոյն արեց այն ամենը, ինչ պատվիրեց նրան Տեր Աստված: Նա այդպես էլ արեց:

Տեր Աստված ասաց Նոյին. «Դու և քո ողջ ընտանիքը մտե՛ք տապան, որովհետև մարդկային ցեղի մեջ միայն քե՛զ գտա արդար իմ հանդեպ: Անպիղծ բոլոր կենդանիներից յոթ-յոթ՝ արու և էգ, կմտցնես քեզ հետ, իսկ պիղծ բոլոր կենդանիներից երկու-երկու՝ արու և էգ, նաև երկնքի անպիղծ թռչուններից յոթ-յոթ՝ արու և էգ, իսկ պիղծ թռչուններից երկու-երկու՝ արու և էգ, որ սերունդ պահպանվի ողջ երկրի վրա: Յոթ օր հետո ես քառասուն օր ու քառասուն գիշեր անձրև պիտի թափեմ երկրի վրա և երկրի երեսից պիտի ջնջեմ իմ ստեղծած ամեն մի էակ»: Նոյն արեց այն ամենը, ինչ պատվիրեց Տեր Աստված: Նոյը վեց հարյուր տարեկան էր, երբ ջրհեղեղ եղավ երկրի վրա: Ջրհեղեղի պատճառով Նոյի հետ տապան մտան նրա որդիները, նրա կինն ու նրա որդիների կանայք: Անպիղծ թռչուններից ու պիղծ թռչուններից, երկրի վրա սողացող բոլոր սողուններից երկու-երկու՝ արու և էգ, Նոյի հետ մտան տապան, ինչպես պատվիրել էր նրան Տեր Աստված: Յոթ օր հետո երկրի վրա ջրհեղեղ եղավ: Նոյի կյանքի վեցհարյուրերորդ տարում, երկրորդ ամսի քսանյոթին ժայթքեցին ստորգետնյա բազում աղբյուրներ, բացվեցին երկնքի ջրվեժները: Երկրի վրա անձրև

թափվեց քառասուն օր ու քառասուն գիշեր: Այդ օրը Նոյի հետ տապան մտան Սեմը, Քամը, Հաբեթը՝ Նոյի որդիները, Նոյի կինը և նրա որդիների երեք կանայք: Նրանք և ամեն տեսակ գազան, ամեն տեսակ անասուն, երկրի վրա սողացող ամեն տեսակ սողուն և ամեն տեսակ թռչուն մտան տապան՝ Նոյի մոտ, երկու-երկու բոլոր այն էակներից, որոնց մեջ կենդանությունն շունչ կար: Տապան մտնող էակները արու և էգ էին, ինչպես պատվիրել էր Աստված Նոյին: Տեր Աստված նրա ետևից փակեց տապանը:

Երկրի վրա քառասուն օր ու քառասուն գիշեր ջրհեղեղ եղավ: Հորդացավ ջուրն ու բարձրացրեց տապանը, և տապանը կտրվեց գետնից: Ջուրն ավելի ու ավելի վարարեց, ողողեց երկիրը, և տապանը լողաց ջրերի վրա: Ջուրն այնքան սաստկացավ երկրի վրա, որ ծածկեց երկնքի տակ գտնվող բոլոր բարձրաբերձ լեռները: Տասնհինգ կանգուն ավելի վեր բարձրացավ ջուրը և ծածկեց բոլոր լեռները: Մեռան երկրի վրա շարժվող բոլոր կենդանի էակները՝ թռչունները, անասուններն ու գազանները, երկրի վրա սողացող բոլոր սողուններն ու բոլոր մարդիկ: Ցամաքի վրա եղած ամեն բան, որ կենդանի շունչ ուներ իր ռունգերի մեջ, ոչնչացավ: Աստված բնաջնջեց երկրի երեսին գտնվող ամեն մի էակ՝ մարդուց մինչև անասուն, սողուններից մինչև երկնքի թռչունները: Նրանք վերացան երկրի երեսից: Կենդանի մնաց միայն Նոյը, նաև նրանք, որ նրա հետ տապանում էին: Ջուրը հարյուր հիսուն օր ողողեց երկիրը:

Աստված հիշեց Նոյին, նրա հետ տապանում գտնվող բոլոր գազաններին, բոլոր անասուններին ու բոլոր թռչուններին: Աստված հողմ բարձրացրեց երկրի վրա, և անձրևը դադարեց: Փակվեցին ստորգետնյա աղբյուրներն ու երկնքի սահանքները, դադարեց նաև երկնքից թափվող անձրևը: Ջուրը գնալով իջնում, քաշվում էր երկրի վրայից, և հարյուր հիսուն օր անց այն նվազեց: Յոթերորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա: Ջուրը մինչև տասներորդ ամիսը քաշվում էր, նվազում: Տասնմեկերորդ ամսի առաջին օրը երևացին լեռների գագաթները:

Քառասուն օր հետո Նոյը բացեց իր կառուցած տապանի պատուհանը: Նա արձակեց մի ագռավ, որը գնաց, բայց չվերադարձավ, մինչև որ ջուրը ցամաքեր երկրի վրայից: Հետո նա արձակեց մի աղավնի՝ տեսնելու, թե ջրերը քաշվե՞լ են երկրի

երեսից: Աղավնին, իր ոտքը դնելու տեղ չգտնելով, վերադարձավ նրա մոտ՝ տապան, որովհետև ջուրը դեռ ծածկել էր ողջ երկիրը: Նոյը երկարեց ձեռքը, բռնեց նրան և բերեց իր մոտ՝ տապան: Նա սպասեց ևս յոթ օր ու տապանից դարձյալ արձակեց աղավնուն: Աղավնին նրա մոտ վերադարձավ երեկոյան: Նրա կտուցին ձիթենու մի շյուղ կար: Նոյը դրանից հասկացավ, որ ջրերը քաշվել են երկրի վրայից: Նոյն սպասեց ևս յոթ օր ու նորից արձակեց աղավնուն, որն այլևս նրա մոտ չվերադարձավ:

Նոյի կյանքի վեցհարյուրմեկերորդ տարում, առաջին ամսի առաջին օրը ջրերը քաշվեցին երկրի վրայից: Նոյը բացեց իր կառուցած տապանի ծածկը և տեսավ, որ ջուրը քաշվել է երկրի երեսից: Երկրորդ ամսի քսանյոթերորդ օրը երկիրը ցամաքեց:

Տեր Աստված Նոյին ասաց. «Դո՛ւրս եկեք այդ տապանից դու, քո կինը, քո որդիները և քո որդիների կանայք, նաև քեզ հետ եղող բոլոր գազանները, բոլոր էակները՝ թռչուններից մինչև անասունները: Դո՛ւրս հանիր քեզ հետ նաև երկրի վրա սողացող բոլոր սողուններին, նրանք թող սողան երկրի վրա: Աճեցե՛ք և բազմացե՛ք երկրի վրա»: Դուրս ելան Նոյը, նրա հետ նաև իր կինը, իր որդիներն ու իր որդիների կանայք: Երկրի բոլոր գազանները, բոլոր սողուններն ու բոլոր թռչունները՝ իրենց տեսակներով, դուրս ելան տապանից:

Նոյը զոհ է մատուցում

Նոյը զոհասեղան շինեց Աստծու համար: Նա առավ բոլոր տեսակի անպիղծ անասուններից, բոլոր տեսակի անպիղծ թռչուններից և ողջակիզեց զոհասեղանի վրա: Եվ Տեր Աստված հոտոտեց անուշ բույրը: Տեր Աստված իր մտքում ասաց. «Մարդկանց չար արարքների համար ես երկիրն այլևս չեմ անիծի, որովհետև մարդկանց միտքը մանկուց չարի ծառայության մեջ է: Ես այլևս ոչ մի կենդանի էակի չեմ պատուհասի, ինչպես արեցի: Այսուհետև, քանի դեռ կա երկիրը, թող չդադարեն սերմն ու հունձը, ցուրտն ու տոթը, ամառն ու գարունը, ցերեկն ու գիշերը»:

Աստծու ուխտը Նոյի հետ

Աստված, օրհնելով Նոյին ու նրա որդիներին, ասաց նրանց. «Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրն ու տիրեցեք դրան: Ձեր ահն ու երկյուղը թող լինի երկրի բոլոր գազանների, երկնքի բոլոր թռչունների, երկրի բոլոր զեռունների և ծովի բոլոր ձկների վրա, որ ենթարկել եմ ձեզ: Ամեն մի կենդանի զեռուն թող կերակուր լինի ձեզ, ինչպես խոտն ու բանջարն եմ տվել: Կենսատու արյուն պարունակող միս չուտեք, քանզի ես էլ ձեր կենսատու արյունը կպահանջեմ, բոլոր գազանների, ինչպես նաև մարդու միջոցով կպահանջեմ այն: Մարդու միջոցով պիտի պահանջեմ իր եղբոր հոգին: Ով թափի մարդու արյունը, նրա արյան փոխարեն թող թափվի իր արյունը, որովհետև Աստծու պատկերով եմ ստեղծել ես մարդուն: Իսկ դուք աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը և բազմացեք դրա վրա»:

Տեր Աստված, դիմելով Նոյին ու նրա որդիներին, որոնք նրա հետ էին, ասաց. «Ահա ես ուխտ եմ դնում ձեզ հետ, ձեզնից հետո եկող ձեր սերունդների հետ, ձեզ հետ եղող բոլոր կենդանի էակների հետ՝ թռչունների, անասունների, երկրի բոլոր գազանների, այդ տապանից դուրս եկած բոլորի և երկրի բոլոր կենդանիների հետ: Ես ուխտ եմ դնում ձեզ հետ. այլևս ոչ մի էակ չի մեռնի ջրհեղեղից, ողջ երկիրը ոչնչացնող ջրհեղեղ չի լինի այլևս»: Տեր Աստված ասաց Նոյին. «Իմ ու ձեր միջև, ձեզ հետ եղող ամեն կենդանի էակի միջև գալիք բոլոր սերունդների համար իմ հաստատած ուխտի նշանն այս է. իմ ծիածանը կկապեմ ամպերի մեջ: Եվ դա թող լինի իմ ու ողջ երկրի միջև հավիտենական ուխտի նշանը: Երբ երկրի վրա ամպեր կուտակեմ, իմ ծիածանը թող երևա ամպերի մեջ: Այնժամ ես կհիշեմ իմ ուխտը, որ հաստատել եմ իմ ու ձեր միջև և շնչավոր բոլոր էակների միջև: Այլևս ջրհեղեղ չի լինի, որպեսզի բոլոր էակները չոչնչանան: Թող իմ ծիածանը լինի ամպերի մեջ, որպեսզի ես տեսնեմ այն և հիշեմ իմ ու երկրի վրա գտնվող բոլոր շնչավոր էակների միջև իմ հաստատած հավիտենական ուխտը»: Տեր Աստված ասաց Նոյին. «Այս է նշանն այն ուխտի, որ հաստատեցի իմ ու ձեր միջև և երկրի վրա գտնվող բոլոր էակների միջև»:

Նոյի՝ տապանից դուրս եկած որդիներն էին Սեմը, Քամը և Հաբեթը: Այս երեքն էին Նոյի որդիները, և ժողովուրդները, սրանցից սերվելով, տարածվեցին ողջ երկրի վրա:

... Ջրհեղեղից հետո որդիներ ծնվեցին նրանց:

Հաբեթի որդիներն էին Գամերը, Մագոգը, Մադան, Հավանը, Ելիսան, Թոբելը, Մոսոքը և Թիրասը: Գամերի որդիներն էին Ասքանազը, Ռիփաթը և Թորգոման:

Թորգոմից ծնվեց ***Հայկը***...

Նոյը իջնում է Արարատից, Հովհաննես Այվազովսկի, 1889թ.



Արարատ լեռը

Երևանի բարձրադիր վայրերից մեկում՝ Նոր Նորքում, ժայռեղեն պատվանդանին կանգնած է ինքնատիպ մի հուշարձան։ Հնագույն ժամանակների տարազով մի վիթխարի դյուցազն, հսկայական աղեղը մինչև վերջ ձգած, նշան է բռնել հեռվում գտնվող ինչ-որ կետի։ Ահա, ուր-որ է կարձակվի նետը։ Դատելով աղեղնավորի մարտական անթերի կեցվածքից, քաջավարժ նշանառությունից, դեմքի ինքնավստահ, վեհ ու վճռական արտահայտությունից, զգում ես, որ նետը պիտի շառաչյունով սլանա դեպի նշանակետը և շամփրի, ում որ պետք է...

Մոտակայքով անցնող յուրաքանչյուր ոք, դիտելով հոյակապ արձանը, նորից ու նորից լցվում է հպարտության զգացումով. ահա թե ինչպի՜սի՜ն է եղել մեր հեռավոր նախնին, մեր ժողովրդի անվանադիրը՝ **Հայկ Նահապետը**։

Նրա մասին գիտեն բոլորը՝ թե՛ մեծ, թե՛ փոքր։ Գիտեն, թե ո՛ւմ դեմ է մարտի ելել նա և ինչո՛ւ։ Գիտեն, որ դա եղել է հազարամյակներ առաջ։

Այնքան հին է Հայկի պատմությունը, որ շատերին կարող է թվալ առասպել, հեռավոր ժամանակներում հորինված մի հրաշալի դյուցազներգություն։ Բայց՝ ո՛չ։ Հայկի մասին պատմությունը բացարձակ իրողություն է։ Հայկը իրական կերպար է, պատմական դեմք։ Նրա հերոսական գործունեությունը թողել է անջնջելի հիշատակներ, անհերքելի վկայություններ։ Նրա անունը դարձել է մի ամբողջ ժողովրդի հերոսական և անկոտրում ոգու խորհրդանիշ։

Մեր ժողովուրդը քաղաքակիրթ աշխարհին ներկայանում է ավելի քան հինգհազարամյա վկայված պատմությամբ։ Այդ պատմության մեջ իր որոշակի տեղն ունի Հայկյանների թագավորական հարստությունը (դինաստիան)՝ իր ավելի քան վեց տասնյակ գահակալներով։ Մեծ բարեբախտություն է, բացառիկ բարեբախտություն, որ հայկական անտիկ պատմագրության մեջ պահպանվել և մեզ են հասել Հայկյանների թագավորական հարստության ոչ միայն բոլոր ներկայացուցիչների անունները, այլև նրանցից ամենանշանավորների գործունեության մանրամասն շարադրանքը։ Դա շարադրանքն է միանգամայն հավաստի մի պատմության, որի բազմաթիվ դրվագներ վկայվում ու հաստատվում են Հին Աշխարհի և միջնադարի հայ և օտար պատմագիրների աշխատություններով, Աստվածաշնչով, ինչպես նաև գիտական նոր հայտնագործություններով։

Հայկ Խաչատրյան

ՀԱՅԿ

Մեզ հայտնի են Հայկի հայրական գծով նախնիները, քանի որ Հին Աշխարհում կանայք ժամանակագրության մեջ չէին հիշատակվում:

Հայկը որդին էր ԹՈՐԳՈՄԻ:

Թորգոմը՝ ԳԱՄԵՐԻ:

Գամերը որդին էր ՀԱԲԵԹԻ:

Հաբեթը որդին էր ՆՈՅԻ:

Հին պատմագիրները Հայկին անվանել են *Հաբեթյան* և *Հաբեթածին*, քանի որ մեր ազգը երկար ժամանակ կոչվել է *Հաբեթյան ազգ*:

Մեր ազգի անվանադրման գործում իր դրոշմն է թողել նաև Հայկի հոր՝ Թորգոմի անունը: Հաբեթի նման՝ Թորգոմը ևս մեծագործ նահապետ էր, այսինքն՝ ցեղի առաջնորդ էր, թագավոր, որի համար մեր ազգը կոչվում էր նաև *Թորգոմյան ազգ*, մեր երկիրը՝ *Թորգոմա Տուն*:

Հայկը մեր երկրի ետջրհեղեղյան Հայաստանի առաջին թագավորներից էր, Թորգոմա Տան տիրակալը՝ Թորգոմից հետո:

Նա մեկն էր ժամանակի ամենահայտնի հսկաներից: Հռչակված էր ոչ միայն ուժով, այլև խիզախությամբ ու ազատասիրությամբ:

Գեղեցիկ էր Հայկը՝ հրաշալի գանգուրներով, խայտակն ու հաստաբազուկ:

Ամենքը պատկառում ու վախենում էին նրանից, որովհետև նա դիմադրում էր և չէր թողնում, որ հսկաներից որևէ մեկը իշխանություն հաստատեր բոլորի վրա:

Հայկը նշանավոր բնակավայրեր կառուցեց: Երկրի հարավում՝ լեռներով հարուստ մի դաշտավայրում, նա հիմնեց բնակելի կալվածքներ՝ դրանք ժառանգություն տալով իր թոռ Կադմոսին: Այդպես առաջացավ *Կադմոսի Տունը*՝ «Տունն Կադմեայ»:

Այդտեղից Հայկը գնաց հյուսիս-արևմուտք՝ բնակություն հաստատելով դարձյալ մի բարձրավանդակ դաշտավայրում և այն անվանելով *Հարք*, որ նշանակում է «Հայրեր»: Հարքը խորհրդանշում էր այն տեղը, որտեղ դարերով ապրել էին Թորգոմի

Հայկ Նահապետ, Կառլեն Նուրիջանյան, Երևան, 1970թ.

Տան սերունդների նահապետները, հայրերը. «...անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք ազգի տանն Թորգոմայ»[1]:

Հայկը շինեց նաև մի մեծ գյուղ, որն իր անունով կոչեց *Հայկաշեն*: Հայկն զբաղված էր երկիրը կառուցելով և ամեն կերպ խուսափում էր պատերազմներից:

Բայց ահա գլուխ բարձրացրեց Բաբելոնի տիրակալ Բելը: Տիտանների ցեղից էր սա և կամենում էր տիրել բոլոր հսկաներին, դառնալ բոլոր երկրների միահեծան տերը: Իր ահեղ բանակներով նա նվաճեց արևելքը, հարավը և արևմուտքը՝ բոլորի վրա հաստատելով իր թագավորությունը: Չէր նվաճված միայն հյուսիսի երկիրը, որը պատկանում էր Հայկին:

Ամբարտավան Բելը բոլոր ազգերին հրաման ուղարկեց՝ պահանջելով պաշտել իրեն իբրև աստծո, երկրպագել իր արձանին և զոհեր մատուցել: Բոլոր ազգերը շտապով կատարեցին նրա կամքը: Միայն Հայկը հրաժարվեց նրան ծառայելուց: Նա իր երկրում չկանգնեցրեց Բելի արձանը և չմեծարեց նրան: Զարացավ Բելը. ոխով լցվեց: Իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանցով ուղարկեց Հայկի մոտ:

Նրանք եկան և հայտնեցին հնազանդության կոչող Բելի կամքը. «Բա՛վ է ապրես ցրտի ու սառնամանիքի մեջ. ջերմացրո՛ւ և մեղմի՛ր քո հպարտացած բնավորության ցրտությունը և, ինձ հնազանդելով, ապրի՛ր անհոգ, որտեղ որ իմ երկրում կհաճես բնակվել»:

Հայկը խիստ պատասխանով ետ դարձրեց Բելի պատգամաբերներին, որոնք վերադարձան Բաբելոն:

Բելը զորք ժողովեց և մեծ բազմությամբ եկավ հասավ հյուսիս՝ Թորգոմյանների երկիր՝ հուսալով, թե կհաղթի Հայկին:

Առնելով Բելի հարձակման լուրը՝ Հայկը՝ ուշիմ և խոհեմ հսկան, շտապեց հավաքել իր որդիներին ու թոռներին, ոչ մեծ թվով քաջ ռազմիկների ու աղեղնավորների և շատ ուրիշների, որ իր ենթականերն էին, և գնաց հասավ ափը մի ծովակի, որի ջուրն աղի էր[2], և ձկները՝ մանր: Այստեղ հավաքեց իր զորքը և ասաց բոլորին.

– Երբ մենք հանդիպենք Բելի ամբոխին, ջանացե՛ք դիպչել այն տեղին, ուր ամբոխի մեջ կգտնվի Բելը իր քաջերի խմբով: Կա՛մ մենք կմեռնենք, և մեր հարազատները կընկնեն Բելի ծառայության տակ, կա՛մ մեր մատների հաջողությունը նրա վրա ցուցադրելով՝ կցրենք ամբոխը, և մենք կլինենք հաղթություն շահողը:

Հայկն իր ժողովրդով գնաց և հասավ բարձր լեռներով շրջապատված մի դաշտաձև տեղ: Հարմար դասավորվելով բարձրավանդակում՝ նրանք հակառակ կողմում տեսան Բելի հրոսակների անկարգ ամբոխը, իսկ Բելը

---

[1] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, գիրք Առաջին, գլ. Ժ:

[2] Խորենացին նկատի ունի **Վանա լիճը**, որը հնում կոչվում էր նաև **Բզնունյաց ծով**:

մի ժայռի վրա կանգնած էր իր պահապանների խմբով:

Երկու հսկաները հեռվից տեսան ու ճանաչեցին միմյանց:

Հայկը որոտընդոստ ձայնով դիմեց դեպի Բելի կողմը.

– Ինչո՞ւ ես համառորեն գալիս իմ ետևից, վերադարձի՛ր քո երկիրը, որպեսզի չմեռնես այսօր իմ ձեռքով, որովհետև իմ նետերից ոչ մեկը չի վրիպում:

Նույնպես որոտալով՝ Բելը պատասխանեց.

– Նրա համար, որպեսզի չընկնես իմ զինվորների ձեռքը և չսպանվես, հանձնվի՛ր ինձ և իմ տանը ապրի՛ր խաղաղությամբ՝ իմ տան որսկան ծառաների գործերը վարելով:

Պատասխանեց Հայկը և ասաց նրան.

– Շո՛ւն ես դու, և շան երամակից եք դու և ամբոխը քո: Եվ դրա համար հենց այսօր քեզ վրա կթափեմ իմ կապարճը[1]:

Հայկն աչքը չէր կտրում Բելից, ով կանգնած էր իր դիտանոցում՝ զինավառ ջոկատի առջևում, զորքերի ամբոխից բավական հեռու: Բելը հագել էր երկաթե գլխանոց՝ նշաններ կրող վերջերով, պղնձյա տախտակներ էր դրել թիկունքին ու կրծքին, սրունքներն ու թևերը պատել էր պահպանակներով, մեջքը գոտևորել, ձախ կողմից կախել էր երկսայրի սուր, աջ ձեռքում ուներ հսկայական նիզակ, ձախում՝ վահան: Իր աջ և ձախ կողքերում կարգել էր ընտիր զորականների:

Տիտան Բելին տեսնելով այդպես զինավառ՝ Հայկն իր աջ կողմում կանգնեցրեց Արամանյակ որդուն՝ երկու եղբայրներով, իր երկու ուրիշ որդիներին և թոռանը՝ Կադմոսին, կարգեց իր ձախ կողմում, որովհետև սրանք քաջավարժ աղեղնավորներ և սուսերամարտիկներ էին: Հայկն անցավ նրանց առջև, բազմությունը եռանկյունաձև դասավորեց իր ետևում և հանդարտ ընթացքով շարժվեց առաջ:

Երկիրը դղրդաց, երբ երկու հսկաների կողմերն իրար դիպան իրենց ամբողջ սպառազինությամբ: Երկու կողմից էլ բազում հսկայազուն մարդիկ, սրի բերանի հանդիպելով, կործանվեցին՝ տապալվելով գետին:

Երկու կողմում էլ մարտը մնում էր անպարտելի:

Զարհուրեց Բելը՝ տեսնելով նման անսպասելի իրադրություն: Իր դիտանոցից ետ-ետ քաշվելով՝ նա գնաց դեպի ամբոխը՝ հույս ունենալով, թե նրա մեջ ապահով կլինի, մինչև որ կհասնի բովանդակ զորքը, և ճակատամարտը կվերսկսվի:

Հայկն իսկույն զգաց հակառակորդի տագնապն ու նպատակը և նետվեց առաջ:

Հարմար պահ ընտրելով՝ Հայկը կանգ առավ, ուսից վար բերեց կապարճը, լրիվ ձգեց հզոր հեսանով[2] մայրափայտյա լայնալիճ հսկայական աղեղը և երեքթևյան նետը դիպցրեց Բելի կրծքի երկաթե տախտակին:

---

[1] ***կապարճ*** – նետ պահելու փայտե կամ կաշվե ամաան, նետաման:

[2] ***հեսան*** – կարծր քարի տեսակ, որն օգտագործում են գործիքների բերանը սրելու համար:

Նետը շեշտակի անցավ թիկունքի միջով ու խրվեց գետնի մեջ: Աստված հայտարարված մսեղեն արձան Բելը կործանվեց՝ զարկվելով գետին և շունչը փչելով:

Բաբելական ամբոխը քար կտրվեց:

Ապա բաբելացիք սկսեցին փախչել՝ յուրաքանչյուրը դեպի իր երեսի կողմը:

Թորգոմյանները հետամտեցին[1] և նրանցից խլեցին ձիերի, ջորիների և ուղտերի երամակները:

Այդ պատմական ճակատամարտը տեղի ունեցավ նախքան Քրիստոսը 2492 թվականի օգոստոսի 11-ին:

Ճակատամարտի վայրում՝ Վանա ծովի արևելյան ափին, Հայկը դաստակերտ[2] կառուցեց և իր անվամբ կոչեց *Հայք*՝ ի հիշատակ պատերազմում շահած հաղթության: Հետագայում այս ամբողջ գավառը մշտապես պահպանեց *Հայոց Ձոր* անվանումը: Իսկ բլուրը, ուր իր քաջամարտիկներով ընկավ Բելը, Հայկն անվանեց *Գերեզմանք* (Գերեզմաններ), որը հետագայում հայտնի է *Գերեզմանակք* անունով: Բայց Բելին այդտեղ չթաղեց, այլ դեղերով զմռսել[3] տվեց և հրամայեց տանել Հարք, այնտեղ թաղել նրան մի բարձր տեղում՝ ի տես իր կանանց և որդիների: Այդ տեղը *Նեբրովս*, հետագայում՝ *Նեմրութ* կոչված լեռն է:

Վերադառնալով Հարք՝ Հայկը երկար տարիներ ապրեց ու բարեշինեց երկիրը: Մեռնելիս Հայկը երկիրը և ամբողջ տոհմը հանձնեց Արամանյակին՝ նրան հրամայելով գնալ և ապրել երկրի հյուսիսային կողմում, ուր ինքը և իր նախնիները ապրել էին սկզբում:

Մեր ժողովրդի մարդիկ, որ մինչ այդ կոչվում էին Թորգոմյաններ, իրենց վերակոչեցին *հայկք*, այսինքն՝ հայկեր, Հայկի գավակներ, հայկազուններ, հայեր: Ի պատիվ Հայկի՝ Թորգոմա Տունը հետագայում վերանվանվեց *Հայք*, այսինքն՝ Հայերի երկիր, Հայկազունների երկիր, Հայաստան:

Ժողովուրդն իր մեծագործ թագավոր Հայկին անմահացրեց ոչ միայն երկրի վրա, այլև երկնքում՝ մի մեծ համաստեղություն կոչելով նրա անունով:

Դարեր անց հույները, որ իրենց մշակույթն ստեղծելիս շատ բան վերցրին Հին աշխարհի ժողովուրդներից, չզլացան Հայկի համաստեղությունը կոչել ընդամենը որսորդությամբ աչքի ընկած առասպելական կերպար Օրիոնի անունով:

Բարեբախտաբար, հինգերորդ դարում, երբ կաթողիկոս Սահակ Պարթևը, Հայոց նոր այբուբենի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը և մյուս մեծերը հայերեն թարգմանեցին Սուրբ Գիրք Բիբլիան և անվանեցին

---

[1] ***հետամտել*** – հետամուտ լինել՝ հալածել:

[2] ***դաստակերտ*** – *այստեղ*՝ գյուղ:

[3] ***զմռսել*** – դիակը զմուռսով՝ անուշահոտ խեժով մշակել՝ նեխումից պահպանելու համար:

Աստվածաշունչ, այնտեղ հիշատակված *Օրիոն* համաստեղությունը թարգմանեցին *Հայկի համաստեղություն*՝ վերականգնելով պատմական ճշմարտությունը:

Երախտապարտ ժողովուրդն այսքանով չբավարարվեց: Նա հաստատեց իր սեփական, ազգային-պետական տոմարը և այն ի պատիվ Հայկի՝ կոչեց *Հայկա թվական* կամ *Հայոց Բուն Թվական*, որի սկիզբն ընդունվեց նախքան Քրիստոսը 2492 թվականի օգոստոսի 11-ը, այսինքն՝ այն պատմական օրը, երբ Հայկը հաղթեց Բելին:

Հայկական ազգային տոմարի հիմքում ընդունվեց 1460 տարիներից բաղկացած մի կայուն ժամանակաշրջան, որը դարձյալ ի պատիվ Հայկի՝ կոչվեց *Հայկա շրջան*:

Նախքան Քրիստոսը 2492 թվականից մինչև մեր օրերը բոլորել է երեք Հայկա շրջան՝ նախքան Քրիստոսը 1032 թվականին, Քրիստոսից հետո 428 թվականին և 1888 թվականին: Քրիստոսից հետո 122 թվականին Հայկյան տոմարը ինչ-ինչ պատճառներով դադարեց գործածվելուց և վերստին գործադրության մեջ մտավ 554 թվականին՝ Դվինի եկեղեցական ժողովի որոշմամբ:

Ազգի հիշողության մեջ Հայկը դարեդար մնացել է նաև որպես անօրինակ ուժի տեր հսկա: Բնորոշ է, որ Հայոց Դարձի ականատես պատմիչ Ագաթանգեղոսը Տրդատ Մեծ արքային համեմատել է Հայկի հետ: Նկարագրելով նահատակ կույսերի տաճարների վկայարանների կառուցման համար Տրդատի՝ ութ վիթխարի քարեր բերելու տեսարանը՝ պատմիչը գրում է. «Արդ առեալ սկայազօրն հայկաբար զութ արձանսն ի վերայ իւրոց թիկանցն զայն դնէր, ստանձնեալ բերեալ ի վկայարան տաճարացն» («Արդ հսկայազորը, հայկաբար վերցնելով ութ քար, դրեց իր թիկունքի վրա և բերեց տաճարների վկայարանները»):

Հայկաբար մակդիրով առաջին քրիստոնյա պատմիչ Ագաթանգեղոսը փաստել է Հայկի, իբրև զորեղի, համազգային և համաժողովրդական չափանիշ լինելը:

Արդեն վեցերորդ հազարամյակն է, ինչ ժողովուրդը սիրով պահպանում է իր մեծ նախնի Հայկի անունը: Հայկը խորհրդանշում է խիզախության, հայրենասիրության և ազատության վսեմ գաղափարները: Ի հակադրություն Հայկի՝ *Բել* ասելով՝ մենք պատկերացնում ենք սնապարծ, փոքրոգի բռնակալ:

Հայկն ըստ ամենայնի սիրվել ու մեծարվել է նաև իր ժամանակակից կովկասյան ժողովուրդների և սրանց տիրակալների կողմից: Այդ մասին որոշակի և մանրամասն տեղեկություններ է հաղորդում 11-րդ դարի վրաց նշանավոր պատմագիր Լեոնտի Մռովելին: Իր հայտնի գրքում, որը կոչվում է «Քարթլիական թագավորների վարքը», Լեոնտի Մռովելին գրում է այն մասին, որ կովկասյան ժողովուրդները՝ հայերը, քարթլինները (վրացիները), ռանները, մովականները, մեգրելները և մյուսները,



Հայկի և Բելի ճակատամարտը, Ջուլիանո Զասսո, 1885թ.

միևնույն հոր զավակներ էին: Նրանց հայրը Թարգամոսն էր (Թորգոմը), որը Հաբեթի թոռն էր, այն Հաբեթի, որը Նոյի երեք հայտնի որդիներից մեկն էր:

Եթե հայոց պատմագիրներ Մովսես Խորենացին, Սեբեոսը և մյուսները գրել են Հայկի, նրա նախորդների ու հետնորդների մասին, ապա Լեոնտի Մռովելին հիշատակում է Հայկի եղբայրներին:

Ըստ Լեոնտի Մռովելիի՝ Հայկն ուներ յոթ եղբայր: Մեծը ինքն էր, որ Լեոնտի Մռովելիի գրքում վրացական ձևով կոչվում է Հայոս, երկրորդը՝ Քարթլոսն է՝ վրաց նահապետը, երրորդը՝ Բարդոսը, չորրորդը՝ Մովականը, հինգերորդը՝ Լեկը, վեցերորդը՝ Էրոսը, յոթերորդը՝ Կովկասը, ութերորդը՝ Էգրոսը: «Բոլոր այս եղբայրները հերոսներ էին,- գրում է վրաց պատմագիրը:- Բայց հերոսներից ամենաերևելին Հայոսն էր, որովհետև նրա նման հսկա, նրա նման ուժեղ ու արիասիրտ չի եղել ո՛չ նախքան ջրհեղեղը, ո՛չ դրանից հետո»:

Աշխարհակալ Նեբրովթի (Բելի) դեմ ճակատամարտելիս Հայոսն ասում է իր եղբայրներին. «Ամո՛ւր պահեցեք իմ թիկունքը, և ես կգնամ Նեբրովթի վրա»: Եվ գնում է Հայոսը, մոտենում Նեբրովթին դեմ առ դեմ, արձակում իր նետը, որն անցնում է պղնձով զրահված կրծքի միջով և գետին տապալում Նեբրովթին... «Եվ Թորգոմյան ցեղերը ազատություն ստացան: Եվ Հայոսը թագավորեց իր եղբայրների ու մնացած՝ սահմանամերձ ցեղերի վրա: Եվ բոլոր յոթ եղբայրները գնացին ամեն մեկն իր երկիրը և հնազանդ էին Հայոսին»:

Վրաց պատմագրի հույժ կարևոր այս տեղեկություններից հետո միանգամայն հասկանալի է դառնում Հայկի մասին 7-րդ դարի նշանավոր հայ պատմիչ Սեբեոսի բնորոշումը՝ *Նահապետ ազգացն* (ազգերի նահապետ):

Սեբեոսի բնորոշումը և Լեոնտի Մռովելիի թանկագին վկայությունները հաստատում են, որ Հայկը եղել է պատմական բացառիկ երևույթ: Աշխարհակալ Բելից նա փրկել է ոչ միայն հայ ժողովրդին, այլև կովկասյան ժողովուրդներին:

Ոչ թե հայ, այլ օտար պատմիչն է գրել, թե Հայոսի (Հայկի) նման հերոս «չի եղել ո՛չ նախքան ջրհեղեղը, ո՛չ դրանից հետո»:

Սողոմոն Տարոնցի

ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ

Թորգոմից սերած իմ մեծ նախահայր՝ հզոր, քաջաձիր,
Հավիտյան անմահ ժամանակի պես՝ մեր ոգու նման,
Դու, որ լայնալիճ աղեղը ձեռքիդ, անահ կանգնեցիր
Բելի հանդիման:

Դու Բաբելոնից հեռացար դեպի Հյուսիսը մռայլ
Եվ ուզեցիր քո հրաչյա, խարտյաշ ժողովրդի հետ
Ապրել ինքնիշխան և անբռնադատ, ապրել անայլայլ
Ու հանգստավետ:

Դու ուզեցիր, որ թավ անտառներում՝ որսի գնալիս,
Կամ շամբուտներում՝ վարազների հետ կռվի բռնված,
Զգաս քեզ ազատ, ինչպես արծիվը՝ օդում ճախրելիս,
Տիրող, երկնամբարձ:

Հայկ Նահապետի արձանը Երևանում, Կառլեն Նուրիջանյան, 1970թ.

Բայց այս աշխարհում ո՛չ մի բռնակալ, ո՛չ մի թագավոր
Դեռ չի հանդուրժել թե՛ խաղաղություն, թե՛ երջանիկ կյանք.
Եվ դուրս է եկել՝ նյութելու, ինչպես ծովը ահավոր,
Արյուն ու զրկանք:

Եվ դուրս են եկել՝ շուրջը սփռելու դիակներ, գանգեր,
Արբեցել մարդու կարմիր արյունով՝ անվերջ, անհագուրդ,
Եվ փարածել չար աշխարհից աշխարհ ագահ, մարդակեր
Մահի թևը ցուրտ:

Եվ ահա քո դեմ ելավ Տիգրանյան Բելը բռնակալ՝
Աչքերում՝ բորբոք բոցեր բարկության, և սրտում՝ զայրույթ,
Նրա ետևից՝ հոսուն զինակիր զորքը կոպտաքայլ՝
Դռույթ[1] *առ դռույթ:*

– Դո՛ւ , Հա՛յկ,– գոչեց նա,– լքեցիր այսպես երկիրս դրախտ,
Իշխանությունս, սերս՝ հովանի, անկեղծ ու հստակ.
Եվ ուզեցիր այդ ցրտին Հյուսիսո՞ւմ գտնել փուն ու բախտ,
Քան թե ձեռքիս տակ:

Եվ զարկեց Բելը պարծենկոտ, գոռոզ ու մեծաբերան՝
Մժեղի նման ճզմելու դիմացն իր կանգնած Հայկին.
Եվ զարկեց Բելը՝ մեծ տեգը ձեռքին, ինչպես մի գերան,
Զարկեց մոլեգին:

Իսկ դո՛ւ, հսկա՛ Հայկ.– «Կանգնի՛ր,– գոչեցիր,– Բե՛լ, դու շանթի պես
Մի՛ տենչա կոտրել իմ բազկի ուժը՝ միշտ անփշրելի.
Մենք մեր աշխարհում ճախրում ենք ազատ, հանց՝ արծիվը վեհ,
Անհասանելի:

Իմ ցուրտ Հյուսիսը ավելի տաք է քո Բաբելոնից,
Ավելի լավ է լինել խաշնարած, հովիվ հասարակ,
Քան վախկոտի պես ընկնել ինքնակամ բիրտ բռնակալիդ
Ծանր լծի տակ»:

Եվ մեծասի՛րտ այր, ազատանի քու կամքդ հավաքած՝
Լարեցիր երկաթ քո բազուկները վարժ ու զայրագին,
Կանգնեցիր ընդդեմ հեղեղի նման երկիրդ եկած
Խուժդուժ բանակին:

---

[1] ***դռույթ*** – խուռն ամբոխ. **դռույթ առ դրույթ՝** խուռն ամբոխով:

Կանգնեցիր պողպատ պարսպի նման, աշտարակի պես՝
Պրկած ահռելի, աշխարհասասան աղեղ ու նիզակ,
Եվ առաջ ոստնեց մռայլ, մթագնած Նեմրութը, ասես,
Բելն արյունկզակ:

Ու դու զարկեցիր քո տիտանական զարկը քաջաձեռ,
Արդար, մահացու զարկդ պսակվեց սուրբ հաղթանակով.
Եվ ընկավ Բելը աշխարհն ավերող, ինչպես մի ժանտ նեռ,
Աղեղիդ զարկով:

Ընկավ նա, ինչպես՝ խորհրդանիշը բռնակալության,
Քո ոտների տակ, ինչպես՝ սատակած ահռելի հրեշ:
Իսկ քո երկիրը կոչվեց ու պիտի կոչվի Հայաստան՝
Հավերժի՜ց հավե՛րժ:

Արարատը Անիի շրջակայքից

Արշալույս Սարոյան

ՀԱՅԿԻ ՎՐԱՆԸ

(լեգենդ)

Երբ պարթևալանջ նախահայրը մեր
Բելի դեմ լարեց աղեղն ըմբոստի
Եվ իր հետ առած որդիներ, թոռներ՝
Եկավ ու հասավ արձակ մի դաշտի,
Աշուն էր արդեն... Հայկը որոշեց
Դաշտի մեջ խփել այնպիսի վրան,
Որ իր տակ առներ ցեղախումբը մեծ
Եվ պապսպարեր ցրտերից ձմռան:

Պոնտական բարձրիկ լեռներից մինչև
Լեռներն Արցախի նա վրան խփեց:
Մի ծայրը Կորդվաց լեռնալանջերին,
Մյուսը Թռեղք լեռներին կապեց:
Մի ցիցը խփեց Տիգրիսի ափին,
Մյուսը տարավ մինչ գետը Թարթառ
Եվ ծայրը կապեց Ակնի քարափին,
Մյուսը հասցրեց մինչև Սևասար:
Վրանի ներքո վիթխարահսկա
Առավ Գայլագետ, Վոհ, Արածանի,
Կապուտան լիճը և լիճը Տոսպա,
Որ հետո փոխվեց ու կոչվեց ***Վանի:***

Երբ Հայկը տեսավ, որ վրանը մեծ
Կանգուն չի մնա՝ առանց սյուների,
Իր որդիներին չորս կողմն առաքեց,
Որ ժայռեր բերեն մոտիկ լեռներից,
Բերեն ու կիտեն միմյանց վրա՝
Սյուներ կանգնեցնեն վրանի ներքո...
Եվ հաղթաբազուկ սերունդը նրա
Ժայռերը գրկեց ժայռեղեն ձեռքով,
Բերեց ու կիտեց ժայռեր ժայռերի
Ու ժայռերն իրար ժայռերով գամեց,
Եվ հենց կենտրոնում հսկա վրանի

Բարձրացավ խրոխտ մի սյուն երկնամերձ,
Բարձրացավ, առավ ուսին իր հպարտ՝
Ծանրությունը ողջ, մի ամբողջ վրան.
*Հայկը անվանեց նրան **Արարատ***
Ու դաշտն էլ կոչեց անունով նրա:

Հսկա վրանի ամրության համար
Կանգնեցրին ուրիշ փոքր ու մեծ սյուներ,
Մեկը մյուսից զատելու համար
Տվեցին նրանց տարբեր անուններ:
*Մեկին կոչեցին նրանք **Արագած**,*
*Իսկ մեկ ուրիշին կոչեցին **Սարվարդ**,*
*Մեկին՝ **Այծպտկունք**, մյուսին՝ **Սրմանց**,*
*Մեկին՝ **Կապուտջիղ**, մյուսին՝ **Նպատ:***
*Կոչեցին նրանց **Նեմրութ** ու **Սիփան**,*
***Թոնդուրեք**, **Մռավ**, **Անդոկ**, **Գեղասար**,*
***Բյուրական** ու **Բարդող**, **Սինակ**, **Կոթևան**,*
***Մարիամ** կոչեցին, կոչեցին **Լալվար**...*

Մոլեգնեց ձմռան հողմը խոլական,
Բայց անզոր եղավ վրանը պոկել,
Քանզի այրերը այն դյուցազնական
Խենթ ուժով էին վրանը պրկել:
Եվ ամեն անգամ, երբ հողմերն անսանձ
Ինչ-որ տեղ ծայրը թուլացնում էին,
Նրանք, ինքնազոհ, հողմի դեմ ելած,
Ցցերը նորից ամրացնում էին:
Եվ այդպես անցան դարեր ու դարեր,
Եվ դարեր մնաց վրանը կանգուն,
Թեև իր ճամփան տեսավ բյուր դավեր,
Ու փոթորիկներ տեսավ նա կյանքում:

Ինչքան դիմացավ վրանն հողմերին,
Հողմերը այնքան կատաղի դարձան
Ու մոլեգնեցին բոլոր կողմերից,
Բոլոր կողմերից հարձակման անցան:
Հերթով պոկվեցին ցցերը բոլոր
Պոնտական, Թռեղք բարձրիկ լեռներից,
Տիգրիսի ափից՝ ոլոր ու մոլոր,
Ակնի քարափից ու Սևասարից:
Փոքրացավ անվերջ վրանը Հայկի,

Այնպես փոքրացավ ու դարձավ մի բուռ,
Որ դուրս մնացին վրանի տակից
Վոհ ու Գայլագետ, Վանա լիճ, Գրգուռ:
Իսկ վրանի տակ մնացին միայն
Մի երկու ցածրիկ, անանուն սյուներ
Եվ մի Արագած, մի փոքրիկ Սևան,
Որ կարծես Հայկն է արցունքով ծնել:

Իսկ երբ քանդվում էր վրանը Հայկի,
Սերունդը նրա աշխարհում ցրվեց,
Իսկ վրանի տակ ճարտար ու ազնիվ
Մի բուռ ժողովուրդ միայն ծվարեց...
Մի բուռ ժողովուրդ՝ հրաշքով փրկված,
Արյունով կապված հողին հայրենի,
Մի բուռ ժողովուրդ, որ ապրում է դեռ՝
Որպես ժառանգորդ հսկա վրանի...



Գայլատու լիճ

Նեմրութ



Մռավ լեռ

Արարատ

Հայկ Խաչատրյան

ԾԻՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է

Ավանդությունը այսպես է պատմում ծիրանի մասին.

Երբ դարեր առաջ ջրհեղեղ եղավ, Նոյ Նահապետը Մասիսի գագաթը բարձրանալու ժամանակ ծիրանի մի կորիզ վերցրեց իր հետ: Ծիրանի կորիզը Նոյի տապանի հատակի ճեղքից ընկավ Մասիսի վրա: Այնտեղ ծլեց, մեծացավ ու ծիրանի ծառ դարձավ: Ծիրանենու պտուղը՝ ծիրանը, արևի ճառագայթների ոսկյա փայլն ստացավ:

Այդ ժամանակից մինչև Հայկ Նահապետի հայր Թորգոմը Մասիսի վրա ձյուն չէր նստել:

Մի անգամ ծառերի նահապետ սոսին Թորգոմի ականջին ասաց.

– Շուտով Մասիսի վրա ձյուն է նստելու:

– Զյո՞ւն, ի՞նչ է ձյունը:

– Զյունը սպիտակ փաթիլներ դարձած անձրև է:

– Ի՞նչ անեմ, թող գա՛ էլ, գնա՛ էլ:

– Ո՛չ, անձրև չէ, որ գա ու գնա. ձյունը կարող է ամիսներով նստել իջած տեղում: Քանի ուշ չէ, փրկի՛ր ծիրանի այգիդ:

Թորգոմն սկսեց ծիրանի կորիզներ թաղել Արարատյան դաշտում:

Դրանից հետո ծիրանենիներն այնքան շատացան Հայաստանում, որ Հայոց աշխարհը կոչվեց ***Ծիրանի երկիր****:*

Ծիրանը Հայաստան աշխարհի խորհրդանիշ է եղել, դրա համար

էլ թշնամիները միշտ ջարդոտել են մեր ծիրանենիները:

Բռնակալ Բելը ևս, հարձակվելով Հայոց աշխարհի վրա, իր զավակներին հրամայեց, որ ջարդուփշուր անեն Հայաստանի ծիրանիները: Սակայն Աղեղնավոր Հայկը հաղթեց Բելին, և Հայկի զինվորներն իրենց Նահապետի ուսերը ծածկեցին ծիրանագույն թիկնոցով՝ ասելով.

– Թող Հայ հողի վրա միշտ մեր ձայնը լսվի, և հավերժ խշշան մեր ծիրանիները:

Հետագայում ծիրանի գույնը դարձավ հայոց թագավորության փարագի գույնը:

Շատ դարեր առաջ՝ մ.թ.ա. 68 թվականին, տեղի ունեցավ Արածանիի նշանավոր ճակատամարտը: Հայերը ծիրանակիր թագավորի գլխավորությամբ ջարդեցին հռոմեացի զորավար Լուկուլլոսին և նրա բանակը: Նահանջող զինվորները Լուկուլլոսի հրամանով իրենց գրպանները լցրին ծիրանի կորիզով ու փարան Հռոմ: Շատ չանցած՝ Հռոմում և նրա շրջակայքում ծիրանի այգիներ աճեցին:

Այստեղից էլ ծիրանը տարածվեց մոտ ու հեռու երկրներ:

Սարգիս Դարությունյան

ՀԱՅԿԻ ԶԱՎԱԿՆԵՐՆ ՈՒ ԹՈՌՆԵՐԸ[1]

(Արամանյակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա)

Բելին սպանելուց հետո Հայկը վերադառնում է իր բնակատեղին՝ Հարք, իր Կադմոս թոռանը պատերազմի ավարից բազմաթիվ ընծաներ է տալիս, ինչպես նաև անվանի մարդիկ՝ իր գերդաստանի ծառայության մեջ գտնվողներից:

Հայկը երկար տարիներ Հայքում ապրելուց հետո՝ աշխարհին հրաժեշտ տալիս, իր ամբողջ ազգը հանձնում է Արամանյակ որդուն:

Արամանյակը, իր գերդաստանն առնելով, շարժվում է դեպի հյուսիս-արևելք, գնում հասնում է մի խոր ընդարձակ դաշտավայր՝ շրջապատված բարձրագագաթ լեռներով, որոնց ստորոտներից բխում էին բազմաթիվ ականակիտ աղբյուրներ, որոնք միանալով՝ գետեր էին կազմում և հոսում լեռների ստորոտներով ու դաշտի ափերով: Դաշտի հարավային մասում բարձրանում էր արեգակնաճեմ լեռը՝ սպիտակափառ գագաթով: Արամանյակը բնակություն է հաստատում այս դաշտում, շենացնում դաշտի հյուսիսային կողմը, այնտեղ բարձրացող լեռը կոչում է իր անունով՝ *Արագած*, իսկ կալվածքը՝ *Արագածոտն*:

Արամանյակի մահից հետո նրա որդին՝ Արամայիսը, բնակություն է հաստատում դաշտի արևմտյան կողմից հոսող գետի ափին, մի բլրի վրա կառուցում իր բնակատեղին և այն կոչում իր անունով՝ *Արմավիր*, իսկ գետը իր թոռ Երաստի անունով կոչվում է *Երասխ*: Արամայիսն իր բազմազավակ և շատակեր որդուն՝ Շարային, իր տունուտեղով ուղարկում է Արագած լեռան թիկունքում գտնվող բերրի ու արգավանդ դաշտը, որտեղ շատ ջրեր էին հոսում: Գավառը հետագայում սրա անունով կոչվում է *Շիրակ*: Այդ օրից Շարայի շատակերության մասին գեղջուկների մեջ պահպանվել է հետևյալ առածը. «Թէ քո Շարայի որկորն է՝ մեր Շիրակայ ամբարքն չեն» («Եթե դու Շարայի փորն ունես, ապա մենք Շիրակի ամբարները չունենք»):

Արամայիսի մահից հետո Արմավիրը ժառանգում է նրա որդին՝ Ամասիան: Վերջինս ունենում է երեք զավակ՝ Գեղամ, Փառոխ և Ցոլակ: Վերջին երկու որդին ունենալուց հետո Ամասիան անցնում է գետը, մո-

[1] Շարադրված է՝ ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գրքի:

Արագած լեռը

տենում հարավային բարձրաբերձ լեռան ստորոտին, լեռան խորշերում խոշոր ծախսերով շինում է երկու բնակատեղ՝ մեկը դեպի արևելք՝ լեռան ստորոտից բխող աղբյուրների ակունքների մոտ, մյուսը՝ դեպի արևմուտք: Այդ տները նա ժառանգություն է տալիս իր երկու որդիներին՝ արի Փառոխին և կայտառ Ցոլակին, որոնք բնակվելով այնտեղ՝ այդ բնակատեղերը կոչում են իրենց անուններով՝ *Փառիխոտ* և *Ցոլակերտ*:

Իսկ այդ բարձրաբերձ լեռը՝ Ամասիան, կոչում է իր անունով՝ *Մասիս*:

Կարեն Մուսայելյան

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Արամայիսը բնակվելյան համար տուն է շինում՝ գետի ափին՝ մի բլրի վրա, և իր անունով կոչում է Արմավիր...

Մովսես Խորենացի

Բլուրը ժայռոտ էր և բուսականությամբ հարուստ: Ապառաժներ, խարամ և բազալտ՝ ինչքան ուզես: Արամայիսն այդ բլուրը շատ էր հավանել: Դեռ այն ժամանակ, երբ Արամանյակ հայրը կենդանի էր, ինքը գործի բերումով հաճախ էր անցնում այդ կողմերով: Մոտենում էր բարձունքին, կանգնում և ուշադիր զննում տեղանքը: Որքան շինաքար կար: «Իսկական ամրոց կառուցելու տեղ է»,- մտածում էր նա:

Երբ այս աշխարհին հրաժեշտ տալուց առաջ Արամանյակը երկիրը հանձնեց որդուն, վերջինս անմիջապես գործի անցավ:

Ահա մի քանի պարթև տղամարդկանց հետ նա հաղթահարում է սարալանջի թեքությունը: Վերելքը դժվար է, սակայն հսկաները գնում են՝ առանց դադար առնելու:

Բլուրը սրագագաթ չէ և ունի մի քանի հարթակներ, որոնք աստիճանների նման հաջորդում են իրար: Տեղ-տեղ վեր են հառնում հսկա ժայռերը:

Ամենաբարձր ժայռը Արամայիսի ոտքի տակ է: Այդտեղից հրաշք տեսարան է բացվում: Այն, ինչ երևում է, իրենն է: Ինքն է իշխանն այս ամենի, բոլորն իր տիրույթներն են: Հյուսիսային կողմում Արամանյակի

Արմավիրի բլուրը

լեռն է, արևմուտքից գետ է հոսում՝ լայնահուն ու հանդարտ: Գետից այն կողմ, ուր վերջանում է դաշտը, սրագագաթ լեռներ են բարձրանում: Երկուսն էլ կանգնած են վեհորեն: Ափսո՜ս, որ անուն չունեն: Իր նախորդների անուններով շատ վայրեր են անվանակոչվել. կառուցվելիք քաղաքի վրա պիտի ի՛ր անունը դնի:

Այս խոհերով համակված՝ կանգնել է հայոց տերն ու նահապետը բլուրի ամենավերին ժայռի վրա՝ կողքից կախած կապարճն ու աղեղը, ասես պատրաստ մեն-մենակ դիմագրավելու թշնամիներին:

Այո՛, ինքը բլրի վրա ապարանք կկառուցի, միջնաբերդ, կպահի մշտական զորաբանակներ, կհավաքի շուրջը Հայք երկրի մարդկանց և այնտեղից կիշխի իր ընդարձակ աշխարհի ցեղերին: Շուրջը բնական ծառաստաններ են ու արոտավայրեր, իսկ գետից կարելի է առուներ հանել, ափերին մրգատու այգիներ գցել, բարեկեցիկ կյանքով ապրեցնել մարդկանց:

Արամայիսի հրամանով հաջորդ օրն իսկ սուրհանդակներ գնացին Հայք երկրի տարբեր կողմերը՝ շինարարներ ու քարգործ վարպետներ բերելու: Մարդիկ ուղարկվեցին նաև Շումերի երկիր, որ գնան տեսնեն, թե ինչպե՛ս են կառուցում ժամանակակից մեծ ու գեղեցիկ քաղաքները:

Միջագետքում շատ չմնացին նրանք: Երբ եկան ու բերեցին այդ քաղաքների հատակագծերը, զարմանքով տեսան, որ բլուրն ու նրա շրջակայքը արդեն վերածվել են հսկայական շինհրապարակի: Հարյուրավոր մարդիկ էին աշխատում այնտեղ: Ոմանք քար էին տաշում, մյուսները բլրի հրապարակներն էին հարթում, ուրիշները՝ հող տեղափոխում, պատգարակներ ու փայտե սանդուղքներ պատրաստում: Եվ այդ ամենը՝ Արամայիս արքայի աչքի առաջ: Նա թողել էր Արամանյակ լեռան և Արագածոտնի հարուստ շեները և ընտանիքով բնակություն հաստատել այս փոշոտ վայրում:

Վաղ առավոտյան՝ արևածագից առաջ դուրս գալով վրանից՝ արքան հետևում էր աշխատանքի ընթացքին, և ինքն էլ բանվորների հետ քարեր գլորում, ժայռեր էր տապալում, փայտ սղոցում , գերաններ կապում: «Իմ անունը կրող քաղաքը պիտի կրի նաև ձեռքի՛ս դրոշմը»,- մտքում որոշել էր նա: Ու աշխատում էր օրնիբուն:

Մի քանի տարում կանգնեց հրաշալի կառույցներով, ապարանքներով, կրկնահարկ տներով, ուղիղ փողոցներով քաղաքը: Ապա կառուցեցին հաստաբեստ[1] ատամներով ու դիտաշտարակներով պարիսպը, որը տեղ-տեղ ընդհատվում էր պղնձակերտ ծանր դարպասներով:

Բլրի չորս կողմը դարձրին բուրաստաններ ու ծաղկանոցներ, պարսպից դուրս կառուցեցին դաստակերտներ և բնակեցրին անթիվ մարդկանց:

Բլրի վրա, ուր միջնաբերդն էր, որպես վեհության և իշխանության

---

[1] ***հաստաբեստ*** – ամրակառույց՝ պինդ՝ ամուր կառուցված:

խորհրդանիշ՝ վեր էր խոյանում ամենաբարձր աշտարակը, որի վրա ամեն օր՝ արևածագին, քրմերը և ժողովուրդը դիմավորում ու փառաբանում էին Արևին:

*Քաղաքը անվանեցին **Արմավիր**, որտեղ ապրեցին հետագա սերունդները և այնտեղից իշխեցին Հայք երկրին: Բնակավայրը տարեցտարի մեծանում էր՝ իր մեջ առնելով մերձակա տարածքները:*

Հայոց առաջին մայրաքաղաքը այդպես հիմնվեց: Նա տեղը զիջեց միայն այն ժամանակ, երբ տեսավ իր ավելի շքեղ մրցորդին՝ Արտաշատը՝ հայոց մյուս հնագույն մայր քաղաքը:

*Անցան շատ դարեր: Պատմական իրադարձությունների թելադրանքով Արմավիր գեղեցիկ անունը փոխարինվեց **Հոկտեմբերյան** անվամբ:*

Եվ միայն այն ժամանակ, երբ մեր հայրենիքը ձեռք բերեց այնքան բաղձալի անկախություն, ազգային բազում ավանդությունների, սովորությունների հետ վերականգնվեցին նաև մի շարք պատմական անուններ:

*Արամայիսի հիմնած քաղաքը դարձյալ անվանվեց **Արմավիր**:*

Հայկ Խաչատրյան

Սիսակ

Սիսակը որդին էր Գեղամի:

Սիսակը սեգ, թիկնավետ ու բարետես տղամարդ էր: Ճարտարախոս էր և միաժամանակ՝ քաջ աղեղնավոր:

Իր անվամբ նա իր աշխարհը կոչեց *Սյունիք* (*Սիսակունիք–Սիսունիք–Սյունիք*): Պարսիկներն այդ երկիրը պարզ ձևով կոչեցին *Սիսական*: Սիսական անվանումը հայերը ևս օգտագործել են:

Մինչև այսօր էլ Գեղամա լեռներում՝ Գեղարքունիի և Սյունիքի (Սիսական) սահմանագլխին ընկած սարերից մեկի լանջին, կանգուն է Գեղամ և Սիսակ նահապետների ժամանակից մնացած ժայռաքանդակ հուշարձանախումբը: Ուղղանկյան ձև ունեցող մոտ տասներկու մետր երկարության ժայռաբեկորի՝ դեպի Գեղարքունի նայող եզրակողին քանդակված է Գեղամ նահապետի դեմքը: Գեղամը նայում է դեպի իր երկիրը՝ Գեղարքունի: Իսկ ժայռաբեկորի մեծ կողի վերջնամասում, որ հարում է սարին և շրջված է դեպի Սյունիք (Սիսական), քանդակված է Սիսակի դիմապատկերը: Սիսակը նայում է դեպի իր երկիրը՝ Սյունիք (Սիսական):

Երկու նահապետների դեմքերն էլ քանդակված են հանճարեղ վարպետների ձեռքով: Դիմաքանդակները հսկայական մեծության են, ունեն ավելի քան հինգ մետր բարձրություն, չորս մետր լայնություն: Եթե հաշվի առնենք անցած վիթխարի ժամանակամիջոցը, որը կազմում է քառասուներկու դար, ապա կարելի է ասել, թե դիմաքանդակները վատ չեն պահպանվել: Զգացվում է Գեղամ նահապետի ծերունական իմաստնացած, բարի, խաղաղ, կիսաժպիտ հայացքը: Հույժ տպավորիչ են Սիսակի դեմքի հպարտ արտահայտությունը, առինքնող դիմագծերը: Դիմաքանդակի աջ մասում քանդակված են արծիվ և շուն, որոնցով խորհրդանշվում է Սիսակի քաջ աղեղնավոր լինելը:

Հոր և որդու հուշարձանաժայռից մոտ հիսուն քայլ ուղիղ գծով դեպի աջ գտնվում է մի ուրիշ վիթխարի հուշարձան: Սա Աղավնի է՝ սարալանջին տափած[1], գլուխը թեքած դեպի Գեղամը, որի գոհունակ ժպիտը, անշուշտ, պայմանավորված է նաև հրաշալի Աղավնու գոյությամբ: Աղավնու կտուցից մինչև պոչը ավելի քան տասնմեկ մետր է, մարմնի լայնությունը՝ կծկած թևերի հետ մեկտեղ՝ վեց մետր, գետնից ունեցած բարձրությունը՝ երեք-երեքուկես մետր:

Սա վերածնության, կենդանության, խաղաղության, բարության, սիրո և հավատարմության խորհրդանիշ Նոյի աղավնու մեծագույն հուշարձանն է ամբողջ աշխարհում:

---

[1] ***տափել*** – տափ մտնել՝ թաքնվել:

Աղավնու այս ժայռաքանդակ հուշարձանը խոսում է այն մասին, որ Աստվածաշնչում ջրհեղեղի և Նոյի վերաբերյալ եղած պատմությունը միանգամայն համապատասխանում է իրականությանը: Գեղամը և Սիսակը անհրաժեշտ են համարել իրենց երկրների պատմության համար այս կարևոր վայրում անպայման ունենալ Աղավնու հուշարձան, որը նրանց համար ոչ թե վերացական, այլ միանգամայն որոշակի երևույթի արտահայտություն էր: Նրանք իրենց հարգանքն էին մատուցում հիշատակին այն աղավնու, որի մասին լսել էին իրենց ծնողներից: Գեղամը լսել էր Ամասիայից, Արամանյակից, սա՝ Հայկից, սա՝ Թորգոմից, սա՝ Գամերից, սա՝ Հաբեթից: Իսկ Հաբեթն ինքն իր աչքերով տեսել էր այդ աղավնուն, որին իր հայրը՝ Նոյը, երկրորդ անգամ բաց թողեց տապանից, և որը վերադարձավ ձիթենու շյուղով, ինչը նշան էր երկրի վրա կյանքի վերածնության: Հիշենք, որ տապանում ութ հոգի էին՝ Նոյը իր կնոջ, Նոյի երեք որդիները՝ Սեմը, Քամը և Հաբեթը՝ իրենց կանանց հետ:

Ժայռաքանդակ աղավնին, Նոյի որդի Հաբեթի անմիջական հետնորդներ Գեղամի և Սիսակի ժայռեղեն դիմաքանդակները վերջնականապես, անկասկած կերպով և ըստ ամենայնի ապացուցում են ջրհեղեղի և Նոյի մասին Աստվածաշնչի պատմության, ինչպես նաև Նոյի որդի Հաբեթից սերած Թորգոմի, Հայկի և բոլոր Հայկյանների մասին Մովսես Խորենացու, Սեբեոսի և մյուսների պատմագրական տեղեկությունների ճշմարիտ լինելը:

Այս զարմանահրաշ հուշարձանախումբը լրացնում են մերձակա ձորակի երկու ուրիշ ժայռաքանդակ արձաններ ևս, որ գտնվում են մեկը՝ գետի աջ, մյուսը՝ ձախ ափին՝ իրարից ոչ հեռու: Աջ ափինը Ցուլի գլուխ է, մյուսը՝ ամբողջական Առյուծ՝ նստած դիրքում: Թեպետ ժամանակը թողել է իր ավերիչ ազդեցությունը, զգացվում է, որ երկու ժայռաքանդակն էլ արվեստի գլուխգործոցներ են եղել:

Քանի որ Ցուլը և Առյուծը Կենդանակերպի նշաններից են, շատ հավանական է, որ այստեղ եղել են Կենդանակերպի մնացած տասը նշանները խորհրդանշող ժայռաքանդակներ ևս, որոնք առայժմ չեն գտնված:

Գեղամի և Սիսակի ժայռաքանդակներից ներքև՝ գետի ափին, կա մի հսկայական կիսագնդաձև ժայռաքար՝ մոտ տասներկու մետր տրամագծով, ավելի քան չորս մետր բարձրությամբ: Այս ժայռաքար կիսագունդը ծառայել է իբրև զոհասեղան: Հանդիսությունների ժամանակ զոհաբերվող կենդանիների արյունը



Գեղամա լեռները

Աժդահակ լեռան գագաթը

սեղանի թեք մակերեսով հոսել-թափվել է գետը:

Քանի որ մյուս ժայռաքանդակներից երկուսը մարմնավորում են համաստեղություններ (Ցուլ, Առյուծ), ապա, ամենայն հավանականությամբ, այս կիսագնդաձև ժայռաքար հուշարձանը նույնպես ներկայացրել է որևէ երկնային համաստեղություն: Համոզված ենք, որ այն կոչվել է *Զոհասեղան*՝ ներկայացնելով Հարավային երկնքի *Զոհասեղան* անունը կրող եռաստեղությունը:

Ըստ երևույթին հուշարձանախումբը կառուցվել է Գեղամի և Սիսակի կենդանության օրոք, քանի որ հավերժացնում է մի կողմից՝ հայր և որդի Գեղամ և Սիսակ նահապետներին, մյուս կողմից՝ նրանց երկրների հարազատությունն ու սահմանակից լինելը: Մեր ենթադրությունը ավելի քան հիմնավոր է Մովսես Խորենացու վկայության առկայությամբ: Պատմահայրը հիշատակել է, թե Գեղամը մի ամբողջ երկիր է ժառանգություն տվել իր որդի Սիսակին: Այդ երկիրն է որ կոչվեց *Սյունիք* (Սիսական) և ընկած է Գեղամա ծովակից «դեպի արևելք՝ մինչև այն դաշտը, ուր Երասխը, սեպացած լեռները ճեղքելով, ահագին շառաչյունով թափվում է դաշտը»: Հոր և որդու երկրների սահմանակից լինելը պետական պատմական այնպիսի կարևոր երևույթ էր, որ պետք է արտահայտվեր կոթողային, մնայուն հուշարձանով:

Այս ամբողջ տարածքը, որտեղ գտնվում են ժայռաքանդակ հուշարձանները, եղել է միաժամանակ նաև ծիսակատարման մի յուրահատուկ վայր, ուր կատարվել են կարևորագույն հանդիսություններ:

Կասկած չունենք, որ նաև այս կոթողային շինությունները նկատի ունի Պատմահայրը՝ գրելով, թե Սիսակն «իր բնակության սահմանները լցնում է շինություններով»: Հասկանալի է, որ շինություններ ասելով՝ Պատմահայրը նկատի ուներ ոչ թե սովորական, այլ խորհրդանշական, բարձրարվեստ, ժամանակների հետ մրցող կերտվածքներ:

Մինչև մեր օրերը հասած այս մեծարժեք հուշարձանախումբը ևս մի կենդանի, իր տեսակի մեջ եզակի վկայությունն է մեր ազգային հնագույն պատմագրության հավաստիության ու ճշմարտացիության:

Սիսակի ժառանգները դարեդար պահպանեցին իրենց տոհմի հեղինակությունը: Նախքան Քրիստոսը 2-րդ դարում Վաղարշակ թագավորը, վերականգնելով հայկական (Հայկյան) թագավորությունը և Հայաստանում հաստատելով Արշակունիների հարստությունը (դինաստիան), Սիսակի տոհմի երևելի մարդկանց տվեց պետական բարձր պաշտոններ:

Հայկ Խաչատրյան

Արամ

Արամը որդին էր Հարմայի:

Ազնիվ ու պատվարժան թագավոր էր Արամը՝ աշխատասեր ու հայրենասեր: Նա գերադասում էր հայրենի երկրի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպե՛ս օտարածին ցեղերը ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները:



Արամը Արմավիրի պարսպի աշտարակին է գամում Նյուքար Մադեսին, Ջուլիանո Զասսո, 1885թ.

Շրջակա ազգերի պատճառով նեղություններն այլևս հանդուրժել չկարողանալով՝ Արամը ժողովեց մոտ հինգ բյուրի[1] չափ հավատարիմ քաջ տղամարդկանց և աղեղնավորների, պատերազմի սովոր ուժեղ նիզակավոր երիտասարդների, որ սրտոտ էին և անձնվեր: Նա Հայաստանի սահմանների մոտ ընդհարվեց զինված բազմության գլուխ անցած մեդացի մի մեծ խումբ երիտասարդների հետ, որոնց առաջնորդում էր ոմն Նյուքար Մադես՝ գոռոզ ու պատերազմասեր մի մարդ: Նյուքար Մադեսն արդեն մի անգամ իր ասպատակիչների հետ սմբակակոխ էր արել Հայաստանի սահմանները՝ երկիրը երկու տարի իրեն ծառայեցնելով:

Արևածագից առաջ հանկարծորեն հարձակվելով՝ Արամը կոտորեց ամբոխի բազմությունը և Նյուքար Մադեսին ձերբակալեց: Ապա նրան բերեց Արմավիր և հրամայեց, որ այնտեղ՝ պարսպի աշտարակի ծայրին, նրան վարսեն[2]՝ ճակատին երկաթե ցից գամելով՝ ի ցույց անցուդարձողների և բոլոր երկրներից ժամանողների:

Մադեսի երկիրը՝ մինչև Զարասպ լեռը, Արամը հպատակեցրեց իրեն և հարկատու դարձրեց: Դա տևեց մինչև Նինոսի թագավորելը Ասորեստանի ու Նինվեի վրա: Նույնպիսի զորությամբ Արամը շարժվեց դեպի Ասորեստանի կողմերը: Այնտեղ հանդիպեց մի ուրիշ ասպատակողի՝ Բարշամ կոչվող, որ հսկաների ցեղից էր: Սա բոլորին սաստիկ նեղել էր հարկահանությամբ, շրջակա բնակավայրերը ամբողջությամբ վեր էր ածել անապատի:

Արամը ճակատամարտի մեջ մտավ Բարշամի հետ: Նեղեց ու, հալածելով, փախցրեց Կորդուք գավառի միջով և գցեց Ասորեստանի դաշ-

---

[1] **Մեկ բյուրը** հավասար է 10.000-ի:

[2] **վարսել** - ցցով՝ գամով մի բան կարել՝ գամել մի ուրիշ բանի վրա:

տը: Բարշամի զորքը կոտորվեց, իսկ Բարշամն ինքը, Արամի զինակիցներին հանդիպելով, սպանվեց նրանց ձեռքով:

Այս Բարշամը ժամանակին շատ խիզախություններ էր կատարել, որի համար ասորիները նրան պաշտում էին իբրև աստծո: Սա այն Բարշամն էր, ումից, ըստ առասպելի, մեր Վահագնը փախցրեց հարդը, որի թողած հետքից աստղային երկնքում առաջացավ *Հարդագողի ճանապարհը*:

Արամը երկար ժամանակ Ասորեստանի դաշտերի մեծ մասը պահում էր իր ծառայության տակ:

Նա շատ քաջագործություններ կատարեց՝ նաև արևմտյան կողմերում տիտանների դեմ ճակատելով: Նախկին հինգ բյուր զորքին ավելացնելով չորս բյուր հետևակ և երկու հազար հեծյալ՝ Արամը 92-հազարանոց բանակով հասավ Կապադովկիայի կողմերը, այն տեղը, որ այժմ Կեսարիա է կոչվում: Նա շտապելու առիթ չուներ, քանի որ երկրի անվտանգությունն ապահովված էր համարում. արդեն արևելյան և հարավային երկրները նվաճել էր և հանձնել՝ Արևելքը՝ Սիսակյաններին, իսկ Ասորեստանի կողմերը՝ Կադմյաններին: Ուստի Արևմուտքում Արամը երկար մնաց:

Այստեղ նա պատերազմով հանդիպեց տիտան Պայապիս Քաղյայի հետ, որը բռնի տիրել էր երկու մեծ ծովերի՝ Պոնտոսի և Միջերկրական ծովի միջանկյալ տարածությանը: Հալածելով՝ Արամը Պայապիս Քաղյային քշեց-հեռացրեց և նետեց ասիական ծովի կղզիներից մեկը:

Նվաճած երկրի վերակացությունը հանձնելով իր ցեղի մարդկանցից Մշակ անունով մեկին, նրան տրամադրելով մեկ բյուր զորք՝ Արամը վերադարձավ Հայաստան: Գրաված երկրների բնակիչներին Արամը հրաման տվեց ուսանել հայոց խոսքն ու լեզուն: Այդպիսով՝ հայերենի սահմանները տարածվեցին մինչև այդ հեռավոր կողմերը: Այդ պատճառով հույները հետագայում այդ երկրամասը կոչեցին *Պռոտին Արմենիան*, այսինքն՝ *Առաջին Հայք*:

Մինչև բուն Հայաստանի սահմաններն ընկած երկրամասերը Արամը լցրեց բնակչությամբ. այդ երկրամասերը կոչվեցին *Երկրորդ Հայք*, *Երրորդ Հայք*, *Չորրորդ Հայք*:

Ահա այսպիսի մեծագործություններ կատարեց Արամը, որին պատմիչները կոչում են *Հայկյան Արամ*՝ ընդգծելով նրա և դյուցազն Հայկի հարազատությունը: Այդ հարազատությունը ժողովուրդը ավանդաբար պահպանել է՝ ստեղծելով երկուսի անունը մեկտեղող մեկ հատուկ անուն՝ *Հայկարամ*:

Հայաստանի հզոր և անվանի թագավոր Արամը դարձավ մեծագույն հեղինակություն նաև օտար ազգերի ու ժողովուրդների աչքում: Այդ էր պատճառը, որ նրանք մեր երկիրն անվանեցին *Արամյան երկիր*, իսկ հայերին՝ *արամյաններ*: Պարսիկները մեր երկիրն իրենց ձևով կոչեցին *Արմինա*, *Արամանիա*, իսկ հույները՝ *Արմենիա*: Վերջին ձևը դարձավ ընդհանրական, և աշխարհի մեծ մասն այսօր մեր երկիրը կոչում է *Արմենիա*, մեզ՝ *արմեններ*: Արևելքի առանձին ժողովուրդներ մեր երկիրը կոչում են *Էրմանիստան*, մեզ՝ *էրմանի*, *արմանի*, *արամանի*: Արամանի ձևը հնագույն և ճիշտ անվանումն է:

Հայկ Խաչատրյան

Արա Գեղեցիկ

Արան որդին էր Արամի:

Գեղեցիկ տղամարդ էր նա, և ժողովուրդը իր թագավորին այդպես էլ կոչեց՝ *Արա Գեղեցիկ*:

Ինչպես իր հայր Արամը, նա էլ Ասորեստանի թագավոր Նինոսից շնորհների արժանացավ և համարվում էր Նինոսի Երկրորդը: Որովհետև այդպես էր կարգը այն ժամանակից ի վեր, երբ Արամն սպանեց Նյուքար Մադեսին և Ասորեստանը հարկատու դարձրեց Հայաստանին: Նյուքար Մադեսից հետո որոշ ժամանակ անցավ, մինչև որ Ասորեստանի գահին բազմեց Նինոսը: Սա քենով էր լցված հայերի ու Հայաստանի հանդեպ, քանի որ մտքի մեջ մշտապես ուներ Բելին ջախջախելու Հայկի հերոսական գործի պատմությունը: Երկար տարիներ խորհում էր, թե ինչպես որսար օրերի հաջողությունը՝ բնաջնջելու համար Հայկից սերած բոլոր արուներին: Բայց վախենում էր, թե այդպիսի խարդավանքը կարող էր թանկ նստել իր թագավորության վրա, և չարությունը թաքցնում էր:

Բոլոր անձնապաշտ մարդկանց նման Նինոսը նենգ էր, խարդախ: Նա հրամայեց ոչնչացնել և մոռացության տալ իրեն նախորդած ասորեստանյան թագավորների պատմություններն ամփոփող մատյաններն ու զրույցները, որպեսզի ամեն տեսակ քաջության և լավ բաների սկզբնավորողն ու հիմնադիրը միայն ինքը համարվի: Նա հրամայեց ոչինչ չարձանագրել այս ու այն կողմում կատարվող որևէ մեկ ուրիշի քաջագործության մասին, այլ արձանագրել և պատմությանը հանձնել միայն իրեն՝ Նինոսին վերաբերող տեղեկությունները:

Նինոսն առերևույթ արտակարգ սիրալիր էր Արամի հանդեպ: Նրան հավաստիացրել էր, թե կարող էր իշխել անկասկածաբար: Շնորհել էր նրան մարգարտե վարսակալ կրելու և իր՝ Նինոսի Երկրորդը կոչվելու իրավունքը:

Այս բոլոր շնորհները պահպանվեցին Արա Գեղեցիկի համար: Բայց Նինոսը շուտով տապալվեց իր կնոջ՝ Շամիրամ թագուհու սադրանքով:

Շուտով Շամիրամը դարձավ Հայոց երկրի տիրակալը: Նա Հայաստանի բնությունը շատ հավանեց ու որոշեց ամառներն անցկացնել այստեղ, իսկ տարվա մնացած մասը՝ Նինվեում: Շամիրամն իր արքունիքը շինեց Վան քաղաքում: Այդ նպատակով Վանը հիմնովին վերակառուցվեց: Շամիրամի վարպետները 72 կիլոմետր երկարություն ունե-

ցող ջրանցք փորեցին և Վան բերեցին խմելու ջրի անսպառ պաշարներ: Այդ ջրանցքը այսօր էլ կա, գործում և պահպանում է չորսհազարամյա իրադարձությունների կենդանի հիշատակը:

Շամիրամը տարբեր գույների քարերից Վանում կառուցել տվեց ոչ միայն կրկնահարկ, այլև եռահարկ ապարանքներ, ընդարձակ փողոցներ ու ծաղկանոցներ: Քաղաքի արևելյան, հյուսիսային և հարավային մասերը զարդարեց դաստակերտներով[1], տարբեր տեսակի սաղարթախիտ ծառերով, տնկեց հրաշալի այգիներ:

Ամենամեծ հրաշալիքը Շամիրամի կացարանն էր: Այն գտնվում էր քաղաքի վերին ծայրին՝ ժայռեղեն բարձունքին: Այդտեղ՝ գագաթի շուրջը պարիսպ քաշելով՝ ներսում շինեց օտար աչքի համար անհասանելի արքայանիստ օթևաններ ու կառույցներ: Ժայռի մեջ հրաշակերտեց բազում ու բազմազան սենյակներ, գանձարաններ՝ երկար վիհերով ու խրամուղիներով: Շամիրամը ժայռը դրսի կողմից հարթել տվեց և տեղացիներին զարմանք պատճառող գրերով նրա վրա քանդակել տվեց ընդարձակ արձանագրություններ:

Վանը մեծացավ, դարձավ առավել մարդաշատ, երիզվեց հզոր պարիսպներով: Այս բոլորը նկատի ունենալով՝ միջնադարի հայ պատմագիրները Վան քաղաքն անվանել են նաև *Շամիրամի քաղաք*, *Շամիրամակերտ*:

Երկար տևեց Շամիրամ տիկնոջ իշխանությունը: Նա Ասորեստանի գահին մնաց քառասուներկու տարի, որից հավանաբար ոչ պակաս, քան երեսունհինգ տարի իշխեց նաև Հայաստանին:

Քաղաքի *Վան* անունը, որ նշանակում է տեղ, գալիս էր հին-հին՝ նախաջրհեղեղյան ժամանակներից: Շամիրամի օրոք ևս Վանը, որը Հայաստան երկրի մայրաքաղաքն էր տակավին ջրհեղեղից առաջ, գտնվում էր Տոսպ գավառում: Շամիրամի մարդիկ *Տոսպ*-ն արտասանում էին *Տուշպա*՝ ըստ ասորական հնչման: Շամիրամի գրիչները գավառը Տուշպա ձևով էլ դրոշմեցին այն արձանագրություններում, որ մինչև այսօր մնում են Վանի՝ Հայաստանի հնագույն մայրաքաղաքի ժայռերին: Շամիրամը արձանագրություններով կոթողներ կանգնեցրեց նաև Հայաստանի ուրիշ վայրերում՝ սահմաններ հաստատելով, ամենուրեք փառաբանել տալով իրեն և իր կատարած գործերը:

Արա Գեղեցիկը և Շամիրամն ապրում էին նախքան Քրիստոսը 20-րդ դարում:[2]

---

1 **դաստակերտ** – *այստեղ*՝ ամառանոց:

[2] Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին մի շատ հետաքրքրական ավանդություն կարող եք գտնել սույն գրքի վերջին գլխում ՝ *«Արզնի»* վերնագրով:

ԱՐՑԱԽՅԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Արցախը Ղարաբաղի պատմական անունն է:

*Հայ ժողովուրդը Արա անունով թագավոր է ունեցել, որին իր գեղեցկության և կատարած գեղեցիկ գործերի համար կոչել են **Արա Գեղեցիկ**:*

Արա Գեղեցիկը շատ էր սիրում իր շքախմբով գնալ Արաքս գետի ափերը, որսորդություն անել մեր բարձրիկ լեռներում: Լեռները ծայրեծայր ծածկված էին խիտ անտառներով, որտեղ կային եղնիկ, եղջերու, արջ, առյուծ, սկյուռ և բազմապիսի թռչուններ:

*Այդ ժամանակներում լեռների բնակիչները անտառն անվանում էին **ցախ:** Եվ քանի որ **ցախ**-անտառը Արա թագավորի սիրած տեղն էր, հայերը սկսեցին այն կոչել **Արայի ցախ**, այսինքն՝ Արայի անտառ: **Արայի ցախն** էլ հետագայում փոխվեց ու դարձավ **Արցախ**:*

*Ահա այսպես է ստեղծվել մեր չքնաղ լեռնաշխարհի **Արցախ** անունը:*

Արցախյան բնապատկեր

Ըստ Ղազարոս Աղայանի

Տորք Անգեղ

(համառոտված)

Երգ առաջին

Ա

Շատ դարեր առաջ Հին Հայաստանում
Տորք Անգեղ անվամբ մի մարդ էր կենում:
Տորքը չէր նման հասարակ մարդու,
Այլ մի աժդահա և շատ ահարկու.
Աչքերը կասես մի-մի կապույտ ծով՝
Ճաճանչավորված արևի լույսով.
Սև-սև ունքերը՝ մութ ամպի նման
Բարդ-բարդ կուտակված աչքերի վրան.
Քիթը՝ կորնթարդ, իբրև մի բլուր,
Ատամներն՝ ուրագ, եղունգները՝ թուր.
Կուրծքը ասես թե մի լանջ էր լեռան,
Մեջքը՝ սարաժայռ, կռները՝ գերան,
Մի խոսքով՝ մի դև, և ոչ թե հսկա,
Ոչ ոք տեսած չէր այնպես աժդահա:
Տգեղ էր դեմքը և այնքան դաժան,
Որ զարհուրում էր, ով նայեր վրան.
Ահռելի էր նա և այնքան ուժեղ,
Որ հիսուն գոմեշ չունեին մեկտեղ:
Նա դեռ պատանի՝ ժայռեր էր ճեղքում,
Ճեղքում էր ձեռքով, ձեռքով էլ կոկում.
Ճեղքում, հղկում էր քարե տախտակներ,
Եղունգով փորում պես-պես նկարներ:
Նա մի հովիվ էր, հովիվ լեռնական,
Բայց ոչ հասարակ, այլ դյուցազնական.
Առյուծ ու վագր նրան տեսնելիս
Սովոր շան նման մոտն էին գալիս.
Կարծում էին, թե նա էլ է գազան
Եվ նա է իրանց զորավոր արքան.
Փաթաթվում էին քաջի ոտքերին
Եվ կաղկանձելով աղերսում բաժին.

Նա էլ տալիս էր սնունդ բավական
Եվ հոտի վրան կարգում պահապան:
Ինքն այնուհետև գնում էր անտառ,
Որ սնունդ գտնի իր ուժի համար:
Նա պոկոտում էր մեծ ծառեր հատ-հատ,
Շինում նրանցից մի մեծ ցանկապատ.
Անտառի շուրջը պարիսպ էր դառնում,
Մեջը վայրենիք կաշկանդված մնում.
Եվ նա բռնում էր, բռնոտում այսպես
Եղնիկ, եղջերու և էլ ինչ ասես:
Քսան, երեսուն երե[1] շալակած՝
Գնում էր հոտը հոգնած ու քրտնած.
Առյուծ ու վագր դեմն էին գալիս,
Քաջի ոտքն ընկնում և բարև տալիս
Ու խնդրում էին դյուցազն Տորքին՝
Մասնակից անել համեղ ընթրիքին:
Նա չէր շատակեր Շարայի նման,
Սիրում էր կաթը և մածուն ու թան.
Եվ չէր բարկացկոտ, այլ հեզ ու խոնարհ,
Բայց Տերն ազատեր, թե որ բարկանար...

Բ

Մեկ անգամ գյուղում Տորքին զայրացրին.
«Անգե՛ղ, գե՛շ Անգե՛ղ»,- հետքից գոչեցին:
Էլ չհամբերեց, պոկեց մի մեծ ծառ,
Ավլեց նրանով ամբողջ գյուղն իսպառ:
Փախան մարդիկը ճանճերի նման.
Էլ ո՞վ կկանգներ Տորքին հանդիման:
Բայց երբ որ նրան լավ ճանաչեցին,
Շատ մեծ հարգանքով պատվասիրեցին,
Պարերգ շինելով՝ գովաբանեցին.
Տղերք, աղջկերք, ձեռք ձեռքի տված,
Ե՛վ պարում էին, և՛ գովում Տորքին:
Էլ այնուհետև նրա դեմքն ահեղ
Առաջվա նման չէր թվում տգեղ:
Անգութ չէր Տորքը և ոչ էլ անգետ,
Լավ որմնադիր էր և ճարտարապետ.
Ահագին վեմեր նա բերավ տաշեց,
Իր քանդած գյուղը նորից նոր շինեց.

[1] **երե** – որսի խոտակեր կենդանի:



Տորք Անգեղ, Կառլեն Նուրիջանյան, Երևան, 1982թ.

Եվ այնուհետև իր ուժն ահագին
Նա գործ էր դնում միշտ դեպի բարին:
Նրանից առաջ շատ քաղաք ու գյուղ
Թալանում էին գողերն աներկյուղ.
Բայց երբ լույս ընկավ Անգեղ Տորք հսկան,
Ավազակները ծակուծուկ մտան:
Նա չէր գործածում ո՛չ թուր և ո՛չ նետ,
Միայն իր տեսքով անում էր անհետ.
Բայց երբ թշնամին երես էր առնում,
Նա այն ժամանակ ուժին էր դիմում.
Վերցնում էր քարեր, քարեր ահագին
Եվ կարկուտի պես թափում գլխներին:
Սև ծովի կողմից օտար թշնամիք
Թալանում էին և գերում մարդիկ.
Միշտ գալիս էին անթիվ նավերով՝
Այն էլ աշկարա[1] օրը ցերեկով,
Կողոպտում էին անթիվ գյուղորեք[2]:
Մեկ անգամ եկան խնդրեցին Տորքին,
Որ գնա օգնե խեղճ ժողովրդին.
Գնաց մեր հսկան, բայց նավերն արդեն
Հեռացել էին Սև ծովի ափեն:
Զայրացավ Տորքը, գոռաց, մռնչաց՝
Իբրև մի առյուծ նետահար եղած.
Բլրաչափ ժայռեր սարերից պոկեց,
Փախչող նավերի հետքից շպրտեց.
Դղրդաց ծովը, բարձրացավ ալիք,
Նավերը դարձան շարժուն խաղալիք:
Ահա՝ դարձյալ ժայռ, դարձյալ դղրդոց,
Շրջվում են նավերն իբրև օրորոց.
Էլի մեկ բլուր՝ մեծ քան զառաջին,
Ընկնում է ուղիղ նավերի գլխին:
Գնում են կրկին ժայռերը գունդ-գունդ,
Զարկվում նավերին և տանում անդունդ:
Ողջ կորան այսպես ավազակները,
Դեպի անհատակ ծովի խորքերը.
Նրանցից միայն մեկն ազատվեցավ,
Գլուխը պատռած՝ իր երկիրն հասավ.
Եվ այնտեղ այնպես հրաշքներ պատմեց,
Որ լսողներին նա սարսափեցրեց:

---

[1] **աշկարա** – թուրքերեն նշանակում է բացահայտ կերպով:
[2] **գյուղորեք** – գյուղեր:

Ահա այս անգութ բարբարոսության
Վերջ տվավ իսպառ մեր հզոր հսկան:

Գ

Գնում է Տորքը՝ ծառն ուսին դրած,
Ծառի ճյուղերից երեներ կախած.
Այնտեղ կար այծյամ ու վայրի ոչխար,
Եղնիկ, եղջերու, վարազ ու կխտար...
Տորքի համբավն էր արդեն տարածվել
Եվ քաղաքացոց նախապատրաստել.
Խանութ ու կրպակ ողջը կողպեցին,
Փողով, փողհարով դիմավորեցին:
«Եկա՛վ, հա եկա՛վ, գալի՛ս է, գալի՛ս»,-
Ամենքն էլ իրար իմաց են տալիս.
Թե՛ ծեր, թե՛ մանուկ, թե՛ աղջիկ, թե՛ կին
Եկան տեսնելու նորեկ հսկային:
Երբ Տորքը մտավ մեծ մայրաքաղաք,
Նրան կարծեցին շարժուն աշտարակ.
Իրավ, նա ցած չէր աշտարակներից,
Բուրգ էր նա՝ շինված անտաշ քարերից:
Ծառն ուսին դրած՝ գավազանի պես,
Քայլեր էր անում չորս կանգուն ու կես:
Այսպես նա հասավ մինչև ապարանք,
Արքայի վրա ազդեց մեծ զարմանք.
Վայր դրավ բեռը, բարձրացավ վերև,
Ծնկաչոք ընկավ արքայի առջև:
Թագավորն ասաց.- Ապրի՛ս, ապրի՛ս, Տո՛րք,
Դու չես մի հատ մարդ, այլ մի ամբողջ զորք:
Արքայի ծունկը Տորքը համբուրեց,
Արքան էլ նրա ուսին ձեռք դրեց:

Դ

Լսել էր արքան, որ հսկա մարդիկ
Չեն լինում խելոք և ոչ էլ ճարպիկ.
Բայց երբ Տորքի հետ լավ ծանոթացավ,
Նա այս կողմանե մի նոր գյուտ արավ:
Տորքին նա պահեց մոտ երեք ամիս,
Հետն էր նստեցնում միշտ ճաշ ուտելիս:
- Դու ի՞նչ ես կարծում,-մեկ օր նա հարցրեց,
(Հսկայի խելքը նա փորձել ուզեց).-

Ո՞րն է գերազանց՝ ո՞ւժը, թե՞ խելքը:
– Երկուսն էլ լավ են,– ասաց քաջ Տորքը.–
Փոքրիկ ուժի մեջ չի լինի մեծ խելք,
Ոչ էլ ուժեղը կլինի անխելք.
Բայց ի՞նչ է խելքը՝ ոչ ոք չգիտե,
Անխելքի համար խելոքն անմիտ է:
Ուրիշ է խելքը գլխապահության,
Եվ ուրիշ՝ խելքը հափշտակության.
Այդ ամենքն ունեն՝ թե՛ մարդ, թե՛ գազան,
Թե՛ խելոք լինի, թե՛ անմիտ, անբան:
Բայց կա մի այլ խելք, խելք դյուցազնական,
Որ հնարում է, ստեղծում է բան,
Որ մեզ տանում է միշտ դեպի բարին
Եվ մոտեցնում Արարչի գահին,
Որ բանեցնում է օդին ու ջրին,
Ծառայեցնում կրակին, հողին,
Շինում է գութան, կամ ու ճախարակ,
Հերկում, մշակում դաշտ ու ագարակ,
Որ քարին, փայտին տալիս է նոր ձև,
Նոր գործադրություն, և այն՝ հարատև.
Այս է ճշմարիտ խելքն, իմ կարծիքով,
Մարդը գազանից վեհ է սրանով...
Զարմացավ արքան, այլև հիացավ,
Երբ հսկա Տորքից այս բանն իմացավ:

Ե

«Այս ի՞նչ հրաշք է,– մեկ օր էլ արքան,
Տորքին նայելով, ասաց ինքն իրան.–
Արդյոք սեր էլ կա՞ այս մարդու սրտում,
Բայց ո՞վ կսիրե սրան աշխարհքում.
Որտե՞ղ կգտնվի այնպիսի մի կին,
Որ ուզի դառնալ սրան ամուսին.
– Տո՛րք,– ասաց արքան,– ես չեմ հավատում,
Որ սեր ունենաս քո կարծր սրտում:
Ժպտաց մեր հսկան ինչպես մի ծծկեր,
Երբ մորից լսեր, թե արի ծիծ կեր.
Եվ սրտի սերը իր վառ կայծերով
Փռվեց երեսին վարդի թերթերով:
– Իսկ ես, արքա՛ քաջ,– ասաց մեր հսկան,–
Ինձ որ ասեին, թե կա մի գազան,

Մի օձ, մի ծաղիկ, կամ մի անշունչ քար,
Չէի հավատա, որ սեր չունենար.
Երկինք ու գետինք, թե՛ ցամաք, թե՛ ծով,
Տիեզերքն ամբողջ լցված է սիրով:
– Տո՛ր, դու խոսում ես իբրև սիրահար,
Ընտրել ես անշուշտ մեկին քեզ համար:
– Ո՞ւմ պետք է ընտրեմ հարմար իմ սրտին,
Ես դեռ չեմ գտել ինձ հարմար մի կին.
Հեռու աշխարհում մեր սերնդից կան,
Բայց ես չգիտեմ այն երկրի ճամփան:
Մեկին տեսնում եմ՝ այնտեղ երազում՝
Որպես թե մի խոր ձորում է կենում՝
Ինձ նման անբախտ, ինձ նման մենակ,
Բայց ոչ ինձ նման տգեղ, այլանդակ.
Նա գեղեցիկ է և շա՛տ գեղեցիկ,
Ինչպես՝ նոր ծագած կարմիր արևիկ:
Նա ինձ երազում հաստատ խոսք տվավ
Եվ խոստանալով՝ մի պայման դրավ.
«Եթե գաս,– ասաց,– կռվես ու հաղթես,
Դու ինձ կստանաս, կառնես կբերես»:
Հիմա չգիտեմ՝ որտե՛ղ կգտնեմ,
Որ կռվեմ, հաղթեմ ու առնեմ բերեմ:

– Ես իմաց կտամ իմ բդեշխներին[1],
Նրանք կգտնեն քո գեղեցկուհին:

Երգ երկրորդ

Ա

Ամառնամուտ է. Լոք սարն իր գագաթ
Դաշտեցոց համար շինել է դրախտ.
Ո՛ր կողմ նայում ես՝ տեսնում ես հրճվանք,
Անմեղ, երկնային սիրո փաղաքշանք.
Ծաղիկներ գույն-գույն և անուշաբույր
Տալիս են իրար քնքուշիկ համբույր.
Անթիվ աղբյուրներ՝ վճիտ, սառնորակ,
Իրար գրկելով՝ մտնում են ձորակ.
Այս տեսարանից վերացավ հսկան
Եվ իսկույն չոքեց դեմ Արեգական.

1 **բդեշխ** – Հին Հայաստանում չորս մեծ նախարարությունների պետեր:

Նա ահեղ ձայնով երգեց մի մաղթանք,
Լեռներ ու ձորեր տվին արձագանք:

Բ

Այստեղ մի հովիվ մոտեցավ Տորքին՝
Մի ոչխարակալ[1] գավազան ձեռքին.
Կարծես ուղարկեց նրան արեգակ
Մեր հսկայի մոտ՝ իբրև հրեշտակ.
– Ո՞վ ես դու,– ասաց,– հսկա՛յդ մեծազոր,
Եվ ո՞ւմ ես կանչում ձայնովդ հզոր:
– Ես մի պանդուխտ եմ,– ասաց մեր հսկան,–
Ինչպես մոլորված մի թափառական.
– Այս ի՞նչ երկիր է մեր առջև ընկած,
Ի՞նչ ավաններ են դաշտ ու ձոր լցված:
– Ճշմարիտն ասած՝ ես լավ չգիտեմ
Սրանց անունը, որ մեկ-մեկ թվեմ:
Եվ հովիվն անմեղ՝ իր գավազանով
Ցույց տվավ Տորքին իրանց անունով
Մի քանի քաղաք և մեծ-մեծ ավան...
Իսկ այս էլ ահա ամրոցն է Ուփրեթ,
Որ պատկանում է մի շատ աննման
Եվ շատ գեղեցիկ մի որբ աղջկան:
– Այդ ի՞նչ աղջիկ է, և անունն ի՞նչ է:
– Նրա անունն է Հայկանուշ-Սիրուն...
– Ինչո՞ւ ուրեմն մարդու չի գնում:
– Իր անվան վայել փեսա չի գտնում:
Ասում են՝ շուտով նրա մոտ կգա
Հեռու աշխարհից մի մարդ աժդահա.
Այդպես է երգել մի պանդուխտ գուսան,
Մեր Հայկանուշն էլ մնում է[2] նրան:
Հուզվեցավ Տորքը, երեսը փայլեց.
Պարզամիտ հովիվն անգամ նկատեց...
– Երանի՜ նրան,– ասաց պատանին,–
Ով Հայկանուշին կառնե ամուսին.
Նա շատ բարի է և այնքա՜ն գթած.
Ով լծկան չունի, լծկան է տալիս,
Շատերին լծած գութան է տալիս,
Ցուղ է թե պանիր, նա բոլոր տարին

[1] **ոչխարակալ** – ոչխար բռնող:
[2] **մնալ**– *այստեղ*՝ սպասել:

Միշտ բաժանում է չունեցողներին:
– Խնդրեմ, ցույց տաս ինձ,- ասաց մեր հսկան,-
Ուփրեթ գնացող կարճառոտ ճամփան:
– Այս ճամփան ահա թե ուղիղ բռնես,
Դեռ կեսօր չեղած՝ Ուփրեթ կհասնես:

Գ

Հայկանուշն այսօր շատ լավ ճաշ ունի,
Լավ ձուկ, խորոված, թեև՝ անգինի.
Շատ է ցանկանում, որ հյուր գա իրան
Թեկուզ երազում տեսած աժդահան:
Բերդի դռները բախում են ահա,
Եվ այդ բախողն է մի մարդ աժդահա.
Բախում է, բախում, բայց չեն բաց անում,
Կարծես նրա հետ մի խաղ են խաղում.
-Սո՛ւսս, ձայն չհանե՛ք, դուռը չբանա՛ք,-
Ասաց տիրուհին, բայց... ա՛յ քեզ հանաք.
Երկաթե դուռը հսկան խորտակեց,
Ինչպես գեչի[1] թուղթ նրան ծալծլեց:

Դ

Աղջիկ առնելը չի լինի այդպես.
Դու շատ ուժով ես, այդ ես լավ գիտեմ,
Բայց ինչ էլ լինես, ես պետք է կռվեմ:
Քո եղունգները, այո՛, շատ են սուր,
Բայց ես էլ ունեմ վահալանի թուր[2],
Որ չի դիմանա և ոչ մի հսկա,
Թեկուզ նա լինի քեզ պես աժդահա...
– Սիրո՛ւն Հայկանուշ,- ասում է հսկան,-
Արի մի՛ արա դու ինձ խելքահան.
Ես վախեցող չեմ և ոչ մի թրից,
Թեկուզ նա լինի ընկած երկնքից:
Խոստովանում եմ ինձ հաղթահարված,
Ես քո գերին եմ՝ քո ոտքերն ընկած:
Լեռներ կարող են իմ ձեռքով փլչել,
Բայց քեզ, Հայկանո՛ւշ, չեմ կարող դիպչել...
– Եթե այդպես է, ուրեմն գնա՛

---

[1] **գեչ** – տե՛ս **կեչի** – սպիտակ ու հաստ կեղևով սաղարթավոր ծառ:

[2] **վահալանի թուր** – առասպելական մեծ սուր՝ գերբնական հատկություններով, որն, ըստ ավանդության, պատկանել է Տրդատ թագավորին:

Եվ բեր ինձ համար քսան աժդահա.
Կերթաս Ձորոփոր, ուր քարայրներում
Քեզ պես հաղթանդամ մարդիկ են կենում:
Եթե նրանցից քսանին գերես,
Դրանով իմ անվան պատիվ կբերես,
Եթե ոչ՝ գիտեմ՝ մերոնք ի՞նչ կասեն,
Կասեն՝ փախցրել է, փախցրել է նրան
Լեռներից փախած մի թափառական...

Երգ երրորդ

Ա

Գնաց մեր հսկան՝ ձեռքին մի գերան,
Որ գործ էր դնում իբրև գավազան:
Հասավ Ձորոփոր՝ հսկաների մոտ,
Մտավ մի խրամ[1] խոր ու քարքարոտ.
Առյուծի նման այնտեղ մռնչաց,
Ու ահեղ ձայնից ձորը դրմբաց.
Դուրս եկան հսկայքն իրենց բներից,
Խրամի ժայռի պատռվածքներից,
Նայեցին տեսան մեր հսկա Տորքին՝
Ներքևում կանգնած, մի գերան ուսին.
Ձեռքով են անում. – Արի վե՛ր՝ մեզ մոտ,–
Ասում են հսկայքն՝ հյուրերի կարոտ:
– Բարո՛վ ես եկել, մեր աչքի լո՛ւյսն ես,–
Ամեն նոր մտնող ասում էր այսպես:
«Դու ո՞վ ես կամ ի՞նչ»՝ էլ չեն հարցնում.
Այս տեսակ կանոն չկա նրանցում:
Մինչև երեք օր հյուրին կպատվեն,
Հետո՛ այդ բանը նրան կհարցնեն:

Բ

«Երբ վայելեցի այսքան աղուհաց,–
Մեր Տորքն ինքնիրեն այսպես մտմտաց,–
Էլ ինչպե՞ս կարամ սրանց հետ կռվել,
Մեկի կամ մյուսի մի մազին դիպչել.
Թող Հայկանուշը ա՛յլ բան պահանջե
Եվ ոչ իմ եղբարց արյունը ուզե.

[1] **խրամ** – բնակավայրի պարսպի՝ ամրության շուրջը փորված խոր ու լայն փոս, որ լցնում էին ջրով՝ հակառակորդի առաջխաղացումն արգելելու համար:

Ինչ որ կարող է մարդ անել սիրով,
Նույնը նա անել կարող չէ ուժով:
Թող ուժը լինի մարդուս օգնական,
Բայց սերը լինի միշտ գործածական.
Այս մարդիկն ահա անխարդախ սիրով
Ինձ կաշկանդեցին սուրբ աղուհացով»:

Գ

Չորս օրից հետո Տորքը բացվեցավ,
Հսկաների հետ այսպես խոսեցավ.
– Սիրելի՛ եղբայրք, չորս օր է անցել,
Բայց դուք իմ մասին բան չեք իմացել,
Թե ի՛նչ պատճառով, ինչի՛ց ստիպված՝
Ես թափառում եմ՝ սար ու ձոր ընկած:
Դուք ինձ ցույց տվիք սեր, ուրախություն,
Քաջերին վայել հյուրասիրություն.
Աստված շե՛ն պահե ձեր տունն ու տեղը,
Հաստատ պահե ձեր սերունդն ու ցեղը.
Ձեզ մոտ եկել եմ ես մի խնդրանքով՝
Պատմեմ ահա ձեզ մի քանի խոսքով.
Ուփրեթ բերդումը, տեղյակ կլինեք,
Կենում է մենակ մի սիրուն աղջիկ.
Նրան ընտրել եմ ես ինձ հարսնացու,
Ուզում եմ առնել՝ առանց կռվելու.
Եկել եմ հիմա ու ձեր ոտքն ընկել,
Ձեր օգնությանն ու խորհրդին դիմել:
Կամ ինձ մորթեցե՛ք, թաղեցե՛ք այստեղ,
Կա՛մ եկեք գնա՛նք ինձ հետ միատեղ,
Որ առանց կռվի՝ առնենք մի աղջիկ,
Խաղաղ ու սիրով կատարենք հարսնիք:
Լռեց մեր հսկան, խոսեց ծերունին.
– Տղե՛րք,– ասաց նա մյուս հսկաներին,–
Հին հեքիաթներում լսած կլինեք՝
Երբ մարդուկները ուզում են աղջիկ,
Եվ այն աղջկան փախցնում են դևեր,
Տանում մութ աշխարհ կամ մթին ձորեր,
Մարդուկն այնտեղից հանում է նրան
Եվ դառնում նրա քաջագործ փեսան:
Մի մեծ պարծանք է, երբ թզուկ մարդիկ
Ուժով ու կռվով առնում են աղջիկ:

Բայց ի՞նչ պարծանք է, որ զորեղ հսկան
Իր ուժը ցույց տա ապագա կնկան.
Դրա հակառակ՝ եթե ցույց տար սեր,
Այդ ճշմարիտ որ պարծանք կլիներ:
Ես շատ հավան եմ մեր հյուրի մտքին,
Այդպե՛ս է վայել վեհանձն հսկային:
Մեր Հայկանուշը՝ անկախ, ինքնիշխան,
Կենում է բերդում իր հայրենական.
Գնացե՛ք ուրեմն քաղցրությամբ, սիրով,
Ուրախ ու զվարթ, երգով ու պարով
Առաջարկեցե՛ք համառ աղջկան,
Որ տեղիք չտա մենամարտության:
Ես էլ ձեր հետքից խոնջացած ոտքով
Կգամ օրհնելու պսակն իմ ձեռքով.
Թողե՛ք ձեզ հետ գան տղերք, աղջկերք,
Որ այնտեղ սարքեն գեղեցիկ պարերգ:
– Ես համաձայն չե՛մ,– գոչեց մի հսկա,
Որ թիկն էր տված մի ժայռի վրա,–
Հայկանուշն ունի քսան փեսացու՝
Մինը մեկէլից զորեղ, ահարկու.
Այդ գազանները, գլուխ վեր առած,
Միշտ թափառում են՝ սար ու ձոր ընկած...
Ես հաստատ գիտեմ, որ առանց կռվի՝
Անհնարին է, ոչինչ չի լինի:

Դ

Գնաց բանակը, կեսօրին ահա
Լուր եկավ արդեն, որ բերդում է նա.
Բերդում սկսվեց սրինգ ու թմբուկ,
Եվ ամբողջ գիշեր բարձրացավ աղմուկ.
Թնդաց Ուփրեթը, դղրդաց սար, ձոր,
Եվ ձայնը հասավ մինչև Ձորոփոր:
Ձորոփորեցի քսան ածդահա
Լույսը չբացված՝ եկել են ահա.
Բերդի պատի տակ՝ իրարից հեռու,
Շնթռել են[1] իբրև գազան ահարկու:
Մերոնք էլ եկան Տորքի հետ մեկտեղ՝
Մինչև երեսուն հսկաներ ահեղ:
– Հիմա թողե՛ք ինձ,– ասաց ծերունին,–

[1] **Շնթռել**– (անարգական)անշնորհք կերպով փռվել:

Որ հասկացնեմ մեր այս քաջերին
Ուղիղ կանոնը մենամարտության՝
Արգելք չլինեն մեր ուրախության.
Եվ մեղմ հասկացրեց, որ վիճակ ձգեն,
Վիճակն ում ընկնի, նախ նրանք մրցեն...
Մինը մեկէլից խիզախ, համարձակ՝
Թնդաց գետինը նրանց ոտքի տակ.
Մերթ բարձրանում են, մերթ գետնին քսվում,
Մերթ գոմշի նման գլուխ գլխի զարկում,
Չոքում ու կանգնում, վայր ընկնում կրկին,
Ոչ մեկի մեջքը չի խփվում գետին:
Ամբողջ երեք ժամ այսպես կռվեցին.
Վերջն, ինչպես եղավ, մեկը սայթաքեց,
Մեկէլը նրան հաղթած համարեց.
Բայց ընկած հսկան վեր թռավ կրկին
Եվ նորից բռնեց իր ախոյանին,
Բռնեց, բարձրացրեց և այնպես զարկեց,
Որ մեկ թզաչափ գետնի մեջ թաղեց:
– Ապրի՜ս, քա՜ջ, ապրի՜ս,– հյուրերն ասացին,
Հաղթող ըմբիշին գովաբանեցին.
Բայց մյուսներին էլ նա պիտի հաղթեր,
Որ նպատակին հասած համարվեր:
Եվ հեշտ չէր հաղթել բոլոր քսանին,
Նա հազիվ հաղթեց միայն երեքին.
Հինգերորդ հսկան չորս հոգու հաղթեց,
Իսկ տասներորդը տասին վայր ձգեց.
Անունն Ավագ էր՝ ամենից զորեղ,
Սա պիտի հաղթեր և Տորքին ահեղ:

Ե

Տորքը վեր կանչեց Ավագ հսկային
Եվ լուռ նստեցրեց նրան իր կողքին:
– Դո՛ւ եղար հաղթող,– ասաց մեր հսկան:–
Քեզ արժանի է պարգև պատվական,
Բայց դարձյալ մեկին դու պիտի հաղթես,
Որ մրցանակը լրիվ վաստակես.
Եթե դու ինձ հետ կռվել չուզենաս,
Դարձյալ մեր այս տան փեսա կդառնաս:
Այս աղջիկներից մեկը քեզ կտամ
Եվ քեզ հետ սիրով եղբայր կդառնամ:

– Իսկ Հայկանուշին դու ինքդ կառնե՞ս
Եվ խաղ ու պարով հարսանիք կանես...
Ես համաձայն չեմ, կկռվենք մեկտեղ,
Թեկուզ դու լինես ինձանից զորեղ.
Թող Հայկանուշի համար ես մեռնեմ,
Բայց ոչ ուրիշի ամուսին լինեմ:
– Հոգնած ես այսօր, դեռ հանգստացի՛ր
Ու ինձ հետ փոքր-ինչ մո՛տ ծանոթացիր:
– Շատ լավ պայման է,– ասաց ծեր հսկան,–
Ձեր մրցությունը կթողնենք վաղվան:

Զ

Ճաշելուց հետո ծերունի հսկան
Կանչեց ամենքին մարմնամարզության.
Խաղեր խաղացին, խաղեր զվարճալի,
Բայց հսկայական և շատ ահռելի:
Այս խաղերի մեջ մեր Տորք աժդահան
Հավասար իրան չուներ ախոյան:
Ծերունին արդեն տվել էր պատվեր,
Որ մեջտեղ բերեն կաղնու թարմ ոստեր.
Տղա ու աղջիկ եկան խմբովին,
Շրջապատեցին մեր Տորք հսկային,
Իսկ փոքրիկները Տորքի գիրկն ընկան,
Նրանց փայփայեց քնքշացած հսկան:
Մի երգ երգելով ձայնով ներդաշնակ՝
Կաղնու ոստերից հյուսեցին պսակ:
Այս մեկ պսակը,– ասաց ծերունին,–
Պետք է ընծայեմ Ավագ հսկային:
– Ես արժանի չեմ,– ասաց Ավագը,
Քանի որ մեր մեջ կա հզոր Տորքը.
Նա բարձր է կանգնած ամեն նախանձից,
Այդ հայտնի դարձավ հիմիկվա խաղից.
Նա մարմնեղեն չէ, այլ ժայռից կազմված,
Կամ թե ո՞վ գիտե, մա՞րդ է, թե՞ Աստված:
– Ուրեմն՝ հիմա,– ասաց ծերունին,–
Ինչպես Տորքն ասաց, կդառնաս փեսա,
Կընտրես քսանից, որին կամենաս,
Եվ հզոր Տորքին եղբայր կդառնաս:
– Իսկ դո՛ւ, Հայկանո՛ւշ,– դարձավ ծերունին

Ուրախ ժպիտով դեպի տիրուհին,-
Ի՞նչ պատճառ ունես հիմա բերելու,
Միտք չունե՞ս արդյոք մենամարտելու:
- Ես հնազանդ եմ, ինչպես որ վճռես,
Կմենամարտեմ, եթե հրամայես:
- Ես կհրամայեմ, որ մեր օրենքով
Մրցեք իրար հետ, բայց... սիրո՛ զենքով.
Թող սերը լինի ձեր զենքը միակ,
Սիրեցե՛ք միմյանց մեկդ մյուսից շատ,
Դու՝ նրան պաշտպան, նա՝ քեզ պահապա՛ն.
Ահա՛ օրենքը սուրբ ամուսնության: -
Ծերունու առջև Տորք և Հայկանուշ
Չոքեցին՝ ինչպես երեխայք քնքուշ,
Կաղնու պսակներն առավ ծերունին,
Օրհնելով դրավ երկուսի գլխին.
- Հապա՛, երեխե՛ք, թմբուկ ու փողեր
Հնչեցրե՛ք մեկտեղ, թող թնդան ձորեր...

Է

Գուգարաց բդեշխն իր այրուձիով
Եկավ արքայի հրովարտակով.
Ահա բաց արեց մի երկայն գլան



Ու միջից հանեց գիրն արքայական:
Եվ իր այդ գրով արքան ինքնակալ
Կարգել էր Տորքին հզոր կուսակալ
Եվ իր աշխարհի մասն արևմտյան
Հանձնել էր նրա կառավարության:
Կարդացին գիրը առանձին պատվով,
Տորքն էլ ընդունեց մեծ պատկառանքով:
Եվ այլ թանկագին ընծաներ պես-պես
Հանեց բդեշխը և բերավ հանդես.
    Հսկա հյուրերը մնացին ապշած,
Երբ տեսան Տորքին՝ այսչափ մեծարված:
Հարսնիքն սկսվեց մի նոր խնդումով,
Նոր զվարճությամբ ու կերուխումով.
Արքայից եկած արծաթն ու ոսկին
Հորդ անձրևի պես տեղաց գլխներին...

ՀԱՅԻ ՈՒԺԸ

Հայրենապաշտ դաստիարակություն՝ ահա՛ մեր փրկության խարիսխը։

Գարեգին Նժդեհ

Ստեփան Կուրտիկյան

ՀԱՅՈՑ ԶԱՆԳԸ

Արյունոտ սուլթանը կանչեց իր խորհրդականներին և հարց տվեց.

– Հավատացյալներ, իսլամի՛ որդիներ, ալլահի կամքով մենք կործանեցինք անհավատ հայերի քարակոփ քաղաքներն ու շենները, վանքերն ու եկեղեցիները: Կտրեցինք նրանց երդիկների ծուխը: Սրի քաշեցինք բոլորին, ծիլ ու ծաղիկը չորացրինք: Բայց ահա նորից են ծաղկել հայոց այգիները, նորից է ծուխ ելնում նրանց օջախներից, հայ մաճկալն էլի ամուր բռնել է մաճը, և սերմնացանը հողին է հանձնում սերմը...

Դատեցե՛ք, ո՛վ իմաստուններ, ի՞նչ բան է այս:

Խորհրդականները լսում էին սուլթանին՝ լուռ, մտախոհ:

– Սուլթանն ապրա՛ծ կենա,– պատասխանեց մեկը վերջապես,– ինչ-որ տեղից, անիմանալի խորհրդով զանգի ձայն է լսվում անդադար. այդ ձայնն է կյանքի կոչում հայոց, ծաղկեցնում նրանց արտերն ու այգիները:

– Բայց չէ՞ որ ավերեցինք բոլոր եկեղեցիները, քանդեցինք բոլոր զանգակատները և զանգերի պղնձից թնդանոթներ ձուլեցինք: Ապա որտեղի՞ց է այդ զանգի ձայնը:

– Տերն ապրա՛ծ կենա, չգիտենք՝ որտեղի՛ց, երկնքի և երկրի ո՛ր հարկից է ղողանջում այդ զանգը:

Սուլթանը տագնապով լսեց խորհրդականներին, հրաման արձակեց.

– Գնացե՛ք, գտե՛ք և լռեցրե՛ք Հայոց Զանգի ձայնը:

Եվ խորհրդականները, սուլթանի զայրույթից տագնապած, ցրիվ եկան Հայոց աշխարհով մեկ, գնացին բարձրաբերձ լեռներն ու անդնդախոր ձորերը, ելան անմատչելի գագաթներն ու ժայռանիստ քարափները, խորացան մթին անտառների մեջ: Ու լուսաբացին թե իրիկնամուտին՝ ամեն տեղ նրանք լսում էին ղողանջներ, բայց, ո՛վ զարմանք, ոչ մի տեղ չէին գտնում Հայոց Զանգը:

Երկար որոնումից հոգնած՝ նրանք վերադարձան ձեռնունայն և վհատ:

– Սուլթանն ապրա՛ծ կենա,– աղերսագին խոսեց նրանցից ավագը,– Հայոց աշխարհում ամեն տեղ լսվում է զանգի ձայնը, բայց ոչ մի տեղ կարելի չէ տեսնել զանգը և լռեցնել նրա ձայնը: Այդ զան-

գը գուցե Արարատի անմատչելի կատարին է, գուցե երկրի դժոխային խորքերում, և չար քամիներն են բերում այնտեղից նրա ղողանջը: Սուլթանն ապրա՛ծ կենա, հրաման արձակեցեք, որ կանգ առնեն չար քամիները, և այդ ձայնը է՛լ չի լսվի, հայոց հողերը է՛լ չեն ծաղկի երբեք:

Սուլթանը փրփրեց. ի՜նչ անմտություն. ինչպե՞ս թե դադարեցնել քամիները...

– Քամին Աստծունն է, և չգիտե՞ք, թե քամին կանգնեցնելը հակառակ է ալլահի կամքին,– գոռաց նա ահեղաձայն,– իսկ Հայոց Զանգը գտնելը և ջահաննամն ուղարկելը հաճելի է իսլամին: Ձեզ քառասուն օր ժամանակ: Գնացե՛ք, գտե՛ք զանգը և փոշի՛ դարձրեք: Աշխարհի վրա չպե՛տք է լսվի Հայոց Զանգի ձայնը...

Եվ գնացին սուլթանի խորհրդականները, քառասուն օր ու քառասուն գիշեր թափառեցին, բայց նորից վերադարձան ձեռնունայն ու վհատ:

– Սուլթանն ապրա՛ծ կենա,– երկյուղած՝ գլուխ խոնարհեցին նրանք,– Հայոց երկրի վրա ամեն տեղ լսվում է այդ անիծյալ զանգի ձայնը, բայց զանգը գտնել անհնարին է. շեյթա՛նն է պահպանում:

Մոլեգնեց արյունոտ սուլթանը, անիծեց իր բոլոր փաշաներին ու բեկերին, կախարդներին ու աստղագետներին, որ անզոր են կատարելու իր հրամանը:

Ծերունի մի ֆաքիր էր ժամանել սուլթանի քաղաքն այդ օրերին: Նա գալիս էր Հնդկաց աշխարհից, եղել էր շատ երկրներում, շատ իմաստունների հետ էր նստել, անիմանալի շատ գաղտնիքներ իմացել, և ինքն էլ իմաստուն դարձել:

Սուլթանն արքունիք հրավիրեց օտարական ծերունուն և հարցրեց նրան.

– Ֆաքի՛ր ամենագետ, ասա՛, ինչո՞ւ իմ ավերած հայոց շեներն ու օջախները, պարտեզներն ու այգիները ծաղկում են էլի, և ինչո՞ւ իմ նազիրն ու վեզիրը չեն կարողանում գտնել Հայոց նզովյալ Զանգը... Ասա՛, բա՛ց արա այդ գաղտնիքը, և ես կվարձատրեմ քեզ արքայական պարգևներով:

Ֆաքիրը դանդաղ քաշեց համրիչի հատիկները, խոժոռեց արևավառ, չորացած դեմքը, երկար նայեց սուլթանին և խոսեց.

– Սուլթանն ապրա՛ծ կենա, Հայոց Զանգը անտեսանելի է: Դա ո՛չ երկնքից



Տաթևի վանքի զանգը

է կախված, ո՛չ էլ երկրի խորքումն է: Այդ զանգը ձուլված է Հայոց աշխարհի հացի ու ջրի հետ, հայ աղջիկների սևաթույր աչքերի և այրերի հաղթ բազուկների հետ, և զուր են ձեր որոնումները: Սուլթանն ապրա՛ծ կենա, այդ հողից ու ջրից չի լինի անջատել Հայոց Զանգը, և ձեր զորությունն անկարող է փշրել, ոչնչացնել այն: Իսկ քանի կա Հայոց Զանգը, չի դադարի հայոց ծխանի ծուխը...

Կատաղեց սուլթանն իր անզորությունից, արյունակալեցին աչքերը, և նա վճիռ արձակեց շղթայակապ բանտ նետել իմաստուն ծերունուն: Ապա նորից հրաման տվեց կործանել և ամայացնել հայոց շեներն ու այգիները, անխնա կոտորել ահելին ու ջահելին և գանգերի բուրգը ամպերին հասցնել...

Ի կատար ածվեց արյունոտ սուլթանի հրամանը: Ի կատար ածվեց, երբ մայրամուտ էր արդեն: Իսկ երբ լուսաբացին արևը ելավ աշխարհի վրա, և փարատվեց խավարը աշխարհի վրա, նորից պայծառ երանգներով ծիածանվեցին հայոց այգիներն ու շեները, վերստին ծխացին հայոց ծխանները, սերմնացանը նոր հորովելով հողին հանձնեց սերմը, և կրկին լսվեց նորածին մանկան անուշ դայլայլը:

Եվ մինչև այսօր էլ տագնապով է լսում թշնամին Հայոց Զանգի ղողանջը, որ երջանկավետ փռվում է մեր ազատ լեռնաշխարհում...

Ըստ Սերո Խանզադյանի

ՀՈՂԻ ԲՈՒՅՐԸ

Երեք երաժիշտ, երեք ջերմ ընկեր, երեք անբախտ տարագիր թողել են իրենց հայրենիքը և ընկել են աշխարհեաշխարհ՝ իրենց երգով մի պատառ հաց վաստակելու: Նրանցից ավագը արդեն զառամ է ու կույր: Մյուս երկուսը դեռ երիտասարդ են, բայց հայրենիքի կարոտից մաշվել, ծերացել են:

Գրեթե ամեն օր նրանք նվագում և երգում են օտարների համար՝ մի կում գինի ու մի պատառ հաց ստանալու հույսով:

Մի օր այդ օտար երկրի թագավորը լսում է նվագածուների եռյակի մասին: Նա երաժիշտներին հրավիրում է իր ապարանքը, որ ապրեն այնտեղ և մշտապես ուրախացնեն իրեն ու իր կոչնականներին[1]:

Երաժիշտները ամենայն բարեխղճությամբ կատարում են իրենց գործը, բայց նրանց նվագի և երգի մեջ ուրախություն քիչ կա: Ինչ նվագում են կամ երգում, թախծոտ է ու տրտում: Ինչ խոսում են, հիշում են հեռուներում թողած հայրենին:

Մի օր բարկացավ թագավորը, երաժիշտներին հրամայեց անհապաղ հեռանալ իր երկրից:

– Եթե մինչև արևի ծագելը դուրս չգաք իմ երկրի սահմաններից, ապա ես գլխատել կտամ երեքիդ էլ,– սպառնաց ահեղ թագավորը:

Խավարչտին[2] գիշեր է: Երեք երաժիշտները ճեպով հեծնում են իրենց ձիերն ու սլանում դեպի հայրենի երկիր:

Սլանում են երեք նվագածուները՝ փորձելով սրտով գտնել դեպի տուն տանող ճանապարհը: Ձիերը հևում են սանձակոծ[3] վազքից: Գիշերն սկսում է սպառվել, մոտ է արշալույսը: Փախչողների սրտում ահագնանում է վախը:

Կույր երաժիշտը հոտոտում է օդը: Աչքերի կույր մթությամբ շոշափում է երկինքը. չե՞ն հասել արդյոք իրենց հողին, իրենց աշխարհին:

Առավել տագնապում են երաժիշտները, երբ լսում են ցայգա-

---

[1] **կոչնական** – կոչունքի՝ ճաշկերույթի հրավիրված հյուր:

[2] **խավարչտին** – խավարամած՝ շատ խավար:

[3] **սանձակոծ** – սանձով ծեծված, արագ վազելիս սանձը թափահարելով:



Զորագետի կիրճը.
կամուրջ Միսխանա վտակի վրա, XI դ.

հավի կանչը: Ուր որ է լույսը կբացվի, ու դաժան թագավորի մարդիկ կբռնեն իրենց:

Ահա աղոթարանն[1] սկսեց շառագունել. մշուշի մեջ ուրվագծվում են անողորմ թագավորի զինվորները:

– Մահն է մոտենում մեզ,– աղաղակում են երիտասարդ երաժիշտները:

Կույր երաժիշտը կտրուկ ձգում է ձիու սանձը.

– Զավակներս, մեր երկրի օդն եմ շնչում հիմա ես: Հասել ենք, հասել ենք մեր աշխարհը:

– Ո՛չ, վարպետ, մենք չենք հասել մեր հողին. մեր երկիրը հեռու է, մեր մահը՝ մոտ,– աղիողորմ ձայնում են մյուս երկուսը:

– Կանգնեցե՛ք,– գոչում է կույր երաժիշտը,– մի բուռ հո՛ղ տվեք ինձ:

Զահել երաժիշտները նրան մի բուռ հող են տալիս: Կույրը հոտոտում է հողը և ցնծությամբ ավետում.

– Սա մեր հո՛ղն է, մեր հողի բո՛ւյրը: Մի՛ վախենաք, զավակնե՛րս, մենք արդեն մեր աշխարհում ենք:

Երիտասարդ երաժիշտները ետ են նայում, տեսնում՝ թագավորի զինվորները կանգ են առել ու նայում են իրենց. նրանք այլևս չեն համարձակվում առաջ գալ:

Երաժիշտները երկարատև դեգերումներից հետո հասել են իրենց աշխարհը: Նրանք փրկված են:

---

[1] **աղոթարան** – հնում՝ արևածագ, արշալույս:

Ըստ Դայկ Խաչատրյանի

Պատգամ

Տիգրանակերտի թագավորական պալատի գահասրահում լռություն էր: Ոչ ոք չէր հանդգնում խանգարել արքայից արքա Տիգրան Մեծի միայնությունը: Նա նստել էր՝ գլխահակ, ձեռքերի մեջ սեղմած արծվենի ճակատը: Վերջապես բարձրացրեց գլուխը, աչքերը հառեց դահլիճի կիսամութին: Հայացքի առջև կանգնեց փառապանծ պապը՝ Արտաշեսը, որն ասես ինչ-որ բան էր պահանջում:

– Զեկուցե՛մ,– գահասրահի լռության մեջ լսվեց Տիգրանի ձայնը:– Մի՛ շտապեցրու, աշխարհակա՛լդ Արտաշես, հիմա կզեկուցեմ: Կյանքումս առաջին անգամ ուզում եմ զեկուցել: Միայն այս անգամ և միայն քեզ: Մինչև հիմա ուրիշներն են զեկուցել: Այժմ լսի՛ր.

Քո մեծության շվաքի տակ ես չհանգստացա ոչ մի օր: Պաշտեցի աստվածներին, հայոց պապերին իմ հզոր, պաշտեցի երկիրն իմ հայկյան և որդան կարմիրը: Ասքանազյան մեր նժույգները հասան Մեծ ծովի, Պոնտոսի Վրկանայի ափերը: Քանի՞-քանի՞ բանակներ ելան իմ դեմ: Եկան, բախվեցին ու անցան, բայց ես Հայքից ոչ մի շյուղ չզիջեցի: Չէի ապրի աշխարհի վրա, եթե բախտը ինձ ստիպեր զիջել: Ապրեցի՝ կարծելով, թե աստվածները փառքի և վայելքի առատ բաժին են շնորհել ինձ: Ավա՜ղ, ամեն ինչ խաբուսիկ էր: Ես զոհեր էի մատուցում աստվածներին, բայց նրանք դավաճանում էին ինձ, գահեր էի կռում որդիներիս համար, դավաճանում էին նաև նրանք: Կռվեցի օտարների դեմ, ապերախտ որդիների ու աստվածների դեմ, բայց չգտա հայոց բախտի բանալին: Ցավով համոզվեցի, որ հայն իրեն բաժին ընկած բերկրանքը վայելում է տագնապով: Այժմ մահս մոտ է, և ես ազատ Հայք եմ ժառանգում իմ հետնորդներին՝ առանց պահանջելու, որ նրանք ինձ հատուցեն փառքի հուշասյունով: Իմ միակ պատգամն է՝ պահել ու պահպանել *հայոց լեզուն*:

Ո՛վ մեծդ արքաներից, դու գիտես, որ հանուն հայկյան աշխարհի՝ սպանեցի երկու որդիներիս: Հայրական վշտի այսպիսի բեռով ի զորու չեմ ննջել Արտաշեսյաններիդ կողքին: Կհրամայեմ, որ ինձ համար դամբարան կառուցեն Մթին լեռներում՝ հեռու երկրից ու մարդկանցից: Ների՛ր, որ սրանով խախտում եմ աստվածային ավանդները:

Արքայից արքան մոտեցավ դռանը:

– Արտավա՛զդ,– կանչեց:

Որդին խոնարհ կանգնեց հոր առջև.

– Լսո՛ւմ եմ, արքայի՛ց արքա:

– Արտավա՛զդ, աստվածների կամքով շուտով հրաժեշտ կտամ մեր հայկյան երկրին և բոլորիդ: Ինձնից հետո դու երկո՛ւ զենքով պիտի պահես երկիրը:

– Որո՞նք են այդ զենքերը, հա՛յր:

– Հայոց լեզուն և հայկյան սուրը: Հիշի՛ր, տղա՛ս, դու կարող ես սուրը պատյանի մեջ դնել, վերստին հանել: Կոտրվելու դեպքում նորը կռել: Սակայն եթե սխալվես և հայոց լեզուն դնես պատյանի մեջ, այլևս չես կարող հանել և ոչ էլ ստեղծել նորը: Ամեն ինչ կարելի է կառուցել, վերագտնել բոլոր կորուստները, բայց եթե կորցնես մայրենին, կկորցնես և՛ քեզ, և՛ վարքը հայոց մեծաց, և՛ Հայքը համայն, և՛ ապագան մեր ասքանազյան ազգի:

– Չե՛մ շեղվի քո իմաստուն խորհրդից, հա՛յր իմ:

Տիգրանը շարունակեց.

– Մաղթում եմ, որ աներեր մնա քո գահը, և հայոց քաղաքամայրը չթափառի տերության այս ու այն կողմը:

Պայծառ առավոտ էր: Դեպի Մթին սարերն էր բարձրանում մի մարտակառք: Շուտով ժայռեղեն բարձունքները դարձան անհաղթահարելի: Տիգրանը և Արտավազդը ստիպված էին ճանապարհը շարունակել ոտքով: Արքայից արքան ցանկանում էր տեսնել իր դամբարանը:

Ընդգետնյա լեռնախորշում աշխատում էին քարգործ վարպետները: Դամբարանը գրեթե պատրաստ էր, իսկ խորքում շողշողում էր ոսկեձույլ մի կառք՝ զարդարված խոշոր ալմաստներով ու ադամանդներով: Կառքին լծված էր ոսկուց կերտված հսկա մի արծիվ՝ թռիչքի պատրաստ թևերով:

Նայում էր արքայից արքան: Այո՛, կառքի վրա ինքը կպառկի, և Մթին սարերի ամպամերձ այս բարձունքում ոչ ոք չի խանգարի իր հավիտենական քունը:

Տիգրանակերտ, Արցախ, մ.թ.ա. I դ.

– Ոսկեգույն մարտակառքի մեջ պառկելով՝ դու կարող ես հարություն առնել աստվածային ուժով, ձգել ահա այս երասանը և արթնացնել քնած արծվին,– խոսեց վարպետներից մեկը: – Այն ժամանակ մարտակառքը դուրս կթռչի, և վա՛յ Հայքի թշնամիներին:

Հատված Տիգրանակերտ մայրաքաղաքի պարիսպներից

Քիչ անց հայր ու որդի իջնում էին լեռնալանջով: Արքայից արքան սուզվել էր լուռ մտորումների մեջ. «Եթե այս գիշեր մեռնեմ, վաղն իմ դին կամփոփվի ոսկեձույլ դամբարանում: Հավերժական լռության մեջ ոչինչ չեմ իմանա, ոչինչ չեմ լսի: Իսկ եթե Արտավազդը չկարողանա՞ կառավարել երկիրը: Քանի՞ Լուկուլլոս ու Պոմպեոս գլուխ կբարձրացնեն: Կլսեն՝ Տիգրանը չկա, ու կգան: Իսկ ես, իմ աշխարհից ու ժողովրդից հեռու, չեմ իմանա՝ ի՞նչ պատահեց Հայքին»:

Հաջորդ առավոտ Տիգրանը մեծ խորհուրդ հրավիրեց:

Վսեմափայլ ծիրանու մեջ, ադամանդակուռ թագը գլխին՝ նա այնպես էր բազմել գահին, որ աստվածային ներշնչանք էր ազդում բոլորի վրա: Դժգունած դեմքի վրա պատկառազդու էին արծվենի քիթն ու ահեղ հայացքը: Նա ուղղվեց գահի վրա, բարձրացրեց ձեռքն ու ասաց.

– Ա՛րք և տիկնա՛յք Հայոց աշխարհի, ես հրավիրել եմ ձեզ, որ լսեք, թե ի՞նչ եմ պատգամում իմ որդուն և Հայքին համայն: Իսկ դուք, դպիրնե՛ր, քերթեցե՛ք իմ պատգամը մագաղաթներին, որոնք ավելի երկար կյանք ունեն, քան աստվածներն ու արքաները Հայոց աշխարհի:

Արտավա՛զդ, ահա քեզ եմ հանձնում իմ թագն ու ծիրանին: Իմ հոգին հովանի կլինի քեզ հայոց բոլոր աստվածների հետ: Հրամայո՛ւմ եմ, որ հենց այսօր տուն վերադառնան Մթին լեռների բոլոր քարգործ վարպետները: Զարդի՛ր ոսկեձույլ իմ կառք-դամբարանը և կարգադրի՛ր, որ Եկեղյաց գավառում այդ ոսկուց ձուլեն ոսկեմայր ու ոսկեծղի[1] Անահիտ աստվածուհու արձանը: Թող հողով ու քարով լցնեն իմ դամբարանը: Ինձ թաղե՛ք երկրի վրա՝ Հայքին ու հայերին մոտիկ: Իմ հոգին արթուն կմնա աշխարհում և կուղեկցի բոլոր հայերին, որտեղ էլ լինեն նրանք: Ես սիրտս կբաժանեմ բյուր անգամ հազար բյուր մասերի և կվերածնվեմ ամեն հայի հետ: Արթուն կպահեմ հայկյան ոգին մինչև գալիք դարերը և հավիտյան: Իսկ տապանաքարիս վրա ուզում եմ գրված լինի.

«Նա այստեղ չէ. փնտրեցե՛ք նրան ամեն հայի մեջ...»:

---

[1] **ոսկեծղի** – ոսկեգույն ծղիով՝ բազուկներով, ոսկեձույլ բազուկներով:

Ըստ Արամ Ղանալանյանի

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՆԱԶՈՐ ՍՐԲԻ ՄԱՍԻՆ

Միջնադարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին պաշտված է հայ ժողովրդի կողմից: Այնքան մեծ է եղել նրա *«Մատյան ողբերգության»* պոեմի հմայքն ու ներգործուն ուժը, որ ժողովուրդն այն հռչակել է սուրբ գիրք՝ անվանելով *«Նարեկ»*, իսկ իրեն՝ բանաստեղծին, դասել է սրբերի շարքը՝ նրա մասին հորինելով պատմություններ: Ստորև ներկայացնում ենք հնագույն մի զրույց:

Ծիծաղախիտ Վանա ծովակի ափին՝ իրենց համեստ տնակում, ապրում էին մարդ ու կին՝ Գնելն ու Շահանդուխտը: Ամուսինը ձուկ էր որսում, վաճառում, և ստացված եկամուտով ոչ միայն իրենք էին ապրում, այլև օգնում դրացիներին: Այդ բարի մարդիկ, սակայն, մի անփարատելի վիշտ ունեին. Աստված նրանց զավակ չէր պարգևում: Գնելն ու Շահանդուխտը շատ սրբերի դուռ գնացին, Աղթամարի վանքում մոմեր վառեցին, ծնկաչոք աղերսեցին Բարձրյալին, սակայն՝ ապարդյուն: Երկնքի դռները փակ էին նրանց համար:

– Ամենազորավոր սուրբը Գրիգոր Նարեկացին է, գնացեք նրա շիրմին այցի, և նա ձեզ զավակ կտա,– խորհուրդ տվեցին հարևանները:

Ամուսիններն այդպես էլ արեցին: Եվ հրաշք կատարվեց. չանցած ինն ամիս՝ արու զավակ ունեցան և ի մեծարումն սրբի՝ անվանակոչեցին Գրիգոր:

Փոքրիկը աշխույժ, առողջ երեխա էր՝ փայլուն աչիկներով, պայծառ մտքով, գեղագանգուր խարտյաշ մազերով ու խնձորի պես կարմիր թշիկներով: Եթե ուրիշ երեխաներ օրեօր էին մեծանում, ապա Գրիգորն աճում, փարթամանում էր ժամ առ ժամ: Երբեմնի խաղաղ ու լուռ տնակն այժմ լցվել էր ուրախությամբ, երեխայի զրնգուն ծիծաղով: Ծնողները երջանկությունից իրենց կորցրել և առավոտից գիշեր փառաբանում, օրհներգում էին սուրբ Նարեկացուն:

Երբ տղան դարձավ յոթ տարեկան, Գնելն ու Շահանդուխտը որոշեցին դարձյալ ուխտի գնալ և երկրպագել սրբի շիրմին: Վարդավառ էր, օրը՝ տաք ու հաճելի: Նազանի հարսի պես պչրում[1] էր ծովակը, համբուրում ավազոտ ափերը: Այդ խաղաղ պահին որտեղից որտեղ անսպասելիորեն մի չար քամի բարձրացավ, գալարվեց օձապտույտ

[1] **պչրել** – *այստեղ*՝ նազանքով ալիքվել:

և իր հոսանքի մեջ առնելով տղային՝ օդ բարձրացրեց, ապա նետեց ծովակի կապույտ ալիքների հորձանուտը: Շահանդուխտը ճչաց աղեկտուր, Գնելն իրեն ջուրը նետեց՝ տղային փրկելու, բայց ոչինչ անել չկարողացավ: Երեխան անհետացել էր կապուտակ խորխորատի մեջ: Մի քանի օր խեղճ ծնողները դեգերում էին ծովափին, կորած զավակին կանչում, ողբում: Համոզվելով, որ անդառնալիորեն կորցրել են փոքրիկ Գրիգորին, Գնելն ու Շահանդուխտը կոտրված սրտով բռնեցին տունդարձի ճանապարհը: Եվ քանի որ արցունքը չէր կտրվում նրանց աչքերից, կորցրին տեսողությունը, կուրացան:

Սուրբ Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Մլիճեցի, 1173թ.

Անցավ մեկ տարի: Երբ մոտենում էր Վարդավառի տոնը, դրացիներն ասացին.

– Արտասուք թափելով ձեր որդուն չեք վերադարձնի: Եղածը եղած է: Եկեք դարձյալ գնանք Նարեկացու գերեզմանը, աղաչենք, որ գոնե ձեր աչքերը բուժի:

Դրացիներով ու բարեկամներով, ամբողջ գյուղով ճամփա ընկան դեպի սրբի տապանը: Հենց մոտեցան, մեկ էլ տեսան մանուկ Գրիգորին, որ ջրաթաթախ նստած էր տապանաքարի վրա: Մարդիկ իրենց աչքերին չէին հավատա, կմտածեին՝ տեսիլք է, եթե երեխան վազելով չգար և չփարվեր ծնողներին:

Երբ ընդհանուր հուզմունքը մի քիչ հանդարտվեց, Գնելն ասաց.

– Որդի՛ս, պատմի՛ր, ի՞նչ պատահեց քեզ հետ, որտե՞ղ էիր և ինչպե՞ս հայտնվեցիր մեր կողքին:

– Երբ ընկա ծովը,– պատմեց տղան,– հայտնվեց մի անճոռնի հրեշ, որն իր սուր մագիլներով ուզում էր ինձ խեղդել: Բայց այդ ժամանակ երևաց սուրբ Գրիգոր Նարեկացին, գավազանով սաստեց հրեշին, ձեռքիցս բռնեց և իր հետ տարավ ծովի հատակը: Գավազանը խրեց տիղմի մեջ, ճերմակ թիկնոցը հանեց ու փռեց գավազանի վրա՝ սարքելով վրան: Ջրերը ետ գնացին ու վրանի վրա կամար կազմեցին: Սուրբը չորս կողմը խաչակնքեց, ու լճի հատակը լուսավորվեց արևի տաք ճառագայթներով: «Տղա՛ս,– ասաց նա,– այստե՛ղ մնա, մինչև կվերադառ-

Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության»

նամ»: Հաջորդ օրը եկավ և երկու նշխար բերեց: Դրանք կերա ու զորացա: Այսպես՝ ամեն օր: Իսկ այսօր ասաց. «Քո հայրն ու մայրը գալիս են՝ ուխտի: Հասել է մեր բաժանման ժամը: Վերցրո՛ւ այս թաշկինակը, քսի՛ր ծնողներիդ աչքերին: Նրանք նորից կտեսնեն Աստծո լույսը: Գնաս խաղաղությամբ, որդի՛ս, Տերն ընդ քեզ»: Այսպես խոսեց սուրբ Նարեկացին, և ես չհասցրի անգամ նրա աջը համբուրել, ինձ գտա տապանաքարի վրա:

Տղան թաշկինակը տվեց ծնողներին: Գնելն ու Շահանդուխտն այն թեթևակի հպեցին իրենց աչքերին, և նույն պահին լույս իջավ նրանց բիբերին: Կրկին տեսան պաշտելի զավակին, Վանա ծովակը, Աղթամար կղզին: Հրաշքի ականատեսները գոհունակություն հայտնեցին Աստծուն և փառաբանելով ամենազոր Գրիգոր Նարեկացուն՝ ուրախությամբ, ծափ ու ծիծաղով վերադարձան իրենց տները:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Ո՜վ եղբայրներ, ցանկանում եմ ձեզ պատմել այն զարմանալի հրաշքի մասին, որ եղավ աստվածային տնօրինությամբ:

Աղվանքի գահերեց իշխան Վարազ Տրդատը մի դուստր ուներ՝ Շահանդուխտ անունով: Նրա կերպարանքն արտասովոր էր ու հրաշագեղ, չքնաղ գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Ոչ ոքի չէր թվում, թե նա նյութեղեն է, այլ կարծես կերպարանավորված էր լուսատարր օդից ու նրբանուրբ շողերից, արևի թրթռուն ճառագայթներից ու ծաղիկների անուշաբույր նեկտարից:

Շահանդուխտին հարս խնդրեցին Թորգոմյան տնից: Նա դուրս եկավ հայրենի աշխարհից՝ ուղևորվելու իր նոր բնակատեղին: Մտնելով Բաղաց աշխարհը՝ անցնում էր մի ապառաժոտ վայրով: Կողքը լերկ հեղեղատ էր, որ կորչում էր անհատակ ու խավարչտին անդունդում:

Երբ նազելի օրիորդը ուղեկցող խմբով անցնում էր երկնակարկառ քարաժայռի գլխով, հանկարծակի նրա վրա հարձակվեցին զինյալներ՝ ահասարսուռ կերպարանքներով, թրերի շաչյուն-շառաչյունով: Դրանք ապարոշներով[1] գլուխները փաթաթած վայրենաբարո ելուզակներ[2] էին, որոնց միայն տեսքը բավական էր սարսափի մատնվելու համար:

Ընդհատենք այստեղ պատմությունը և այն ավելի հավաստի դարձնելու համար կարդանք իր՝ Շահանդուխտի ձեռքով գրված նամակը, որ, բարեբախտաբար, պահպանվել է. «Ես՝ Քրիստոսի մեղավոր աղախին Շահանդուխտս, Թորգոմյան տունը հարս էի գնում: Հասա Բաղքի սահմանը՝ այն քարաժայռի գլուխը, որտեղով ճանապարհն է անցնում: Ահա այստեղ հանկարծակի հանդիպեցին իսմայելացիները, որոնք հռչակված գեղեցկությանս պատճառով կամենում էին ինձ հափշտակել: Նրանք, սրերը քաշելով, կոտորեցին մեր հեծելագունդը: Ես ճիշտ համարեցի գայլաբարո այլազգիների ձեռքով կորչելու փոխարեն՝ գահավիժումով մեռնել՝ հանուն Քրիստոսի: Եվ հիշելով սուրբ Հռիփսիմեին՝ խաչակնքեցի ու ձիուս հետ թռա քարաժայռից: Քամու ուժգին հոսանքով ու աներևույթ զորությամբ կարծես թե կառքով իջա ձորի խորխորատը՝ ձին

[1] **ապարոշ** – գլխի փաթաթան:
[2] **ելուզակ** – ավազակ:

Կապան. Վահանավանք. դամբարանը կառուցվել է Սյունյաց թագուհի Շահանդուխտի և իր քույր Կատայի կողմից 1086 թվականին

էլ հետս՝ անվնաս: Այնտեղ դադար առնելով՝ հիացմունքով ու խոնարհությամբ խորին գոհունակություն վերառաքեցի ինձ այդպես փրկողին և այս անդորր տեղում անձս նվիրեցի Քրիստոսին: Ուխտեցի այլևս երբևէ այստեղից դուրս չգալ: Շինեցի մի մատուռ, որտեղ ճգնեցի և ապաշխարեցի ամբողջ կյանքիս ընթացքում: Թեև ծնողներս և Թորգոմյան իշխանները շատ թախանձեցին վերադառնալ աշխարհիկ կյանք, բայց ես անդրդվելի էի: Կանչեցի Սյունյաց եպիսկոպոսին, ամբողջ ունեցվածքս տվեցի նրան՝ կեսը բաժանելու կարիքավորներին, մյուս կեսը նվիրելու սուրբ եկեղեցուն»:

Այստեղ ավարտվում է Շահանդուխտի նամակը: Քաջարի օրիորդի մասին պահպանված զրույցն ասում է, որ նա իր մոտ է հավաքում ուրիշ կույսերի և երեսուն տարի տառապալից ճգնությամբ ապրելով՝ մեռնում է:

Տաթևի վանքի ճիշտ դեմուդեմ՝ ձորի վրա, այսօր էլ կախված է մի հսկա քարաժայռ: Ասում են՝ դա հենց այն ժայռն է, որի գլխից ձիով թռել է Շահանդուխտը:

Ահա թե ինչո՛ւ տեղաբնակներն այդ ժայռաբեկորն անվանել են *«Շահանդուխտի քար»*[1]:

---

[1] **Շահանդուխտի քարը** կամ **քերծը** գտնվում է Տաթևի հարավային կողմում՝ Որոտան գետի ափին:

Ըստ Հայկ Խաչատրյանի

Անի քաղաքը

999 թվականն էր՝ առաջին հազարամյակի վերջը: Հայաստանի մայրաքաղաք Անին բուռն հուզումների մեջ էր. լուրեր էին պտտվում, թե հազարամյակը լրանալուն պես աշխարհը պիտի կործանվի, թե եկել է մարդկության վերջը:

Անեցիները ո՛չ շինարարություն էին ուզում սկսել, ո՛չ ամուսնանալ , ո՛չ որևէ լուրջ գործով զբաղվել: «Միևնույն է, աշխարհի վերջն է, բոլորս պիտի մեռնենք»,- ասում էին միմյանց ու տարվում միայն հարբեցողությամբ, կերուխումով: Խուճապը գնալով մեծանում էր:

Ահա այդ անօգուտ իրարանցման մեջ անեցիներին ոգեկոչեցին Գագիկ թագավորը, նրա կինը՝ դշխո Կատրանիդեն, և արքունի ճարտարապետ Տրդատը:

Շուտով մայրաքաղաքում նոր լուրեր տարածվեցին. իբր թե Աստծուն էր հասել Հայոց աղոթքը, և իբր թե Տերը երևացել էր Գագիկ թագավորին ու ասել.

- Հայտնի՛ր քո ժողովրդին, որ Հայաստան աշխարհը չի կործանվի, եթե ազգովին զբաղվեն արարչագործությամբ՝ կառուցեն, կանաչապատեն, շենացնեն երկիրը և հիացնեն ինձ:

Անի. Սուրբ Գրիգոր Աբուղամրենց եկեղեցին, X-XI դդ.

Եվ Անին սկսեց շենանալ: Այն, ինչ կառուցում էր հանճարեղ ճարտարապետ Տրդատը, մի-մի հրաշալիք էր: Անին տեսած օտարականները, վերադառնալով իրենց երկրները, պատմում էին ամենքին, որ Հայոց մայրաքաղաքում շատ ավելի հրաշալիքներ կան, քան Եվրոպայի բոլոր քաղաքներում միասին վերցրած:

Զբաղված լինելով աշխարհաշեն գործով՝ անեցիները մոռացան ահ ու երկյուղ և շարունակեցին ապրել՝ պաշտելով ու ծաղկեցնելով անզուգական Անին:



Տիգրան Հոնենցի եկեղին, XIII դ.

Ռուբինա Նազարյան
Թամար Ալեքսանյան

Քարեղեն երգ

Մեր թվագրությունից առաջ 65 թվականին դեպի Հռոմ տանող ճանապարհով սուրում էին մի խումբ ձիավորներ՝ 3000 հեծյալների ուղեկցությամբ:

Առջևից սլացող շքեղաշուք նժույգների արծաթով ու ոսկով զարդանախշված թամբերին նստած էին փառահեղ կեցվածքով մի կին ու մի տղամարդ: Երիտասարդ էին նրանք, գեղեցիկ և ուժեղ: Թեև դժվարին էր ճանապարհը, և արդեն ամիսներ էր որ միայն գիշերներն էին իջնում ձիերից և հանգստանում ճամփորդական թեթև վրաններում, բայց հոգնության նշույլ իսկ չկար դեմքներին: Տղամարդը հայոց արքա Տրդատ Առաջինն էր, կողքի հեծյալը՝ թագուհին:

Ահեղ Բյուզանդիոնի հետ հարաբերությունները բարեկամական դարձնելու նպատակով նրանք մեկնում էին Հռոմ՝ թագադրվելու Ներոնի ձեռքով:

Հռո՛մ... Աշխարհի մայրաքաղաք: Որքա՜ն դավեր են նյութվել այստեղ, քանի՞ արքա է շնորհազուրկ եղել, ինչքա՜ն մարդ է գլխատվել տիրակալների կամքով: Ի՜նչ ճարտարապետական կոթողներ է ստեղծել այստեղ մարդկային հանճարը, որքա՜ն ոսկի ու գանձեր են հոսել այդ առասպելական քաղաքի դարպասներից ներս:

Շրջում է Տրդատը, դիտում տաճարները, հիանում հելլենիստական ոճով կառուցված հրաշալիքներով: Եվ մտքում որոշում է՝ երբ վերադառնա իր երկիրը, այդպիսի մի տաճար է կանգնեցնելու՝ ի մեծարումն արևի աստված Միհրի:

Երբ անցնում է երկարատև ճամփորդության հոգնությունը, հայտնում են, թե Ներոնը նշանակել է թագադրության օրը:

Հսկայական բացօթյա պայտաձև դահլիճում հավաքվել է Հռոմի ծերակույտը, կանգնած են զորքերը՝ շքեղ զինվորական հանդերձներով, և հարյուրավոր քաղաքացիներ՝ դիտելու հայոց արքայի թագադրության արարողությունը:

Վսեմաշուք թիկնոցը ուսերին, կարմիր մույկերը[1] հագին՝ մտնում է Ներոնը: Նա գոհ է, ինքնաբավ ժպիտ է երևում դաժան դեմքին: Ինքն այսօր կթագադրի Արմենիայի թագավորին և կպահպանի

[1] **մույկ** – ոտնամանի՝ կոշիկի տեսակ:

կայուն ազդեցություն նրա վրա: Արմենիան հարուստ երկիր է և մուտքն է այլ աշխարհների, որոնց այնքան երազում է տիրանալ Հռոմը:

Դիմացի դռնից արժանապատիվ կեցվածքով մտնում է Տրդատը՝ ոսկյա թագը ձեռքին: Նրա մտքում հայրենիքն է՝ իր հեռավոր Հայաստանը, որի քարն անգամ չի փոխի այս շքեղ երկրի հետ: Շատ գործեր ունի անելու: Վերաշինելու է Արտաշատը, մտապատկերում գծագրվող տաճարին է կյանք ու շունչ տալու:

– Կամոքն աստվածների՝ այստեղ՝ աշխարհի մայրաքաղաքում, Արմենիայի թագավոր եմ հռչակում Տրդատին՝ վստահ, որ նրա երկիրը հետայսու կդառնա Արևելքի մեր ամուր պատվարը,– հայտարարում է Ներոնը:

Տրդատը խոնարհվում է, և կայսրը թագը դնում է նրա գլխին: Դահլիճն աղմկում է, ծափահարում և գոհություն հայտնում աստվածներին:

Ի նշանավորումն այս արարողության՝ երեկոյան Հռոմում սկսվում է ջահերով երթ, որոնց լույսի տակ շողշողում էր Արևմուտքի դիցուհին: Իսկ ժողովրդի խանդավառ ձայները հասնում էին այն սրահը, ուր ճոխ ճաշկերույթ էր տրվում Արմենիայի թագավորի պատվին:

Հաջորդ օրը Տրդատը իր շքախմբով թողնում է Հռոմը:

Գալով հայրենիք՝ հայոց արքան ձեռնամուխ է լինում հեթանոսական տաճարի կառուցմանը: Գործի են անցնում հայ մեծահանճար ճարտարապետները, գծագրում, նկարում, պատրաստում ապագա տաճարի մանրակերտը և ներկայացնում Տրդատին: Նայում է արքան և որպես գոհունակության նշան՝ շոյում մորուքը: Այո՛, դա այն է, ինչ ինքն է ու-



Գառնի. բաղնիքի հատակի խճանկարը

Գառնիի հեթանոսական տաճարը, մ.թ.ա. I դդ.

զում: Ընտրված տեղն էլ հրաշալի է՝ անառիկ, բարձրաբերձ, կանաչազարդ: Նահապետ Հայկի ծոռան՝ Գեղամի հիմնած ամրոցը թող շքեղանա այս նոր զարդով, իսկ խորունկ ձորում հոսող Ազատ գետի խլամրմունջ երգը թող ստեղծի հավերժական համերգի պատրանք:

Ու սկսում են կառուցել:

Հատակագծում ուղղանկյունի սրահով տաճարը բոլորեքյան շրջապատված է 24 սյուներով, որոնք խորհրդանշում են օրվա 24 ժամերը: Կապույտ որձաքարի[1] վրա կերտված են նրբանուրբ քանդակներ, նախշազարդ խոյակներ: Բայց ինչպե՞ս, ի՞նչ հնարքով հսկա քարաբեկորները միացնել միմյանց, որ պատերը ամրակուռ լինեն, դիմանան հավերժությանը: Շաղախն այն չէ: Եվ ճարտարապետը որոշում է քարերը միմյանց ամրացնել գամերով ու արճիճով:

Հասնում է այն բերկրալի օրը, երբ ավարտվում է տաճարի շինարարությունը: Եվ կանգնում է գետնից մեկ-երկու մետր բարձրությամբ հիմնապատվանդանին՝ բազմած սրբատաշ ու մաքուր, բյուրեղյա ու դաշն, փոքրիկ ու վսեմ կոթողը:

Տաճարի դիմաց կանգնել է արդեն ալեզարդ արքան և խոնարհվում է արևի աստծուն: Ծավալվել է հեթանոսական մեծ ու փառահեղ տոնը:

---

[1] **որձաքար** – շատ պինդ քար, որ պողպատից էլ կարծր է:

Զոհասեղանին ճերմակ երինջներ են մորթվում, հնչում է գուսանների երգը՝ ի փառս հայոց աստվածների:

Ու Գառնո ձորի վրա թառած բարձունքը թնդում է երգ ու պարից, և նորակառույց կոթողը օծվում է բերկրության արևոտ ալիքներով:

Շուրջ հազար վեց հարյուր տարի կանգուն մնաց Գառնո հրաշակերտը: Դիմացավ քամուն, անձրևին, արևին ու կարկուտին: Մի աղետալի օր, սակայն, զոհ գնաց երկրաշարժին: Պատմիչ Զաքարիա Սարկավագի հավաստմամբ՝ 1679 թվականի հունիսի 4-ի երկրաշարժն այնքան ուժեղ է եղել, որ մի քանի տոննա կշիռ ունեցող քարերը դյուրությամբ բեկվել են տաճարից, օդ բարձրացել փետուրի պես և թափվել անդնդախոր ձորը:

Դրանից հետո մոտ երեք հարյուր տարի տաճարը մնացել է կիսավեր: Եվ միայն 1969-1975 թվականների ընթացքում այդ եզակի կառույցը ստացել է իր նախնական տեսքը:

Գառնո տաճարը այժմ կանգուն է, բուրում է դարերի հնությամբ ու ասես փառքի երգ մրմնջում մեր շինարար նախնիների ու նորօրյա վարպետների մասին:

Գառնու ձորը

Ըստ Վանիկ Սանթրյանի

ՀԵՔԻԱԹ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա...
Ե.Չարենց

Սուգ էր Ստամբուլ քաղաքում: Մեծ սուլթանը երեք օր էր, քուն ու դադար կորցրած, բերանը պատառ չէր դրել: Երեք օր էր՝ նա չափում էր իր սուլթանական հարկի երկարությունն ու լայնությունը, բայց սփոփանք չէր գտնում: Նրա սրտից արյուն էր կաթում:

Մեծ սուլթանի կնոջը՝ թագուհուն, այդ օրերին դժբախտություն էր պատահել: Նրա զավակը, որ ապագա գահակալն էր, հիվանդացել ու կաթ չէր ուտում, իսկ թագուհին վշտից քարացել էր. ո՛չ խոսում էր, ո՛չ սնվում, ո՛չ ուշադրություն դարձնում ամուսնուն ու պալատականներին, նույնիսկ՝ երեխային: Նա խոր ընդարմացման[1] մեջ էր: Հեքիմները նախ՝ փորձել էին բուժել, ապա՝ խոստովանել էին, որ իրենք անզոր են: Մորը և զավակին մահ էր սպառնում: Սուլթանի հրավիրած իմաստուններն ասել էին.

– Տիեզերքի՛ արեգակ, հրավիրի՛ր աշուղներին ու բանաստեղծներին: Թագուհին կուրախանա, կարտասվի և կսթափվի: Միայն մա՛յրը կարող է փրկել գահաժառանգին. նախ մո՛ր մասին պիտի մտածենք:

Սուլթանը կատարեց իմաստունների խորհուրդը, սակայն դա ևս օգուտ չտվեց:

Յուրաքանչյուր կես ժամը մեկ սողալով ներսուդուրս անող պալատականները բարի լուր չէին բերում: Հրամայված էր՝ եթե հրաշք տեղի ունենար, պիտի ներս մտնեին՝ ուրախության աղաղակով, ճչոցով, ոտքի վրա: Բայց... սողում էին, ու աղաղակ չկար:

Իսկ մոլլաները բարձրացել էին մզկիթների մինարեներն ու աղաղակում էին առ աստված, փրկություն աղերսում թագուհու ու գահաժառանգի համար:

Մութ է, կորել է արևը: Լուսինը երևաց մի պահ ու անցավ ամպի տակ: Խավարում մնացին մինարեները, մոլլաները: Սուլթանի համար ո՛չ արև կա, ո՛չ լուսին: Նա դեռ չափում է իր հարկի լայնությունն ու երկարությունը:

---

[1] **ընդարմացում** – ընդարմանալը՝ երկյուղից, դեղերից, հոգնածությունից և այլն շարժունությունը կորցնելը՝ թմրելը:

Նա ծափ զարկեց: Չորեքթաթ ներս սողաց վեզիրը:

– Հը՞, ի՞նչ կա:

– Հուսադրիչ լուր ունեմ, տեր իմ: Ասում են՝ մի աշուղ կա Հայոց աշխարհում, աշուղ Նահապետ Քուչակը: Նրա երգը, ասում են, սպեղանի է:

Սուլթանի աչքերում հուսո կայծ երևաց:

– Գտեք ու բերեք,– հրամայեց:

– Մարդ եմ ուղարկել, տեր իմ:

– Մարդ եմ ուղարկել, տեր իմ,– սուլթանը ծաղրաբար կրկնեց վեզիրի ասածը,– գուցե զե՞նք, գուցե զո՞րք ուղարկեիր, գուցե սպառնայի՞ր, որ եթե չգաս, գլուխդ կթռցնենք: Հը՞, հիմա՛ր:

– Ո՛չ, տեր իմ, ո՛չ. խնդրագիր եմ ուղարկել: Բանաստեղծի դեմ չի կարելի սուր ճոճել:

– Փա՛ռք Աստծո, մի խելացի բան ասացիր: Կորի՛ր աչքիցս:

Այդ նույն պահին Վասպուրականի Խառակոնիս գյուղում Նահապետ Քուչակն իր այգին էր ջրում, բահով փոխում ջրի ճամփան:

Սուլթանի բանագնացները գտան նրան ու աղաչանքով հրավիրեցին պալատ՝ բուժելու թագուհուն:

Ու երգեց Քուչակը թագուհու համար, այնպե՛ս երգեց իր կախարդական տաղերը, որ թագուհին անզուսպ հեկեկաց, ու արցունքի հետ նրա մարմնից դուրս եկան ցավերը:

Թագուհին ու թագաժառանգը փրկված էին:

Բազմել է սուլթանը ոսկեհուռ գահին, կողքին նստեցրել հայ տաղասացին: Գահից երկու կանգուն ներքև չոքած են նազիր ու վեզիր:

– Ի՞նչ գանձեր ես ուզում, բանաստեղծ, ի՞նչ ցանկություններ ունես,– Քուչակին դիմեց սուլթանը,– թագավորությանս կեսը, ոսկի ու արծաթ, քարեր թանկագին և լեզուդ ի՞նչ պտտի, քոնն է:

Բանաստեղծը ոչինչ չխնդրեց: Բայց երբ սուլթանը շատ ստիպեց, ասաց.

– Ստամբուլից մինչև Խառակոնիս կառուցել տուր յոթ եկեղեցի և յոթ կամուրջ:

Ասում են՝ յոթերորդ եկեղեցու բակում այժմ էլ խաղաղ ննջում է միջնադարի անմահ բանաստեղծ Նահապետ Քուչակը:

Ըստ Կիմ Բակշիի

Արյունոտ մատյանը

Հակոբը գրիչ[1] է, արդեն ո՛րերորդ մատյանն է ընդօրինակում: Բայց այս մեկն ուրիշ է: Միշտ երազել է մի մատյանի մեջ հավաքել Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի տաղերը: Տաթևի համալսարանի մատենադարանում Հակոբը գտավ դրանք՝ կարված մի պատմական աշխատության հետ:

Այդ տաղերից մի տող մխրճվել էր Հակոբի հիշողության մեջ. «Կյանքը նման է ճատրակի խաղի»: Նա միայն հիմա խորամուխ եղավ այս բառերի իմաստնության մեջ: Ո՞վ է շարժում խաղաքարերը: Ո՞վ կարող է ստույգ ասել, որ հենց վաղը բանական-խաղաքար գրիչ Հակոբը հավերժ դեն չի նետվի խաղատախտակից:

Հակոբը մտածում էր իր մասին, մատյանի մասին, որը, երևի, իր մահվանից հետո մնար անավարտ:

Անցավ մի շաբաթ: Մոնղոլները մի քանի անգամ ելարաններ դրին ու փորձեցին բարձրանալ Տաթևի պատերի վրա: Բայց եկեղեցու զանգերը ղողանջում էին, և ուսուցիչը բոլորին օգնության էր կանչում:

Հակոբը հեռու էր մնում կռիվներից: Ուսուցիչը նրան պատվիրել էր փակվել խցում և շարունակել աշխատանքը: Եվ Հակոբը գրում ու գրում էր՝ ականջներում՝ կռվի շռինդը: Իսկ մտքում շարունակ պտտվում էր իր և ուսուցչի զրույցը:

---

[1] **գրիչ** – *այստեղ*՝ հին ձեռագիր արտագրող՝ ընդօրինակող:

Մաթևոս Ավետարանիչ, Մաթևոսի ավետարանի անվանաթերթը, ընդօրինակություն XIV-XV դդ. ձեռագիր ավետարանի

Նա բոլորին պատվիրել էր սուր վերցնել: Բայց պահել էր Հակոբին ու հորդորել, որ կռվից հեռու մնար և շարունակեր ընդօրինակությունը:

– Բայց, հայր սուրբ, միթե հիմա գրչագրի ժամանակն է: Ինչ իմաստ ունի ընդօրինակությունը, երբ չգիտենք՝ ուր պահենք մատյանները:

– Իրավ չես դու, Հակոբ,– մեղմաձայն ասել էր Հովհաննես Որոտնեցին,– ինքդ մտածիր՝ ինչ կլինի, եթե քո իսկ հայտնաբերած այդ հին, այրված, հողի խոնավությունը ճաշակած եզակի ձեռագիրը չվերածնվի քո աշխատանքով:

Ամբողջ հաջորդ օրվա ընթացքում շնչելով թշնամու խարույկների խեղդող ծուխը, լսելով նրանց թմբուկների թնդյունը՝ Հակոբը ջանադիր ընդօրինակում էր մատյանը:

– Ռաբունապետը[1] կարգադրեց քեզ մատյանը վերցնել և վազել տաճար: Անհավատները ետևի կողմից ճեղքեցին,– ներս մտավ մի սարկավագ:

Հակոբը արագորեն ձեռքն առավ խուրջինը: Որտեղ է թանաքը, ահա սրվակները, թանաքամանը, ներկերը, մաքուր մագաղաթի կապոցը ու նաև նոր ընդօրինակած մատյանը:

Գրիչը տենդորեն ուսը նետեց կապոցը ու վազեց դեպի ավանդատուն: Այնտեղ էին նաև մյուս վանականները՝ ուսներին մատյաններով լի խուր-

---

[1] **ռաբունապետ** – հնում՝ ռաբբի՝ ուսուցիչ, վարդապետ. ռաբունապետ՝ ռաբբիների պետ, գլխավոր ռաբբի, ուսուչապետ:

ջիններ: Հովհաննես Որոտնեցին իր գավազանով ցույց էր տալիս խոնավ ու խավար գետնախորշը տանող ճանապարհը:

Անցավ երկու տարի: Վանականների խումբը գիշերը քայլում էր, իսկ ցերեկը թաքնվում որևէ ապահով տեղում: Ահա այսօր նրանք ապաստանել են աչքից հեռու գտնվող մի բացատում: Իր ճամփորդական գրակալի առջև նստած է գրիչ Հակոբը: Նա նկատելի նիհարել է, բայց դեռ ծանրամարմին է: Ամեն կողմից նրան շրջապատել են մագաղաթի թերթերը, ներկերով ու թանաքով լի սրվակները, ապագա մատյանի կարված էջերը:

Մատյանն ավարտված է, հիմա Հակոբը գրում է հիշատակարանը, պատմում է, թե ինչպե՛ս փախան թշնամուց, ինչպե՛ս երկու տարի անընդմեջ տեղից տեղ էին գնում, և ինքը հանգստի պահերին անգամ գրում էր ու գրում:

Արևն անցավ սարի ետևը, երկինքն անմիջապես կանաչեց, մեկը մյուսի ետևից կապտեցին լեռների եզրագծերը: Վանականները ունեցած-չունեցածը կապկպեցին, պատրաստվեցին գիշերով ճամփա ելնելու:

Հակոբի սիրտը կուչ եկավ. նորից գիշե՛ր, նորից ճանապա՛րհ, նորից ոտքերի տակ ընկնող կարծր քարեր, իսկ ոտնամանները հալից ընկել են: Նորից խուրջինը ուսերը կքերի. շատ ծանր է: Աչքերը լավ չեն տեսնում: Այս ամենը՝ նորի՛ց ու նորի՛ց. տե՛ր Աստված:

Քայլեցին ողջ գիշեր և առավոտ: Կեսօրին մոտ նրանք մեծ ճանապարհ դուրս ելան, որ մտնեն անտառապատ խոր կիրճը: Չհասցրին: Դանդաղ դեպի նրանց էր գալիս մոնղոլական հեծյալ ջոկատը: Հեծյալները հետաքրքրությամբ դիտում էին ճամփեզրին խռնված ցնցոտիավոր մարդկանց:

Ջոկատի վերջապահը մի երիտասարդ զինվոր էր: Այսօր նրա տրամադրությունը շատ բարձր էր: Ձին տակին խայտում էր: Ձեռքերը հանգիստ չէին մնում, նա վեր-վեր էր գցում վահանը, մերթընդմերթ էլ ձեռքը դեպի կեռ թուրն էր մեկնում: Հանգիստ, կատակի տալով՝ նա թռցրեց հաստլիկ վանականի գլուխը և շարունակեց ճամփան:

Գրիչ Հակոբն ընկավ խուրջինի վրա, և նրա արյունը ողողեց մատյանները...

Լենկթեմուրի զարմանքը

Լենկթեմուրն իր զորքով հասել էր Հայոց աշխարհ, գրավել էր Գոշավանքը և ուզում էր խլել վանքի հարստությունը:

Տանջանքները արդյունք չտվեցին. ոչ ոք չէր ուզում ասել գաղտնարանի տեղը: Լենկթեմուրի զինվորներից մեկը, լավ իմանալով Հայի թույլ կողմը, խորհուրդ տվեց զորավարին.

- Այրի՛ր վանքի գրքերը, և նրանց լեզուն կբացվի:

Հավաքեցին, իրար վրա դիզեցին ձեռագիր մատյանները և երբ պատրաստվում էին այրել դրանք, ժողովուրդը փակեց կրակի ճանապարհը.

- Մի՛ այրեք, կասե՛նք:

Եվ ասացին ու բերեցին, գրքերի մոտ դիզեցին ոսկի, թանկարժեք քարեր...

Լենկթեմուրը ապշած էր...

Նա ձեռքն առավ մի ձեռագիր մատյան և սկսեց թերթել: Նկարները գեղեցիկ էին. ափսո՜ս, անհնար էր ոսկին քերել մագաղաթի վրայից:

- Կարդա՛, ի՞նչ է գրված,- ասաց Լենկթեմուրը՝ գյուղացիներից մեկին տալով գիրքը:

Գոշավանք, XII-XIII դդ.

Գյուղացին վերցրեց մատյանը, զգուշորեն թերթեց այն, թերթեց, թերթեց...

– Մեծ զորավար, կարդալ չգիտեմ,– ասաց մեղավորի պես:

Լենկթեմուրը խլեց գիրքը նրա ձեռքից, տվեց մեկ ուրիշի, հետո՝ երրորդին:

– Մենք էլ կարդալ չգիտենք, վանականներին հարցրու:

– Մեր պատմությունն է, զորավար,– ասաց վանահայրը,– մեր պատմությունն է ու մեր աղոթքը:

Լենկթեմուրը նայեց հավաքվածներին, նայեց դիզված գրքերին, հետո՝ ոսկիներին, թանկարժեք քարերի կույտերին և կնճռոտեց ճակատը:

Լենկթեմուրը հասկացավ արդյոք, թե որն է իրական հարստությունը...

Փրկված մատյաններից շատերը հիմա պահվում են Մատենադարանում, իսկ ուր է Լենկթեմուրի հափշտակած հարստությունը...



Գոշավանք, XII-XIII դդ.

Ըստ Հայկ Խաչատրյանի

Թորոս Ռոսլին

Կիլիկյան Հայաստանում տասներեքերորդ դարում ապրում և ստեղծագործում էր Թորոս անունով մանրանկարիչ: Նրա անունը թնդում էր ողջ Հայաստանով մեկ: Թորոսի շնորհիվ հայտնի էր դարձել նաև Հռոմկլայի վանքը, որի գրչատանը ապրում էր նկարիչը:

Մի անգամ Իտալիայի Վենետիկ քաղաքից Կիլիկյան Հայաստան է գալիս մի վաճառական: Նա իր հետ բերել էր իր չքնաղ դստերը: Հպարտ իր գեղեցկուհի աղջկանով՝ իտալացին ներկայանում է Թորոսին: Նա խնդրում է պատկերահանել իր դստերը:

– Պահանջի՛ր ցանկացածդ վարձը, անվանի՛ վարպետ,– դիմում է նրան վաճառականը:

Թորոս նկարիչը գերված ու հմայված նայում է գեղանի իտալուհուն, զննում և ուսումնասիրում է վարպետի աչքով և ասում.

– Եկեք երկու օր հետո:

Վաճառականը շնորհակալություն է հայտնում, հրաժեշտ տալիս և ուրախ-ուրախ վերադառնում իր օթևանը:

Պայմանավորված օրը վաճառականը զուգված-գարդարված դստերը բերում է մեծ նկարչի մոտ: Աղջիկը պատրաստվել էր, նույնիսկ հետը նախաճաշ էր վերցրել: Գիտեր՝ ժամերով նստելու էր վարպետի դիմաց՝ որպես բնորդուհի: Նա հայելու առջև նույնիսկ փորձ էր արել, թե ի՞նչ դիրքով, դեմքի ի՞նչ արտահայտությամբ պետք է ներկայանար նկարչին:

Անցում Կարմիր ծովով, Թորոս Ռոսլին, 1266թ.

Բայց Թորոսը անակնկալի է բերում նրանց: Նա սիրալիր ողջունում է իր հյուրերին: Ապա խնդրում, որ մոտենան նկարակալին: Նա վերցնում է օթոցը[1], և հոր ու աղջկա զարմացած հայացքի առջև հառնում է գեղեցկուհի իտալուհին՝ իր ողջ պերճանքով ու շքեղությամբ:

– Սքանչելի՜ է,– բացականչում է վաճառականը,– ապշել կարելի է: Դու ինչպե՞ս կարողացար մի անգամ նայելով՝ այսքան ճշգրիտ պատկերել աղջկաս: Աստվա՜ծ վկա, զմայլանքից ես կորցնում եմ գլուխս: Քո նկարն ավելի է նման աղջկաս, քան աղջիկս ինքը իրեն: Սիրելի՜ վարպետ, քո նկարն ավելի թանկ արժե, քան իմ ամբողջ կարողությունը:



Մնունդ, Թորոս Ռոսլին, 1266թ.

Թորոսը մեղմ ժպիտով լսում է իտալացու գովեստն ու հիացական բացականչությունները:

– Այս նկարի դիմաց ես ոչինչ չեմ պահանջում,– հանգիստ ասում է նկարիչը:

– Ինչո՞ւ,– զարմանում է իտալացի վաճառականը:

– Նկարչի համար մեծ երջանկություն է բնական գեղեցկությանը հադորդակցվելը: Քո դուստրը լուսեղեն էակ է, քայլող կանթեղ է, ռոշն է[2], ռոշնական[1] կանթեղ:

Վաճառականը չգիտեր, թե ինչպե՛ս հայտներ իր շնորհակալությունը: Թորոսի գործածած ռոշն բառը նրան շատ էր դուր եկել: Նա Թորոսին սկսում է *Ռոշն* կոչել, որը նա արտասանում էր «Ռոսլին» ձևով:

Ի պատիվ հայ նկարչի՝ վաճառականը իր նավը անվանում է *Թորոս Ռոսլին*:

Այդ անունով էլ հանճարեղ մանրանկարիչը հայտնի դարձավ աշխարհին:

---

[1] **օթոց** – ծածկոց:

[2] **ռոշն** – *ռոշնական* – լուսավոր, պայծառ:

Ըստ Հայկ Խաչատրյանի

Մարդն անմահ է գործով

Բարձրահասակ են եղել և՛ Տրդատ Մեծ թագավորը, և՛ նրա կինը՝ թագուհի Աշխենը: Ի տարբերություն ծնողների՝ նրանց որդին՝ Խոսրովը, կարճահասակ էր: Ժողովուրդը նրան տվեց *Կոտակ* մականունը, որը նշանակում է «կարճ, կարճահասակ»:

Հոր մահից հետո գահ բարձրացավ Խոսրովը: Երիտասարդ գահակալը կանչեց իր խնամակալին և ասաց.

– Հաճախ եմ լսում, որ մեծ ու փոքր իմ ետևից ինձ *Կոտակ* են անվանում: Արդյոք դա չի՞ նսեմացնում իմ արժանապատվությունը:

– Բոլորովի՛ն, տե՛ր իմ,– պատասխանեց խնամակալը.– Աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացին քեզնից բարձր չէր, բայց իր սխրանքներով, խելքով ու փառքով գերազանցեց բարձրահասակ երևելիներին: Աշխատի՛ր քո գործերով բարձրանալ մարդկանց աչքում:

Անցան տարիներ: Շատ բարենորոգումներ արեց Խոսրով Կոտակը: Նա հիմնադրեց սքանչելի Դվին մայրաքաղաքը, հսկայական մի անտառ, որն արգելանոց դարձրեց, որպեսզի բազմանան գազաններ, թռչուններ ու սողուններ: Ժողովուրդն այնպես սիրեց այդ անտառը, որ այն անվանեց հիմնադրի անունով՝ *Խոսրովի անտառ*:

Արքան դարձյալ կանչեց իր երբեմնի խնամակալին, որ արդեն զառամյալ ծերունի էր, և հարցրեց.

– Հը՞, արդարացրի՞ քո հույսերը:

– Այո՛, Խոսրո՛վ, քո բարենորոգումներով ու շինարարությամբ դու սիրելի դարձար քո ժողովրդին: Հիմա *Կոտակ* ասելով մարդիկ հասկանում են ոչ թե կարճահասակ, այլ բարձր, վսեմ, գեղեցիկի արժեքը հասկացող ու գնահատող տիրակալ: Դու բոլորիս համար այժմ ամենագեղեցիկն ու բարձրահասակն ես,– պատասխանեց խնամակալը:

Խոսրովի անտառը

Ըստ Զարզանդ Դարյանի

Վաչագան

Բարձրաբերձ Զանգեզուրում ապրում էր մի ազատատենչ ու հայրենասեր երիտասարդ՝ Վաչագան անունով: Այս քաջ Վաչագանը իր մի ընկերոջ հետ վեր է կենում, գնում աշխարհեաշխարհ՝ բախտ որոնելու: Քառասուն անգամ յոթ օր յոթ գիշեր գնում են, գնում, հանդիպում են յոթ ճամփի մեջտեղում նստած մի զառամյալ ծերունու:

– Բարո՛վ եք եկել,– ասում է ծերունին,– ես ձեր որոնած բախտն եմ: Ի՞նչ եք ուզում:

Երիտասարդները գլուխ են խոնարհում ծերունուն, և Վաչագանն ասում է.

– Ո՜վ իմաստուն ծերունի, ես քաջություն եմ ուզում քեզնից: Մեր երկրով շատ թշնամիներ են անցնում, շատ արյուն է հոսում մեր ձորերով. առանց քաջության՝ ապրել չի լինում:

– Իսկ ես,– ասում է Վաչագանի ընկերը՝ խորը երկրպագելով ծերին,– անմահություն եմ խնդրում. ուզում եմ ապրել մեր լեռների արծիվների հետ և բարձրությունից նայել աշխարհին:

– Թող ձեր ուզածը լինի,– ձեռքը բարձրացնում է իմաստունը,– գնացե՛ք ձեր աշխարհը և ապրե՛ք՝ մեկդ՝ քաջի, իսկ մյուսդ՝ անմահի կյանքով:

Զանգեզուրի լեռները

Առավոտը Զանգեզուրում, Հենրիկ Սիրավյան, 1963թ.

Երիտասարդները ուրախ-ուրախ վերադառնում են հայրենի երկիր: Հենց մտնում են Զանգեզուր, տեսնում են՝ ոսոխի զորքը շեներ է քարուքանդ անում, անմեղ մարդկանց սպանում: Վաչագանը անմիջապես ձի է հեծնում, կայծակի պես ընկնում թշնամու վրա: Իսկ մյուսը՝ Վաչագանի ընկերը, քաշվում է Հալիձոր, մի խուլ քարայրում փակվում է, որ թշնամին իրեն չտեսնի, և ականջ է դնում աշխարհի անցուդարձին:

Վաչագանի քաջությունը տեսնելով՝ մարդիկ նետ-աղեղ, զենք են վերցնում, վրա են տալիս թշնամուն, ջարդում և շպրտում իրենց երկրից դուրս: Կռվի թունդ միջոցին մի նետ խոցում է Վաչագանին ու նրան սպանում: Զանգեզուրցիները փառքով թաղում են նրան անտառի պռնկին՝ մի բարձր տեղ, նրա շիրմի շուրջը նոր շեն են հիմնում ու անունը դնում *Վաչագան:*

Ասում են՝ մինչև այսօր էլ ապրում է անմահություն խնդրող ընկերը Հալիձորի իր քարայրում: Ծեր է արդեն ու կույր: Ոչ ոք չգիտի նրա անունը, չգիտի նրա տեղը ու չի՛ էլ ուզում իմանալ:

Արտաշես Նազինյան

ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐԻ ԿԱՂՆԻՆ

Ա

Իջևանի շրջանի ներքին Աղդան (այժմ՝ Ակնաղբյուր) գյուղի մոտ վաղ ժամանակներից վեր էր խոյանում մի հսկա կաղնի, որի ամեն մի ճյուղը մի ծառի չափ էր: Այդ կաղնու տակ շոգին թե անձրևին պատսպարվում էր հովիվն իր հոտով, իսկ բնի փորվածքում ութից տասը մարդ կարող էր տեղավորվել: Կաղնին վաղուց ի վեր ուխտատեղի էր դարձել: Կաղնու տակից բխում էր մի հորդառատ, զուլալ աղբյուր, որը խմելու ջուր էր տալիս գյուղերին ու մոտակա մայրուղիով երթևեկողներին, նաև ոռոգում այգիներն ու բանջարանոցները:

Կաղնու և աղբյուրի մասին հյուսվել են ավանդություններ, որոնք դարերի միջով հասել են մեզ:

Ավանդություններից մեկը պատմում է, որ Վարդան Մամիկոնյան սպարապետը, Աղվանից աշխարհում պարսից զորքերին հաղթելով և դուրս քշելով, վերադառնում էր Հայաստան: Վարդանն անցնում էր Ուտյաց գավառի (ներկայիս՝ Աղստև գետի հովիտը) գեղատեսիլ ձորերով: Զորքը ծարավ էր, ջուր էին փնտրում: Մեկ էլ տեսնում են՝ դիմացի ապառաժից մի մեծ առու է հոսում: Բարձրանում են ձորն ի վեր և ի՞նչ տեսնում՝ մի հորդաբուխ աղբյուր. ջուր են խմում, կազդուրվում ու հանգստանում ծառերի տակ: Վարդան զորավարը կաղնու մի ճյուղ է տնկում աղբյուրի պռնկին: Ասում են, որ այս փոքրիկ ճյուղն է որ աճելով դարձել է հսկա կաղնի: Տեղացիներն էլ այդ ծառն անվանել են *Զորավարի կաղնի*, իսկ աղբյուրը՝ *Զորավոր աղբյուր*: Ասում են նաև, որ ամեն անգամ գյուղի ջահելներին պատերազմ ճամփելիս ծերերը պատվիրել են.«Եթե Զորավոր աղբյուրից ջուր խմեք և ձեռքներդ քսեք Քաջ Վարդանի տնկած կաղնուն, ձեզ մահ ու մեռնել չկա»:

Բ

Նույն ծառի ու աղբյուրի մասին մեկ ուրիշ ավանդություն էլ պատմում է հետևյալը:

Հայոց Գևորգ Մարզպետունի զորավարը արաբների դեմ հաղթական կռվից վերադառնալիս հանդիպում է Զորավոր աղբյուրին: Զորքն ու զորապետը հագեցնում են իրենց ծարավը, և Գևորգ

Մարզպետունին, իբրև հիշատակ, կաղնու մի շիվ է տնկում աղբյուրի մոտ: Մարդիկ խնամում են ծառը, և այդ օրվանից էլ այն կոչվում է զորավարի անունով՝ *Գևորգ Մարզպետունի*...

Գ

Դժվար է այսօր ստույգ ասել, թե ո՞վ է իրոք տնկել այդ ծառը:

1960-ական թվականներին կայծակի՞ց, թե՞ պատահական կրակից հրդեհվեց և գետին տապալվեց Զորավարի կաղնին: 1965 թվականին հայրենի Չարդախլու գյուղից վերադառնալիս Հայրենական մեծ պատերազմի փառաբանված զորապետ, Սովետական Միության հերոս, մարշալ Հովհաննես Բաղրամյանն այցելեց արդեն գետին փռված Զորավարի կաղնուն և նրա՝ դեռևս կանաչ ճյուղից մի շիվ կտրեց ու տնկեց աղբյուրի մոտ:

Շիվն արդեն դալար ծառ է դարձել:

* * *

Կանցնեն տարիներ: Զորավարի կաղնին կբարձրանա, և դարերի ընթացքում նոր զրույցներ կհյուսվեն ու կձուլվեն հինավուրց ավանդություններին՝ անմահացնելով ու հավերժացնելով Հայրենիքի ազատության ու անկախության համար մարտնչած զորավարներին:

Ըստ Բյուզանդ Քեչյանի

ԴՐՎԱԳՆԵՐ[1]

Հայկի հաջորդների դինաստիայից՝ թագավորական հարստությունից էր Երվանդ թագավորը, որը հայտնի է նաև *Սակավակյաց* անունով: Նա թագավորել է մեկ տասնամյակ՝ նախքան Քրիստոս 570-560 թվականները:

Երվանդ Սակավակյացը բնավորությամբ ըմբոստ էր և ազատասեր: Նա ամեն առիթ օգտագործել է, որպեսզի Հայաստանն անկախ պահի Պարսկաստանի և Մարաստանի ենթակայությունից: Ահա թե ինչ է գրում հույն պատմագիր, փիլիսոփա, զորավար Քսենոֆոնը «Կյուրոպեդիա» գրքում Հայոց Երվանդ թագավորի և նրա որդի Տիգրանի մասին, ով պատմագրության մեջ սահմանված էր լինելու Երվանդյան Տիգրան կամ Տիգրան Առաջին աշխարհակալ թագավոր՝ ի տարբերություն Տիգրան Երկրորդ թագավորի, ով պատմության թատերաբեմ պիտի բարձրանար մի քանի դար հետո:

Ա

Հայոց Երվանդ թագավորը ապստամբել էր Պարսկաստանի մեծազոր ինքնակալ Կյուրոսի դեմ, որին ուխտել էր դաշնակցել պարսկական պատերազմների ժամանակ և օգնել նյութապես:

Կյուրոսը, ի պատասխան հայ թագավորի ուխտադրժության[2], հզոր բանակով հարձակվում է Հայաստանի վրա, որի ընթացքում ի վերջո Երվանդը գերվում է Կյուրոսի կողմից:

Հրապարակային դատի ժամանակ դատարանում Կյուրոսը հարցնում է Երվանդին.

– Ինչո՞ւ դրժեցիր խոստումդ:

– Որովհետև ուզեցի ազատ լինել,– պատասխանում է սուտ խոսել չիմացող հայ թագավորը:

– Ի՞նչ կանեիր քո իշխանության տակ գտնվող մի թագավորի, եթե նույն անհավատարմությունը գործեր քո դեմ:

– Մահվամբ կպատժեի,– պատասխանում է մահից չվախեցող հայ թագավորը:

Ուշիմ Կյուրոսը այս հարցուփորձից հասկանում է, որ Հայոց թագավոր Երվանդը արժանիքի տեր անձնավորություն է, և որո-

---

[1] **դրվագ** – միջադեպ, պատմության կամ գրվածքի առանձին մասերից մեկը:

[2] **ուխտադրժություն** – ուխտը՝ դաշինքը՝ հանդիսավոր խոստումը դրժելը՝ չպահելը, դաշինքին անհավատարիմ լինելը:

շում է սիրաշահել նրան՝ մի փրկանք[1] բավական համարելով:

– Ինչ կտաս, որ թագուհուդ չգերեվարեմ,– հարցնում է Կյուրոսը:

– Ամբողջ ունեցածս կտամ,– պատասխանում է հայ թագավորը:

– Ինչ կտաս, որ զավակներիդ չգերեվարեմ:

– Ինչ որ ունեմ, կտամ:

– Մի անգամ տվեցիր, նորից կտաս ունեցածդ,– հավելում է Կյուրոսը՝ ժպտալով:

Ապա դառնալով արքայազն Տիգրանին՝ Կյուրոսը հարցնում է.

– Իսկ ինչ կտաս, որ նորապսակ կնոջդ ինձ աղախին չդարձնեմ:

– Կյանքս կտամ,– պատասխանում է հայ արքայազնը:

Բ

Պարսկաստանի թագավոր Կյուրոսը հաշտվում է հայոց արքունիքի հետ, և նորոգվում է նրա զինակցությունը[2] Երվանդի և արքայազն Տիգրանի միջև: Պարսից և հայոց զորքերը միանում են ընդդեմ Կյուրոսի թշնամիների:

Ի նշան հաշտության՝ Կյուրոսը նույն երեկոյան մի շքեղ ճաշկերույթ է տալիս հայոց թագավորի, գահաժառանգի և նրանց ազգականների պատվին:

Բոլոր ներկաները զմայլվում են Կյուրոսի՝ քաջության հավասար վեհանձնության[3] և ֆիզիկական գեղեցկության հավասար հոգեկան բարձրության վրա:

Գիշերը, երբ գահաժառանգ իշխանն ու իշխանուհին մենակ են մնում, Տիգրանը հարցնում է կնոջը.

– Ինչպե՞ս էր Կյուրոսը, դու էլ հավանեցի՞ր նրան. ազնիվ ու վեհանձն չէ՞ր նա…

Ես նրան չէի նայում,– պատասխանում է հայ իշխանուհի Զարուհին:

– Հապա ո՞ւմ էիր նայում:

– Ես նրա՛ն էի նայում, ով ասում էր, թե իր կյանքը կտա, որպեսզի ես՝ Տիգրան գահաժառանգիդ կինը, գերվելով, պարսիկ ինքնակալի աղախինը չդառնամ:

Զգացմունքների այսքա՛ն քնքուշ փափկությունը, այսչա՛փ նուրբ բարեկրթությունը[4] պատիվ պիտի բերեին քսաներորդ դարի ամենից զարգացած, ամենից բարեկիրթ կնոջը:

Եվ մտածել, որ իր պարզության մեջ վսեմ այս խոսքն ասող հայուհին ապրում էր մեզանից երկու հազար հինգ հարյուր տարի առաջ:

---

[1] **փրկանք** – փրկելու՝ ազատ արձակելու գին:

[2] **զինակցություն** – զենքերի միություն՝ նույն թշնամու դեմ ուժերի միացում:

[3] **վեհանձնություն** – վեհանձն՝ մեծահոգի լինելը, մեծահոգություն:

[4] **բարեկրթություն** – բարեկիրթ վերաբերմունք՝ արարք:

Ըստ Հայկ Խաչատրյանի

ԻՄԱՍՏՈՒՆ ԹԱԳՈՒՀԻՆ

Վանի թագավոր Սարդուրի Երրորդը գահակալել է մեր թվարկությունից առաջ 645-635 թվականներին:

Մի օր նրան տեղեկացրին, որ Տուշպա մայրաքաղաքի մի բնակչուհի՝ Վանուհի անունով, արդեն տասնութ զավակների մայր է:

- Տե՛ր արքա,- ասացին պալատականները,- այդ Վանուհու ավագ որդիները ծառայում են մեր բանակում: Ամեն մեկը մի-մի հսկա է, դյուցազուն և արժե տասը զինվոր: Նրանք բոլորը հերոսներ են: Ասում են նաև, որ նրանք ունեն մի քույր, ով արտասովոր ուժի, խելքի և գեղեցկության տեր օրիորդ է:

Շատ զարմացավ Սարդուրի արքան, ափսոսաց, որ իր թագավորության մեջ այդպիսի ընտանիք է ապրում, բայց ինքը տեղյակ չէ: Նա կանչեց արքունի գանձապահին և հրամայեց.

- Պետության միջոցներով մեկական տո՛ւն կառուցել տուր այդ տասնութ հերոսների համար, իսկ արքունի կառքերից մեկը հատկացրո՛ւ բազմազավակ մորը: Հայրենիքին այդքան զինվոր տվող կնոջ ոտքը պիտի գետնին չկպչի:

Սարդուրին այդ ժամանակ դեռ ամուսնացած չէր: Շատ աղջիկներ կային նրա շրջապատում, բայց նա ոչ մեկին չէր հավանում:

«Երկրի թագուհին պիտի լինի ոչ միայն գեղեցիկ, այլև առաջին հերթին՝ իմաստուն, որպեսզի ամեն րոպե կարողանա կանգնել թագավոր ամուսնու կողքին և օգնել խորհուրդներով: Եթե Վանուհու դուստրը այդպիսին է, ինչո՞ւ չտեսնել նրան»,- մտածեց Սարդուրին և մի քանի թիկնապահներով գնաց նրանց տուն:

Օրիորդը, որի անունը Օրաշ էր, իսկապես չքնաղագեղ մի էակ էր: Սարդուրին երբևէ այդպիսի գեղեցկուհու չէր հանդիպել. նրան թվում էր, թե աղջիկն առանց սեթևեթանքի կհամաձայնվի արքայի կին դառնալ: Բայց արի ու տես, որ այդպես չեղավ:

- Ես կհամաձայնեմ քո կինը դառնալու միայն այն դեպքում, եթե մի հրասախ[1] վազքում առաջ անցնես ինձնից,- ասաց օրիորդ Օրաշը:

Երիտասարդ արքան քմծիծաղ տվեց և ընդառաջելով աղջկա ցանկությանը՝ բազմության աչքի առջև նրա հետ մրցույթի դուրս եկավ: Առաջին կես հրասախ մրցուղում առջևից վազում էր Օրաշը,

[1] **հրասախ** - հնում՝ երկարության չափ, որը հավասար է 5004,30 մ-ի:

հետո արքան ուժեղացրեց իր քայլքը, առաջ անցավ ու հաղթեց օրիորդին:

Այս վազքից հետո, կատարելով իր խոստումը, օրիորդ Օրաշը համաձայնվեց հարս գնալ արքունիք: Բայց, չգիտես ինչու, աղջիկն անընդհատ ձգձգում էր հարսանիքը:

Եվ ահա մի օր Սարդուրի արքան օրիորդին ասաց.

– Օրա՛շ, երևում է, որ քո մտքում ինչ-որ բան կա, ինչո՞ւ ես անընդհատ ձգձգում մեր հարսանիքը. չէ՞ որ ես կատարեցի քո ցանկությունը: Իմ արքա տեղով շինականների առջև վազեցի՝ ինչպես արագընթաց զորական, որ հաճույք պատճառեմ քեզ:

– Դա ճիշտ է, ցանկությունս կատարեցիր, բայց չհաղթեցիր,– ասաց աղջիկը:

– Ինչպե՞ս թե չհաղթեցի,– զարմացավ Սարդուրի արքան:

– Այո՛, ոչ թե դո՛ւ հաղթեցիր, այլ ե՛ս պարտվեցի:

– Դա ի՞նչ է նշանակում:

– Գնանք, մարդկանց աչքից հեռու մի տափարակ տեղ ընտրենք, վազենք, և դու կհամոզվես, որ չես հաղթել ինձ:

Սարդուրին համաձայնվեց: Ինքն ու Օրաշը կառք նստեցին, բավական հեռացան Վանից և հարմար մի տեղ գտնելով՝ չափեցին մի հրասախ երկարությամբ ճանապարհ ու դուրս եկան մրցության: Այս անգամ հաղթեց Օրաշը:

– Այո՛, ընդունում եմ իմ պարտությունը, դու հաղթեցիր,– ասաց արքան,– իսկ ինչո՞ւ առաջին մրցության ժամանակ պարտվեցիր:

– Չուզեցի հաղթել, Սարդուրի՛, հպատակների առջև արքան պիտի միշտ հաղթող լինի ամեն ինչում:

Աղջկա այդ պատասխանը հիացրեց Սարդուրիին, և նա ասաց.

– Դու ոչ միայն գեղեցիկ ես, այլև իմաստուն:

Եվ մի քանի օր հետո Օրաշը դարձավ Հայոց թագուհի:

Ըստ Դայկ Խաչատրյանի

ԽՈՍՔԻ ՈՒԺԸ

Ժամանակով մի արքա էր ապրում՝ Ամանակ անունով: Տարեվերջին այս արքան կանչում է պալատականներից մեկին և ասում.

– Գնա մտմտա՛ և մի այնպիսի բա՛ն արա, որ Նոր տարվա խնդությունը մարդկանց հերիքի մինչև տարեվերջ: Եթե հաջողվի, թագավորությանս կեսը կնվիրեմ քեզ:

Պալատականը մտածո՛ւմ է, մտածո՛ւմ, գործի է անցնում: Քաղաքից գյուղ է գնում, գյուղից քաղաք ու ամենքին խորհուրդ տալիս, թե ինչպե՛ս տոնեն Ամանորը:

Ամբողջ երկրով մեկ բոցկլտում են խարույկները, թոնիրներից ձգվում է կապտերիզ ծուխը: Մարդիկ թարմ, անուշաբույր լավաշ են թխում, զանազան համադամ[1] խորտիկներ ու աղանդերներ[2] պատրաստում:

Նոր տարին սկսվում է խելահեղ խրախճանքով ու գինարբուքով:

Մի քանի ամիս հետո Ամանակը իր իմաստուն խորհրդականին ասում է.

– Գնա՛ մարդկանց մեջ, իմացի՛ր, թե ո՛վ է մոռացել Նոր տարվա խնդությունը:

Իմաստունը շրջում է երկրում, վերադառնում արքունիք և արքային զեկուցում գլխիկոր.

– Արքա՛, ամենքն էլ մոռացել են Նոր տարվա խնդությունը: Հազար հոգս ու ցավի մեջ կորել է երեկվա կերածի հիշողությունը:

Նորից տարեմուտ է գալիս: Ամանակ արքան այս անգամ կանչում է երկրորդ դրանիկին[3].

– Գնա՛ և մտորի՛ր,– ասում է նա,– մի այնպիսի միջո՛ց գտիր, որ Նոր տարվա խնդությունը մարդկանց մեկ տարի հերիքի:

Երկրորդ պալատականը շրջում է երկրով մեկ, մարդկանց սովորեցնում, թե ինչպե՛ս դիմավորեն Ամանորը: Այս անգամ ընտիր ուտեստներից բացի՝ մարդիկ տոնածառ են զարդարում, երգում են ու պարում, մրցում են նժույգավարությամբ և նետաձգությամբ, համբուրում են, ում կամենում են:

Անցնում են Նոր տարվա տոնախմբության բուռն օրերը:

1 **համադամ** – համեղ, ընտիր:
2 **աղանդեր** – ճաշից հետո մատուցվող մրգեղեն՝ քաղցրեղեն:
3 **դրանիկ** – արքունի պաշտոնյա:

Անի. Կանանց ելքը եկեղեցուց, Վարդգես Սուրենյանց, 1905թ.

Իմաստունը շրջում է մարդկանց մեջ և գլխիկոր ետ գալիս պալատ:

– Ոչ ոք ոչինչ չի հիշում տոնախմբությունից. հազար ցավ ու հոգս ունեն. համբույրի պատճառած խնդությունն ի՞նչ է, որ ձգվի Նավասարդից Նավասարդ:

Հաջորդ տարեմուտին արքան կանչում է իր իմաստուն խորհրդականին և նույն պատվերը տալիս:

Իմաստունն իսկույն ճամփա է ընկնում, շրջում գյուղից գյուղ, քաղաքից քաղաք ու ամեն մարդու մի ջերմ, հոգեպարար խոսք ասում:

Անցնում է որոշ ժամանակ, Ամանակ արքան ինքն է որոշում շրջել ժողովրդի մեջ, հարցուփորձ անել:

– Իմաստունի հոգեհմա խոսքը ուրախ ու զվարթ է պահում մեր սիրտը,– ամենուր ասում են մարդիկ.– ոչ մի բան չի կարող մարդու խնդությունը տևական դարձնել, ինչպես՝ սրտալի խոսքը:

Զարմանում է արքան և վերադառնում արքունիք: Տարեվերջին նորից է շրջագայում իր երկրում. տեսնում է՝ մարդիկ ուրախ են ու զվարթ: Իմաստունի սրտալի խոսքը դեռ ապրում էր նրանց հիշողության մեջ:

– Կանչեցե՛ք իմաստունին,– բացականչում է արքան,– թող գա, ստանա իմ թագն էլ, գահն էլ:

Սակայն իմաստունին չեն գտնում արքունիքում: Ամանակին հայտնում են, որ իմաստունը ժամանակ չունի թագ ու գահի մասին մտածելու, որովհետև *բարի խոսք* է տանում նաև մյուս տերություններում ապրող մարդկանց:

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ՀԱՅԻ ՈԳԻՆ

Փորձեցե՛ք ազգային ոգին դատարկել այն բովանդակությունից, որ պատմությունը կուտակել է նրանում, և դուք ազգը կվերածեք մի դիմազուրկ զանգվածի։

Գարեգին Նժդեհ

Սողոմոն Տարոնցի

Տիգրանուհի եվ Աժդահակ

Աժդահակը երազ տեսավ, որ սեգ Մասսին ձյունափառ
Երկնում էր մի հրաշալի, գեղեցիկ կին լուսավառ.
Եվ երկունքից ահա երեք պատանիներ ծնվեցին.
Առաջինը արևմուտք էր թռչում՝ հեծած Առյուծին,
Երկրորդը՝ կողմը հյուսիսի քշում էր Ինձն ու ճեպում,
Իսկ երրորդը, Վիշապն հեծած, Մարաստան էր շտապում:

Հռնդալով արշավում էր վիշապահեծը զարհուր
Ուղիղ դեպի Աժդահակի ապարանքը քարակուռ:
Ահա, որպես սարի գլխից պոկված հեղեղը ընկեց,
Եկավ, փաթթեց պատ ու պատնեշ, քար կուռքերը փոքր ու մեծ,
Ու կռվի է բռնվում ինքն Աժդահակը՝ բոց ու բարկ,
Բայց, սրահար, տապալվում է խոլ հսկայի ոտքի տակ:

Ու թռչում է նա գեշ քնից՝ ողողված պաղ քրտինքով.
Երազ է դա, թե՞ իրական, ու դողում է ողջ մարմնով.
Օ՜, չա՜ր տեսիլ, տեսի՛լ, որից քարն է անգամ զարհուրում.

Տիգրանուհին հարսնության է գնում Մարաստանի Աժդահակ թագավորին, Ջուլիանո Ջասսո, 1885թ.

Եվ հառնում է կրծող կասկածն օձի նման գալարուն,
Օձի նման, որի թույնը մեռցնում է, բայց կամաց.
Ու պատմում է նա պալատին սարսափահար, կարկամած:

Պատմում, ապա արձակում է շանթասլաց հրաման.
Հավաքվում են չորս ծագերից աստղագետներ ու հման[1]:
Եվ խորհում են: Ու ամենից փորձված ծերունին գիտակ
– Քեզ,– ասում է,– մի մեծ փորձանք է սպասում, Աժդահակ,
Մեծ պատուհաս... Հայոց երկրից... բայց, ո՛վ արքա իմաստուն,
Տեսանելի փորձանքը միշտ զգուշությունն է կանխում:

Երվանդյան հայ Տիգրան արքան մի քույր ունի գեղեցիկ,
Աչքերը՝ հուր, ունքերը՝ թուր, հասակը՝ սոս սլացիկ.
Ես կուզեի, գեթ առերես, տեսնել նրան Մարաց հարս.
Այդ հարսնությամբ կվերանան կասկածներդ ահասարս.
Խաբեությա՛մբ. այս միջոցն է, լո՛ւկ այս ելքն է մնում քեզ,
Այդ նենգ հային՝ քրոջ ձեռքով հեշտությամբ կտապալես:

Եվ թռչում է սուրհանդակը՝ հրամանին խիստ հլու,
Դեպի Հայոց լեռնաշխարհը՝ Տիգրանուհուն բերելու,
Եվ բերում է արքայուհուն ծնծղաներով խնդության,
Փող-թմբուկով հասցնում է մայրաքաղաքն Եկբատան.
Եվ Աժդահակ վիշապազունն, ոգին ստի ու չարի,
Տիգրանուհուն հռչակում է Տիկին Մարաց աշխարհի:

Տիգրանուհի՜, որի անունն ամբողջ Հայոց աշխարհում
Արտասանո՛ղը՝ մաքրության, քաջության հուրն է խմում,
Որի անունն, ինչպես չքնաղ ծիածանը յոթներանգ,
Զարդարում է հայրենիքը՝ դարձած դափնի, դրասանգ.
Իսկ այժմ նա Մարաստանում՝ Աժդահակի մոտ միայն
Մի կամո՛ւրջ է, որով պիտի անցնի ոգին նենգության:

Ու երազի շորշոփի տակ, սարսափի մեջ սրտապայթ՝
Աժդահակը որոճում է դժնատեսիլ որոգայթ.
Կանչել արքա աներձագին՝ որպես ընկեր սրտակից,
Մի թունդ թույն տալ, որ թավ մորուքը թափվի թուխ ընչացքից.
Կա՛մ կեռ թրով վիզը կտրել՝ նրա քնած ժամանակ,
Կա՛մ անզրահ պարեկին[2] տալ սուր, սրասուր մի դանակ:

---

[1] **հմա** – *այստեղ*՝ կախարդ:
[2] **պարեկ** – *այստեղ*՝ փոքրիկ զինված ջոկատ՝ խումբ:

Աժդահակի երազը, Ջուլիանո Զասսո, 1885թ.

«Օ՜, հա՛յ Տիգրան, դու ես անվերջ վրդովում սիրտս անքուն,
Բայց, նենգավո՛ր, կքավես դու...»,- շշնջում է նա մտքում:
- Քո եղբայրը, Տիգրանուհի՛, նախանձում է մեր անվան.
Շատ չի անցնի՝ զենք ու զորքով կմտնի նա Մարաստան,
Արևելքից, արևմուտքից, հարավից ու հյուսիսից
Կասպատակի Եկբատանը ու կսպանի քեզ ու ինձ:

Տիգրանի կինը՝ Զարուհին, նախանձի հուրը սրտում,
Ուզում է քեզ ստորացնել, աղախնացնել պալատում.
Պետք է ընտրել մեկն ու մեկը՝ կա՛մ Մեծ Տիկին մնալ Մար,
Կա՛մ եղբորդ ու Զարուհուն խստիվ պատժել չարաչար...
Այնժամ դու ոչ միայն երկրիս Տիկնանց Տիկին կմնաս,
Այլև Հայքը կաստվածացնի, կպաշտի քեզ հանապազ...

Մի չարաղետ վայրկյան միայն... Տիգրանուհու սրտի մեջ
Հանկարծակի, ինչպես մութից ծնված աստղերը անշեջ,
Կայծկլտում են փառքի շողքեր... բայց մարմրում են մեկ-մեկ,
Երբ տեսնում է ազնիվ եղբորը հասակով բարձրասեգ.
Եվ ծածկում է դեմքը շտապ, հանցապարտի նման լուռ,
Սրտում՝ կրակ ատելություն ու բարկություն բոցահուր:

Օ՜, աստվածնե՛ր, օ՛, սրբությո՛ւն, մի՞թե Տիգրանը անբիծ
Ուզում է գահն հափշտակել իր հարազատ քրոջից.
Խլել փառքը, գույքն ու կայքը, ստրկացնել, սպանել...
Բայց, ներքուստ մի հզոր շշուկ սկսում է այպանել[1].
Օ՜, ո՛չ, երբե՛ք, անհնար է, որ Տիգրանը՝ քաջ անվամբ,
Ուրիշի ինչքն հափշտակի ստորությա՛մբ, նենգությա՛մբ...

Հայկն՝ Հայաստան հիմնադրեց իր աղեղով երկրացունց,
Արամն՝ հզոր հայրենիքը փրկեց գոռոզ ասորուց,
Ազնիվ Արա Գեղեցիկը ընկավ փառքով ու պատվով,
Տիգրանը գահ հափշտակի՞... այն էլ կնոջ միջոցո՞վ...
Ո՛չ, Աժդահա՛կ, դու խաբում ես փառքի տենչովը ունայն,
Տիգրանուհուն փառքից էլ սուրբ՝ հայրենի՛քն է միմիայն:

Իմ Հայաստան հայրենիքը, որ օրորան եղավ ինձ,
Ուր շաչեցին հաղթ պապերիս աղեղները լայնալիճ,
Ուր քա՛ջ, ազնիվ մի ժողովուրդ՝ դաշտում, սարում, գետի մոտ
Հիմնարկում է բերդ ու քաղաք ու ավաններ արևոտ,
Ուր քաղում է քաղցր խաղող, ցորենի արտ ու գարու,
Խմում գինի, երգում երգեր ճշմարտության ու բարու...

Ու տիպարը մեծահոգի ազնվության, քաջության
Սուրհանդակ է գաղտնի հղում հայրենի հող Հայաստան:
Ու ցնդում են Աժդահակի որոգայթները բոլոր...
Արյունալի, բիրտ աչքերով, մտքերով մութ ու մոլոր
Նա տեսնում է կատարումը իր երազի չարածին՝
Մարաստանի մեջ դոփում է հայկական վեհ այրուձին:

Դոփում, շաչում, շառաչում է՝ շանթաշռինդ, հրազայր[2],
Քաղաքներում, ավաններում, դաշտերում լայն ու անծայր.
Վիշապազարդ դրոշներով մղվում արդար պայքարի՝
Ընդդեմ խարդա՛խ ու բռնակա՛լ Մարաստան չար աշխարհի:
Ու Տիգրանը Տիգրանուհուն համբուրում է ջերմագին՝
Աժդահակին բարձրացնելով արդարադատ նիզակին:

---

[1] **այպանել** – ամոթանք տալ, ծաղրել:

[2] **հրազայր** – հրի նման ճարակող՝ զարկող, ոչնչացնող:

Ռուբինա Նազարյան
Թամար Ալեքսանյան

Արտավազդ եվ կլեոպատրա

Մեր թվարկությունից առաջ 37 թվականին հռոմեացի զորավար Մարկոս Անտոնիոսը իր բազմամարդ լեգեոններով արշավանք է սկսում պարթևների դեմ:

Անտոնիոսի մեջ Արարիչն ասես կուտակել էր մահկանացուներին բնորոշ այպանելի բոլոր գծերը: Նա ուխտադրուժ էր, արնախում և փառասեր: Պատմահայր Խորենացին վկայում է, որ «առյուծի պես մռնչացող գազան Անտոնիոսին» ամենից շատ հրապուրում էր Արմենիայի ոսկին:

Այդ ինքնահավան ու պարծենկոտ այրը, պարթևներից մի լավ ջարդ ստանալով, զորքերի փրկված մնացորդներով մի կերպ ճողոպրում է և խուճապահար հասնում Հայաստան՝ հանգստանալու և կերակրվելու համար օթևան խնդրելով հայոց արքայից արքա Արտավազդ Երկրորդից: Եթե լիներ խորամանկ դիվանագետ, հայոց թագավորը ինքն էլ մի վճռական հարված կհասցներ և վերջնականապես կխորտակեր վաղեմի ոխերիմ թշնամուն՝ դաս տալով նաև նրա հաջորդներին: Բայց քանի որ բանաստեղծ էր, մարդկային խղճի ու կարեկցանքի, ազնվության ու վեհանձնության մարմնացում, ոչ միայն չի ջախջախում մազապուրծ թշվառականին, այլև ապաստան է տալիս, ամբողջ ձմեռ կերակրում զորքի սովահար մնացորդներին:

Անտոնիոսը իր պարտության մեջ մեղավոր էր համարում Արտավազդին այն պատճառով, որ վերջինս պահպանել էր չեզոք դիրք, չէր ուզել իր դեմ լարել պարթևներին:

– Պարթևապաշտ ես, Արտավա՛զդ,– ասել էր զորավարն իբրև մեղադրանք:

– Ես ո՛չ պարթևապաշտ եմ, ո՛չ հռոմեապաշտ,– պատասխանել էր արքան,– ես հայապաշտ եմ, թագավոր հայոց և կամենում եմ իմ աշխարհը պարթևների ու Հռոմի միջև բարձրացնել իբրև խաղաղ անկախության ամրոց:

Անտոնիոսը իր զորքերով հեռացավ Հայաստանից, բայց Արտավազդի խոսքերն ու վարմունքը չմոռացավ:

Մեր թվարկությունից առաջ 34 թվականին նա իբր բանակցելու նպատակով եկավ Արտաշատ:

Երեկո էր: Արտաշատի կիսաշրջանաձև թատրոնի դահլիճը լեցուն

էր հանդիսականներով: Այդ օրը բեմադրվելու էր Արտավազդի՝ Տիգրան Մեծին նվիրված թատերգությունը: Ներկայացումը դիտելու էին հրավիրված նաև Անտոնիոսը և նրա զինակիցները:

Արտավազդի մտքով չէր էլ անցնում, որ դավադիրները ցանկանում են հենց թատերասրահում ձերբակալել իրեն:

Ներկայացումից հետո զուտ հռոմեական նենգությամբ նա Արտավազդին կնոջ և որդիների հետ հրավիրում է խնջույքի, ապա բոլորին շղթայում և տանում Եգիպտոս՝ իր հարճին[1]՝ Կլեոպատրային նվեր: Ի լուր Եգիպտոսի՝ նա հայտարարում է, թե իբր նվաճել է Արմենիան և այդ առթիվ շքեղ հաղթահանդես է կազմակերպում:

Ծովեզրյա արքայական ճոխ պալատի պատշգամբում բացված է խրախճանքի սեղան: Հարբած է Անտոնիոսը, հարբած են թագուհու կոչնականները:

Կլեոպատրան դառնում է իր մոտ նստած Արտավազդին.

– Ասա՛ ինձ, Արտավա՛զդ արքա, ինչպե՞ս վարվեմ քեզ հետ:

– Արքայաբա՛ր:

– Դու վաղը Ռա հրապարակում ինձ կերկրպագես՝ ի տես բոլորի, և ես, շղթաներդ նույն պահին արձակելով, քեզ իմ կողքին կբազմեցնեմ: Կստանաս աստվածային պարգև՝ զորակցությունն ու սերը Կլեոպատրայի:

– Դու ինձ իմ կյանքն ես խոստանում, բայց ոչ տերությունը: Սակայն հիշի՛ր, իմ երկիրը տեր ունի՝ Արտաշես որդիս: Նա չի թողնի, որ մարմնացնես երազանքներդ սին:

– Բարբարո՛ս արմեն, ճանաչի՛ր չափդ, երբ խոսում ես ինքնակալ Կլեոպատրայի հետ: Շղթայեցե՛ք սրան: Ոսկյա՛ շղթաներով:

Կեսօր է: Ռա հրապարակում՝ արծաթազօծ պատվանդանի վրա, խայտում են ոսկեղեն երկու գահավորակ, որոնց վրա բազմել են Անտոնիոսը և Կլեոպատրան: Նրանց առջև դրված է երկու շքեղակազմ մատյան:

– Այդ ի՞նչ մատյաններ են,– հարցնում է Կլեոպատրան Մարկոսին:

– Մեկը կոչվում «Պատմություն Տիգրան Մեծի», մյուսը Արտավազդի հորինվածքներն են: Ահա՛, բերում են արքայից արքային: Կեցվածքի՞ն նայիր:

– Այո՛, արքայավայել է:

Դեպի հրապարակ են քայլում շղթայված Արտավազդը, հայոց թագուհին և նրանց երկու զավակները՝ Տիգրանն ու կրտսեր Արտավազդը, նաև հայ իշխաններ, զորականներ: Քայլում են՝ գլուխները բարձր, ու չեն նայում գահին՝ անտեսելով ոսոխներին: Բայց նրանց ստիպում են կանգնել:

– Երկրպագի՛ր և կապրես, – դիմում է Կլեոպատրան Արտավազդին:

---

[1] **հարճ** – սիրուհի:

Արտավազդ և Կլեոպատրա, Էդվարդ Իսաբեկյան, 1966թ.

– Ապրել կա, որ մահից իսկ առավել է, և կա մեռնել, որ առավել է ապրելուց: Ինչո՞ւ երկրպագեմ: Ինչպե՞ս: Ես՝ Արտավազդ Երկրորդս՝ որդին Տիգրան Մեծի, ես՝ արքայից արքա ու բանաստեղծ, ես՝ Հայոց բարձունքների արծիվ, ինչպե՞ս կարող եմ երկրպագել հռոմեական աղվեսի հարճին:

– Ինչ,– ոտքի է ելնում ցասումնալից Կլեոպատրան,– կառափնատե՛լ[1] բարբարոսին, այրե՛լ մատյանները՝ ջնջելով նրա հուշն անգամ աշխարհից:

– Դու կայրես իմ մատյանները, բայց պատմությունն անմահ է. չե՛ս այրի: Կպատմվի՛ ամենն այս բերնեբերան և հավիտյան կապրի՛:

– Կառափնատե՛լ,– ճչում է Կլեոպատրան:

Զինվորները տանում են հայերին:

Դա մեր թվարկությունից առաջ 31 թվականի սեպտեմբերի 2-ին էր:

---

[1] **կառափնատել** – գլխատել:

Սողոմոն Տարոնցի

ՍՐՏԱՎԱՉԴ ԵՎ ԿԼԵՈՊԱՏՐԱ

Գալիս է Մարկ Անտոնիոսը գոռ աշխարհից Հռովմի,
Գալիս է՝ հորդ հեղեղի պես, ծարավ ոսկու և հողի.
Բարձրանում է Արևելքում խուճապ, խորին վրդովմունք,
Հասնում Հայոց լեռնաշխարհի ամեն մի գուբ ու բարձունք,
Եվ բանաստեղծ թագավորի՝ Արտավազդի պալատում
Տիրում է մի մթին կասկած, խոլ տագնապ ու խլրտում:

Այդ կասկածն ու տագնապը էլ սաստկանում են՝ ինչպես բոց,
Երբ գալիս է սուրհանդակը դեպի աշխարհը Հայոց.
Ու մերժում է Արտավազդը Անտոնիոսի մոտ գնալ,
Նրա, որը փառամոլ է, որը գիտե շնանալ,
Հարստություն շեղջել անբավ՝ ստրուկ արյան ու կրքի,
Աշխարհների բախտը նշել ժպիտով մի բոզ էգի:

Օ՜, ո՛չ, պետք է պահել ոգին Տիգրան Մեծի միշտ անմահ,
Հայաստանը Հայաստա՛ն է և Հայաստան կմնա՛.
Կզարնվեն Հայրենիքի պարիսպներին ամրակող
Լեգեոնները Հռովմի՝ Արևելքը կողոպտող...
Մարկ Անտոնիոսը պատվո՞ւմ է, բռնակա՛լ դու չարանենգ,
Ո՛չ, գայլի ծիծ ծծող դու գա՛յլ, հասկանում ենք միտքդ մենք:

Ու վիճում են գիշեր-ցերեկ Արտաշատ մայր քաղաքում
Ավագանի ու նախարար ու զորական բորբոքուն.
– Գնա՞, արդյոք, Արտավազդը Անտոնիոսի մոտ շվայտ,
Ինչպե՞ս պիտի վերջանա այցն, ու չի՞ լինի վերջը վատ...
Ու վիճում են գիշեր-ցերեկ Արտաշատ մայր քաղաքում
Ավագանի ու նախարար ու զորական բորբոքուն:

Երրորդ անգամ սուրհանդակը՝ հեծած նժույգ շանթընկեց,
Ողջույններ է բերում կրկին ու խոստումներ մեծամեծ.
Եվ պալատում հանկարծ տիրում է մի հավատ միամիտ.
– Բարեկամը հյուր է գնում բարեկամին աներկմիտ:
Եվ գնում է... բայց ողջույնի ու խոստումի փոխանակ՝
Դնում խաբված բազուկները շղթաների շաչի տակ:

– Տեսնո՞ւմ ես դու այս արձանը Անահիտի քո պաշտած,
Ես, Հռովմի՛ իրավունքով, վերցրի քրմից Եկեղյաց.
Պարթևների դու դաշնակի՛ց, Հռովմին քե՞ն ես պահում,
Հանուն դրա՝ կընծայեմ քեզ Կլեոպատրա թագուհուն.
Պոմպեոսը Տիգրան հային խնայել է խղճալով,
Կխնայեմ ես էլ քեզ, բայց... չոր գլուխդ կտրելով:

Եվ գնում է և մտածում Արտավազդը վշտալի.
«Ծանոթ լինել իմաստությանցն Եվրիպեդի, Էսքիլի,
Պլատոնի ու Թալեսի, ու հանկարծ խեղճ ու դողդոջ՝
Խաբված տարվել, որպես գերի, մի անառակ չար կնո՛ջ»:
Անփորձությունը խաբվում է հրապույրովը նենգի:
Ու գնում է ու մտածում փողոցներով քաղաքի:

Այնտեղ՝ ճերմակ հովանու տակ, բազմած ոսկե պերճ գահին՝
Սպասում է Կլեոպատրան՝ Եգիպտոսի թագուհին:
Նրա միակ փառքը, համբավը իգությո՛ւնն է անկշտում,
Ու մեխելով Արտավազդին կիրք աչքերը անհաշտում՝
Ասում է խիստ.– Ա՛րդ, կոչի՛ր ինձ «Արքայուհի արքայից».
Եթե կոչես, ազատ կյանք ու թագ կստանաս ինձանից:

Ու լսում է խաբված արքան՝ կանգնելով լուռ, գլխահակ,
Աչքերում՝ բոց բարկությունը և կրծքում՝ հույսը խորտակ.
– Դե՞, աղաչի՛ր,– որոտում է Կլեոպատրան բարկությամբ:
Մինչ Արտավազդը յուղում է գլուխն՝ ինչպես մթին ամպ:
– Ո՛չ, Տիգրանի որդին երբե՛ք, ո՛վ անառակ մեծանուն,
Այդպիսի մեծ կոչում չի՛ տա քեզ նման մի աղախնու:

...Եվ թռչում է մահվան բոթը, հասնում աշխարհը Հայոց,
Անզսպելի բարկությունը կրակ կտրում ամեն ծոց:
Պալատը և ժողովուրդը անում են մեծ սուգ ու լաց՝
Աններելի անփորձության, միամտության մեջ խաբված.
Եվ կանգնում են Հռովմի դեմ՝ առած վահան, նիզակ, նետ,
Հայաստանի գյուղ ու քաղաքն ու բերդերը քարակերտ...

Ըստ Ագաթանգեղոսի

Տրդատ

Հայոց Խոսրով թագավորի որդին՝ Տրդատը, իր ուսումն ու դաստիարակությունը ստանում էր Լիկիանոս անունով մի հռոմեացու մոտ: Տրդատը մանկուց ֆիզիկապես շատ ուժեղ էր, կորովի ձիավար, իսկ զենքերի գործածության մեջ՝ քաջահմուտ: Նա հաճախ էր մասնակցում կրկեսային մրցումների և միշտ հաղթանակում էր:

Օրերից մի օր Հռոմի կայսրը հրովարտակ է ուղարկում իր բոլոր իշխաններին՝ հրաման արձակելով շուտափույթ գալ Հռոմ: Լիկիանոսը իր սիրելի Տրդատի հետ գալիս է կայսրի կանչին:

Հռոմի կայսրը փոքրամարմին և վտիտ մի անձ էր: Այդ օրերին նա սարսափած էր, որովհետև գոթերի զորքը պատերազմի էր ելել Հռոմի դեմ: Գոթերի թագավորը կայսրին լուր էր ուղարկել, թե ուզում է մենամարտել նրա հետ, որպեսզի անմեղ զորականների արյուն չթափվի:

Երբ Լիկիանոսը լսում է գոթերի թագավորի առաջարկի մասին, համոզում է մենամարտի ուղարկել հայոց արքայազն Տրդատին.

– Թող իմ տիրոջ սիրտը բնավ չտագնապի, քանզի այստեղ՝ քո արքունիքում է Տրդատ դյուցազունը. նա կընդունի մենամարտի հրավերը:

Տրդատին կանչում են կայսրի մոտ. վերջինս համաձայնվում է մենամարտել գոթերի թագավորի հետ:

Հաջորդ օրը՝ առավոտյան, Տրդատին հագցնում են կայսեր արքայական պատմուճանը, զարդարում կայսերական նշաններով և կանգնեցնում հռոմեական զորքի առջևում՝ իբրև կայսր:

Տրդատը, զորքի գլուխ անցած, մարտական փողերի զիլ ազդարարության տակ մոտենում է և կանգնում թշնամու դեմ հանդիման:

Առաջ են գալիս Տրդատն ու գոթերի թագավորը: Նրանք մտրակում են իրենց երիվարներին, և սկսվում է մարտը: Կայսերակերպ Տրդատը հաղթում է գոթերի թագավորին, նրան իջեցնում է նժույգից և բերում կանգնեցնում է Հռոմի կայսեր առջև:

Կայսրը մեծամեծ պատիվներ և պարգևներ է տալիս Տրդատին: Ապա նրա գլխին թագ է դնում, զարդարում է արքայական ծիրանիով, օգնական զորք է տալիս և ուղարկում հայրենի Հայոց աշխարհը՝ տիրանալու իր հոր թափուր գահին:

Տրդատ Գ Մեծ,
Մկրտում Հովնաթանյան, 1836թ.

Ստեփան Կուրտիկյան

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

Անդորր էր տիրում Տիզբոն արքայանիստ քաղաքի գետեզրյա պալատում: Տիգրիսի ափին շարված բարձրուղեշ արմավենիները մեղմ հովհարում էին շքեղազարդ պալատը:

Շապուհ արքան, ադամանդակուռ[1] խույրը[2] գլխին, իր գեղաշուք գահին բազմած, արձանացել էր ոսկեհուռ հանդերձի մեջ, երբ սենեկապետը ներս մտնելով յոթն անգամ գլուխ խոնարհեց և հայտնեց.

– Տիեզերքի՛ աղոթարան, արքայի՛ց արքա, ժամանել է ծառադ՝ հայոց Արշակ թագավորը, և կամի տեսությանդ արժանանալ:

Արքայական խույրը տարուբերվեց:

– Ժամանե՞լ է վերջապես այդ ըմբոստը...

Նենգ քմծիծաղ երևաց արքայից արքայի շուրթերին: Ահուրամազդի կամոք հաջող էին գնում գործերը: Ահա իր հրավերով Արյաց գահին է ներկայանում անհնազանդ ու աննվաճ թագավորը հայոց:

«Առյուծին թակարդով են որսում, մարդուն՝ խաբեությամբ ու քծնանքով»,– նենգամտեց Շապուհը՝ արտոնելով ներս ընդունել հյուրին:

Հայոց թագավորը դանդաղ, հանդիսաքայլ մտավ գեղաքանդակ դահլիճն ու մոտեցավ արքայից արքային:

Ոսկեհյուս գայիսոնը ձեռքին՝ Շապուհը հպարտ թիկնել էր իր գահին, ու կեղծ ժպիտ էր խաղում կանաչավուն աչքերում: Հինայած մորուքը շոյելով՝ նա շողոքորթ լեզվով ողջունեց հայոց թագավորին, հարցուփորձ արեց Հայոց աշխարհից և աստվածային օրհնություն ու առողջություն ցանկանալով նրան՝ երեկոյան ընթրիքի հրավիրեց:

Երբ Արշակը հեռացավ, Շապուհն իր մոտ կանչեց մոգերին, աստղագուշակներին, աստղահիմաներին[3] և ասաց.

– Ահա երեսուն տարի է՝ արիները պատերազմ են մղում հայոց թագավորի դեմ, և չի եղել տարի, որ հաղթեն նրան: Ես, ըստ մեր երդման օրենքի, Ալանոզանի միջոցով աղ և վարազագիր մատանիով կնքված հրավեր ուղարկեցի Արշակին, թե՝ «Եկ, իրար տեսնենք և հայր ու որդի լինենք հետայսու»:

Եվ ահա նա վեր է կացել ու իր սպարապետ Վասակի հետ եկել է

---

[1] **ադամանդակուռ** – ադամանդից պատրաստված:

[2] **խույր** – ակնեղեններով զարդարված գլխանոց կամ փաթթոց, որ կրում էին թագավորները, բարձրաստիճան իշխանավորները, կրոնավորները:

[3] **աստղահիմա** – աստղերով գուշակություն անող, աստղագուշակ:

այստեղ: Իմանայի՛, թե հավատարիմ ծառա կմնա նա իմ ուխտին, պատիվներով կարձակեի նրան դեպի յուր աշխարհը, բայց վախենում եմ՝ դառնա նորից իր երկիրը և չանսա այլևս արքայական իմ հրամաններին: Ասացեք, իմաստուններ, ինչպե՞ս վարվեմ հետը:

Մովպետաց մովպետը[1] շոյեց ճերմակ մորուքն ու ձեռքերը երկինք պարզելով՝ պատմեց.

– Արյաց հզո՛ր արքա, պահի՛ր Արշակին այստեղ, դեսպա՛ն ուղարկիր Հայոց երկիրը, բերե՛լ տուր երկու բեռ Հայաստանի հողից ու մի կահույր[2]՝ ջրից և հրամա՛ն տուր դահլիճի հատակի կեսը ծածկել Հայաստանից բերված հողով, ապա բռնի՛ր հայոց թագավորի ձեռքից և տա՛ր նրան նախ՝ այնտեղ, որտեղ պարսից հողն է, և հարցուփորձ արա իրեն: Եվ նորից բռնի՛ր նրա ձեռքից, տա՛ր հայահատակ հողի վրա ու լսի՛ր նրա խոսքերը և կիմանաս, թե հավատարիմ կմնա՞ արդյոք քո ուխտին և կպահի՞ արդյոք քո դաշինքը, երբ դու նրան արձակես, և նա գնա Հայաստան:

Նույն օրն ևեթ Շապուհն արագավազ ուղտերով մարդիկ ճամփեց Հայաստան՝ հող և ջուր բերելու: Եվ երբ հողն ու ջուրը բերին, կատարեց Մովպետի խորհուրդը:

Երբ Արշակն ու Շապուհը երկուսով պարսից հողի վրա էին, Շապուհը հարց տվեց.

– Արշա՛կ հայոց թագավոր, ինչո՞ւ դարձար իմ թշնամին. չէ՞ որ քեզ որդու պես սիրեցի և կամեցա իմ դուստրը կնության տալ քեզ և իմ որդին դարձնել քեզ: Իսկ դու թշնամացար ինձ և ահա երեսուն տարի է՝ պատերազմում ես իմ դեմ:

Արշակ թագավորը, ոտքերի տակ այրուցք զգալով, խեղճացավ և պատասխանեց.

– Արյա՛ց արքա, մեղապարտ և հանցավոր եմ ես քո առաջ:

Իսկ երբ Շապուհը սրահի հայակողմը տարավ Արշակին, և նա ոտք դրեց հայրենի հողի վրա, որ Հայաստանի ջրով էր օծված, գոտեպնդվեց և ասաց.

– Հեռո՛ւ ինձանից, չարագո՛ր արքա, ես չեմ նների քեզ հայոց հողում թափված արյունը և ասպատակությունը:

Հնուց կարգ էր. հայոց թագավորը պարսից արքայի կողքին էր բազմում կերուխումի ժամանակ: Բայց այդ օրը դահլիճի ծայրին՝ գետնի վրա նստեցրին հայոց թագավորին, որտեղ հատակը Հայաստանի հողով էր ծածկված:

Արշակն ըմբոստացավ, ոտքի ելավ և Շապուհին դիմելով՝ գոչեց.

– Ի՞մն է այդ տեղը, ուր դու ես բազմել. երբ իմ աշխարհը հասնեմ,

---

[1] **մովպետ** – **մոգպետ** – մոգերի՝ զրադաշտական կրոնի հոգևոր պաշտոնների պետ:

[2] **կահույր** – գինու կամ ջրի աման:

մեծապես վրեժխնդիր պիտի լինեմ քեզանից:

– Դու երբեք չես հասնի քո աշխարհը, դու իմ հողի վրա կմեռնես՝ ապաշխարելով,– գոչեց Շապուհը զայրալի և հրաման արձակեց.

– Շղթանե՛ր զարկեք սրան և ճամփե՛ք Խուժաստան՝ Անհուշ բերդը:

– Խաբեությամբ կարող ես շղթայել իմ ձեռքերն ու ոտքերը, արքա՛ արյաց, բայց հոգիս՝ երբեք,– թնդաց Արշակի բամբ ձայնը, երբ շղթա էին զարկում ձեռքերին:

Տեսավ այդ հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը, ընդոստ բարձրացավ տեղից և սրահում որոտաց նրա ձայնը.

– Արքա՛ արյաց, վարվիր արքայի՛ նման և ո՛չ հասարակ խաբեբայի: Ես այստեղ հյուր եմ եկել, և մոտս չէ սուրս, որ պաշտպանեմ իմ թագավորին, բայց ես կվերադառնամ հայրենիք և վրեժխնդիր կլինեմ...

Շապուհը քրքջաց.

– Աղվե՛ս, դո՛ւ էիր խանգարիչը, դո՛ւ էիր այսքան տարի կոտորում արիներին: Ինչո՞ւ էիր այդպես անում. աղվեսի մահով ես քեզ պիտի սպանեմ:

Անայլայլ լսելով Շապուհին՝ Վասակը պատասխանեց.

– Մինչև հիմա ես քեզ համար առյուծ էի, հիմա աղվե՞ս դարձա: Երբ ես Վասակն էի, մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մյուս լեռան. երբ աջ ոտքիս էի հենվում, աջ լեռն էի գետնի տակ տանում, երբ ձախ ոտքիս էի հենվում, ձախ լեռն էր գետնի տակ անցնում:

Ծիծաղեց Շապուհը:

– Այդ ի՞նչ լեռներ էին, որ գետնի տակն էիր տանում:

Վասակն ավելի բարձր պահեց գլուխը և պոռթկաց.

– Երկու լեռներից մեկը դո՛ւ էիր, Շապո՛ւհ, մյուսը՝ հունաց թագավորը:

Շապուհը փրփրեց, արյունոտ աչքերը դուրս թռան ակնակապիճներից:

– Ես հիմա աղվեսի մահով կմահացնեմ քեզ,– սպառնաց նա կրկին:

Վասակը, որ կարճահասակ էր, այժմ խնջույքի սեղանի շուրջ հսկայացել ու լեռնացել էր, և ոչ մի սպառնալիք չէր վախեցնում ու չէր ընկճում նրան:

Հանգիստ լսելով Շապուհին՝ նա պոռթկաց.

– Նենգաբարո մարդն է միայն քեզ նման վարվում, արքա՛ աղվեսների: Դու կարող ես գլխատել մեզ, բայց ժողովրդին հայոց...

Մոլեգնեց գոռոզ արքան.

– Մորթազե՛րծ անել սրան, տի՛կ հանել ու տանել Անհուշ բերդը:

Վասակը դաժան հայացքը պտտեցրեց շուրջն ու քմծիծաղով՝ ավելացրեց.

– Հայոց սպարապետը չի դավաճանել և միշտ անբաժան է եղել իր թագավորից: Թող այ՛ժմ էլ և հավիտյա՛նս անբաժան մնա իր թագավորից...

* * *

Գույժը թռչունի թևով հասավ Հայոց աշխարհը, տարածվեց հովիտներում ու կիրճերում ծվարած ամենահեռավոր շեները. ատելությունը լեռնացավ, ու վրեժի փոթորիկ բորբոքվեց շինական մարդկանց սրտերում:

* * *

Սյունյաց Անդովկ իշխանի դուստր Փառանձեմ թագուհին սենյակում փակված գիշեր-ցերեկ սգում էր ամուսնու կորուստն ու միտք անում՝ ինչ ճանապարհով ազատի նրան գերության շղթաներից:

Մի գիշեր Փառանձեմը երազում տեսավ, որ Արշակ թագավորն Անհուշ բերդի լուսամուտից շղթայակապ ձեռքը աղերսագին պարզել էր դեպի հայրենիք և ինչ-որ բան էր ուզում ասել:

Առավոտ վաղ Փառանձեմը կանչեց ծերունի գուսանին և պատմեց երազը:

Կույր գուսան Արբակը՝ Անգեղ տան Դրաստամատ իշխանի հայրը, ուշադիր լսեց և Փառանձեմին վշտակցելով՝ ասաց.

– Հայոց թագավորը նեղության մեջ է, թագուհի՛. նա տառապում է սաստիկ, զի հայրենի հող չկա մոտը: Հայրենի հող է ուզում նա: Վերցրո՛ւ մի պտղունց հող նախնյաց գերեզմանից և ուղարկի՛ր նրան, որ ուժ առած՝ տոկա տանջանքին ու հայրենյաց կարոտին...

– Բայց ո՞վ կհասցնի նրան հայրենի հողը:

Կույր գուսանի դեմքը ցնցվեց:

Նազինիկ վարձակը[1], որ փանդիռը ծնկին գլխիկոր նստել էր, բարձրացրեց գլուխը.

– Ես...

Ծերունի գուսանն ու թագուհին հուզվեցին սաստիկ:

– Բայց թե Խուժաստան էլ հասնես, քեզ ո՞վ կթողնի, որ մտնես Անհուշ բերդը: Դու չգիտես, որ նրա դարպասը հսկում են դաժան ու խաբեբա Ալանոզան ու բերդապահ Սուրենը,– խոսեց Փառանձեմը:

– Ես կմտնեմ բերդ, երգով ու նվագով կհարբեցնեմ նրանց ու կգնամ հայոց արքայի մոտ,– պնդեց Նազինիկ վարձակը.– չէ՞ որ արյաց և մեր մեջ սովորություն կա՝ հարգելու վարձակին, տեղ տալու նրան, վարդ տեղալու նրա վարսերին և ոտքերի տակ մարգարիտ ածելու...

Փառանձեմն ու գուսանը մտամոլոր կանգնել էին՝ հուզված Նազինիկի առաջարկից, և կույր Արբակն ինչ-որ բան էր ուզում ասել, երբ այդ վայրկյանին ձյունափետուր մի աղավնի փռռալով ներս մտավ լուսամուտից ու նստեց նրա ուսին:

– Աստված մեզ հետ է, տիրուհի՛, Նա ուղարկեց աղավնուն՝ արքային

[1] **վարձակ** – խնջույքներում՝ զանազան կարգի զվարճավայրերում պարող կին:

հայրենի հող տանելու համար,– խաղաղվեց ծերունի Արբակը:

Փառանձեմ թագուհին մետաքսե քսակի մեջ դրեց մի պտղունց հայրենի հող, կապեց աղավնու վզից և բաց թողեց:

Թռավ սրաթռիչ աղավնին Հայոց աշխարհի լեռներով ու ձորերով, հասավ Անհուշ բերդը, ներս մտավ վանդակապատ լուսամուտից և նստեց Արշակ թագավորի ուսին:

– Հայո՛ց աշխարհից է, Հայո՛ց աշխարհից...

Արշակը գգվեց աղավնուն, վզից վերցրեց հայրենի հողը, համբուրեց և պահեց ծոցի մեջ: Սպիացան այդ վայրկյանին նրա արյունոտ վերքերը, հովացավ սիրտն, ու թվաց, որ ձեռքերից ու ոտքերից արձակեցին ծանր շղթաները և պարանոցի երկաթյա անուրը[1], որ իրենից առաջ կրել էր Հռոմի Վալերիանոս կայսրը:

Աղավնին թռավ Վասակ Մամիկոնյանի ուսին, և Արշակը տեսավ, որ կենդանություն առավ հայոց սպարապետը, ժպտաց, ապա հրեղեն ձին նստեց ու սպառազեն սլացավ ռազմի դաշտերով...

Ավա՜ղ, պատրանք էր այն:

Ահա նորից իր դեմ կանգնել է մորթազերծ արված Վասակը, և թևածում, պտույտ է գալիս նրա շուրջը հեռու հայրենիքից եկած աղավնին: Էլի թրթռաց թռչունը Վասակի չորս բոլորը, և մեկեն պայթեց սրտիկն, ու ինքն էլ անշնչացած ընկավ գետին, օտար աշխարհում՝ մութ զնդանի մեջ...

Արշակն անշարժ կանգնել էր՝ թաց հայացքը աղավնուն, որից ծորացող արյունը կարմրեցնում էր փոքրիկ էակի սպիտակափրփուր փետուրները...

* * *

Քուշանաց դեմ մղվող պատերազմում ձախորդության մեջ էր Շապուհը: Քուշանները պաշարել էին արյաց արքային և սրախողխող էին անելու, երբ հայտնվեց Անգեղ տան իշխան Դրաստամատը, որ Տիզբոնից եկած հայագունդ այրուձիի հետ էր, և կոտորելով թշնամիներին՝ փրկեց Շապուհի կյանքը:

Երբ հաղթանակով տուն դարձան պատերազմից, Շապուհն իր ավագանիի ներկայությամբ ասաց Դրաստամատին.

– Հետայսու դու գերի չես: Դու փրկեցիր արյաց արքայի կյանքը և արժանի ես հիմա նրա շնորհին: Խնդրի՛ր, ինչ ցանկանում ես, և ես կկատարեմ քո խնդիրքը:

Դրաստամատը գլուխ խոնարհեց.

– Տիեզերքի՛ աղոթարան,– ասաց նա,– հրամա՛ն տուր, որ գնամ տեսնեմ Արշակ թագավորին, գեթ մի օրով արձակեմ նրա շղթաները և արքայավայել մեծարեմ:

---

[1] **անուր** – (հնացած) օղակ, որ անցկացնում էին անասունի կամ մարդու վիզը՝ նրան զսպելու նպատակով:

Շապուհը թե՛ զարմացավ և թե՛ զայրացավ Դրաստամատի այս պահանջի վրա. սրտի խորքում դեմ եղավ դրան. նա կուզեր նույնիսկ խստագույնս պատժել հանդուգն իշխանին, սակայն ավագանու ներկայությամբ դրժել իր խոստումը չէր կարող:

– Խիստ է խնդիրքդ, Դրաստամա՛տ,– բարբառեց Շապուհը,– Արյաց տերություն հիմնվելուց և այդ բերդը Անհուշ կոչվելուց ի վեր չի եղել մեկը, որ համարձակվեր արքային հիշեցնել, թե մարդ արարած է արգելափակված այնտեղ: Դու զանց առար Արյաց տերության ավանդական օրենքը՝ անձդ մահվան վտանգին ենթարկելով: Բայց ներում եմ քեզ քաջագործություններիդ համար: Գնա՛ և նորի՛ց մտածիր. քեզ արժանի է, հօգուտ քո անձի, խնդրել աշխարհս, գավառս և կամ գանձս...

– Արքայի՛ց արքա,– գլուխ խոնարհեց Դրաստամատը,– ինձ հարկավոր չէ ո՛չ հարստություն, ո՛չ էլ իշխանություն. իմ խնդիրքը փոքր է... *Լավ է անուն բարի, քան զգանձ բազում...*

Շապուհը մի փուշտիպան[1] ուղեկից տվեց և արքունի մատանիով կնքված հրովարտակ հանձնեց Դրաստամատին: Սա անհապաղ ճանապարհվեց Անհուշ բերդ:

Երկաթե ժանգոտ դռները ծանրածանր դղրդյունով բացվեցին նրա առջև:

Դրաստամատը տեսավ թագավորին մթին խցի մեջ. ծանր շղթաները ոտքերին՝ ետ ու առաջ էր գնում նա: Մի անկյունում կար հարդե անկողին, գարեհաց ու մի թաս ջուր:

Գունատ էր Արշակը: Թավ մորուքի կիսաշրջանի մեջ մեռելատիպ էր երեսը: Բայց կախարդող մի վեհություն կար դեմքին, և անշեջ հուրն էր շողում աչքերի մեջ:

Դրաստամատը գրկաբաց փարվեց Արշակին, համբույրներով ծածկեց նրան:

– Այդ դո՞ւ ես, իմ քա՛ջ Դրաստամատ, այդ դո՞ւ ես,– հուզված կրկնում էր Արշակը,– ինչպե՞ս հասար Անհուշ, տառապանքի ու մահվան այս քարեղեն որջը. չէ՞ որ դու էլ Տիզբոնում էիր՝ Շապուհի գերության մեջ:

Ի զարմանս Արշակի՝ Դրաստամատը արձակեց նրա շղթաները, ազնիվ պատմուճան[2] հագցրեց, բազմեցրեց փափուկ բարձի վրա և լիախորտիկ սեղան բացեց իր արքայի առաջ:

Գինու առաջին թասը հազիվ էր ըմպել նա, երբ առաջին հարցը եղավ.

– Ի՞նչ լուր հայրենիքից, ինչպե՞ս են հայրենի գործերը...

– Արքա՛ իմ, այսօր էլ, ինչպես միշտ, թշնամուն անմատչելի են մեր հայրենի լեռները:

Ուրախ հուզումից արցունքակալեցին արքայի աչքերը:

---

[1] **փուշտիպան** – թիկնապահ, զինվոր:

[2] **պատմուճան** – երկայն ու լայն թիկնոցանման վերնազգեստ:

Ապա Դրաստամատը պատմեց Վասակ սպարապետի որդի Մուշեղի մասին, որ քառասուն հազար զինվոր զանգվածելով՝ ճակատել է Շապուհի զորաց դեմ:

Դրաստամատը, որ պարսից պատերազմի և արիների պարտության մասին առաջին անգամ լսել էր պարսիկներից, ոգևորությամբ նկարագրում էր կռիվները՝ ինչպես ականատես:

Մուշեղի հետևակ կռվողները ձիավոր էին դարձել, պարսերով[1] կռվողները՝ հաջող աղեղնավորներ, կոպալներով[2] կռվողները զինվել էին սրերով և տեգավոր նիզակներով:

Երկու կողմերը հետզհետե անսանձ զորությամբ էին հարձակվում միմյանց վրա. աղաղակները թնդում ու ճայթում էին՝ ինչպես ամպրոպ: Ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները: Բազմախուռն տեգերի և նիզակների անտառը ճոճվում էր՝ կրակ թափելով ռազմադաշտի վրա:

Վասակի կրտսեր որդի Բաքոսը, որ տկար էր գիտությամբ, բայց ռազմիկ էր անհնարին քաջ, կայծակնասուր ընթացել էր Արքունի շքեղազարդ փղի վրա և «Արշակի ու Վասակի զո՛հը եղիր» գոչելով՝ խոցել նրա փորոտիքը, գետին տապալել ամեհի կենդանուն, բայց ինքն էլ նրա վիթխարահսկա իրանի տակ ճզմված՝ զոհվել էր՝ հանուն հայրենյաց:

Հեռվից՝ արքայական փղի վրայից տեսնելով իր զորականի փղի տապալվելը՝ Շապուհը հարց էր տվել.

– Ո՞վ է այն քաջը, որ տապալեց փիղը:

– Վասակի կրտսեր որդին՝ Բաքոսը:

– Իսկ ո՞վ է ղեկավարում հայոց զորքը:

– Վասակի ավագ որդին՝ Մուշեղը:

Արքայից արքան տագնապալի շշնջացել էր.

– Հասկանալի՜ է, հիմա ամե՛ն ինչ հասկանալի է... Ահուրամազդան թող օգնական լինի մեզ...

Այս բոլորը պատմում էր Դրաստամատը, և Արշակը լսում էր, ուրախությունից փաթաթվում Դրաստամատին և աղաչում.

– Շարունակի՛ր, շարունակի՛ր, Դրաստամա՛տ:

Շապուհը մազապուրծ լինելով՝ ճողոպրել էր Տիզբոն:

Մուշեղը սրի էր քաշել շատերին և ավարի առել Շապուհի գանձը: Պալատական կանանց հետ միասին նա գերել էր նաև տիկնանց տիկնոջը: Իր հոր՝ Վասակի վրեժը լուծելով՝ նա շատ ավագանի էր տիկ հանել, խոտով լցրել ու Շապուհին ուղարկել: Բայց ձեռք չէր տվել տիկնանց տիկնոջը և գերված բոլոր կանանց: Նրանց ամենքին ետ էր

---

[1] **պարս** – պարսատիկ՝ թշնամու վրա քար նետելու գործիք:

[2] **կոպալ** – մահակ՝ հաստ գլխով գավազան:

արձակել իրենց ամուսին Շապուհ արքայի մոտ:

Արյաց արքան խիստ զարմացել էր Մուշեղի մեծահոգության վրա, որովհետև ինքը հայ կանանց հետ այդպես չէր վարվել:

Մուշեղի այս մեծահոգության փոխարեն՝ արդար էր, որ արյաց արքան Անհուշ բերդից ազատ արձակեր Արշակ թագավորին: Բայց Շապուհն այդ մասին չէր էլ մտածել: Նենգ օձն էր նստել նրա կրծքի տակ, և արյան փոխարեն թույնով էր գործում նրա սիրտը:

* * *

Նոր էր վերջացրել Դրաստամատն իր հուզիչ պատմությունը, երբ պարսպի այն կողմից հայրենի երգ ու նվագի ձայներն՝ իբրև կենսատու շունչ, լցվեցին Արշակի խուցը:

Գուսանն էր դրվատում Արշակի և Վասակի սխրանքներն ու բարի գործերը: Տաղերգում էր նա հայրենի առասպելներ, Վահագնի մենամարտը վիշապների դեմ, Արտաշեսի և Տիգրանի հաղթանակներն ընդդեմ Հայոց աշխարհի թշնամիների:

Ականջ դրեց Դրաստամատը.

– Սա ի՞նչ է, քառասուն սարի ետևից ինչպե՞ս այստեղ հասավ հայրենի երգը...

Արշակը թախծոտ ժպտաց.

– Ծերունի գուսանն է: Մի տարի է՝ ամեն երեկո նվագում է պարսպի տակ: Փույթ չէ՝ տապ է թե սառնամանիք: Նվագում է իր փանդիռը և երգում Հայոց աշխարհի բոլոր երգերը...

– Բայց ո՞վ է նա և որտեղի՞ց է եկել,– հուզվեց Դրաստամատը:

Ապա ելավ աթոռակի վրա, լուսամուտից աչք ածեց գետափը, կրկին նայեց այդ կողմ՝ չհավատալով իր տեսածին, և թուլացավ մարմնով.

– Հա՛յրս է, կույր հա՛յրս՝ Արբակը,– դողաց իշխանի ձայնը,– Կորդվաց աշխարհից հասել է այստեղ. որդիս՝ Գիսակն է առաջնորդել նրան հայոց արքայի մոտ...

Դրաստամատն ու Արշակը փարվեցին իրար:

– Արքա՛ իմ,– խոսեց Դրաստամատը,– մի՛ տխրիր այլևս. Անհուշը համարի՛ր խնջույքի տաճար, կե՛ր, ա՛րբ և ուրա՛խ լեր: Ձի ոչ ոք կարող է լռեցնել երգը հայրենի...

Ապա նա ցածր ձայնով շարունակեց.

– Վաղը՝ այս ժամին, արյաց արքայի հրամանով պարտ եմ լքել Անհուշը: Բայց ես չեմ թողնի իմ թագավորին մահվան այս որջում: Քո անձը փրկելու եկա ես, դու պետք է ապրե՛ս...

Այլայլվեց, հուզվեց Արշակը Դրաստամատի խոսքերից: Բայց գիտեր՝ անհնար է նրա ցանկությունը:

Նա ձեռքը դրեց Դրաստամատի ուսին և ասաց.

– Մենք խաբվեցինք և բաց աչքերով ընկանք խորխորատը. խաբվեցինք, որովհետև խաղաղություն էր խոստանում արյաց նենգ արքան, իսկ Հայոց աշխարհն այնքա՜ն կարոտ էր խաղաղության: Այժմ իմ ճակատագիրն է մեռնել շղթայակապ:

– Դու պետք է ապրե՛ս, տիրությո՛ւն անես Հայոց աշխարհին:

Արշակը հարցական նայեց:

Դրաստամատը շարունակեց.

– Դու կհագնես իմ հագուստը, կառնես այս հրովարտակը, գիշերով դուրս կելնես այս գերեզմանից, արևագալին բարի լույսը կբացվի վրադ... Իսկ ես կմնամ այստեղ...

Խորախորհուրդ լռություն տիրեց:

– Ո՛չ, ո՛չ, ո՛չ... Այդ չի կարող լինել... Ո՛չ, ո՛չ,– պոռթկաց Արշակն ի վերջո:– Դու նոր ես ազատվել գերությունից, և բազում կարոտ կա սրտումդ... Գնա՛ հայրենի երկիր ու տա՛ր իմ կարոտն ու պատգամը որդուս՝ Պապին: Ասա՛, որ ինչպես Մուշեղը վերցրել է իր հոր՝ Վասակի սուրը, թող նա էլ վար չդնի իմ սուրն իր ձեռքից, քանի թշնամին սպառնում է Հայոց աշխարհին... Տերն ընդ քեզ, Դրաստամա՛տ: Գնա՛...

– Արքա՛ իմ,– դողաց Դրաստամատի ձայնը,– մի՛ ընդդիմանա. քեզ ազատելը իմ մշտական խորհուրդն է եղել. մինչև այսօր ե՛ս եմ ենթարկվել քո հրամաններին, այս անգամ դո՛ւ պետք է ենթարկվես քո ծառային...

– Այդ անհնար է, Դրաստամա՛տ,– փոթորկվեց Արշակը,– այս նույն շղթաները ցմահ կծանրանան քո վզին...

– Բայց Հայոց աշխարհի բարձր հրամանն է այդ, և դու պա՛րտ ես հնազանդվել այդ հրամանին: Դու պետք է ազատ լինես. չէ՞ որ Շապուհի կյանքը ես միայն դրա՛ համար փրկեցի:

Էլի մի թաս գինի ըմպեց Արշակ թագավորը, վերստին հուզվեց, մտաբերեց իր անցյալ փառքը, արշալույսին հայրենի ծխաններից ելնող ծուխը և հիշեց իղձը Արտաշես թագավորի.

Ո՜ փայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Ջվազելն եղանց և զվարգելն եղջերուաց...

Արշակը ոտքի ելավ, մոտեցավ մորթազերծ արված իր Վասակ սպարապետի պաճուճապատանքին[1], խոսեց հետը.

– Որտե՞ղ է սուրդ, իմ քա՜ջ Վասակ...

Վասակը խավար աչքերով նայում էր իր թագավորին:

Արշակը հիշեց այն ահեղ մարտերը, երբ Վասակի հետ թշնամուն հալածում էին Հայոց աշխարհից, օտար բռնակալներին թույլ չէին տալիս ավերել հայրենի շեներն ու գերել ժողովրդին, հիշեց Փառանձեմին

---

[1] **պաճուճապատանք** – տիկ հանած և մեջը թեփ լցրած մարդկային մարմնի ամբողջական մորթ:



Դրաստամատը ինքնասպանություն է գործում իր տիրոջ՝ Հայոց Արշակ թագավորի հետևողությամբ, Ջուլիանո Ձասսո, 1885թ.

ու իր որդի Պապին, որոնցից ընդմիշտ հեռացել էր, հառաչեց ներուժ[1] ու նորից մի թաս գինի ըմպեց: Ապա Դրաստամատին դառնալով՝ ասաց...

– Մնա՛ս բարով, Դրաստամա՛տ: Այժմ ես կմեռնեմ խաղաղությամբ, քանի որ ազատ է Հայոց աշխարհը, իսկ դու պետք է ապրես: Սուրդ մի՛ դնի պատյան, քանի դեռ թշնամին ասպատակել է ուզում մեր հայրենիքը:

Եվ ընթրիքի սեղանից վերցնելով դանակը՝ նույն ակնթարթում մխրճեց սիրտը:

Դրաստամատը սարսափով նայեց թագավորին, որ գետին էր տապալվել՝ դանակը սրտում:

Հոսում էր արյունը Արշակ թագավորի խոցված սրտից...

Ավանդությունն ասում է՝ մի լուսեղեն թռչուն ծնվեց այդ բոսոր արյունից, սրաթռիչ դուրս սլացավ Անհուշ բերդից և Հայոց աշխարհ հասցրեց հայրենաբաղձ արքայի նահատակության լուրը:

Սուգը պատեց ժողովրդին, հառաչեցին լեռներն ու անտառները, ծանր վշտից սևացան հայոց խաժ աչքերն ու դեղձան մազերը, և այդ օրվանից տխրագին հնչեցին հայոց երգերը...

Հետո հուր ժայթքեցին Մասիսն ու Արագածը, երկունքով բռնկվեց բովանդակ լեռնաշխարհը, և հայոց ազատատենչ ոգին մեկընդմիշտ հաստատվեց ու անմահացավ իր հայրենի հողի վրա:

---

[1] **ներուժ** – իր մեջ ուժ՝ զորություն թաքցրած:

Ըստ Բաֆֆու

Ի ՓԱՌՍ ՀԵՐՄԱԿԱՁԻՈՒՆ

Շոգ կեսօր էր: Արևի բարկ[1] ճառագայթների ներքո Շապուհ արքայի բանակատեղին ներկայացնում էր խիստ տխուր տեսարան: Կիսակործան վրանները թափուր էին, իսկ ռազմադաշտը և նրա շրջակայքը ծածկված էին դիակներով: Մեծ էր նաև գերվածների թիվը: Ինքը՝ արքայից արքան, չէր երևում ո՛չ զոհվածների, ո՛չ գերիների մեջ: Ասում էին, որ նա փախավ հենց այն ժամանակ, երբ հայերն անակնկալ հարձակում գործեցին, փախավ իր սենեկապետներից մեկի հագուստով, որ չճանաչվի: Արքայական փառաշուք վրաններն իրենց ամբողջ հարստությամբ մնացել էին անտեր:

Մնացել էր և Շապուհի կանանոցը՝ լի Արևելքի և Արևմուտքի գեղեցկուհիներով: Նրանց թվում էր նաև պարսից տիկնանց տիկինը՝ թագուհին: Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի հրամանով հայ զինվորների մի ջոկատ բոլորել էր կանանոցի շուրջը՝ որևէ ոտնձգությունից[2] այն զերծ պահելու նպատակով:

Շապուհի արքայական կացարաններից քիչ հեռու խփված էր անշուք մի վրան, ուր ճանապարհորդական աթոռակի վրա նստած էր հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը: Նրան շրջապատել էին զինակից ընկերները, այդ թվում՝ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը: Լուռ էին նրանք, և բոլորի դեմքերին դրոշմված էր դժգոհություն ու զայրույթ: Ինքը՝ սպարապետը, խոժոռ էր: Ոչ պակաս խռովքի մեջ էին նաև Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

– Ես այս պարսիկ գերիներին գլխատել կտամ և նրանց խրտվիլակներով կզարդարեմ Արտագերս ամրոցի աշտարակները, բայց այն, ինչ դուք եք պահանջում, ես երբեք ընդունել չեմ կարող,– ասաց Մուշեղը:

– Ինչո՞ւ, Մուշե՛ղ,– հարցրեց Սահակ Պարթևը,– մոռանո՞ւմ ես, թե ինչպե՞ս Շապուհը Արշակ թագավորին խաբեությամբ կանչեց Տիզբոն և նետեց Անհուշ բերդը, մոռանո՞ւմ ես, թե ինչպե՞ս քո հորը՝ Վասակ Մամիկոնյանին, մորթազերծ արեց, հազարավոր ընտանիքներ դժբախտացրեց, մեր նախարարներից շատերի կանանց գերեվարեց:

– Ինչ որ իրեն կարող է թույլ տալ պարսիկ Շապուհը, նույնը չի կարող անել հայոց սպարապետը: Ճիշտ հակառակը. ես նրա բոլոր կանանց ամենայն հարգանքով կուղարկեմ Տիզբոն, և դա կլինի իմ ամենամեծ վրեժխնդրությունը:

---

[1] **բարկ** – թեժ՝ կիզիչ՝ շիկացած, այրող:

[2] **ոտնձգություն** – որևէ մեկին կամ մի բանի տիրանալու՝ վնասելու՝ ոտնահարելու փորձ:

Մի՞թե Շապուհի վրեժը մենք կանանցից պիտի հանենք:

Այս ասելով՝ Մուշեղը դարձավ սենեկապետին.

– Գնա հայտնի՛ր արյաց դշխոյին, որ ես ուզում եմ այցելել իրեն:

Արյաց թագուհու ներքինապետը դուրս եկավ՝ դիմավորելու հայոց սպարապետին: Մուշեղը մտավ թագուհու վրանը: Ներսում ոչ ոք չկար: Պարսից սովորությամբ կինը իրավունք չուներ երես առ երես խոսելու օտար տղամարդու հետ: Նա կարող էր խոսել միայն վարագույրի ետևից:

– Ողջո՛ւյն և խաղաղությո՛ւն արյաց մեծափառ դշխոյին,– ասաց Մուշեղը՝ դեմքով կանգնած դեպի վարագույրը:– Ցավում եմ, որ բառեր չեմ գտնելու քեզ մխիթարելու, ո՛վ մեծափառ դշխո: Բայց այս բոլոր աղետների համար ոչ թե մենք՝ հայերս, այլ քո թագավոր ամուսինն է հանցավոր: Սակայն այդ ասելու համար չէ, որ եկել եմ քեզ մոտ: Ես եկել եմ ավետելու քեզ, արյա՛ց թագուհի, որ մենք գիտենք վատությունը լավությամբ ջնջել: Քեզ և Շապուհ արքայի բոլոր կանանց, որ այժմ գերի են իմ ձեռքում, վաղը զինվորներիս ուղեկցությամբ և ամենայն պատվով կուղարկեմ Տիգբոն:

Դեռ սպարապետն իր խոսքը չէր ավարտել, երբ վարագույրի ետևից հանկարծ հայտնվեց թագուհին և գրկելով սպարապետի ոտքերը՝ բացականչեց.

– Դու մարդ չես, քո բերանով բարության արարիչն է խոսում: Քո մեծահոգությունը, ո՛վ քաջ, անմոռաց կմնա իմ սրտում: Երբ հասնեմ Տիգբոն, իմ առաջին խոսքն այս կլինի թագավոր ամուսնուս. «Հայոց սպարապետը յուր ազնվության մի ծանր պարտք դրեց քեզ վրա, և այդ պարտքը նույնպիսի ազնվությամբ պիտի վճարես»:

Թագուհին հանեց մատանին.

– Թողնում եմ մատանիս՝ իբրև հիշատակ իմ երախտագիտության: Երբ հարկ լինի, ուղարկի՛ր ինձ այն, և ես ամեն ջանք գործ կդնեմ՝ օգնության ձեռք մեկնելու քեզ:

Սպարապետը քաղաքավարությամբ մերժեց՝ ասելով.

– Քո բարեսրտությունը, թագուհի՛, ինձ համար մեծ առհավատչյա[1] է:

Նա գլուխ տվեց և դուրս եկավ:

Մուշեղ Մամիկոնյանի արարքը զարմացրեց պարսից արքունիքին: Նրանց համար դա չլսված հրաշք էր:

Իսկ Շապուհը ապշեց... հրամայեց նրա պատկերը՝ իր սպիտակ ձիով, դրվագել իր ոսկյա գավաթի վրա և ամեն անգամ, երբ ձեռքն էր առնում այն, հիշում էր ազնիվ հերոսի ազնիվ գործը և խմում՝ կրկնելով.

– Ի փա՛ռս ճերմակաձիուն:

---

[1] **առհավատչյա** – երաշխիք՝ հավատարմության ապացույց:

Ըստ Ստեփան Զորյանի

Անվերնագիր

Հայոց աշխարհում բազում եղեռնագործություններ կատարելուց հետո պարսից Շապուհ արքան շարժվեց դեպի Արտագերս ամրոցը, ուր սակավաթիվ զորքերով փակվել էր Փառանձեմ թագուհին: Շապուհն ընչաքաղց էր[1], բայց այս անգամ նրան հրապուրում էին ոչ այնքան արքայական գանձերը, որքան՝ հայոց անկոտրում դշխոն: «Նրան գերելով՝ ես ծնկի կբերեմ այս համառ ժողովրդին և կհասնեմ կատարյալ հաղթանակի»,- մտածում էր նա: Բայց ժայռեղեն բարձունքներին թիկնած Արտագերսն անառիկ էր: Տասներեք ամիսների համառ պաշարումը ոչինչ չէր տվել, և Շապուհը հուսախաբ էր: Նրա զորական ուժը փշրվում, խորտակվում էր Արտագերսի անսասան ապառաժների վրա: Փառանձեմ թագուհին, որ պատմության մեջ հայտնի է տղամարդուն բնորոշ ամուր կամքով ու խիզախությամբ, անձամբ էր ղեկավարում ամրոցի պաշտպանությունը: Շապուհն այդպես էլ ամոթահար կհեռանար բերդապարիսպներից, եթե դավաճան Հայր Մարդպետը ցույց չտար Արտագերս տանող գաղտնի ճանապարհները:

Անառիկ ամրոցն ընկավ: Գերելով Փառանձեմ թագուհուն՝ պարսիկ սպաները նրան առաջնորդեցին բերդի դիմաց տարածված հարթավայրը, ուր ծանր վիշապի նման տարածվել էր թշնամին: Կենտրոնում աչքի էր զարնում առյուծանիշ դրոշով մի շքեղ վրան:

- Ահա՛ և արքայից արքայի վրանը,- ասաց Փառանձեմին ուղեկցող սպան:

Թագուհու շնչառությունն արագացավ, նա աչքերը ակամա փակեց: Ուրեմն ինքը հիմա պիտի հանդիպի ատելի Շապուհին, այն մարդուն, որը Արշակ թագավորին բանտարկեց Անհուշ բերդում, մորթազերծ արեց սպարապետ Վասակ Մամիկոնյանին, այնքա՜ն արյունահեղությունների պատճառ դարձավ:

Մինչ դառը հիշողություններով տարված Փառանձեմին կառաջնորդեին արքայի մոտ, վերջինս ինքը դուրս եկավ: Նա ոսկի ու արծաթ թելերով բանված թիկնոցով էր, ադամանդակուռ գայիսոնով[2], գլխին՝ գոհարազարդ թագ: Շապուհը չարախինդ նայեց Փառանձեմին և սպառնալից առաջ գալով՝ ասաց.

- Անզգա՛մ կին, չկամեցար գալ ինքնակամ, եկար որպես գերի և ստրուկ:

- Գերի և ստրո՞ւկ: Հայոց թագուհին երբեք ստրուկ չի՛ եղել և չի՛ լինի:

---

[1] **ընչաքաղց** - սաստիկ ընչասեր, խիստ ագահ:

[2] **գայիսոն** - արքայական գավազան՝ որպես իշխանության խորհրդանիշ:

– Քո համառության համար դու կհատուցես, անառա՛կ,– մռնչաց Շապուհը:

Այս խոսքերի վրա կատարվեց անսպասելին. շրջապատողները չհասկացան, թե հայոց թագուհին ինչպե՛ս վիրավոր հովազի պես մի թռիչքով խոյացավ ու Շապուհի դեմքին իջեցրեց մի շառաչուն ապտակ:

– Ա՛ռ, լի՛րբ և խաբեբա՛, – կատաղած բղավեց նա,– կոչվում ես արքա, բայց չես կարող վայելուչ խոսել կնոջ հետ,– ասաց ու թքեց Շապուհի երեսին:

Այդ հանդգնությունն այնքան անակնկալ էր, որ արքայից արքան առաջին պահ շփոթվեց, ձեռքն ակամա տարավ դեպի երեսը և ճղճղաց.

– Ցի՛ց հանել անառակին, ցի՛ց հանել:

Թիկնապահները վրա թափվեցին, բռնեցին թագուհու ձեռքերն ու տարան: Փառանձեմը քայլում էր՝ հպարտ, գեղեցիկ գլուխը բարձր բռնած:

– Թողե՛ք ինձ,– դիմեց նա պարսիկ զինվորներին,– ես կարող եմ քայլել՝ առանց ձեր օգնության:

Նրա ձայնն այնքան տիրական էր, որ պարսիկներն ակամա ենթարկվեցին:

Ոլոր-մոլոր երկնային ուղին իջնում էր դեպի Արաքսի ափը: Քիչ անց հասան անդնդահուն գետի եզերքը, որից սկսվում էր անհատակ մի վիհ: Խորխորատի եզրին ցցված էր մի հսկայաբեկոր ժայռ: Թագուհին ասաց.

– Պարսի՛ց սպաներ, իմ զորավարը գերեց արքայի կանանոցը և պատվով ուղարկեց Տիզբոն: Ես ձեզնից այդպիսի բան չեմ խնդրում: Բայց թո՛ւյլ տվեք մահվանից առաջ աղոթել:

– Աղոթի՛ր,– համաձայնվեց սպան, որ ինքն էլ ուզում էր երկար քայլելուց հետո մի փոքր հանգստանալ:

Փառանձեմը բարձրացավ ժայռի վրա, ծնկի եկավ և սկսեց աղոթք մրմնջալ: Պարսիկ սպաները երեսները դարձրին, որ նրան չխանգարեն: Թագուհին ավարտեց աղոթքը, ապա մեկեն ելավ, խրոխտ կանգնեց և աչքերից կրակներ ցայտեցնելով՝ գոչեց.

– Հայտնեցե՛ք ձեր օձակերպ արքային, որ հայոց թագուհին չի՛ լինի գերի:

Սպաները զարմացած ետ նայեցին ակնթարթորեն և տեսան, թե ինչպե՛ս գերի թագուհին, թևերը պարզած, վիթխարի սև թռչունի պես գահավիժեց անդունդը:

Փառանձեմ թագուհու դիմանկարը

Փառանձեմը եղել է Մեծ Հայքի թագուհի և հայոց տերության ղեկը վարել է 368-369թթ.:

Փառանձեմի հայրական ամրոցը Սյունիքի Զորք գավառի Բաղաբերդն է: Այդ ամրոցի արևմտյան պարիսպների մոտ մինչև այժմ էլ խոխոջում է **Փառանձեմ** անունով մի փոքրիկ աղբյուր: Հիմա մամռակալել է այն, և հազվադեպ է պատահում, որ պատահաբար այնտեղով անցնող որևէ մարդ ջուր խմի այդ աղբյուրից: Իսկ հնում Զորք, Բաղաց և Կովսական գավառներում ծնված հայուհիներին բերում էին Փառանձեմ աղբյուրի մոտ, խմեցնում նրա ջրից՝ հուսալով, որ մեծանալով նրանք էլ կդառնան Փառանձեմ թագուհու նման գեղեցկուհիներ:

Փառանձեմ աղբյուրի ջրով հաճախ է իր ծարավը հագեցրել սյունեցի պատմիչ Ատեփանոս Օրբելյանը: Ասում են՝ մի անգամ պատմիչը մաքրել է խազալների տակ անցած աղբյուրի ջուրը և դառնորեն գոչել.

- Եղո՜ւկ, ժամանակնե՜ր հայոց: Այս աղբյուրի ջուրը գեղեցկության ու խիզախության ավիշ է ներարկել մեր հայրենասեր թագուհի Փառանձեմին: Իսկ հիմա աղբյուրի ջուրն այնպիսի կարկաչյունով է հոսում, որ թվում է, թե ես լսում եմ Փա՜-ռա՜ն-ձե՜մ:

Իսկ ո՞ւր են նոր ժամանակների Փառանձեմները. մի՞թե այս աղբյուրի ձայնը լսելի չէ նրանց:

Ըստ Ստեփան Զորյանի

ԿՐԱԿԱՊԱՇՏԱԿԱՆ ՕՁՈՒՄ

Գիշեր էր: Ձիրավի ընդարձակ դաշտավայրն օծված էր լուսնի անրջային լույսով: Երեք կողմից շրջապատող լեռները, ասես ապահով շրջան կազմած, հսկում էին դաշտը, և նա, դրանով կարծես հանգիստ, մեղկորեն փռվել էր կաթնալույսի մեջ:

Խոր լռության մեջ էր թաղված Ձիրավը: Սակայն առաջին հայացքից համատարած թվացող այդ անդորրը երևութական էր: Ուշադիր աչքը ակնակիր[1] խավարում կնկատեր բազմաթիվ վրաններ և զրահավոր ու սպառազեն պահակներ: Դա հայոց բանակն էր, որ, երեք օրվա երկար ճամփա կտրելով, հասել էր Ձիրավ և այժմ ընկղմված էր խոր քնի մեջ: Ու թեև ոչինչ չէր երևում անթափանց մթության խավարում, հայերը գիտեին, որ շատ մոտիկ է պարսից բանակը:

Մի քանի ժամ հետո ճակատամարտն անխուսափելի էր, բայց առայժմ երկու բանակները հանգստանում էին:

Լույսը բացվեց:

Արագ դասավորվում, տեղավորվում էին հայոց գնդերը: Հեծած իր սպիտակ նժույգը՝ սրընթաց վարգով անցնում էր Մուշեղ սպարապետը, նայում, զննում, կարգադրում: Երբ բոլոր զորագնդերը կազմ ու պատրաստ էին, բարձրացրեց ձեռքը՝ ի նշան լռության, և դիմեց մարտիկներին.

– Իմ քաջե՛ր, ձեր դեմքերին նկատում եմ այնպիսի վճռականություն, վրեժի այնպիսի ցասում, որ ավելորդ եմ համարում ասել, թե ինչպե՛ս պիտի վարվեք թշնամու հետ: Թշնամի, ում սրի ծայրին դեռ չի չորացել մեր հարազատների արյունը: Նահատակները վրեժ են պահանջում: Շապուհն ուզում է ոչնչացնել մեզ և տեր դառնալ Հայոց երկրին: Մեր պապերն ու հայրերը պահել-պահպանել են այն ձե՛զ համար, դուք էլ պաշտպանեցեք ձեր որդիների՛ համար:

Հարձակումն սկսվեց: Միմյանց վրա սուրացին հակառակորդ բանակները: Նրանց բաժանող տարածությունը վայրկյան առ վայրկյան փոքրանում էր: Երկու կողմից սկսվեց նետաձգություն: Հազարավոր նետեր կտրատում էին օդը, գվվում չարագուշակ: Ընկնում էին մարդիկ, ձիեր:

Հենց սկզբից պարզ զգացվեց պարսիկների գերազանցությունը: Նրանք թե՛ մեծաթիվ էին, թե՛ վարժ, կռվում էին ավելի սառնասիրտ և հաստատուն առաջանում: Որոշ ժամանակ հայերը դիմադրում էին, սա-

---

[1] **ակնակիր** – (ժողովրդական) խիստ խավար, մութ:

կայն չդիմանալով պարսից ճնշմանը՝ ահա ընկրկեցին, ապա խուճապային նահանջով դիմեցին դեպի Արածանի գետը:

Հայոց զորքերը շարունակում էին փութով նետվել ջուրը և անցնել մյուս ափը: Այնինչ բլրի վրա կանգնած ճերմակ ձիավորի թուխ դեմքին ոչ մի մկան չէր շարժվում: Թվում էր, նույնիսկ գոհ է ճակատամարտի ընթացքից: Եվ, իրոք, սպարապետն ինքն էր հրամայել ձևացնել նահանջ և կեղծ փախուստ:

Քիչ անց, երբ մոտալուտ հաղթանակի բերկրանքով արբած պարսիկները գետն անցան, թիկունքից վրա տվին Սմբատ Բագրատունու և Սպանդարատ Կամսարականի գնդերը: Իսկ այս ափին Մուշեղն իր Ճերմակով անցնում էր գնդից գունդ, մերթ աներևութանում նրանց արանքում, մերթ շողում, ինչպես ճերմակ կայծակ, որոտում, որպես ռազմի ահեղ ոգի.

– Օ՜ն, անվախ առա՛ջ: Զա՛րկ համարձակ:

Պարսից հեծյալ վաշտերը ղեկավարում էր մի սև ձիավոր: Դա ոտքից գլուխ սպառազեն, ձիգ կեցվածքով և գեղեցիկ իրանով տղամարդ էր՝ դեմքը ծածկած դիմկալով: Նիզակով ցուցումներ էր անում և ձին քշելով մի տեղից մյուսը՝ աշխատում էր կարգի բերել ցաքուցրիվ զինվորներին: Դիմկալը թույլ չէր տալիս որոշել, թե ո՞վ է նա:

Հանկարծ Բագրատունու մարտիկներից մեկը ճչաց շնչասպառ.

– Մերուժա՛նը, Մերուժա՛նը: Դավաճա՛ն է:

Սմբատ ասպետը նայեց ուշադիր և, ճանաչելով, ինքն էլ գոչեց.

– Նա է: Նզովյալ ուրացողն է: Ջոկատով գնա՛լ և շրջապատե՛լ: Չսպանե՛լ, կալանե՛լ անվնաս:

Մինչ այդ պարսից զորքն սկսեց անկանոն նահանջել. պարտությունն անխուսափելի էր:

Գազանի հոտառությամբ զգալով վտանգը՝ դիմկալով զորականը թիկնապահների փոքրիկ խմբի հետ փորձեց ճողոպրել: Բայց Սմբատ ասպետի ջոկատը մրրիկի պես սլացավ՝ վախենալով ձեռքից բաց թողնել չարագործին: Սև ձիավորը սուրում էր՝ քառասմբակ, անհավատալի արագությամբ և փոշու ամպեր բարձրացնելով:

Հեռվից նկատելով զորականի ճարպիկ խուսանավումները՝ Սմբատ ասպետն այլևս չհամբերեց, խթանեց նժույգը և հասավ իր զինվորներին: Երկար չտևեց հետապնդումը: Բագրատունու մարտիկներից մեկը թափով նետեց նիզակը, որը մխրճվեց դավաճանի ձիու ազդրի մեջ, մնաց ցցված: Կենդանին ընկավ: Հեծյալը հասկացավ, որ փախչելն արդեն անիմաստ է: Զինվորները վրա հասան, հանեցին դիմկալն ու սաղավարտը:

– Մերուժա՛նն է, Շապուհի ստրո՛ւկը,– բղավում էին, քաշքշում, թքում:

Բագրատունին մոտեցավ.

– Մի՛ տանջեք արյաց արքայի զորավարին,– խոսեց նա,– այսօր նրան

պատվելու օր է: Այսպես ուրեմն, տեր Արծրունյաց, հայրենիքին մատուցած քո ծառայությունների համար վերջապես կարժանանաս պատվի ու պսակի: Շապուհը քեզ խոստացավ հայոց թագը, բայց չտվեց: Մի՛ մտածիր, ես ավելի առատաձեռն կլինեմ:



Սմբատ Բագրատունին խարանում է դավաճան Մերուժան Արծրունուն, Ջուլիանո Ջասսո, 1885թ.

Նրա կարգադրությամբ զինվորներից մեկը բերեց պսակաձև, ոլորած և շիկացած ձող:

– Պատիվ չի բերում քեզ, Սմբա՛տ ասպետ, դատաստան տեսնել կալանված իշխանի հետ,– ասաց Մերուժանը:

– Պատի՞վ,– խնդաց Բագրատունին,– իսկ քեզ պատի՞վ էր բերում, որ այսպիսի շիկացած երկաթով վառում էիր քո հայրենիքը:

Նա զինվորի ձեռքից վերցրեց շիկացած օղը և դեմքին խորշանքի արտահայտությամբ դրեց Մերուժանի գլխին:

– Ահա՛, Արծրունյա՛ց իշխան Մերուժան, խաբեբա Շապուհի տեղը ես՝ իբրև Բագրատունի թագադիր ասպետ, օծում եմ քեզ թագավոր քո սիրած կրակապաշտական ձևով:

Մազերի խանձահոտի հետ տարածվեց ծանր ճենճերահոտ:

Գործն ավարտեցին զինվորները՝ նիզակահարելով դավաճանին և նետելով ճահիճը: Զինվորներից մեկը ուզեց հանել նրա ակնազարդ ոսկյա մատանին, բայց մի ուրիշը սաստեց.

– Չվերցնե՛ս ոչինչ: Պի՞ղծ է դրա ամեն ինչը:

Այդպես անփառունակ վախճան ունեցավ Մերուժան Արծրունին: Իսկ Ձիրավի դաշտում հայերի հաղթանակը դարձավ մեր պատմության գեղեցիկ էջերից մեկը:

Ստեփան Կուրտիկյան

ԿՐԱԿԻՑ ՁՈՐԵՂԸ

Լեռնային գետի ափին՝ գիշերային անդորրության մեջ ընկղմված էմիրի վրանում, հանկարծ փոթորիկ բարձրացավ: Էմիր Աղբուղան գոռ-գոռում էր անզուսպ: Նրա դուրս ընկած մոլագար աչքերից կայծեր էին ցայտում: Աջ այտը կիսող սպին խաղում էր անհանգիստ, անճոռնի գա-լարումներով:

Երեսուն տարի Աղբուղան տերություններ էր կոխոտել անցել, քա-ղաքներ ու գյուղեր, բերդեր ու ամրոցներ պաշարել, հանդիպել էր օր-հասական դիմադրության, շատ զոհեր տվել, բայց միշտ թուրը կտրուկ էր եղել: Եվ բազում հաղթանակներ ետ թողած՝ նա եկել, ներխուժել էր Կորդվաց աշխարհը, բայց, անեՙծք շեյթանին, թուրը դեմ էր առել հայոց լեռների ապառաժներին, և, չնայած բազում զոհերի, անկարելի էր ընկ-ճել հայոց դիմադրությունն ու շարժվել դեպի Այրարատ:

- Արաբական խալիֆաթի պանծալի թրի առաջ պետք է նահանջեՙն լեռներն ու ծովերը, պետք է ծնկաչո՛ք լինեն էրմենները,- խելահեղ գո-չում էր Աղբուղան:

Բայց լեռնանցքի առաջ անսասան ու աննվաճ էր մնում հայոց Անգղ բերդը...

Ձախողված գրոհներից հետո գիշերը Աղբուղան խորհրդի էր կան-չել օգնականներին՝ Օմար, Յուսուֆ և Նասիբ զորավարներին:

Ոչ մի ելք չգտնելով՝ պապանձվել էին նրանք:

Գիշերային խաղաղության մեջ լսվում էր միայն լեռնային գետի ցա-սումնալից շառաչը:

- Ի՞նչ ես ոզնու նման կուչ եկել ու լռել, շեյթանի՛ ծնունդ....- Նասիբի երեսին գոռաց համբերությունից դուրս եկած Աղբուղան:

Օձից խայթվածի նման Նասիբը ոստնեց տեղում, խոնարհ գլուխ տվեց էմիրին, ձեռքերը պարզեց աստղալի երկնքին, կապարագույն, հաստ շրթունքների արանքից օգնություն աղերսեց ալլահից, ապա դի-մեց Աղբուղային.

- Արեգա՛կն հավատո, երդվում եմ Մուհամեդի անունով՝ արևածա-գին հնազանդեցնել Անգղ բերդը և իշխան Համազասպի գլուխը դնել ոտներիդ առաջ...

Օմարը և Յուսուֆը լուռ էին:

Աղբուղան իր վայրագ աչքերը ոլորեց նրանց վրա:

- Իսկ դուք ինչո՞ւ եք լռել, վախկո՛տ կատուներ...

Օմարը և Յուսուֆը ցնցվեցին:

– Արեգակն հավատո, երդվում ենք մարգարեի անունով՝ կատարել քո բոլոր հրամանները, վրեժխնդիր լինել թշնամուց,– ձեռքերը կրծքներին տանելով՝ երկյուղածությամբ գլուխ տվեցին նրանք:

Լուսադեմին գրոհը վերսկսվեց: Բարձունքից շինականները ժայռեր էին գլորում գրոհող արաբների վրա՝ խուճապի մատնելով նրանց:

Սակայն Նասիբը կասեցրեց խուճապը և թուրը մերկացնելով՝ առաջ անցավ՝ մարտի խրախուսելով զինվորներին:

– Յա ալլա՛հ, յա ալլա՛հ,– բացականչում էր նա՝ առաջ խաղալով նետերի տարափի միջով:

Բայց ահա ժայռերի ետևից հովազի նման դուրս ոստնեց մի կտրիճ, խոյացավ Նասիբի վրա ու գուրզով տեղնուտեղը ջախջախեց նրա գլուխը, ապա տեսիլքի նման անհայտացավ՝ ահուսարսափի մատնելով գրոհողներին:

Այդ կտրիճ պատանին Կորդվաց աշխարհի իշխան Արգավանի որդի Արծիվն էր:

Իրենց զորագլխի գանգը ջախջախված տեսնելով՝ արաբական զորքը սարսափի մատնվեց և արձակվող նետերի տարափի տակ ընկրկեց:

Սակայն նահանջը կասեցնելով՝ մոլեգնած Աղբուղան հրաման արձակեց.

– Վերսկսե՛լ գրոհը...

Մինչև մութն ընկնելը բազմիցս վերսկսվում ու դադարում էր գրոհը: Իսլամի որդիների արյունն առատորեն հոսում ու խառնվում էր գետի ջրերին: Եվ հայոց լեռնային գետը ցասումնալի շառաչով սրբում-տանում էր բռնակալների արյունը, որպեսզի մաքուր մնա շինականի հողը, արդար քրտինք ծծի միայն ու պտղաբերի:

Իր զորավար Նասիբի կորուստից ընկճված՝ էմիրը գիշերը Օմարին և Յուսուֆին նորից կանչեց խորհրդի:

– Եթե մեզ չմիանա Կորդվաց աշխարհի իշխանը և մեր զորքերը չառաջնորդի,– ասաց Օմարը խեղճացած,– մեզ չի հաջողվի լեռների ու կիրճերի մեջ ձգված անհայտ կածաններով անցնել, երբ ամեն քարի տակ դարանակալ մի թշնամի է նստած:

– Բայց ինչպե՞ս իսլամի ու խալիֆայի սրբազան կամքին ենթարկել Կորդվաց իշխան Արգավանին,– հուսադրվելով՝ հարց տվեց Աղբուղան:

– Պետք է կաշառել, էմի՛ր, պետք է երկրներ խոստանալ, խաբել ծերունուն,– իր խորամանկությամբ ոգևորված՝ խոսեց Օմարը,– իսկ թե չհամաձայնվի, պետք է սպառնալ: Նա ունի միայն մի որդի, որին սիրում է խելագարի նման: Կա՛մ նա կմիանա մեզ ու մեր զորքը կառաջնորդի, կա՛մ նրա աչքերի առաջ մենք տանջամահ կանենք նրա ժառանգին... Եվ ալլահի կամքով ծերունին տեղի կտա...

* * *

Հետևյալ օրը՝ լուսաբացին, Կորդվաց նահապետ Արգավանին ու նրա որդուն՝ Արծվին, բերեցին Աղբուղայի վրանը:

Աղբուղան շողոմ խոսքերով դիմավորեց գերված իշխանին, գովեց Արծվի գեղեցկությունն ու քաջությունը, խոստացավ Կորդվաց աշխարհին միացնել նոր հողեր և վերականգնել Արգավանի իշխանական իրավունքները, եթե նա որդու հետ արաբական զորքն առաջնորդի դեպի Արարատյան աշխարհ:

Ծերունի Արգավանը մռայլվեց սաստիկ: Ինչպես սպառնալից թուխպ՝ ալեխառն հոնքերը կիտվեցին մշուշապատ աչքերի վրա:

– Թող հայտնի՛ լինի արաբ զորագլխին,– պոռթկաց նա,– որ Կորդվաց իշխանների տոհմը սերում է Արշակունիներից: Մեր կանայք երբեք դավաճան չեն ծնել ու մատնիչ չեն սնել...Եվ թող հայտնի՛ լինի Աղբուղային, որ իմ բազուկներն այսօր էլ զորեղ են թշնամուն հայրենի երկրից հալածելու, սակայն խիստ անզոր են՝ դեպի իմ հայրենի աշխարհը ճանապարհ ցույց տալու համար...

– Բայց այդ տոհմը ես կոչնչացնե՛մ, այդ տոհմի վերջին տղամարդուն՝ քո որդուն, ես տանջամա՛հ կանեմ,– մոլեգնեց Աղբուղան՝ ձեռքը տանելով կեռ թրին:

Արգավանը լուռ էր, նրա հայացքը սրի նման մեխվել էր դահճի անողոք, արյունալի աչքերի մեջ:

– Մտածի՛ր, ծերո՛ւկ, մտածի՛ր, քանի ուշ չէ,– ձայնը մեղմացրեց Աղ-

Լոռու մարզ, Ձորագետ

բուղան.- կա՛մ քո միակ որդուն չարաչար կկորցնես, կա՛մ կկատարես խալիֆի կամքը. ուրիշ ելք չունես...

Մի ժպիտ անցավ ծերունու խորշոմալի դեմքով:

- Դու գողի նման մտար իմ երկիրը, և մենք չկարողացանք չափել մեր բազուկների ու թրերի ուժը,- շպրտեց ծերունի նահապետը Աղբուղայի երեսին,- հիմա էլ ստիպում ես, որ դավաճանեմ հայրենիքիս... Էմի՛ր, մի՛ վախեցնի ինձ մահով... Նախնիները սովորեցրել են մեզ, որ *մահն իմացյալ անմահություն է*...

- Բերե՛ք կրակարանը... Բերե՛ք կրակարանը՝ թեժացրած կրակով,- խելագար մոլուցքով պոռթկաց Աղբուղան,- ես հիմա կրակի լեզվով կխոսեմ քեզ հետ, անհավա՛ատ ծերուկ...

Սպասավորները կատարեցին Աղբուղայի հրամանը, բերեցին կրակարանը, որի մեջ բոցկլտում էր կրակը:

Ծերունի նահապետը նայեց թեժ կրակին, հասկացավ, թե ի՛նչ էր սպասում իրեն, կծկվեց սիրտը, մորմոքվեց, բայց բարձր պահեց ալեհեր գլուխը և դառնալով որդուն՝ ասաց.

- Որդի՛, ցո՛ւյց տուր այս դահիճներին, որ դու չես վախենում մահից, և ոչ էլ ես եմ վախենում՝ քեզ զոհաբերելու հանուն հայրենյաց...

- Կրակի մո՛տ քաշեք դրան,- հրամայեց Աղբուղան:

Սակայն Արծիվը չթողեց, որ իրեն մոտենան: Նա մի կողմ հրեց դահիճներին, անվրդով մոտեցավ կրակարանին և... ձեռքերը մխրճեց թեժացած կրակի մեջ...

Այրվում էին պատանու ձեռքերը, ցավից մեծանում էին բիբերը, բայց ժպիտը չէր նահանջում դեմքից...

Տեսավ այդ արաբ դահճապետը, տեսավ, սարսռաց ու մի պահ անշարժացավ... Հետո ուժասպառ՝ ելավ մետաքսե բազմոցից և շուռ գալով դեպի զորականները՝ խեղդուկ ձայնով շշնջաց.

- Յա ալլա՛հ, յա ալլա՛հ, փրկի՛ր մեզ...

Նա գործ ուներ մի ժողովրդի հետ, որին կարելի էր բնաջինջ անել, բայց ծունկի իջեցնել՝ երբե՛ք...

Աղբուղան թափ տվեց ձեռքը և հրաման արձակեց.

- Բանակատեղից հանե՛լ բոլոր վրանները...

* * *

Լեռնային գետի ոլորանով հայոց լեռնաշխարհից նահանջող վերջին արաբ զինվորը երկյուղով և ատելությամբ լի հայացք նետեց ուսի վրայով և տեսավ, որ ծերունի Արգավանը գրկել էր որդուն ու արտասուքով էր թրջում նրա այրված ձեռքերը...

Ստեփան Կուրտիկյան

ԲԱՋՈՒԿՆ ՈՒ ԹՈՒՐԸ

Երկրներ նվաճելով՝ աշխարհակալ Տուղրիլը հասել էր Հայկական լեռնաշխարհ, գրավել բազմաթիվ ոստաններ, կործանել Անին և առաջ խաղալով՝ բանակել Բզնունյաց ծովի ափերին:

Արևածագից առաջ սելջուկ զորավարը դիտում էր կապույտ քողով պարուրված Աղթամար կղզին և որոճում աշխարհակալական նոր ծրագրեր, նոր փառք...

Այդ հաճելի մտորումների պահին լուր բերեցին, թե չնայած կատաղի գրոհներին, Արճեշի բերդն իր մի խումբ կտրիճներով անձնատուր չի լինում, և առյուծի նման է կռվում բերդը պաշտպանող Թաթուլը, ով թեև կանաչ է տարիքով, բայց հասուն՝ զորությամբ:

– Պատանի Թաթուլը,– պատմում էր բանբերը,– մի հսկա է՝ քառասուն գոմշի ուժով... Հեծյալի ուսին է հասնում նրա հասակը, անվրեպ է նրա նետը, և աղեղն էլ՝ լայնալիճ, ինչպես ծիածան... Հրաման է արձակում նա, և նրա ձայնից երերում են ամրակուռ պարիսպները...

Մռայլ ու լուռ լսելով բանբերին՝ Տուղրիլ բեկը ձեռքը տարավ թրին և ոտքի կանգնելով՝ իր միակ ժառանգին՝ քրոջ որդուն հրամայեց.

– Մինչև սրբազան արևածագը, Դավո՛ւդ, կինազանդեցնե՛ս բերդը. Թաթուլին կենդանի կբերես ինձ մոտ...

– Ձերդ վեհության հրամանն ի կատա՛ր,– ասաց Դավուդը՝ զգաստ կանգնելով, և անհապաղ մեկնեց Արճեշ:

Երբ Թաթուլը տեսավ զինված ախոյանին, որ նժույգը խաղացնելով մոտենում էր, գոչեց.

– Տուղրիլ բեկի ամենակարող ա՛ջն ու ժառա՛նգ, ինչո՞ւ կոտորենք այս անմեղ ժողովրդին, ինչո՞ւ արժանանանք կանանց ու ծերունիների անեծքին...

Գոռոզ Դավուդն ընդհատեց Թաթուլի խոսքը.

– Ողորմություն մի՛ հայցիր ինձանից: Թե չես ուզում արյուն թափվի, անձնատո՛ւր եղիր, թուրդ դի՛ր ամենահաղթ Տուղրիլ բեկի մեծահոգության առաջ, և նա քեզ կշնորհի ջահել կյանքդ...

– Թշնամուց ես կյանք չե՛մ խնդրում, ոչ էլ քեզանից՝ ողորմություն,– հեգնեց Թաթուլը,– թե քաջ ես, դո՛ւրս եկ, չափենք մեր թրերի ուժը, թող հաղթանակը տանի նա, ում բազուկը զորեղ է, և գործն՝ արդար...

Դավուդը անակնկալի եկավ այս առաջարկից և երկյուղ զգաց՝ հիշելով բանբերի պատմածը: Բայց նա հպարտ էր ու ինքնասեր, կյանքում

երբեք չէր ընկրկել թշնամու առաջ, և թուրը երբեք չէր դողացել ձեռքին:

Տուղրիլ բեկի ժառանգը մտորեց մի պահ, ապա գոռոզ պատասխանեց.

– Ընդունում եմ մարտակոչդ, եկ չափվենք, և դու կզգաս իմ թրի զորությունը, ինչպես ուրիշներն են զգացել Իրանից Թուրան և Թուրանից մինչև Վան:

Քիչ հետո երերաց գետինը, և շրջապատող զորքը երկյուղով տեսավ, թե ինչպես փայլատակեցին թրերն ու բրոնզե վահանները: Թրերի շառաչյունները զնգացին բանակատեղում ու հասան մինչև Տուղրիլ բեկի վրանը:

Հանկարծ դադարեց թրերի շառաչը, և ամբողջ լեռնաշխարհում խոր լռություն տիրեց: Քարացան ու անշարժացան Բզնունյաց ծովի ալիքները ևս, և նոր ելնող արևի գունդը սառեց լեռան ուսին...

Զարագուշակ լռությունը ցնցեց Տուղրիլ բեկին. ի՞նչ պատահեց. ինչո՞ւ լռեցին իր ամենահաղթ զինվորները, որոնք երբեք պարտություն չգիտեին և իր համբավը հասցրել էին արևելքից մինչև արևմուտք:

Այդ միջոցին մի ձիավոր եկավ՝ կայծակնավազ, փրփրերախ նժույգը նստած, երկյուղով չոքեց Տուղրիլ բեկի վրանի շեմին և գլուխը խոնարհելով՝ հայտնեց, որ մենամարտում պատանի Թաթուլից ծանր հարված է ստացել իր ժառանգը:

Տուղրիլն ընդոստ ոտքի կանգնեց, մերկացրեց թուրը: Զայրույթից և հուզումից արյունակալեցին աչքերը, թուխպ իջավ դեմքին, և թվում էր,

Վանա լիճը և Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին

թե ահա կփայլատակի հիմա վրեժի կայծակը...

Սելջուկ աշխարհակալը թռավ նժույգի վրա: Նժույգը թևեր առավ ու ճախրեց առաջ:

Բոլորը հետևեցին նրան և կես ժամ հետո հասան Արճեշ:

Բերդի առաջ արյունլվա ընկել էր Դավուդը:

– Թաթո՛ւլ, քա՛ջ Թաթուլ,– թնդաց Տուղրիլ բեկի ձայնը,– ես չեմ եկել կռվելու: Բա՛ց արա բերդի դուռը և այստե՛ղ եկ:

Դուռը ծանր բացվեց, պարթևահասակ պատանին դուրս եկավ բերդից և գլուխը խրոխտ պահած՝ մոտեցավ Տուղրիլ բեկին:

– Դու խոցեցիր իմ սիրտը, Թաթո՛ւլ, այսպիսի հարված լուսնի տակ դեռ չէր հասցրել ինձ ոչ մի թշնամի. երդվո՛ւմ եմ անողոք լինել, եթե չամոքվի[1] իմ միակ հույսը, միակ ժառանգը: Իսկ թե ամոքվի, քո քաջությանն եմ զիջում և՛ բերդը, և՛ քաղաքը ու հեռանում Վանա ծովի ափերից... Ասա՛, իգի՛թ, կապրի՞ իմ խոցված սիրտը...

Թաթուլը օրորեց գլուխը և հատ-հատ արտասանեց.

– Թե հարվածը ի՛մն է, չի՛ ապրի. բազկիս զորությունը ես գիտեմ...

Մթագնեցին Տուղրիլի աչքերը. նա խուլ մռնչաց:

Քիչ հետո վիրավորը ավանդեց հոգին:

Աշխարհակալը կորցրեց իրեն, վրեժի փոթորիկ բարձրացավ կրծքի տակ: Իր ժառանգին անշնչացած տեսնելով՝ նա մոռացավ ամեն ինչ և մոլագար[2]՝ հրաման արձակեց.

– Գլխատե՛լ անհավատին, անհապա՛ղ գլխատել...

Դահիճները օղապարանով հանկարծակիի բերին ու կապկպեցին քաջին:

Նենգորեն կապկպված Թաթուլն արհամարհանքով նայեց իրեն շրջապատող սելջուկներին և աներկյուղ գոչեց.

– Աշխարհակա՛լ սուլթան, հասարակ ավազակները միայն այդպիսի հրաման կտան: Նախ՝ հաղթի՛ր, ապա՝ գլխատի՛ր...

Դեռ դահիճները գործի չէին անցել, երբ Տուղրիլը նոր հրաման արձակեց.

– Սպասեցե՛ք:

Հետո Թաթուլին դառնալով՝ գոչեց.

– Իգի՛թ, տո՛ւր քո թուրը, որ սպանել է իմ ժառանգին, և ես կբաշխեմ քո կյանքը...

Թաթուլն անթարթ նայեց Տուղրիլի անողոք աչքերին.

– Իմ թուրը իմ աջ բազկի հետ կարելի է վերցնել,– պատասխանեց նա,– նախնիներն իմ ավանդել են՝ *կյանքը տալ թշնամուն, բայց թուրը՝ երբե՛ք...*

---

[1] **ամոքվել** – *այստեղ*՝ ապաքինվել՝ բժշկվել:

[2] **մոլագար** – մոլեգին՝ անզուսպ, կատաղի:

Փրփրեց, գազազեց Տուղրիլը, մերկացրեց թուրը և դահճին պարզելով՝ հրամայեց.

– Իմ թրին է արժանի այդպիսի իգիթը. վերցրու՛ թուրս և կտրի՛ր ըմբոստի աջ բազուկը: Ապա թիկնապահին դառնալով՝ ավելացրեց.

– Քրո՛ջս ուղարկեցեք սրբազան դիակը և չմոռանա՛ք հետը դնել այս բազուկն ու թուրը:

* * *

Սգո քարավանը գնում էր Թուրան, ու սև բոթը սլանում էր նրանից առաջ: Եվ երբ դիակը տեղ հասավ, մազերը փետելով՝ ողբաձայն լաց եղավ Դավուդի մայրը: Նրա հետ լաց եղան բոլոր մայրերը Թուրանի, բայց երբ դիակի մոտ տեսան բազուկն ու թուրը, գովերգեցին Դավուդին, որ ռազմի դաշտում ընկել էր ոչ թե թույլ ձեռքից, այլ քաջազունի զորեղ բազկից, նրա թուր-կայծակից:

* * *

Պատմում են, թե երբ դյուցազուն պատանին հայրենի հողի վրա ընկավ նենգությամբ, բերդում հզոր փոթորիկ բարձրացավ, թուխպը որպես սև վիշապ կուլ տվեց արևը: Ճայթեցին ամպրոպները, փայլատակեցին կայծակները: Երկնեց երկին ու երկիր, երկնեց և ծովը Բզնունյաց:

Եվ պտուտահողմը բռնեց Տուղրիլ բեկի ամբողջ բանակատեղին, մոլեգնեց ու քանդեց՝ տանելով բարբարոսների բոլոր վրանները:

Ազատագրված ժողովուրդն իր հերոսին թաղեց սարի բարձունքին և նրա հիշատակը հավերժացնելու համար սարն էլ կոչեց *Թաթուլի լեռ:*



Քաջ Թաթուլ Վանանդեցին բռնակալ Տուղրիլի առջև, Ջուլիանո Ջասսո, 1885թ.

Ստեփան Ալաջաջյան

Գայլ Վահան

Ավարայրի արծիվ Վարդան Մամիկոնյանը մի եղբոր տղա ուներ՝ Վահան Մամիկոնյան, որին թշնամիները *Գայլ Վահան* անունն էին տվել: Նա բարեսիրտ, քաջ և ազնիվ մարդ էր:

Վահան Մամիկոնյանն ապրում էր Վրաստանում, երբ հայ ժողովրդի ծանր տառապանքների լուրը հասավ նրան: Նորի՛ց պարսիկները ավերում էին մեր երկիրը, նորի՛ց անմեղ մարդկանց արյունն էր հոսում, նորի՛ց երիտասարդ կանանց ու աղջիկներին գերի էին տանում, նորի՛ց մեր երկիրը արյան ու կրակի մեջ էր:

Վահան Մամիկոնյանն իսկույն եկավ Հայաստան: Ժողովուրդը նորից կանգնեց թշնամու դեմ կռվելու և անմիջապես հավաքվեց իր քաջարի իշխանի դրոշի ներքո: Երիտասարդները վերցրին իրենց զենք ու զրահները, ձի նստեցին և գնացին միանալու Վահանի զորքերին: Գյուղացիները բացեցին թշնամուց թաքցրած իրենց մթերքի մառաններն ու պահեստները և պահված ցորենն ու յուղը նվիրեցին հայ զինվորներին:

Հենց այդ օրերին Պարսկաստանի դեմ ապստամբեց նաև Վրաստանը: Վրաց ժողովուրդը ևս չէր կարողանում տանել պարսիկների հալածանքը և ոտքի էր կանգնել, որպեսզի թշնամիներին դուրս քշի իր երկրից:

Պարսկական բանակի մեջ կային նաև հայ զինվորներից կազմված գնդեր: Պարսիկներն ուզում էին վրացիների դեմ կռվելու ուղարկել հայկական գնդերը: Դրանով նրանք ոչ միայն ցանկանում էին պատժել անհնազանդ վրացիներին, այլև իրար հետ թշնամացնել երկու հարևան ժողովուրդներին, որպեսզի նրանք երբևէ իրար հետ չմիանան ու միասին դուրս չգան պարսիկների դեմ:

Վահանը գաղտնի լուր ուղարկեց պարսկական բանակում եղած հայկական գնդերին, որ նրանք երբեք չկռվեն բարեկամ վրացիների դեմ և գան միանան իր անվախ զինվորներին: Հայկական գնդերն անմիջապես հետևեցին Վահան Մամիկոնյանի խորհրդին:

Պարսիկներն ստիպված եղան մենակ՝ առանց հայկական զորագնդերի հարձակվել Վրաստանի վրա: Սակայն Հայաստանի Շիրակ գավառից դեռևս չէին հեռացել, երբ Վահանն իր դարանակալած[1] զորքերով հարձակվեց թշնամու վրա և, մի լավ ջարդ տալով, փախուստի մատնեց նրանց:

Երբ պարսից արքան լսեց այդ մասին, սաստիկ բարկացավ հա-

---

[1] **դարանակալել** – հարձակվելու համար դարան՝ թաքստոց մտնել:

յերի վրա և նոր զորք ուղարկեց Հայաստան՝ երկիրը գրավելու, ապստամբներին պատժելու և Վահան Մամիկոնյանին բռնելու համար: Շուտով պարսկական հսկայական բանակը մոտեցավ Արաքս գետին և նրա ափին բանակ դրեց:

Վահան Մամիկոնյան

Հայ իշխաններից մեկը Վահան Մամիկոնյանի հանձնարարությամբ մեկնեց պարսկական բանակ: Նա գնացել էր պարսկական զորքերի հրամանատարի մոտ՝ իբր թե հաշտություն խնդրելու, սակայն իրականում զննում էր թշնամու դիրքերը, բանակի կազմը, զինվածությունը, որոնք անհրաժեշտ էին Վահանին: Երբ ուսումնասիրությունն ավարտվեց, նա գիշերով փախավ թշնամու բանակից և վերադարձավ իր ընկերների մոտ:

Վահանը խելացի էր ու ռազմագետ: Տեսնելով, որ թշնամին շատ ավելի զորք ու զենք ունի, քան ինքը, հասկանում է, որ նրա դեմ բաց դաշտում կռվել չի կարող: Նա իր զորքերով տեղափոխվում է Մասիսի ստորոտի ժայռոտ վայրերը՝ թշնամու դիմաց թողնելով մի փոքրիկ զորախումբ:

Հարձակվող պարսկական բանակի դեմ հերոսաբար կռվելով՝ այս փոքրիկ զորախումբը հանգիստ նահանջում է դեպի Մասիսի ստորոտը, ուր թաքնված էին հայկական հիմնական ուժերը: Թշնամին ամենևին չէր գուշակում, որ նահանջող զորախումբը գնում է իր բանակին միանալու, ուստի կրնկակոխ[1] հետապնդում էր նրան: Եվ երբ նահանջողներն ու նրանց հետապնդողները հասնում են Մասիսի ստորոտում գտնվող Ակոռի գյուղին, Վահանի զորքերը հանկարծակի դուրս են թափվում իրենց թաքստոցներից ու հարձակվելով թշնամու վրա՝ գրեթե գլխովին ջախջախում նրան:

Վահանի ռազմական խորամանկությունից զայրացած՝ պարսից արքան նորից մի մեծ զորաբանակ է ուղարկում՝ հրամայելով բնաջնջել Հայաստանը և անպայման գերի վերցնել Վահանին: Պարսիկներն այս անգամ կարողանում են հանկարծակի վրա հասնել ու պաշարել Դվին քաղաքը, ուր տեղավորված էր Վահանն իր զորքերով: Թշնամուն թվում էր, թե վերջապես Վահանն այլևս փախչելու տեղ չունի և արդեն իրենց ձեռքում է: Սակայն նրանք սխալվում էին, որովհետև հայ զորավարը այն մարդկանցից չէր, ովքեր շուտ են հուսահատվում:

Պաշարումից մի քանի օր անց՝ մի օր կեսգիշերին, Վահանն իր զորագնդով հանկարծակի հարձակվեց թշնամու պաշտպանության թույլ

[1] **կրնկակոխ** – անմիջապես ետևից, առանց ետ մնալու:

օղակի վրա, ճեղքեց այն և հեռացավ լեռները: Թշնամու պաշարումն ապարդյուն անցավ: Վահանն ավելի խելացի ու հնարամիտ գտնվեց:

Լեռներում Վահանը մենակ չմնաց:

Եթե առաջ հայերը միայն կանոնավոր զորքերով էին պատերազմում թշնամիների դեմ, այժմ Վահանի ետևից լեռները բարձրացան նաև գյուղացիներն ու ռազմիկները, արհեստավորներն ու պաշտոնյաները:

Երբեմն Վահանն իր զորքերով հայտնվում էր Երիզայի ձորում և այնտեղ ջախջախիչ հարված հասցնում պարսիկներին: Երբեմն երևում էր Հաշտենից գավառի բարձունքներում, ուր գերի էր բռնում հարյուրավոր պարսիկների: Երբեմն էլ իջնում էր Արարատյան դաշտ, ուր անմիջապես էլ անհայտանում էր:

Հենց այդ պատճառով էլ թշնամիները նրան *Գայլ Վահան* կոչեցին: Պարսիկներն այլևս հույս չունեին, թե կկարողանան բռնել Վահանին, իսկ նրանից կրած կորուստները շատ մեծ էին: Ուստի դիմեցին պարսից արքային և խնդրեցին շուտափույթ կերպով հաշտություն կնքել Վահան Մամիկոնյանի հետ:

Պարսկական զորքերը Հայաստանից հեռացան: Գայլ Վահանը դարձավ Հայաստանի մարզպան և տասնհինգ տարի խաղաղությամբ կառավարեց Հայոց երկիրը:

Մուրացան

ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ

Հայերը Սևանում ու Գեղում արաբների դեմ իրենց տարած փառավոր հաղթանակի առթիվ ուրախության տոն էին կատարում, իսկ արաբ զորավար Բեշիրը, վիրավոր վագրի պես զայրացած ու կատաղած, գալիս էր դեպի Ոստան: Նա հավաքել էր իր փախչող զինվորներին, կարգի էր բերել նրանց և գալիս էր՝ Գեղ ամրոցը կործանելու, որտեղ իր առաջին պարտությունն էր կրել հայերից: Երբ տեղ հասավ, Բեշիրը բանբեր[1] ուղարկեց Գեղ և պահանջեց բերդի բանալիները: Նրան թվում էր, թե Գեղի բնակիչները, վախենալով, չեն հակառակվի իր հրամանին:

Բայց որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ բանբերը ետ դարձավ բացասական պատասխանով:

– Մեր բերդի բանալիները խիստ ծանր են,– ասել էին հայերը բանբերին,– դու միայնակ տանել չես կարող. ասա՛ Բեշիրին, որ ինքը գա՝ բանալիներն ստանալու:

– Նրանք, ուրեմն, իմ հրամանը ծաղրեցի՞ն,– գոռաց Բեշիրը:

– Այո՛, տե՛ր, մինչև անգամ հայհոյեցին Ձեզ:

– Լա՛վ, ես փակել կտամ այդ հայհոյող բերանները... Որքա՞ն զորք ունեն այդ հանդուգն հայերը:

– Չգիտեմ, տե՛ր, ինձ թույլ չտվեցին բերդ մտնել, աշտարակի վրայից խոսեցին հետս,– պատասխանեց բանբերը:

Զորքի գլխավորները, վախենալով անհայտ ուժի դեմ հարձակվելուց, խորհուրդ տվին Բեշիրին՝ իջնել Դվին, հանգիստ տալ զորքերին և ապա թարմ ուժերով վերադառնալ Գեղ:

– Մինչ այդ մենք միջոց կգտնենք նաև ամրոցում եղած զորքի մասին տեղեկություն ստանալու,– ավելացրին զորավարները:

– Ո՛չ, ես կրկնակի պարտություն կրելուց հետո Դվին վերադառնալ չեմ կարող,– պատասխանեց զորապետը:– Ես սովոր եմ հաղթանակով մտնելու Դվին և այդպես էլ կմտնեմ:

Կամակոր հագարացուն[2] համոզել անկարելի էր:

Մայիսյան առավոտ էր: Թանձր ամպերը պատել էին երկինքը: Այդ եղանակը հաճելի էր Դվինի դաշտում, ուր միջօրեին կիզում էր արևը, իսկ զորքի համար հով էր հարկավոր: Բեշիրը ուրախացավ. նրան թվում էր,

---

[1] **բանբեր** – լրաբեր՝ լուր բերող, սուրհանդակ:

[2] **հագարացի** – արաբ:

թե բնությունը հաջողություն է խոստանում իրեն՝ ամպերի տակ ծածկելով արևի ճառագայթները: Այդ պատճառով նա հրամայեց պետերին՝ անմիջապես պատրաստել զորքը և ուղղվել դեպի Գեղ:

Հայերը երկու հաղթությունից արդեն քաջալերված էին: Իշխանը որոշել էր չփակվել բերդում, այլ հարձակվել թշնամու վրա, հենց որ վերջինս Գեղա լեռան լանջերը բարձրանա: Հայ զորքերը անհամբեր սպասում էին հետախույզների ազդանշանին: Նրանցից ամեն մեկը որոշել էր որևէ սխրագործությամբ աչքի ընկնել: Այլևս չկար այն երկյուղը, որ հայ զինվորը զգում էր հագարացու հարձակման լուրը լսելիս: Իշխան Գևորգ Մարզպետունու ձայնը գերբնական ուժ էր ներշնչում նրանց. ամեն մեկը հավատում էր, թե չի կարող հաղթվել այն զորքը, որ կռվում է Գևորգ իշխանի գլխավորությամբ:

Հագարացիք արդեն հասել էին լեռան կեսը և մտնում էին մառախուղի սահմանը: Հրամանատարներից մեկը հիշեցրեց զորապետին մշուշի վտանգավոր լինելու մասին, բայց Բեշիրն աներկյուղ հրամայեց առաջ շարժվել:

Հազիվ զորապետն իր խոսքը վերջացրեց, հանկարծ որոտաց հայոց գնդերի աղաղակը: Ինչպես զայրացած մի հեղեղ, թափվեցին նրանք հագարացիների վրա, կատաղությամբ սկսեցին կոտորել: Հարձակումն անսպասելի էր: Թշնամին, գլուխը կորցրած, պատրաստվում էր փախչելու, բայց Բեշիրի աղաղակը և գնդապետների խրախույսը արգելք եղան դրան: Առանց տեղն ու դիրքը ճանաչելու և հարձակվողների քանակն իմանալու՝ հագարացիք ճակատ կազմեցին լանջերի վրա և սկսեցին պաշտպանվել, բայց դիմադրությունը հուսահատական էր: Նրանք կռվում էին միայն զորավարի ներկայությամբ, բայց հենց որ նա հեռանում էր, սկսում էին քայլ առ քայլ նահանջել դեպի զառիվայրերը: Իսկ հայերի թափն այնքան ուժեղ, և հարվածներն այնքան դիպուկ էին, որ մի ժամվա ընթացքում լեռնալանջը դիակներով ծածկվեց: Մարզպետունու զինակիցները՝ Վահրամը, Գոռը և ծերունի Մուշեղը, կռվում էին՝ յուրաքանչյուրը մի կետի վրա. նրանց գնդերը փոթորկի նման հարձակվում էին՝ շարունակ դեպի ցած մղելով դիմադրողներին: Հզոր դիմադրություն էր ցույց տալիս միայն Բեշիրը՝ մի խումբ արաբացի քաջերով, որոնց կատաղի նժույգները ծառանում[1], սլանում էին լեռնալանջի այս ու այն կողմը՝ աշխատելով ոտնատակ անել սուսերամերկ կամ նիզակավոր հայ մարտիկներին:

Գևորգ իշխանը, որ հերոսաբար կռվում էր բարձունքի վրա, հանկարծ տեսավ Բեշիրին:

Կարծես մի նոր զայրույթ բռնկվեց իշխանի սրտում, և նա, ճեղքելով կռվողների խիտ շարքը, գնաց դեպի Բեշիրը:

– Դեպի ո՞ւր, թշվառակա՛ն,– որոտաց նա ահավոր ձայնով և մոտ

---

[1] **ծառանալ** – ծառս լինել՝ վեր բարձրանալ:

Սևանա լիճը և Սևանա վանքը

հասնելով՝ նիզակն ուղղեց հագարացու կրծքին: Նրա նիզակը, սակայն, չթափանցեց պողպատե զրահը, այլ սահելով՝ ցցվեց նժույգի կրծքում: Ձին թավալվեց, բայց Բեշիրը թռավ դեպի ետ: Իսկույն խռնվեցին նրա թիկնապահները և շրջապատեցին Մարզպետունուն: Մի փոքր ևս, և մահն անխուսափելի էր իշխանի համար, որովհետև նրա մի հարվածին պատասխանում էին մի քանիսը: Հորը օգնության հասավ որդին՝ Գոռը. նա իր զինակիցների հետ իջավ վերին լանջերից՝ ինչպես արծիվ, և ընկավ շրջապատող խմբի վրա:

Արաբացիների այս խումբն էլ երկար չդիմադրեց. նահանջեց դեպի ցած՝ որոնելով իր զորապետին: Բայց Բեշիրը չէր երևում ոչ մի տեղ. նա ձորակի ճանապարհով փախել էր դեպի Դվին, որովհետև իր զորքի պարտությունը տեսնելով՝ շտապել էր գոնե իր կյանքն ազատել:

Այս հանգամանքը վիատեցրեց[1] վերջին դիմադրողներին, և նրանք սկսեցին փախչել դեպի Դվին:

Մարզպետունին չհետապնդեց փախստականներին՝ նկատի ունենալով, որ Դվինը մոտ է, և այնտեղից կարող են օգնության հասնել փախչողներին: Նա հավաքեց իր քաջերին, ստուգեց ընկածների թիվը, որոնք միայն մի քանի տասնյակ էին, և աշտանակելով[2] նժույգը՝ վերադարձավ Գեղ: Նրան հետևեցին իր զինակիցներն ու զորքը՝ ցնծության աղաղակներով և հաղթական երգ երգելով:

---

[1] **վիատեցնել** – հուսահատեցնել:

[2] **աշտանակել** – ոստյունով՝ ցատկով ձիու վրա բարձրանալ, հեծնել:

Արամ Ղանալանյան

Անիի հերոս պաշտպանները

Հայաստանը կրկին վտանգի մեջ էր: Հույներն ամուր օղակով շղթայել էին Անին ու բաբաններ[1] կանգնեցրել պարիսպների մոտ, որպեսզի խորտակեն դրանք և ապա ներս խուժելով՝ ավեր ու կոտորած սփռեն Անիի մեջ:

Հույները, վստահ իրենց հաղթանակին, սպառնում էին անեցիներին, ծաղրում ու ծիծաղում այն մի բուռ հայերի վրա, որոնք հանդգնում էին պաշտպանել իրենց քաղաքը:

Քաղաքի հայ պաշտպանները լուռ էին ու մտասույզ: Նրանք թշնամու

Անի. Սուրբ Կուսանաց անապատ, XII դ.

սպառնալիքներին չէին պատասխանում, նրանց ծաղր ու ծանակին ուշադրություն չէին դարձնում: Նրանցից ամեն մեկը մտքում մտմտում էր. «Կռվե՛լ. թող նրանք մեր դիակների վրայով անցնեն»: Եվ այդ մտքերով տոգորված՝ պատրաստ էին՝ հայրենիքի սիրո համար իրենց կյանքը զոհելու:

---

[1] **բաբան** – պաշարողական պատերազմական գործիք՝ ամրությունների վրա քարեր նետելու կամ հարվածներ հասցնելու համար:

Հեռվից երևաց ծերունի Վահրամ Պահլավունի իշխանը՝ շրջապատված հայրենիքին հավատարիմ իշխաններով ու զորականներով: Ծերունին մռայլ էր ու գունատ: Նա հասկանում էր, որ կռիվը ճակատագրական կլինի Անիի համար, և դրանից կախված է իրենց ազատությունը: Իսկ ինքը մի բուռ քաջերով ինչպե՞ս համարձակվի վճռական ճակատամարտ տալու: Երեք հազարով ինչպե՞ս դիմադրի հունական հարյուր հազարանոց բանակին: Բայց հայրենիքը վտանգի մեջ էր: Երկար պետք չէր մտածել՝ կա՛մ փրկություն, կա՛մ մահ:

Եվ ծերունի Վահրամ Պահլավունին գնում էր՝ մեռնելու իր հայրենիքի փրկության համար: Նա շրջեց բոլոր պահակակետերը, բոլոր աշտարակներն ու ամրությունները: Ուր որ լինում էր, հոգի ու սիրտ էր ներշնչում զինվորներին, և նրանք ոգևորվում էին՝ ծերունի Վահրամ իշխանի վեհ պատկերը տեսնելով:

Քիչ հետո սկսվեց սոսկալի կռիվը: Հայերը գիտեին, որ իրենք այլևս նահանջի ճանապարհ չունեն: Ոգևորված ծերունի Վահրամ իշխանի խրախուսանքներից՝ հայ զինվորներն այնպիսի գրոհ տվեցին հունաց բանակի դեմ, որ հույներն առժամանակ մնացին սառած. նրանք մի բուռ հայերից այդպիսի քաջություն չէին սպասում: Հետզհետե հույն զինվորների շարքերն սկսեցին տատանվել, իսկ ապա, սարսափահար ու անկազմակերպ, հույներն սկսեցին փախուստ տալ:

Հունաց գոռոզ ու ահեղ բանակն այլևս չկար Անիի պարիսպների տակ: Հայերի հաղթանակը կատարյալ էր:

Անի. Ախուրյան գետի կիրճը՝ դիտված միջնաբերդից

Ստեփան Կուրտիկյան

Վայրյան

Ասպատակելով, արյուն ու ավեր սփռելով երկրում՝ թշնամին մոտեցել էր Անիին:

Փաթլուն էմիրը վրա-վրա գրոհում էր քաղաքի պարիսպները, որոնք Ախուրյանի ափից սկսելով՝ բոլորվում էին դեպի հյուսիս-արևմուտք, երեք կողմից շրջապատում Բագրատունյաց քաղաքամայրը:

Պաշարված բնակիչներն ու սակավաթիվ ռազմիկները տարուց ի վեր ճակատ էին մղում մուսուլման հորդաների[1] դեմ և մնում անընկճելի:

Ամռան երեկոյին, երբ պարիսպները ծիրանավորվել էին մայրամուտի արևից, էմիրը, զորքի գլուխն անցած, վճռական գրոհ սկսեց Ավագ դարպասի վրա, որ շինված էր երկու հսկա աշտարակների միջև: Նա վճռել էր ինչ գնով էլ լինի այդ երեկո ընկճել Անիի պաշտպանների դիմադրությունը և քաղաք ներխուժել:

Մոլեգնած արաբն աղաղակում էր.

– Վա՜յ նրան, ով թիկունք կդարձնի պարիսպներին: Իսլամի որդիներն այս գիշեր իրենց նամազը պիտի անեն Անիում...

Բազում զոհերի գնով թշնամուն հաջողվեց մոտենալ պարսպին և քանդել մի մեծ սալաքար: Բաբանները ճեղքվածք առաջ բերին պարսպի մեջ: Մոտալուտ հաղթանակից արբեցած՝ գրոհողներն ուրախության վայրի աղաղակ բարձրացրին:

Բերդապաշտպան զորքի շարքերում տատանում առաջ եկավ:

Ճիշտ այդ միջոցին պարսպի գլխին հայտնվեց սպիտակամորուս սպարապետը հայոց, և որոտաց նրա բամբ ձայնը.

– Ռազմիկնե՛ր քաջակորով, ահա ձեր ալևոր սպարապետն իր կրծքով է փակում ճեղքվածքը. թշնամին չպե՛տք է անցնի... Մի՞թե իմ կուրծքը մի սալաքարի չափ չկա...

Ալեզարդ սպարապետին պարսպի ճեղքվածքի մեջ տեսնելով՝ մարտիկներն զգաստացան, կրկին կռվելու և հաղթելու կամքը տիրեց նրանց:

Թշնամու նետերը տեղում էին հայոց սպարապետի վրա, որ վահանակիր լանջով դիմադարձ էր եղել թշնամուն՝ աներեր կանգնած ժայռի պես: Շուտով նրա վահանը ծակծկվեց, թշնամու նետերը խոցեցին կուրծքը, խորշոմներով ակոսված դեմքը մագաղաթի գույն առավ: Խուլ մռնչաց սպարապետը, ջլապինդ ձեռքերով կառչեց պարսպի քարերին,

---

[1] **հորդա** – *այստեղ*՝ մարդկանց անկազմակերպ խումբ:

որպես ժայռեղեն մի զանգված՝ խցանեց անցքը և այդպես էլ անշարժացավ...

Ու մի վայրկյան շունչը պահեց հայոց բովանդակ լեռնաշխարհը: Երկնակամարի խորքում կանգ առավ հրաշեկ գունդը, դադարեց քամին, որ փչում էր բարձրաբերձ լեռներից: Կասեցրին իրենց ընթացքը երկնաթռիչք հավքերը: Ալեհեր սպարապետի փրփրաբաշ ձին էլ դոփեց գետինը և արձանացավ...

Թշնամին նորից սաստկացրեց գրոհը: Սուրում էին նետերը, շողում էին արաբական թրերը՝ շիկացնելով օդը, ինչպես անապատում:

Խուլ տնքում էր Հայոց աշխարհը: Հերոսի մահով ընկնող Անիի երիտասարդ պաշտպաններին փոխարինում էին ալևոր ծերունիները:

Եկավ այն աղետալի պահը, երբ անհնար էր այլևս ետ պահել գազազած թշնամուն: Արաբները գրոհում էին Դվնո և Կարուց դռները և ուր որ է սրի էին մատնելու քաղաքը:

Տագնապալի ղողանջում էին Անիի հազար ու մեկ եկեղեցիների զանգերը...

Ճիշտ այդ միջոցին գեղանի մի աղջիկ սպարապետի մոտից նետվեց պարսպի վրա և վայրկենապես կայծակնաշեղբ թուրը ճեղքեց երկնի կապույտը:

Մուսուլման ամբոխը քարացավ: Օդը լցվեց «յա՛ ալլահ, յա՛ ալլահ» աղաղակներով:

Վերջալույսի շողերի մեջ, իբրև հրեղեն տեսիլք, բրգաշատ պարսպի վրա խրոխտ կանգնել էր հերարձակ աղջիկը և արհամարհելով սուրացող նետերը՝ գոչում էր.

– Մենք դուստրերն ենք մեր սպարապետի. թե որ վերջին տղամարդն էլ ընկնի, մենք կպաշտպանենք մեր Անին:

Հերարձակ աղջկա թիկունքին գունդ առ գունդ հավաքվում էին կանայք և սպառազինվում հերոսաբար զոհված տղամարդկանց վահաններով ու նետերով:

–Նետահարե՛լ անհավատին...,– գոռաց մոլեգնած էմիրը և առաջին նետն ինքն արձակեց:

Նետն արձակեց, և դող ընկավ սիրտը. հրեղեն աղջիկն անսասան էր պարսպի վրա... Նետերն ասես չէին մերձենում նրա բոցեղեն մարմնին, սահում էին մի կողմ, ինչպես թուխպը՝ կապույտ երկնակամարով:

«Կախարդական ոգի է. նետ չի կպչի» ,– լսվում էին հուսահատ ու ահաբեկ ձայներ. իսկ հրեղեն աղջիկն, աներեր կանգնած, իր բարձունքից հպարտ դիտում էր արաբական խաժամուժը, որ նրա հայացքից խոցված՝ խոնարհվո՛ւմ–խոնարհվո՛ւմ էր գետին:

Վերստին լսվեց էմիրի խեղդուկ ձայնը.

– Նետահարե՛լ անհավատին...

Նորից բյուրավոր նետեր տեղացին դեպի պարիսպը:

Անիի արտաքին պարիսպը և գլխավոր դարպասը

Խոցվեց աղջիկը. ուր որ է անշնչացած ընկնելու է պարսպից: Բա՛յց... նա դուրս քաշեց նետերն իր մարմնից և դրանցով իսկ խոցեց ոսոխին:

Խուլ որոտում էր խաժամուժը, արդեն քչերն էին սիրտ անում նետահարել հրաշք աղջկան: Իսկ նա ինքը անվրեպ խոցում էր անարգ ոսոխին: Արյան վտակ էր հոսում պարսպի տակով: Հրեղեն աղջիկը, իբրև արագավազ մի այծյամ, անց էր կենում մի պարսպից մյուսը, բնաջինջ անում թշնամիներին և ոգևորում քաղաքի պաշտպաններին, որոնք կանգնել էին ծերունի սպարապետի և իր թիկունքին:

Մուսուլմանները ծնկաչոք աղոթում էին Մուհամեդին:

Սարսափից սմքած՝ էմիրն ահալի աչքերով մի պահ դիտեց արյունոտ վերջալույսի մեջ բոցավառ աղջկան, ով հրե վարսերը տվել էր հողմին, կուրծքը՝ թշնամուն, դիտեց և նվաղուն ասաց.

– Թե կի՛նն է ելել պարսպի վրա, զո՛ւր է այլևս շարունակել գրոհը...

Իսկ հայ մատենագիրը գրեց այդ գիշեր.

«Եվ այս պատերազմի մեջ պարիսպների վրա առաքինացավ կին մի, որի սիրտն առնացի էր:

Առ ոչինչ համարյալ զխոցվածս նետիցն, զոր վիրավորեին արտաքուստ, և էր անուն նորա, ըստ արժանի արագության յուրո, Այծյամն կոչեցյալ...»:

* * *

Ասում են՝ այդ օրվանից քարտաշ հայ վարպետները ջերմ սիրով այծյամներ են քանդակում հայոց լեռնաշխարհի սրբատաշ քարերին՝ հերոսուհու հիշատակը հավերժ անթառամ պահելու համար:

Ստեփան Կուրտիկյան

Ամենափրկիչ

Ծերունի մատենագիրը մագաղաթի վրա դողդոջուն ձեռքերով արձանագրել է.

«Շարժվեց մահաշունչ գազանը մարդախոշոշ[1], արյունարբու Կաղ Թեմուրը թաթար, և աստղերի թվին համար կար, նրա զորքն անհամար էր: Շարժվեց մարդախանձ գազանը փղերով, կառքերով և ձիերով ու մեծ պատրաստությամբ և մեծ աղետ բերեց Հայոց աշխարհին»:

Լենկթեմուրը Սամարղանդից եկել հասել էր մինչև Հայոց աշխարհ՝ մինչև Մոկս:

Արևելքի աշխարհակալը, սակայն, Մոկսում ծանր հիվանդացավ, անկողին ընկավ:

Հետզհետե ծանրանում էր հիվանդի վիճակը, և պալատական հեքիմը չէր կարողանում բուժել բռնակալին:

Սարուձոր ընկան Լենկթեմուրի մարդիկ, հիվանդին դեղ ու դարման ճարելու համար եղան շատ վայրերում, վերջապես հասան գետափի քերծերի մեջ ծվարած մենավոր մի վանքի, որտեղ կես դար է՝ ճգնում էր ծերունի մատենագիր ու բժիշկ Առաքել Մոկացին: Ճգնում էր այն օրից, երբ թշնամին գերեվարել էր նրա կնոջը՝ Նունուֆարին, և գեղանի աղջկան՝ Շահոքրամին:

Այդ ծանր հարվածից հետո Առաքել ճգնավորը վանքի մութ խուցերից մեկում ձեթի ճրագի աղոտ լույսի տակ կորեկ հացով անքուն գիշերներ էր անցկացնում, տքնում և պատմություններ ու ողբեր գրում իր ժողովրդի սև ճակատագրի մասին, արագաբույժ, ախտահալած սպեղանիներ պատրաստում, դեղ ու դարման ճարում հիվանդների համար: Նրա բժշկական համբավը տարածված էր ամբողջ լեռնաշխարհում: Ուստի Լենկթեմուրի մարդիկ եկան, ճգնավորին գտան վանքում ու վերցրին տարան անկողնում ուժաթափ ընկած աշխարհակալի մոտ:

Ծերունուն նկատելով՝ Լենկթեմուրը հույս ստացավ, շարժվեց տեղում.

– Բուժի՛ր թանդրի ղուլին[2], ծերո՛ւկ,– թույլ ձայնով աղերսեց թաթար բռնակալը,– և, Մուհամե՛դը վկա, լեզուդ ի՞նչ պտտի, կտամ քեզ ընծա... Ոսկի, արծաթ, հարստություն, իշխանություն, ի՞նչ ցանկանաս...

Ալևորը խունացած, մշուշոտ աչքերը հառել էր ամենազոր աշխարհակալին, որ անզոր ընկել էր մետաքսահյուս անկողնում՝ հաստ շրթունք-

---

[1] **մարդախոշոշ** – մարդկանց խողխողող, արյունարբու, գիշատիչ:

[2] **թանդրի ղուլ** – թաթարերեն՝ աստծու ստրուկ:

ները տենդից ճաքճքված և մահվան դալկությունը ճակատին:

Թախծոտ մի ժպիտ սահեց ծերունի ճգնավորի շուրթերին: Հարստություն և իշխանություն... Նա կարիք չուներ ոչ հարստության, ոչ իշխանության ու փառքի, ոչ էլ շռայլ կյանքի: Կորեկ հացով ու մի կում ջրով անց էր կացնում նա իր սև օրերը, ողբեր հյուսում, հիվանդ շինականներ բուժում և դրանով իսկ մխիթարվում ու գոհություն տալիս Աստծուն:

– Ես քեզ կբուժեմ,– հիվանդին մոտենալով՝ սառը խոսեց ծերունին,– ես քեզ ոտքի կկանգնեցնեմ՝ միայն մի պայմանով. դու պարտ ես վերադարձնել հայոց գերված գրքերը բոլոր և այնքան գերիներ արձակել, որքան իմ վանքը տեղավորի, և այնուհետև Աստծուն թողնես Հայոց աշխարհին ու հեռանաս:

Փայլեցին աշխարհակալի նենգ աչքերը: Ինքը պատրաստ էր բաց թողնելու հազար-հազար գերիների և տալ քառասուն ուղտաբեռ հարստություն, միայն թե մահը հեռանար իրենից: Բայց, զարմանալի, ինչքա՜ն չնչին, ինչքա՜ն անարժեք բան էր ցանկանում ծերունին: Եվ տարօրինակ է, թե նա ինչո՞ւ իր անձի համար ոսկի ու արծաթ, իշխանություն ու փառք չէր պահանջում: Եվ ինչո՞ւ միայն ուզում էր հայոց գրքերը փրկել և այնքան գերի ազատել, ինչքան կարող է տանել մի փոքրիկ վանք: Շեյթա՜նն իր հետ: Թող իր ուզա՜ծը լինի, միայն թե ազատվի մահից:

Եվ բռնակալը հրաման արձակեց, որ վերադարձնեն գերված բոլոր գրքերը հայոց, և գերիներ ուղարկվեն Մոկսի վանքը:

Կատարեցին Լենկթեմուրի հրամանը: Գերիների ամբոխը ձորամիջով շարժվեց դեպի վանք, որը մատուռի չափ փոքր էր:

Տեղ հասնելով՝ տղամարդիկ մի կողմ էին քաշվում և ներս էին թողնում կանանց, աղջիկների ու երեխաների, որովհետև գիտեին, որ գերությունից միայն այնքան հոգի պիտի ազատվեր, ինչքան վանքը տաներ:

Բայց ահա կանանցից, աղջիկներից ու երեխաներից հետո վանքի դռնով ներս էին մտնում անթիվ, անհամար տղամարդիկ, սակայն վանքը չէր լցվում...

Այդ մասին հայտնեցին աշխարհակալին, և նա կարգադրեց մի հազար էլ ուղարկել: Կատարեցին նրա հրամանը, մի հազար էլ ուղարկեցին, էլի չլցվեց վանքը:

Լենկթեմուրը զարհուրեց. ի՞նչ էր նշանակում այդ: Ծանր մտորումների մեջ մի պահ ցանկացավ գնալ, սեփական աչքերով տեսնել այդ հրաշքը, բայց հիվանդությունը կաշկանդել էր նրան:

«Թե որ այդ կախարդ ծերուկը մի վանքում կարողանում է հազար-հազար գերի տեղավորել, ինձ անպայման կբուժի»,– մտածեց նա և դրանով հանգստացավ: Ապա կարգադրեց բոլոր գերիներին ուղարկել վանք, միայն պահել Մոկաց նախարարին և յոթ իշխաններին:

Կատարեցին բռնակալի հրամանը. բացի նախարարից ու իշխաններից՝ բոլոր գերիներին ուղարկեցին վանք:

Այդ նկատեց ծերունի ճգնավորը և շտապ սուրհանդակ ճամփեց հիվանդ աշխարհակալի մոտ՝ հիշեցնելով, որ Մոկաց նախարարին և իշխաններին էլ պետք է ուղարկել իրենց կանանցով, ուստրերով ու դուստրերով, որպեսզի վանքը լցվի, և սուլթանական խոստումը կատարվի:

Ծերունու հրաշագործությունից և մահվանից սարսափած Լենկթեմուրն այդ պահանջն էլ կատարեց՝ իր էմիրներից մեկին հրամայելով.

– Գնա տես, թե վանքում շեյթանի ճանապարհ չկա՞... Ինչպե՞ս է այդ ծերուկը հազար-հազար մարդ տեղավորում մի փոքրիկ վանքում:

Կատարեցին աշխարհակալի հրամանը:

Վերջին գերվածի հետ էմիրն իր ծառաներով երկյուղած մտավ վանք. նա ահով տեսավ, որ երբ ծերունին ձեռք էր տալիս ներս մտնող գերիներին, նրանք փոքրանո՛ւմ, փոքրանո՛ւմ, բազմերանգ թիթեռ էին դառնում: Թիթեռ էին դառնում, թևեր առնում ու վանքի լուսամուտից դուրս թռչում, գնում հարազատ լեռները:

Լենկթեմուրի մարդիկ չէին տեսնում և չգիտեին, որ երբ թիթեռները, թռչելով հազարաբույր ու հազարաթույր ծաղիկների միջով, իջնում էին Հայրենի օջախները, նորից մարդ էին դառնում ու կյանքով լցնում ամայացած շեները...

Էմիրն իր ծառաներով վանքից փախավ սարսափած և ամենազոր աշխարհակալին պատմեց այն, ինչ տեսել էր վանքում:

Լենկթեմուրը նստեց անկողնում: Ե՛վ զարմանք, և՛ երկյուղ կար աչքերի մեջ: Դժգույն ճակատը սառը քրտինք էր պատել: Թուլացած բազուկները երկինք պարզեց նա և աղոթեց ալլահին:

Նույն երեկոյան Լենկթեմուրը ծերունի Առաքելից ստացավ մի սրվակ արագաբույժ ախտահալած սպեղանի, խմեց այն մինչև լույս, արևածագին ոտքի կանգնեց ու իր վայրագ հորդաներով, փղերով և ուղտերով անդարձ հեռացավ Հայոց աշխարհից...

Գերությունից փրկված ժողովուրդն այդ օրից Մոկաց վանքը կոչեց *Ամենափրկիչ*...

Մոկաց Ամենափրկիչ վանքը, XIII դ.

Հովհաննես Թումանյան

ԱՂԱՎՆՈՒ ՎԱՆՔԸ

(ազգային ավանդություն)

Լենկթեմուրն եկավ, հուրն ու սուրն եկավ,
Անօրենն եկավ, եկա՛վ ու եկա՛վ.
Հավաքեց, կիտեց մեր ազգը Հայոց,
Փաթաթեց, պատեց, ինչպես վիշապ-օձ,
Կանգնեց Սևանա ափին հովասուն,
Էնտեղ, ուր ուշքը ու միտքն Աստծուն՝
Անհունն է խորհում, մեռնեմ իր զորքին,
Օհաննա վանքը ծովի եզերքին:
Էն վանքում, հայոց ազգին պահապան՝
Աղոթք էր անում ծերուկ հայր Օհան,
Աղոթք էր անում իր հոգու համար,
Իր ազգի համար, աշխարհքի համար:
Երբ տեսավ խաղաղ վանքիցը իրեն
Անօրեն մարդու էս գործն անօրեն,
Խռովեց արդար ծերունու հոգին.
Ճերմակ միրուքով, իր ցուպը ձեռքին,
Դառնացած, դժգոհ մարդուց ու կյանքից,
Աղոթքը կիսատ՝ դուրս եկավ վանքից,
Իջավ Սևանա երեսը կապույտ
Ու քրթմնջալով, միամիտ, անփույթ
Էն վեր-վեր, ծփուն ջրերի վրա
Ցամաք ոտներով գնում էր ահա:
Տեսավ հրաշքը Լենկթեմուրն ափից,
Տեսավ, սասանեց տեղը սարսափից:
Կանչեց, աղաչեց իշխանը թաթար.
Ե՛տ արի, ասավ, ե՛տ արի, արդա՛ր,
Ե՛տ արի, ասավ, ո՛վ դու Աստծու մարդ:
Եր եկավ մեր հայր Օհանը հանդարտ,
Իր ցուպը ձեռին, ջրերի վրով,
Ու առաջն ելավ թաթարը սիրով:
– Ի՞նչ ես ուզում դու, ո՛վ սուրբ ալևոր,
Գանձ, իշխանությո՞ւն, թե՞ կյանք փառավոր...
– Քո փառքն ու գանձը հարկավոր չե՛ն ինձ,
Իմ ժողովուրդն եմ ուզում ես քեզնից:
Ուզում եմ թողնես՝ գնան, ուր կուզեն,

Ու ազատ իրենց կյանքի ձենն ածեն
Էս լեն աշխարհքում արևի տակին...
Ասավ սուրբ մարդը մեծ ավազակին:
- Ժողովո՞ւրդ կուզես... լա՛վ, լինի էդպես:
Էս վանքովը մին ժողովուրդ տամ քեզ,
Գնա ինձ համար աղո՛թք արա, ծե՛ր:-
Ասավ Լենկթեմուրն ու տվավ պատվեր,
Որ գերի հայոց ազգը մի թևից
Էն վանքը մտնի սուրբի ետևից.
Ինչքան ժողովուրդ մտնի էն վանքը,
Նրան է բաշխում էնքանի կյանքը:
Հրաման արավ իրեն զորքերին,
Ու բաց թողեցին հայ ազգի գերին:
Մտնում է գերին, մտնում մի ծերից,

Դայրավանք,
կառուցման սկիզբը IX դ., ավարտը XII դ.

Անցել է թիվը հարյուր հազարից,
Չի լցվում, սակայն, հասարակ մի վանք...
Ապշում է թաթարն-արմա՛նք ու զարմա՛նք:
- Թողե՛ք,- կանչում է իրեն զորքերին,
Հորձանք է տալի նորից հայ գերին:
Գալիս է գերին, գալիս է նորից,
Անցել է թիվը հազար հազարից,
Չի լցվում, սակայն, էն վանքը կրկին,
Չի կանգնում հայի հոսանքն ահագին:
Երրորդ անգամն է կանչում զորքերին:
Գալիս է անցնում մնացած գերին:
Անցնում է գերին, անցնում շարեշար,
Էլ մարդ չմնաց, գնա՛ց, ինչ որ կար,
Դատարկ է, սակայն, վանքը տակավին...
Թեմուր զարհուրած դառնում է չորս դին.
- Զարթո՞ւն եմ արդյոք, թե՞ երազ տեսա...
Հայտնեցե՛ք ինձ շո՛ւտ, ի՞նչ հրաշք է սա...
Գնում են տեսնում՝ մարդիկն իր ղրկած՝
Մեր հայր Օհանը՝ աղոթքի չոքած,
Աչքերն՝ երկնքին, միրուքն՝ արցունքոտ.
Ով որ հայ ազգից մտել է իր մոտ,
Իր սուրբ աղոթքով, կամքով Վերինի
Փոխել է իսկույն, դարձրել աղավնի,
Բաց պատուհանից թողել ամենքին,
Թռցրել դեպ իրենց լեռները կրկին,
Ու հիմի վանքում էլ չկա ոչ ոք,
Ինքն է աղոթում՝ մենակ, ծնկաչոք...

Ասպետ Լիպարիտ

Նախերգ

Դարեր առաջ մի տաղերգու,
Աշխարհ տեսած իմաստուն ծեր,
Մագաղաթյա մի հին գրքում
Այսպիսի երգ է հորինել։

– Ո՜վ սերունդներ, որ պիտի գաք,
Լսե՛ք դուք իմ խոսքը բարի.
Քանի կապրեք արևի տակ,
Հիշե՛ք նախնիքը ձեր արի։

Հայրենին է թանկն ամենքից.
Հիշե՛ք նրան դուք ձեր օրում,
Ով առավել իր իսկ կյանքից
Հայրենի՛քն է սրտանց սիրում։

Արդ, լսե՛ք ինձ, իմ հետնորդնե՛ր,
Երգս՝ գրած մագաղաթին.
Փա՛ռք տանք, հիշե՛նք նախնիքը մեր,
Հիշե՛նք Ասպետ Լիպարիտին։

Ելավ Մանչակը խելահեղ,
Ձորքին կապեց զենք ու զրահ
Ու հանց գարնան պղտոր հեղեղ՝
Գրոհ տվեց Սսի վրա։

Եկավ կանգնեց Սսի դիմաց՝
Վաթսուն հազար զինված մարդով,
Վաթսուն հազար նիզակ առած,
Վաթսուն հազար ահեղ նետով։

– Դո՛ւրս եկ, կռվե՛նք, արքա՛դ Հայոց,
Գոռաց Մանչակ թյուրք ամիրան

Ու քշեց ձին՝ կրակ ու բոց,
Հասավ մինչև բերդի բերան:

Կոստանդինը դողաց, սարսեց,
Մթնեց աչքում երկինք-գետին.
Եվ ընկճված հայցով նայեց
Քաջ զորավար Լիպարիտին:

– Վերև՝ Աստված, ներքևը՝ դու,
Զորավիգ ես եղել միշտ ինձ.
Ազատի՛ր մեզ արյունարբու
Տարսոնի թյուրք ամիրայից:

Քեզ եմ դիմում, իմ զորավա՛ր,
Քաջ Թորոսի հզո՛ր որդի.
Քաջ Վասիլի ազնի՛վ եղբայր,
Ցո՛ւյց տուր ուժը քո մեծ սրտի:

Լիպարիտը ծնկեց խոնարհ՝
Արքայի դեմ, ապա կանգնեց՝
Հպարտ, ինչպես Սասունասար,
Խրոխտ, ինչպես Տավրոսը մեծ:

Հագավ իսկույն շող ու շառաչ
Հանդերձանքը, գլխին դրավ
Սաղավարտը ոսկեճաճանչ,
Կրծքին կապեց ճոշան[1]-զրահ:

Կապեց լայնշեղբ սուրը ռազմի,
Առավ վահանն ու թիկնոցն իր
Ու դաշտ իջավ պատերազմի
Հուր նժույգով բոցակարմիր:

Ու յոթ օրեր ծանր թնդաց
Կիլիկիայի հողն հևալով.
Ու յոթը օր զիլ զրնգաց՝
Կուռ վահանը կոփկոփելով:

Սարի նման վեր բարձրացան
Մարդկանց դիերը դաշտերում.

[1] **ճոշան** – լանջապանակ՝ կրծքի զրահ:

Մինչև Սսի բերդը հասան,
Որ մխրճված է ամպերում:

Նայեց Մանչակը սևակնած՝
Խառնիխուժան զորքի վրա,
Ու նստեց մի ծանր կասկած
Չարությամբ լի սրտի վրա:

– Ձո՛ւր է,– փնչաց գոռ ամիրան,–
Թե գա նույնիսկ ուժս հետին,
Անհնա՛ր է հաղթել նրան՝
Այդ քաջ գյավուր Լիպարիտին:

Ու նորից նոր խառնիճաղանջ
Մեծ բանակով սարսափելի
Եկավ չոքեց Սսի առաջ,
Ինչպես շունչը ահեղ մահի:

Նորից սարսեց Կիլիկիայի
Ծեր թագավորը Կոստանդին,
Սիրտը՝ տխուր, աչքը՝ ահի,
Նորից կանչեց Լիպարիտին:

Եվ ողջունեց պալատը ողջ
Հիացմունքով մեծ քաջին յուր,
Նրան, որի ձեռքն անդողդոջ
Հաղթանակներ է քաղել բյուր:

Նրան, որի գլուխը քաջ
Չի կորացել ո՛չ մի անգամ
Ոչ մի մարդու սրի առաջ,
Ոչ մի տեգի երկաթագամ:

Եվ թագավորը դողդոջուն՝
Ջերմ համբուրեց ուրախառիթ
Թուխ ճակատն ու ասաց.– Ողջո՛ւյն,
Արի՛ ասպետ, քա՛ջ Լիպարիտ:

Փա՛ռք, հազա՛ր փառք պապերիդ մեծ,
Որ Սասունի օրրանում հին
Քեզ նման մի հերո՛ս ծնեց
Եվ նվիրեց Կիլիկիային:

Որդի՛ս, ահա՛ կրկին անգամ
Բարձրացել է Մանչակը չար,
Եկել է մեր շենը ծաղկած,
Մեր երկիրը տալու ավար:

Լիպարիտը ծնկեց խոնարհ՝
Արքայի դեմ, ապա կանգնեց՝
Հպարտ, ինչպես Սասունասար,
Խրոխտ, ինչպես Տավրոսը մեծ:

– Մի՛ տագնապիր, հա՛յր իմ, այդպես.
Ծանր է վայրկյանը չարաղետ,
Գիտես և դու, գիտեմ և ես՝
Հեշտ չէ կռվել Մանչակի հետ:

Մեծ է կա՛մքը, հույսը՝ կարո՛ղ,
Ելլ, ոգի՛ առ, գոտեպնդվի՛ր,
Դու գեթ մի օր բերդը տանող
Մեծ կամուրջը անա՛ռ պահիր:

Թե Մանչակը լինի կայծակ,
Մենք կլինենք ապառաժ սար,
Կկանգնենք քաջ ու համարձակ
Կռիվներում անհավասար:

Թե Մանչակը լինի հեղեղ,
Մենք կլինենք ամբարտակ – թումբ,
Կկանգնենք մեկ ու միատեղ
Կռիվներում արյունախում:

Ցնծաց հույսով պալատն Հայոց,
Ցնծաց Սիսը մայրաքաղաք.
Եվ հորդեց զորքը ալեկոծ
Գրոհներով բարձրաղաղակ:

Կենտրոնից կուռ՝ գրոհեց հորդ
Լիպարիտի գունդը անահ,
Իսկ ձախ թևից՝ Մեծ Բերդի մոտ,
Կոստանդինը կամրջապահ:

Կամո՛ւրջը, այդ անցքը միակ
Սսի սիրտն էր տանում դեպի,

Ուր խորդում էր[1] արյունկզակ
Թշնամի զորքը գետափի:

Հրեշավոր հռնդյունով,
Ցրված, ցանցառ, խիտ-խիտ, խումբ-խումբ՝
Դեպի կամուրջն, ինչպես մութ ծով,
Մակընթանում էր թմբից թումբ:

- Չե՛ս դիմանա, դո՛ւ, Կոստանդի՛ն,
Պիտի առնեմ կամուրջն այդ ես,
Այնժամ քո քաջ Լիպարիտին
Մորթեմ պիտի մի հավի պես:

Ասաց, մղեց դեպի կամուրջ
Խառնիխռիվ նոր-նոր խմբեր,
Բազմություններ հողմամռունչ,
Կռնչացող բազմություններ:

- Էյ, Կոստանդի՛ն, առյուծդ ծեր,
Ամո՛ւր պահիր կամուրջը փակ,
Թե չես ուզում թագդ դնել
Ամիրայի կեռ թրի տակ:

Ամո՛ւր պահիր...,- զիլ կանչեց քաջ
Լիպարիտը ու զերթ արծիվ՝
Սուր սլացավ դեպի առաջ՝
Տրորելով զորքը դեմի:

Ու կոտորեց նա աջ ու ձախ
Բոցակարմիր նժույգի հետ,
Բայց մի թաքուն կասկած ու վախ
Ծագեց պահին այդ չարաղետ.

«Թե չպահի կամուրջը նա,
Կառնի Սիսը Մանչակն անգութ.
Եվ հրաժե՛շտ, իմ Կիլիկիա՛ ,
Հրաժե՛շտ քեզ, իմ ժողովո՛ւրդ...»:

- Ամո՛ւր պահիր...,- կանչեց հեռվից՝
Շողացնելով սուրը հատու:

[1] **խորդալ** - խռմփալ:

Շրջվեց, տեսավ զայրութալից
Ամիրայի Ասիդ որդուն:

– Կռվե՛նք, գյավո՛ւր, – ասաց նա խիստ՝
Ասիդ թյուրքը հսկամարմին.–
Իսկական քաջն հայտնի է միշտ
Ո՛չ տանը, այլ կռվի՛ ժամին:

Ու ձգվեց մի բիրտ շարժումով,
Ինչպես հորձանքն ելման գետի՝
Ջախջախելու մեծ վահանով
Գանգը ասպետ Լիպարիտի:

Ու երկուստեք՝ զենք ու զրահ
Շառաչեցին, ու մոլեգնած
Կրծոտեցին ձիերն իրար,
Իրար՝ ընդհուպ ու ծառացած:

Մերթ մղվեցին ետ իրարից
Երկու տաք մարդ, երկու տաք ձի,
Մերթ մոտեցան ընդհուպ նորից
Զրահներով կուռ պղնձի:

– Քա՛ջ ես, Ասի՛դ... Բայց քաջությանն
Հարկավոր է նաև հնար.
Ի՞նչ կասես դու, եթե հիմա
Քեզ մեկից մեկ գլորեմ վար:

Պատրաստ եղիր... Ահա՛ և քե՛զ...
Ու վահանովն իր ծանրագին
Լիպարիտը մի ժայռի պես
Վար գլորեց գոռ Ասիդին:

– Հա՛, հա՛, հա՛, հա՛ ... Քա՛ջ ես... դե ա՛ռ...
Ա՛ռ և ասա՛ քո Մանչակին,
Թե կարենա գանգդ խելառ
Հաստ ուսերիդ պահել կրկին:–

Ասաց, ձգեց սուրը շողշող,
Կտրեց նրա վիզը մսոտ,
Խառնվեցին արյուն ու հող
Խրխնջացող նժույգի մոտ:

– Իմ ետևից, քաջեր, առաջ,
Կանչեց ասպետն արի ձայնով,
Եվ զորքը, նոր ոգի առած,
Սուրաց՝ դիեր կոխոտելով:

Եվ հորդեցին արձակ դաշտում
Մարդիկ, ձիեր, քրտինքում կեզ,
Եվ երկնքի բաց ոլորտում
Կանգնեց փոշին գորշ ծովի պես:

Նետով, տեգով, սրով լայնշեղբ
Կոտորեցին իրար անհաշտ.
Որոտացին հովիտ ու ծերպ,
Որոտացին լերինք ու դաշտ:

Եվ մրրիկի մեջ այդ դժնի,
Մոլուցքի մեջ այդ խելահեղ
Նա միտ բերեց Կոստանդինի
Եվ կամուրջի վիճակը նեղ:

Ու ետ նայեց... Օ՜, ինչ սարսափ,
Ինչ մեծ օրհաս, ինչ մեծ աղետ,
Զորքը, թողած կամուրջ, գետափ,
Նահանջում էր դեպի Մեծ Բերդ:

– Անմի՛տ ծերուկ, հե՛շտ բացեցիր
Հայրենիքի դարպասը լայն.
Քանի՞ անգամ քեզ ասացի,
Չլսեցիր դու ինձ սակայն:

Կորա՛վ ամենն, օ՛, ամեն ինչ,
Ազատությունը մեր՝ կորա՛վ.
Խնդա՛ պիտի չարաքրքիջ
Թյուրք ամիրան՝ արյան ծարավ:

Տեսավ այնտեղ, որ սևերկաթ
Դարպասի մոտ՝ պատերի տակ,
Վայր թափվեցին անզոր, վիատ
Հազար, հազար գանգ ու դիակ:

Տեսավ՝ ահա բացվեց և լայն
Երկաթ դարպասը ճռինչով,

Ու թշնամին, գետից ելման,
Քաղաք խուժեց չար կռինչով:

Ընկավ դարպասը նախաբերդ,
Չոքեց սրտին Կիլիկիայի
Բռնակալը իր զորքի հետ,
Գերանդու հետ հնձող մահի:

Չոքեց ծանր, գոռգոռաց խիստ
Մեծ ամիրան՝ դեմքը մթին.
– Այն ժամանակ կառնեմ հանգիստ,
Երբ կբռնեք Լիպարիտին:

Երբ կկանգնի նա գերու պես
Ոտքերիս մոտ, աչքիս առաջ,
Ա՛յն ժամանակ կասեմ, որ ես
Կիլիկիայի հողը առա:

Զորականներ, Սիս բերդը ձեզ,
Ավարն ամբողջ ձեզ եմ բաշխում.
Նրան պիտի ո՞ղջ տեսնեմ ես,
Լսո՞ւմ ես դու, իմ քա՛ջ Արխուն:
– Լսո՛ւմ եմ քեզ, տիեզերքի
Անի՛վ, առա՛նցք և արեգա՛կ.
Կբռնեմ այդ օձի ձագին
Եվ քաշ կտամ ոտքերիդ տակ:

Ու քշեց ձին Արխունն այնժամ
Քաղաքից դուրս՝ զորքով անվերջ,
Ու նոր կռիվ ծագեց դաժան
Նրա զորքի ու հայոց մեջ:

Մի խումբ քաջեր՝ մի քաջի հետ
Կանգնեցին մի մարդու նման,
Մինչև վերջին նիզակ ու նետ,
Մինչև վերջին կաթիլն արյան:

Մարտնչելով մեռան նրանք,
Մեռան և՛ լուռ, և՛ ցավագին:
Լիպարիտը մնաց մենակ,
Մենա՛կ զարկեց թյուրքի զորքին:

Շառաչեց իր ձիով կարմիր,
Շառաչեց իր անկոր տեգով.
Շառաչեց իր սրով ռազմի
Ու վահանով իր ծանրակող:

Սակայն ահա օղակն ամուր
Սեղմ նեղացավ իր չորս թևի,
Ու քառասուն զինված ուրուր
Շուրջկալեցին մի արծիվի:

Շուրջկալեցին և նժույգից
Վար բերեցին և զինաթափ՝
Քաշ տվեցին ազատ դաշտից
Ձեռքն ու ոտքը շղթայակապ:

Ու գնաց նա, գնաց լռին
Մայր քաղաքով՝ մթնած, մեռած.
Ու տեսավ թյուրք ամիրային
Ոտքերին մոտ, աչքի առաջ:

– Էյ, դո՛ւ, գյավո՛ւր, շո՛ւն, շանընկեց,
Ո՞ւր պիտ պահես էլ քո մորթին.
Այդ դո՛ւ ես, հա՞, որ սպանեց
Միակ որդուս՝ քաջ Ասիդին:

– Ե՛ս եմ, այո՛ , դևերի դև՛,
Մի՛ մռլտա, չես վախեցնի.
Կոստանդինը չլիներ թե,
Ես քո առաջ չէի կանգնի:

Գրավեցիր դու Կիլիկիան
Ոչ թե խելքով, ոչ թե զենքով,
Ոչ թե ուժով հսկայական,
Այլ մի ծերի սխալանքով:

– Ոչ թե ուժո՞վ... հեգնո՞ւմ ես ինձ:
– Հեգնո՛ւմ եմ քեզ, մե՛ծ սրիկա.
Ծառերն ընկնում են անտառից,
Բայց մշտագոյ անտառը կա՛:

Հերսից գոռաց Մանչակը չար՝
Աչքն՝ արյունոտ, դեմքը՝ դժգույն.

– Դահի՛ճ, սրա գլխի համար
Նիզա՛կ ցցիր հրապարակում:–

Ասաց, նստեց բարձր դրված
Գահի վրա իր թանկագին,
Նայեց ավեր, ավար տրված,
Լուռ ծխացող Սիս քաղաքին:

Մինչ խաժամուժ, արյան ծարավ,
Ճիրանավոր մի բազմություն՝
Քաջին դեպի մահը տարավ.
Տարավ դեպի անմահություն...



Սիս մայրաքաղաքի միջնաբերդը

Ամբատ Բյուրատ

ԽՈՅ ՀԱԿՈԲԸ

1870 թվականին Էոմեր փաշան երկու հազարից ավելի զորքով մտավ Զեյթուն և նրա հարավային մասի ջրաղացների մոտ բանակ դրեց:

Նա կանչեց քաղաքի մեծամեծներին և պահանջեց վճարել անցած տարիների հարկը, որը մի հսկայական գումար էր կազմում:

– Այդ գումարն անմիջապես պետք է ի՛նձ հանձնեք,– ասաց փաշան,– ապա թե ոչ...

Զեյթունցիները չվախեցան նրա հոխորտանքից[1] և մերժեցին նրա հրամանը:

Էոմեր փաշան պաշարեց Զեյթունը: Քաջ զեյթունցիները հերոսաբար դիմադրեցին փաշայի զորքին: Տեղի ունեցան ծանր, արյունահեղ կռիվներ: Փաշայի բանակը մեծ կորուստներ ունեցավ: Նա զեյթունցիներից անընդհատ պահանջում էր անձնատուր լինել, իսկ զեյթունցիները տալիս էին միայն մեկ պատասխան.

– Ո՛չ:

Կատաղած փաշան իր ամբողջ զայրույթը թափեց քաղաքի շրջակայքի ձիթենիների այգիների վրա և բոլոր ծառերն արմատախիլ արեց...

Զայրույթով լցված զեյթունցիների մեջ կարճահասակ և արիասիրտ մի մարդ կար՝ անունը Հակոբ: Նա որոշեց վրեժ լուծել ոչնչացված ձիթենիների համար:

Հակոբը մոտեցավ հայ քաջերի առաջնորդին և ասաց.

– Իշխա՛ն, երազիս մեջ ինձ հրամայեցիր, որ սպանեմ անգութ փաշային, ուստի նա իմ ձեռքից չպիտի ազատվի:

– Թող սատկի՛,– բացականչեցին զեյթունցիները:

– Սատկեցրո՛ւ,– ասաց առաջնորդը:

Այդ ժամանակ Հակոբը մի հնարք մտածեց. նա մորթազերծ արեց հոտի ամենամեծ խոյը, մտավ մորթու մեջ և, խոյի կերպարանք առած, խառնվեց թշնամու բանակի ոչխարներին:

Իսկ երեկոյան խառնվեց այն մի քանի մաքիներին, որոնք գնում էին հանգստանալու փաշայի վրանի մոտ:

Առավոտյան շուտ՝ դեռ լույսը չբացված, երբ փաշան դուրս եկավ՝ իր աղոթքն անելու, Խոյ Հակոբը ատրճանակի երկու հարվածով նրան գետին տապալեց:

---

[1] **հոխորտանք** – սպառնալից, մեծ-մեծ խոսելը:



Զեյթուն, 1862թ.

Տեսնելով հրամանատարի մահը՝ փաշայի բանակը խուճապահար փախավ, ցիրուցան եղավ:

Զեյթունցիները Խոյ Հակոբին անմահացրին՝ նրա մասին երգեր հյուսելով:

Այնուհետև թուրքերն այլևս չհամարձակվեցին Զեյթունին մոտենալ: Զեյթունցիներն իրենց լեռների պես անառիկ դարձան:

Ստեփան Կուրտիկյան

ՀԱՅՈՑ ՀԱՇԻՎԸ

Տառապանքի մի ամբողջ աշխարհ էր ծանրացել նրա հոգու վրա: Այն պայծառ, կենսուրախ մարդը չէր այլևս, որ մեղմ ժպիտն աչքերին՝ սրամտում էր միշտ, կատակում ընկերների և զավակների հետ: Մռայլ ու մտամոլոր էր դարձել: Արհավիրքով լի անհուն գիշերները կծկել էին մանկորեն բարի ու ազնվական դեմքը: Կաշկանդված խռովք կար բորբոքված աչքերում:

Իսկ այժմ այս հեղձուցիչ, տապանատուն թվացող սենյակում հարկադրված էր... նարդի խաղալ:

– Դու շե՛շ[1],– լսեց հանկարծ խաղակցի ուրախ բացականչությունը և իսկույն սթափվեց տանջալի մտորումներից:

Արդեն հնարավոր չէր շարունակել: Ընդհատեց խաղը, այրվող ափի մեջ վերցրեց զառերը, երկար, ակնապիշ նայեց...

Ներքին գործերի մինիստր Թալեաթը վեր պարզեց խուզարկող հայացքը.

– Ի՞նչ պատահեց Ձեզ, Զոհրա՛պ էֆենդի, ի՞նչ պատահեց իմ «դու շեշից» հետո... Վախեցա՞ք մարսից...

Աչքերը սեղանին հառած՝ Զոհրապը շարունակում էր լռել: Սադափած[2] նարդին մի մեծ սարդոստայն էր, որ խառնում էր նրա տեսողությունն ու ալեկոծ հոգին: Ուղեղում մորմոքում էր միայն մի միտք. «Այս ի՞նչ է կատարվում...»:

Եվ արհավիրք ամբարած լռության մեջ պայթեց նրա խռպոտ ձայնը.

– Թալեա՛թ բեյ, այս ի՞նչ է կատարվում իմ ժողովրդի հետ, ի՞նչ ահավոր ոճիր է գործվում երկրում...

Ներքին գործերի մինիստրը բարձրացրեց ձեռքը, մի պահ օդում իրար եկան մատները, հետո կեռ բեղը սղալեց[3].

– Կատարվում է ալլահի կամքը:

Զոհրապը ետ հրեց աթոռը:

– Բայց Թալեա՛թ բեյ, մի օր ոչ թե ալլահից, այլ ձեզանից են հաշիվ պահանջելու...

Թալեաթի թուխ-դեղնամաշկ դեմքին դաժան քմծիծաղ գալարվեց և, փշրվելով, ծվարեց վազվզող բիբերում:

---

1 **դու շեշ** - երկու վեց (զառերի ցույց տված նիշերը):

2 **սադափ** – մարգարտաբեր խեցեմորթու փայլուն խեցի. **սադափել** – վրան սադափի շերտիկներ կպցնել:

3 **սղալել** - (ժողովրդական) ուղղել, հարդարել, ձեռքով շոյել՝ շփել:

– Իսկ ո՞վ է պահանջելու այդ հաշիվը, Զոհրա՛պ էֆենդի:

Հարցը մի պահ ոլորվեց, կախվեց օդում: Հայացքներն իրար բախվեցին:

– Ես,– որոտաց Զոհրապի ձայնը:– Ես՝ որպես իմ ժողովրդի ընտրյալ: Ես՝ որպես օսմանյան պառլամենտի անդամ...

Թալեաթը դանդաղ ծածկեց նարդին...

– Դո՞ւք, Զոհրա՛պ էֆենդի, դո՞ւք... Մի՞թե... վախենում եմ՝ օսմանյան պառլամենտի երեսփոխանն[1] այլևս երբե՛ք ամբիոն չբարձրանա: Եվ ո՛չ ոքից և երբե՛ք չկարողանա հաշիվ պահանջել...

Զոհրապն ընդոստ ոտքի կանգնեց: Կանգնեց և Թալեաթը: Նրանք շնչում էին ընդհատ:

– Ներեցե՛ք, պարո՛ն մինիստր, Ձեր խաղն արդեն ավարտված է,– նետեց Զոհրապը: – Բայց հիշեցե՛ք՝ միշտ չի կարելի վստահել զառերին...

Ու ծխախոտի կրակը տրորելով մատների մեջ՝ քայլեց դեպի ելքը:

– Գնո՞ւմ եք, էֆենդի՛: Զո՛ւր եք շտապում: Երևի շատ վախեցաք դու շեշից...

– Բե՛յ էֆենդիմ, ես արդեն ասացի՝ զառերին մի՛ վստահեք... Դո՛ւք վախեցեք, վախեցե՛ք արդար հաշվից, վերջնակա՛ն հաշվից: Վախեցե՛ք ոճիրներից, որ քսաներորդ դարում քաղաքակիրթ աշխարհի աչքի առջև գործվում է այս երկրի քաղաքացի իմ ժողովրդի հանդեպ... Դուք չե՛ք խուսափի...

Եվ ծանր քայլով ելավ փողոց. օ՛դ, օ՛դ էր հարկավոր՝ շնչահեղձ չլինելու համար:

Ներքին գործերի մինիստրը զայրույթով մոտեցավ հեռախոսին, կանգնեց: Մի ձեռքը արգելանքի անառարկելի նշանով՝ կրկին ձգվեց վեր, մատները կուչուձիգ եկան և ծանր իջան խոսափողին:

– Ոստիկանապե՛տ, Ձեզ հետ Թալեաթն է խոսում: Այս գիշեր իսկ ձերբակալե՛լ Զոհրապ էֆենդիին:

– Իսկ նրա երեսփոխանական անձեռնմխելիությո՞ւնը, թուրքական օրենքը, բե՛յ էֆենդիմ...

– Միամի՛տ հիմար... Ի՞նչ անձեռնմխելիություն.– նա թքոտեց շուրթերը:– Անձեռնմխելի չէ այժմ նույնիսկ ալլահը... Թող երեխանե՛րը խաղան անձեռնմխելիության և ձեր մյուս բոլոր օրենքների հետ... Յաթաղա՛ն է հիմա միակ օրենքը... Այս գիշեր նա պե՛տք է ձերբակալված լինի:

Կարծես խոսքը սպառվեց: Կանաչ աչքերի մեջ ետուառաջ վազվզեց մի խառնակ ժպիտ, գնաց ու եկավ: Եվ մաշված մի ասելիք գտնվեց, որը թեպետ իրենը չէր, բայց նա արտաբերեց որպես իրենը՝ խստացնելով ձայնը, հասցնելով հիստերիկ գոռոցի.

– Աշխարհի երեսից մենք պիտի բնաջնջենք գյավուրներին, թանգարան ուղարկենք վերջին հային և վերջնականապես լուծենք հայկական հարցը:

---

[1] **երեսփոխան** - արևմտահայերենում՝ պատգամավոր:

Գրիգոր Զոհրապը
Պոլսի իր տան պատշգամբում

Այս է թուրքական սրբազան օրենքը...- Ապա լեզուն պղտորվեց, ձայնը հասավ շշուկի.- Զոհրապ էֆենդին շա՛տ է կարոտել իր աքսորված ընկերներին, հանգի՛ստն է կորցրել... Շտապում է նրանց ետևից հասնել ջաննա՛թ[1]... մենք նրան չենք զլանա այդ... Չէ՛, չէ՛, էֆենդի՛մ...

Զոհրապը տուն հասավ ուշ. գունատ էր, դիմագծերը լարված էին ու քարացած: Ներս մտավ, կանգնեց, նայեց շուրջը:

Զավակները լռեցին իսկույն: Կինը քայլ արեց դեպի ամուսինը և ափերով ամուր սեղմեց բերանը, որ չճչա, երբ լսի սարսափելին:

- Թալեաթի տնից եմ գալիս. եղա նաև Իթթիհատի ընդհանուր քարտուղար Միթհատ Շյուքրիի մոտ: Դահիճնե՛ր,- բարձրացրեց ձայնը:- Չե՛մ թողնելու, որ անպատիժ ոճիրներ գործվեն. կյանքիս գնով իսկ պիտի պաշտպանեմ ժողովրդիս ապրելու իրավունքը...

Սառը խոնավություն էր պատել ճակատը: Չսրբեց: Չէր զգում: Չիմացավ, թե ինչպե՛ս սենյակում հայտնվեց մտերիմ ընկերը՝ Հրանտ Ասատուրը: Անխոս ձեռք սեղմեցին: Եվ Զոհրապին հեռվից հասավ ընկերոջ ձայնը.

- Ես եկել եմ խորհուրդ տալու բոլոր բարեկամների կողմից. Զոհրա՛պ, թո՛ղ Պոլիսը, անհապաղ մեկնի՛ր արտասահման... Կյանքիդ վտանգ է սպառնում...

Նա ուշ հասկացավ: Եվ դառն ժպտաց բարեկամների խորհրդի համար: Ապա մռայլվեց, ականջ դրեց խղճմտանքի ձայնին, ասաց հաստատակամորեն.

- Անձս փրկելու համար չեմ կրնար փախչիլ: Մեծ ողբերգության օրերուն որո՛ւն թողնեմ այս անտեր ու անգլուխ ժողովուրդը: Չէ՛, դասալի՛ք[2] չե՛մ կրնար ըլլալ: Խղճի պարտքս է մինչև վերջը կենալ պատնեշին վրա...

Զոհրապն այլևս ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում: Եվ մտերիմ բարեկամը գնաց՝ դժվարությամբ հեռանալով այս համառ ու անսասան մարդուց:

---

[1] **ջաննաթ** - թուրքերեն՝ դրախտ:

[2] **դասալիք** - *այստեղ*՝ մարդ, որ վտանգի ժամանակ լքում՝ թողնում է ընկերներին ու հեռանում:

Իսկ նա մենացավ իր առանձնասենյակում, նստեց գրասեղանի առջև, այրվող դեմքն առավ ափերի մեջ: Ծանր էր քունքերի զարկը: Թվում էր՝ շիկացած դեմքից արյունը բաբախով անցնում էր ափերին, և արյան այս պտույտի միջով օղակ-օղակ մտապատկերվում էր ամբողջ կյանքը՝ խռովահույզ ու կրքոտ, լուսավոր ու մարտնչող...

Տարիներ առաջ էր. վերադառնում էր դատական արարողությունից: Այդ դատի պաշտպանությունը նրա համար իրավաբանի սովորական պարտականություն չէր: Սիրահոժար, ամբողջ կրքով իրեն տրամադրել էր թուրքական վճռաբեկ ատյանի առջև պաշտպանելու Զեյթունի հեղափոխական հայերին, ինչպես դրանից առաջ իր ամբողջ տաղանդով ու կրքով պաշտպանել էր բուլղար և հույն հեղափոխականներին՝ վճռականորեն մերժելով նյութական որևէ վարձատրություն: Նա ասել էր դատական ատյանում.

– Այսօր կույրերն անգամ կտեսնեն այս հեղափոխական մարդկանց մեծ ծառայությունը՝ մարդու իրավունքներու պաշտպանության և խաղաղության դատին, որ քաղաքակրթության դատն է միաժամանակ:

Բայց իրեն վարձատրեցին... Այդ եղավ վճռաբեկ ատյանի որոշումը՝ ձերբակալել հանդուգն իրավաբանին:

Հետո դեպքեր, դեպքեր, գլորվող տարիներ: Եվ, ահա, 1909 թվական, թուրքական պառլամենտի նիստը:

Այդ օրերին, ինչպես հիմա, Պոլիսը և ամբողջ հայությունը սգի մեջ էին: Կիլիկիայում հայերի կոտորած էին կազմակերպել, Ադանա քաղաքի և շատ գյուղերի ճամփաներ ծածկվել էին հազարավոր անմեղների դիակներով:

Եվ օսմանյան պառլամենտի ամբիոնից պոկվել ու աշխարհով մեկ էր գնացել Զոհրապի ընդվզած հոգու բողոքը.

– Քսաներորդ դարում այս ինչպիսի՜ ոճիրներ են կատարվում մեր երկրում, տասնյակ հազարներով սպանվում են մեր վաթանին[1] նվիրված, աշխատասեր, անմեղ քաղաքացիներ: Սպանվում են միայն այն «մեղքի» համար, որ հայ են ծնվել... Բռնաբարվում է մեր օսմանյան նոր սահմանադրությունը: Որտե՞ղ մնացին ազատության, եղբայրության, հավասարության սկզբունքները... Ես խստագույնս պատիժ եմ պահանջում ոճրագործներին: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առջև նրանք վարկաբեկում են մեր օսմանյան պետության սահմանադրությունն ու պատիվը... Ես՝ որպես երեսփոխան, դատ ու դատաստան եմ պահանջում մարդասպանների հանդեպ:

Հիշում է. աղմուկ պայթեց պառլամենտի դահլիճում...

Ոճրագործության պաշտպանները ցանկանում էին խեղդել արդարության ձայնը: Սակայն ամբիոնի առաջ կանգնած էր աննկուն խոսքի

---

[1] **վաթան** - թուրքերեն՝ հայրենիք:

ու գրչի մարդը: Եվ պառլամենտի ամենից պերճախոս հռետորի ու ազդեցիկ անդամի ձայնը հասավ նպատակին: Երիտասարդ թուրքերի սահմանադրական կեղծիքը քողարկելու համար կառավարությունը հարկադրված եղավ Կիլիկիայի կոտորածի պատասխանատուներից քառասուն հոգու կախաղան բարձրացնելու...

Չնայած մեծ աղետներին, որ պատմության քառուղիներում բաժին է ընկել հայերին, ոչ մի բռնակալի դեռ չի հաջողվել հայկականը բնաջնջել: Նրա արմատները խոր են գնացել պապենական հողի մեջ... Հաճախ են կոտորվել ավիշով լի ճյուղերը գարնան ծաղկունքի մեջ. հաճախ են խորշակահար եղել[1], սակայն անսասան է մնացել բունը, որ դալար ընձյուղներ է արձակել... Ու նորից է հայոց երդիկներից բարձրացել ծուխը, ու նորից է մեսրոպյան լեզուն կարկաչել դարերի միջով...

Զոհրապը թեքվեց գրասեղանին, վերցրեց նշումների մի թերթիկ. ձեռքը գրեց մի տող.

«Ամենեն ուժեղ ազգն ան է, որ մահվանե չի վախնար...»:

Եվ շտկեց մեջքը:

Թալեաթի հրամանը գործում է գիշերվա կեսին: Դահիճները խլում են իր ընտանիքից, իր ժողովրդից նրա մեծ մտածողին ու արվեստագետին, հայոց *նորավեպի իշխանին*, և խավարը ծանր իջնում է շուրջբոլորը: Տանում են այդ անդուռ, անլուսամուտ խավարի միջով:

Սակայն ո՞ւր են երկարում անհայտ ճամփաները արդարության շեփորահարի առջև: Նա մենակ չէ. իր հետ է օսմանյան պառլամենտի մի ուրիշ անդամ՝ Վարդգեսը: Նրանց հայտնում են, թե տանում են Տիգրանակերտ՝ պատերազմական ատյանում դատելու:

Հասնում են Ուրֆա: Այստեղից մեկնելու են Տիգրանակերտ: Սպասում են, մինչև կրկին խտանում է գիշերը:

Արդեն խավարչտին[2] է ժամը: Երկու կառք են կանգնած դրսում: Նրանց նստեցնում են մոտիկ կանգնած կառքը: Մյուսը քիչ հեռու է: Այնտեղ, ասում են, ապահով տեղ հասնելու համար պահապան ոստիկաններ կան ուղեկից...

Ճանապարհ են ընկնում՝ լույսը դեռ չբացված: Անիվները պոկվում են տեղից, գլորվում աղջամուղջի միջով, աղմկում Զոհրապի գլխում: Լուռ է նա, աչքերը՝ խոր ընկած, պղտոր: Բորբոքվում է միևնույն հարցը. «Ո՞ւր են տանում, ինչո՞ւ են շտապում այսպես մթնով»:

Անիվների հետ գլորվում, իրար են հրում երբեք դադար չունեցող հազար ու մի խոհ:

Իսկ կառքերն արագ անցնում են զորանոցի առջևով, թեքվում են,

---

[1] **խորշակահար լինել** – խորշակից՝ տաք քամուց զարկված՝ չորացած:

[2] **խավարչտին** – խավար, մութ, մռայլ:

ոլորք ճամփով իջնում: Խավարի մեջ վերուվարում են սարերի թանձր ստվերները, երկինքը, հողը:

Նորից՝ ոլորք, կրկին՝ վայրէջք: Ու մոտենում են սև սուգ քարերով ծածկված մթին մի ձորի և կամուրջի. Գարաքյոփրյու[1]:

– Վարդգե՛ս,– ասում է Զոհրապը կողքին կուչ եկած մարդուն,– սա նախճրաձոր է. մեր հաշիվը փակելու են այստեղ: Բայց հայոց հաշիվը չի փակվի: Մենք տանուլ չենք տա մեր դատը...

Վարդգեսը լուռ՝ ուսով որոնում է նրա ուսը: Եվ մնում է այդպես՝ շոշափելով հավատքի այն ժայռեղեն ուժը, որն ունի այս՝ մարդ կոչված մեծ սրտով անհատը, հայ ժողովրդի բացառիկների մեջ այս ազնվագույն հոգին...

Զոհրապին այրում է մի վերջին, տագնապող միտք. ի՞նչ եղան Կոմիտասը, Վարուժանը, Սիամանթոն... Հիմա որտե՞ղ են Կյուրճյանը, Չյոկյուրյանը, Սևակը, Զարդարյանը...

Կանգ է առել իրենց կառքը: Եվ՝ ետևից եկող մյուս կառքը:

– Ոստիկաններն ու Չերքեզ Ահմեդը գալիս են այստեղ,– շշնջում է Վարդգեսը,– նրանք մեզ ուզում են զրկել...

Կրակում են կողքից: Վարդգեսը հազիվ է արտասանում վերջին բառը.

–...Արշալույսի՞ց...,– և դանդաղ սահում է կառքի մեջ, ընկնում երեսն ի վար:

Զոհրապը՝ վիրավոր, կառչել է կառքի հենակից: Զգում է՝ արյունը թաց ու գաղջ սողում է մեջքով... նրան թվում է, թե դիմացի ժայռից հարյուրավոր արեգակներ են բարձրանում... Լուսավորվում է քերծին նստած արծվի քարացած պատկերը:

Չերքեզ Ահմեդը կառքից պոկում է Զոհրապին, ետ է տանում ձեռքը՝ կեռված մատների մեջ սև, ահագին մի քար:

Զոհրապը քայլ է անում առաջ. դահիճի ձեռքը երերում է օդում, դեռ վրա չի գալիս: Ու սարսափազդու ձայնը դաշունահարում է դահճին:

– Այս ոճիրների համար դո՛ւք, բոլո՛րդ հաշիվ եք տալու... Պահանջելու է իմ անմահ ժողովուրդը...

Սև քարն իջնում է գլխին, ճեղքում քունքը, և...խավարում է լուսավոր մտքի վերջին արեգակը...

Անշնչացած մարմինների վրա վաղորդյան ցող արցունք է իջնում երկնքից... Ձորամիջում լաց են լինում սեզ ու ծաղիկ: Մի ձի տխուր խրխնջում է: Այդ խրխինջը գնում-խփվում է սև ժայռերի սուր կողերին... Եվ դանդաղորե՛ն կարմիրով է լցվում ձիու խոնավ աչքը: Արեգակն է բարձրանում ձորապռնկից...

Ժայռին թառած արծիվը, հայացքն արևածագին, բարձրանում է կա-

---

[1] **Գարաքյոփրյու** – թուրքերեն՝ սև կամուրջ:

պույտ եթերի մեջ: Արևը ոսկևորում է դեպի հավիտենականություն ուղևորվող նրա լայնաբաց թևերը...

* * *

Այս եղելությունը գրի առնվեց Գրիգոր Զոհրապի, նաև միլիոնուկես հայերի սպանությունից կես դար հետո, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության քաղաքամայր Երևանում՝ Զոհրապի անվան փողոցի հայկական մի շեն օջախում...

Գրի առնվեց մեսրոպյան այբուբենով, թուրքական ջարդերից փրկված մի հայի ձեռքով...

Եվ սա հայոց արդար հաշիվն է, որին հավատում էր Զոհրապը:

Տեսարան Անիից

Ալեքսանդր Թոփչյան

Եվ անգամ սահից հեծո...

(հատվածներ)

Որոշել էր գնալ Վանգենհայմի մոտ: Ուզում էր երես առ երես խոսել հետը: Անցյալ անգամ դեսպանը խորամանկությամբ կարողացել էր փափուկ բարձ դնել մոր գլխի տակ: Այսպես երկար շարունակվել չէր կարող: Ռուբենի[1] թուրք ընկերները որոշակիորեն ասում էին, որ անզոր են որևէ կերպ օգնել, և բոլորը խորհուրդ էին տալիս համառորեն պահանջել դեսպանից, որ միջնորդի: Վերջին երկու շաբաթվա ընթացքում շարունակ լսում էր, որ ավստրիական, ամերիկյան դեսպանների և անգամ պապի նվիրակի բարեխոսությամբ բազմաթիվ մարդիկ են վերադարձել աքսորից: Նշանակում էր, որ թուրքերի համար առաջին դաշնակցի՝ գերմանացիների միջնորդությունը պիտի ավելի արդյունավետ լինի:

Անհավատալի էր, սակայն, որ այս անգամ կնոջն առանց սպասեցնելու առաջնորդեցին դեսպանի մոտ: Իսկ վերջինս ընդունեց նախորդ անգամվա պես ընդգծված քաղաքավարությամբ և նույնիսկ որոշ ջերմությամբ:

– Ի՞նչ լուրեր ունեք Ձեր ամուսնուց:

– Շարունակ այնտեղ է, արդեն մեկ ամիս կլինի:

– Կարևորը՝ ողջ-առո՞ղջ է:

– Գրում է, որ այդպես է, բայց իրո՞ք այդպես է...

– Չեմ հասկանում Ձեզ, տիկի՛ն:

– Ինձ թվում է, Ձե՛րդ գերազանցություն, որ ես շատ պարզ ասացի. եթե վիճակը լավ չէ, կարո՞ղ է արդյոք այդ մասին հայտնել:

– Այո՛, հասկացա... բայց նկատի՛ ունեցեք, տիկի՛ն, պատերազմ է, զինվորական գրաքննություն կա:

– Հայերի բերանը միշտ փակված է եղել այստեղ, իսկ հիմա պարզապես դժոխք է դարձել նրանց կյանքը:

– Մի՛ չափազանցրեք, տիկի՛ն, ընդամենը մի քանի հոգու աքսորեցին, հիմնականում կասկածելի անձանց: Դրանց մեծ մասն արդեն վերադարձել է Պոլիս, կարծում եմ, որ մյուսներն էլ կվերադառնան:

– Նրանք չեն վերադառնա, Ձե՛րդ գերազանցություն,– հոգնած ձայնով ասաց Յաննին,– որովհետև արդեն մորթված են, ինչպես և հազա-

---

[1] Խոսքը արևմտահայ գրող, բժիշկ Ռուբեն Սևակի (Ռուբեն Չիլինկիրյանի) մասին է:

ռավոր անմեղ մարդիկ չեն վերադառնա, որովհետև նրանք էլ մորթված են:

– Ինչե՞ր եք խոսում, տիկի՛ն, այդ հրեշավոր ստերն ո՞վ է պատմել Ձեզ... Այսինքն՝ մեղավոր չեք. այդպիսի չապացուցված լուրեր իսկապես շրջում են նույնիսկ դիվանագիտական և կառավարական շրջանակներում: Ի դեպ, Ձեր ամուսինը որտե՞ղ է:

– Չանղըրիում՝ Էնկյուրիից հյուսիս:

– Ինչպիսի՜ զուգադիպություն: Մեկ շաբաթ առաջ հենց այդ կողմերում էի. գնացել էի՝ անձամբ այդ լուրերը տեղում ստուգելու:

– Եվ ի՞նչ պարզվեց,– անհամբերությամբ հարցրեց Յաննին:

– Պարզվեց, որ այդ սահմռկեցնող պատմությունները հայերի կոտորածների մասին հերյուրանքներ են: Այո՛, տեղահանություններ կան, այո՛, չարաշահումների, կաշառակերության, նույնիսկ դաժանության որոշ դեպքեր են եղել թուրքերի կողմից, հայերից մի քանիսին էլ ստիպված են եղել պատժել անհնազանդության համար, սակայն կոտորածներ իսկապես չեն եղել:

– Ինչպե՞ս իմացաք այդ բաները:

– Թուրքերը պատմեցին, տեղական իշխանությունները... Հայերն էլ պատմեցին...

– Ի՞նչ եք ասում, Ձե՛րդ գերազանցություն, հայեր մնացե՞լ էին,– զարմանքով հարցրեց Յաննին:

– Այո՛, բազմաթիվ հայեր կային, ինքս եմ անձամբ խոսել նրանց հետ,– առանց աչքը թարթելու՝ պատասխանեց դեսպանը:

– Դուք ստում եք, պարո՛ն դեսպան:

Վանգենհայմը ցնցվեց և ընդոստ ելնելով՝ ասաց.

– Չափավորե՛ք Ձեր լեզուն, տիկի՛ն:

Յաննին նույնպես ելավ տեղից:



Ռուբեն Սևակը կնոջ՝ Յաննի Ապել-Չիլինկիրյանի հետ

– Այո՛, ստում եք, որովհետև բռնաբարված, մորթված, խեղանդամված դիակների հետ չէիք կարող խոսել:

– Տիկի՛ն, Դուք մոռանում եք, թե որտե՞ղ եք և ո՞ւմ հետ եք խոսում,– ձայնը բարձրացրեց Վանգենհայմը:

– Ես հատկապես գերմանական դեսպանատանը և նորին գերազանցություն դեսպանի ներկայությամբ

եմ խոսում թուրքերի վայրագությունների մասին, որովհետև աչք փակելով, ճշմարտությունը թաքցնելով՝ դառնում ենք հանցակից... Ես ամաչում եմ, որ գերմանացի եմ... ինչպե՞ս կարելի էր այդ բարբարոսի դաշնակիցը դառնալ, մի՞թե չգիտեիք, թե թուրքերն ի՞նչ արարածներ են:

Վանգենհայմի դեմքին զայրույթի արտահայտությունը տեղը զիջեց հեգնական ժպիտին:

– Տիկի՛ն, մենք լավ գիտենք, թե ո՛վ է մեր դաշնակիցը, և ի՞նչ ենք սպասում նրանից: Այդ Դո՛ւք, Դո՛ւք եք սխալվել Ձեր հաշիվների մեջ... Ավա՜ղ, չլսելով մեծերին... Հա՛, լավ հիշեցի, մի հարց պիտի տամ և շատ կուզեի, որ անկեղծորեն պատասխանեք: Ճի՞շտ է, որ Ձեր ծնողները դեմ էին այս ամուսնությանը:

– Պարո՛ն, այդ հարցերը Ձեզ չեն առնչվում:

– Այդ դեպքում ինչո՞ւ եք եկել մեր միջնորդությունը խնդրելու մի մարդու համար, որն առնչություն չունի մեզ հետ: Դուք հանդգնում եք դասեր տալ, թե ո՛ւմ հետ պիտի դաշնակցի մեր երկիրը, բայց ինքներդ ամուսնանում եք այդ թշվառական հայի հետ...

– Ես Ձեզ թույլ չեմ տա, պարո՛ն դեսպան...

– Արդեն թույլ եք տվել, ուրեմն՝ համբերությո՛ւն ունեցեք մինչև վերջ լսելու: Դուք անարժան գերմանուհի եք և , լա՛վ իմացեք, Ձեր ամուսինը ետ չի գալու: Ես խնայեցի Ձեզ, չուզեցի միանգամից ասել այդ մասին: Սակայն գուցե չկա չարիք՝ առանց բարիքի: Ճակատագիրը հնարավորություն է տվել սխալը շտկելու, ուստի առանց հապաղելու՝ վերադարձե՛ք Գերմանիա և նո՛ր կյանք սկսեք այնտեղ: Դուք դեռ երիտասարդ եք, ամեն ինչ Ձեր առջևում է:

Դեսպանի անսիրտ բառերը լսելով՝ Յաննին հանգիստ ու արժանապատվությամբ պատասխանեց.

– Ձե՛րդ գերազանցություն, ես իմ կյանքի ուղին ընտրել եմ վերջնականորեն և մտադիր չեմ փոխելու ոչ մի դեպքում: Ինչ վերաբերում է Ձեզ և Ձեր դաշնակցին, ապա քայլում եք մի ուղիով, որը տանում է դեպի կործանում:

– Տիկի՛ն, շարունակ ասում եք՝ «Ձեզ». ինչպե՞ս հասկանալ, Դուք գտնում եք, որ այլևս գերմանուհի չե՞ք: Եթե ամաչում եք Ձեր գերմանական ծագումի համար, ինչպես բարեհաճեցիք ասել քիչ առաջ, հապա ինչո՞ւ եք գալիս այստեղ: Դա ազնիվ պահվածք չէ... Ես կասեի, նույնիսկ երկդիմի, կեղծավոր մի խաղ եք սկսել. Դուք ցեխ եք գցում մեր երկրի պատվին, բայց չեք խորշում օգտվել գերմանական անձնագրի ընձեռած բազմաթիվ առավելություններից: Դա չափազանց անազնիվ է, տիկի՛ն:

Յաննին, որ անվրդով լսում էր դեսպանին, պայուսակը բացեց, անձնագիրը հանեց, շպրտեց նրա երեսին և կտրուկ շրջվեց, որ դուրս գա:

Վանգենհայմն ապշած էր իր այցելուի այս անակնկալ քայլից: Հետո

անմիջապես ուշքի եկավ (դիվանագիտական փորձառությունն օգնեց) և բառերը գնդացրի պես իրար ետևից շարեց.

– Սա չտեսնված լկտիություն է, տիկի՛ն, Դուք պատասխա՛ն կտաք դատարանին՝ պետական բարձրաստիճան անձին վիրավորելու և անձնագրի հանդեպ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար:

– Շատ ուրախ կլինեմ. վերջապես կզգամ, որ իմ պետությունը գոնե ա՛յդ կերպ է զբաղվում ինձնով:

Դուռը շրխկոցով փակեց դեսպանատան աշխատակիցների ապշած հայացքների ներքո, վճռական քայլերով անցավ ընդունարանը և դուրս եկավ փողոց: Քայլում էր՝ առանց գիտակցելու, թե ո՛ւր: Ուշքի եկավ այն պահին, երբ մի ձայն լսեց, որ թիկունքից գերմաներեն կանչում էր. «Ֆրա՛ու Ապել, կա՛նգ առեք, խնդրում եմ»: Շրջվեց և երիտասարդ մի սպա տեսավ, որ վազել-հասել էր իրեն: Նա հևալով մոտեցավ և անձնագիրը վերադարձրեց:

...Անձնագիրը ձեռքին՝ կանգնել էր փողոցում՝ չիմանալով՝ ի՞նչ անել. դնել պայուսա՞կը, շպրտել մայթի եզրով հոսող առվի մե՞ջ, թե՞ հետ տալ սպային, որ հետաքրքրված կանգնել էր տեղում: Հիմա հասկացավ, որ քիչ առաջ դեսպանի սենյակում սոսկալի բան կատարվեց, և թերևս իր մեղքով: Անզուսպ եղավ, գուցե նույնիսկ՝ անհարգալից, անբարեկիրթ: Այո՛, դեսպանը ստում էր: Իսկ մի՞թե չգիտեր, որ դիվանագետներն ու պետական գործիչները մեծագույն ստախոսներն են: Պարզապես հիմա իր մաշկին զգաց կեղծիքի ահավորությունը: Արդեն մեկ ամիս է՝ առանց ամոթի՝ խաբում են. այլևս չդիմացավ, քանզի զգաց, որ եթե դահիճը տառապանքներ է պատճառում զոհին, ապա ոճրագործությունը թաքցնողներն ու խեղաթյուրողները նույնպիսի տառապանքներ են պատճառում արդարություն պահանջող ապրողներին: Եվ բառերը բերանից դուրս թռան, չնայած մի ձայն կողքից ասում էր. «Հիշի՛ր, որ Ռուբենի կյանքը մազից է կախված, հիշի՛ր, որ հիմա ամեն ինչ պիտի անես, որպեսզի նա անվնաս վերադառնա...»:

Այսպիսով՝ հույսի մի ակունք էլ ցամաքեց, և գուցե՝ վերջինը: Ի՞նչ մնաց հիմա, ի՞նչ կարող է անել: Հայրը գոնե մի բան ձեռնարկե՞լ է, գրե՞լ է իր ընկերներին... Իսկ Յոհա՞նը... Նույնիսկ մոռացել էր նրա գոյության մասին: Նրան գտնելն անգամ անկարելի էր, գտնելու դեպքում էլ՝ սպասելիքները չնչին: Ուրեմն՝ վե՞րջ: Թերևս, եթե չհաշվենք հրաշքը, ինչին նա հավատում էր անվերծանելի մի համոզվածությամբ՝ ճիշտ այնպես, ինչպես իրենց սիրուն, որը պիտի նրանց պահպաներ անողոք ժամանակի բոլոր հարվածներից:

* * *

Չանղըրիի եկեղեցին մենավոր կանգնած էր հայկական թաղի կենտրոնում: Լքյալ տներից առայժմ մի քանիսն էին բնակեցված թուր-

քերով: Մյուսները մնում էին թալանված ու դատարկ: Հայկական թաղն այստեղ չհրդեհվեց: Սակայն չէին շտապում հաստատվելու գյավուրների մաքուր և քարաշեն կառույցներում: Եկեղեցին էլ այս ուրվական թաղի մեջ մնացել էր կատարելապես անվնաս, անգամ դուռը չէին խորտակել և ոչինչ չէին պղծել: Միայն մի քանի թուրք լամուկներ էին պտտվում շուրջը և հետաքրքրված նայում առավոտյան ծեսին հավաքվող աքսորական հայերին:

Ահավոր մի երկյուղածությամբ էին մոտենում հայերն այս համեստ շինությանը: Ասես Հռոմի առաջին քրիստոնյաները լինեին, որ թաքուն եկել էին՝ իրենց հավատակիցներին հաղորդակցվելու: Այդ յոթանասուն հոգու մեջ կային մարդիկ, որ ամբողջ կյանքում ջերմեռանդ քրիստոնյայի պես կանոնավոր հաճախել էին եկեղեցի, որոնց հոգիները ձևավորվել էին հավատի գրկում. կային մարդիկ, որոնց համար կրոնական ծեսերն արմատացած սովորույթ էին դարձել, անխախտ ավանդություն. անում էին այն, ինչ ստացել էին նախնիներից, և այդպես անփոփոխ պիտի ժառանգեին եկող սերունդներին: Վերջապես մտավորականներ կային, որոնց համար կրոնը գիտակցված, տրամաբանական մի երևույթ էր, ազգային ինքնության կարևոր մասը, որի հանդեպ ավելի բանական, քան ցգացական վերաբերմունք ունեին (չնայած նրանցից մի քանիսը համոզված աթեիստներ էին): Սակայն այսօր բոլորը գալիս էին՝ միևնույն զգացումով համակված: Գալիս էին՝ արդեն հոգեբանորեն նախապատրաստված: Նրանք վրդովված էին և խնդրում էին, որ հոգևորականները մեկ առ մեկ խոստովանեցնեն բոլորին և ետ պահեն մահմեդական դառնալու ցանկությունից:

Արարողությունն իսկապես անսովոր եղավ: Կարճեցված ծեսից հետո վարդապետը դիմեց հավաքվածներին: Մթնոլորտն արդեն էլեկտրականացած էր, և քարոզչի յուրաքանչյուր խոսքն անդրադարձ էր գտնում խռովյալ հոգիներում: Վարդապետն ասաց, որ դաժան ճակատագիրը ևս մեկ անգամ փորձության առջև է կանգնեցնում, թե որքանո՛վ ենք հավատարիմ նախնիներից ժառանգություն ստացած մեր հավատին: Այս պայքարը ծանոթ է մեզ վաղուց, և ամեն անգամ մեր պատասխանը եղել է նույնը. մեր սուրբ հավատը մեզ համար վեր է ամեն ինչից՝ հրաժարվել նրանից, նշանակում է կորցնել ամեն ինչ... «Հիշեցե՛ք Ոսկյանների օրինակը,- ասաց վարդապետը,- Գայանյան կույսերին, Վարդանանց... Նրանք բոլորն առանց վարանելու գերադասեցին մահ իմացյալը...»: Ուրիշ օրինակներ էլ բերեց հայոց պատմությունից, խոսեց հատկապես մեր ցեղին հատուկ ոգու ամրության մասին և վերջացրեց՝ համոզվածություն հայտնելով, որ այս փորձությանն էլ կկարողանանք դիմագրավել:

Վարդապետը խոսեց որպես հոգևորական: Գուցե ուրիշ կերպ չէր կարող: Ներկաներից մի քանիսի այտերն ի վար արցունքներ էին գլոր-

վում: Հոգևորականի խոսքերն, այսպես թե այնպես, հիշեցրին գեհենի սարսափները, կրոնը, որն իր բազմաչարչար նահատակներով ավելի շատ մահվան գաղափարն է վկայակոչում, քան կյանքի: Վարդապետի քարոզը հասել էր նրանց հոգու խորքերը ոչ այնքան բուն ասելիքի, առանձին բառերի որոշակի իմաստով, որքան եկեղեցու, խորանի տեսքով, սքեմ հագած հոգևորականի ներկայությամբ, որը եթե անգամ լուռ կանգներ նրանց առջև այդ հանդիսավոր կիսախավարի մեջ, ապա գուցե դարձյալ միևնույն սրբազան սարսուռն ու խորհրդավոր պատկառանքն առաջացներ: Բավական էր արդյոք այդքանը, որպեսզի կարողանային գլուխը բարձր դիմագրավել մոտալուտ արհավիրքներին. չէ՞ որ նրանք հիմա կանգնել էին գլխիկոր, լուռ, ասես դատապարտվածներ լինեին, ասես արդեն հաշտվել էին ամեն ինչի հետ:

Աներևույթ մի ձեռք Ռուբենին ստիպեց բարձրանալ բեմ.

– Եղբայրնե՛ր, մեկ ամսից ավելի է, ինչ այստեղ եմ և գրեթե ամեն օր նույն հարցն եմ լսում. ի՞նչ է լինելու մեզ հետ, հայ ազգի հետ, Հայաստանի հետ... Իրավացի եք, որ այդպիսի հարց եք տալիս, քանզի երբեք մեր գոյությունն այսպիսի արյունոտ հարցականի տակ չի եղել, և երբեք այսպես զրկված չենք եղել դիմադրելու հնարավորությունից. թվում է, թե լիովին հանձնված ենք բախտի քմահաճույքին...

Դուք հարցնում եք, թե ի՞նչ է լինելու Հայաստանի ապագան, այդ հարցը տալիս եմ նաև ես և տեսնում, որ այդ ապագան կախված է ինձնից, այստեղ կանգնած յուրաքանչյուր հայից... Այդ ապագան գոյություն կունենա այնքանով, որքանով մենք ճիշտ վճիռ կընդունենք: Հիմա դուք կասեք, թե ինչպե՞ս պիտի կարողանամ ես՝ չնչին անհատս, ապագա կերտել իմ ազգի համար: Հավատացե՛ք, կարող եմ, և դո՛ւք էլ կարող եք, եթե «ո՛չ» ասենք թուրքին... Դարեր շարունակ, կաթիլ առ կաթիլ, թուրքը խլել է մեզնից մեր բոլոր իրավունքները, և մենք լուռ հանդուրժել ենք՝ մտածելով, որ կարևորն ապրելն է, մեր գոյությունը պահպանելը: Ոչի՛նչ, որ թուրքը մեզ ստորացնում է ամեն օր, ոչի՛նչ, որ բռնաբարում է մեր բոլոր իրավունքները, ոչի՛նչ, որ կողոպտում է մեզ, ոչի՛նչ. միայն թե ապրե՛նք... Թեկուզ՝ վիզը ծուռ, բայց ապրենք, շարունակենք գոյություն քարշ տալ... Սակայն թուրքը դարձյալ դժգոհ է, թուրքն առևտուր է անում. ուզո՞ւմ եք պահպանել այդ ստրկացված մարմինը, ուրեմն՝ վերջին զիջո՛ւմը կատարեք՝ ընդունե՛ք մեր հավատը:

Մենք հարցնում ենք, թե ի՞նչ է լինելու Հայաստանի հետ... Հայաստանը ապրելու է, մենք այս վերքերն էլ կբուժենք, իսկ թուրքը պիտի պատասխան տա իր ոճիրների համար վաղ թե ուշ. ես համոզված եմ... Հայաստանը կհաղթի, կապրի ա՛յն հերոսների շնորհիվ, ովքեր դիմադրեցին թուրքին, Հայաստանը կապրի նրա՛նց շնորհիվ, ովքեր կարողացան առանց ստորանալու փրկել իրենց մարմինն ու հոգին, և վերջապես, Հայաստանը կապրի նաև, եթե մերժենք թուրքի անարգ առա-

ջարկները... Մեր մաքուր հոգիների հիշատակն ավելի ամուր հենարան կլինի մեր երկրի համար, քան մեր պղծված և իսլամացած մարմինները...

Խոսելու հետ մեկ առ մեկ նայում էր ներկաների դեմքներին, նրանց աչքերի մեջ... Երբ ավարտելուց հետո իջավ ու միացավ բոլորին, հիշեց, որ որոշել էր մինչև արարողությունը խոսել Հակոբիկի հետ: Հայացքով փնտրեց, բայց չգտավ: Հարցրեց մի քանիսին. նրան չէին տեսել երեկվանից ի վեր:

* * *

Ամենից շատ անհանգիստ էր նրա՛ համար: Այդ անփորձ և զգայուն պատանին կարող է կոտրվել մահվան սարսափի առջև: Որոշեց առանց հապաղելու՝ գնալ-փնտրել նրան: Հայկական թաղից իջավ գետեզերք և հեռվից տեսավ՝ Հաջի բաբայի սրճարանից քիչ հեռու՝ բարդիների տակ նստած: Պատանին նկատեց իր մոտենալը, բայց ցուցադրաբար հայացքը շրջեց:

– Հակոբի՛կ,– կանչեց հեռվից:

Ոչ մի պատասխան: Անգամ գլուխը չդարձրեց:

– Հակոբի՛կ, խոսելիք ունեմ հետդ:

Արդեն երկու քայլի վրա էր նրանից:

– Չմոտենա՛ք ինձ, գիտեմ, թե ի՛նչ պիտի ասեք:

Նրա դեմքը սոսկալի էր՝ աչքերի տակն ուռած, ճակատին կնճիռներ էին հայտնվել, բերանը պրկված էր, ասես պատրաստ՝ հենց հիմա սոսկալի բաներ ասելու: Բայց ամենաահավորը աչքերի արտահայտությունն էր. խելահեղ մի բան կար, խենթության մատնիչ կանխանշաններ, վտանգավոր վճռականություն...

– Այդպես մի՛ նայեք և չփորձե՛ք գլխիս քարոզներ կարդալ, գիտեմ, գիտեմ, արդեն լսեցի...

Ե՞րբ լսեցիր, Հակոբի՛կ, այդ ե՞րբ եմ քարոզներ կարդացել:

– Քիչ առաջ, եկեղեցում:

– Դու այնտե՞ղ էիր,– զարմացավ Ռուբենը:– Հապա ինչո՞ւ քեզ չտեսա:

– Որովհետև ներս չմտա:

– Ինչո՞ւ, ո՞վ խանգարեց:

– Իմ խիղճը:

Ռուբենը ցնցվեց: Մոտեցավ, փորձեց գրկել պատանուն: Վերջինս ետ քաշվեց:

– Չդիպչե՛ք ինձ, ես արժանի չեմ:

– Լսի՛ր, եղբա՛յրս, Հակոբի՛կ, դա սքանչելի է, որ քո խիղճը խոսում է, որ քեզ մեղավոր ես զգում, նշանակում է՝ ազնվագույն հոգի ունես...

– Ո՛չ, իմ հոգին արդեն ապականված է:

– Այդպես մի՛ ասա, Հակոբի՛կ, ես քեզ վաղուց գիտեմ և միշտ հիացել

եմ քո ուշիմությամբ, քո ազնվությամբ... Դու ես մեր ապագան, և այդ ապագան հոյակապ է լինելու:

Պատանին լուռ էր: Նրանից օղու հոտ էր գալիս: Ըստ երևույթին՝ երեկվանից էր խմում: Ամբողջ մարմնում նյարդային դող կար, աչքերի խելահեղ արտահայտությունն էլ մատնում էր, որ հաշիշ է ծխել:

Ուսերից բռնեց և աչքերի մեջ նայելով՝ հարցրեց.

– Ինչո՞ւ ես ասում, թե հոգիդ ապականված է... Ինչո՞ւ չմտար եկեղեցի, ի՞նչ է պատահել, ասա՛ տեսնեմ... Արդե՞ն...

– Դեռ ոչ,– գլուխը կախելով՝ պատասխանեց Հակոբիկը:

– Ուրեմն՝ ի՞նչ կարիք կա խուսափելու մեզնից՝ քո հավատակիցներից:

– Վաղն ինձ պիտի թլպատեն:

– Վաղը, բայց ոչ հիմա,– գոռաց Ռուբենը և օղու շիշը ձեռքից խլելով՝ գցեց գետը:

– Վաղը թե հիմա, միևնույն է,– դառը ժպիտով ասաց Հակոբիկը:

– Ո՛չ, միևնույնը չէ, քո հոգին հիմա տագնապների մեջ է, անդունդի եզրին ես, բայց միջոց կա ետ քաշվելու, փրկվելու. ահա՛, բռնի՛ր իմ ձեռքը, հետևի՛ր ինձ և դու կփրկվես:

Հակոբիկը խելագար մի քրքիջ արձակեց.

– Բանաստեղծ, կղերականի նման եք խոսում, մնում է՝ սքեմ հագնեք:

– Եթե պետք է, կհագնեմ, միայն կարողանամ քեզ ետ պահել:

– Արդեն ուշ է, սիրելի՛ բանաստեղծ, շա՜տ ուշ... «Վարդե՛րը մեռան, վարդե՛րը մեռան... Կ'երթամ տարաժամ կ'երթամ, ու կու լամ...»[1]:

– Երբեք ուշ չէ, քանի հոգիդ դեռ չես աղտոտել:

– Ուշ է, քանզի հոգիս արդեն հոժար է, մարմինս էլ՝ պատրաստ...

Ռուբենը զայրացած բռնեց նրա թևը.

– Ես քեզ չեմ թողնի որևէ տեղ գնաս, կմնաս կողքիս այնքան, որքան պետք կլինի, որ այդ դավաճան քամիները գլխիցդ դուրս գան:

Հակոբիկը կտրուկ շարժումով թևն ազատեց, երկու քայլ հեռացավ և ատելավառ հայացքով նայեց Ռուբենին:

– Սրբոց դասո՞ւմ եք ուզում գրանցվել, տի՛ար, նահատակաց անթիվ ու անհամար շարքի՞ն եք ուզում ավելացնել Ձեր անունը, քերթողի դափնիներն ուզում եք արյունո՞վ ոռոգել... Օ՜ն, անդր[2], բանաստեղծ, սակայն ես չեմ ուզում իմ սուղ արյունը հայոց արյան գետերին ավելացնել... Ես ապրել եմ ուզում, բանաստեղծ...

– Հակոբի՛կ, սիրելի՛ս, դու չես կարողանա այդպես ապրել, և դու գիտես, որ ես ճիշտ եմ, թե ոչ այդպես դառնացած չէիր խոսի. դու հրաշա-

---

[1] Ռուբեն Սևակի բանաստեղծությունն է *«Կարմիր գիրքը»* ժողովածուից:

[2] Օ՜ն, անդր – դե՛, առա՛ջ (գրաբար):

լի գիտես, որ մահ ես փնտրում, որպեսզի կյանքդ փրկես, սակայն քո սիրտը քեզնից ավելի ազնիվ է, և նա մատնում է քո ահավոր տագնապը, օգնում, որպեսզի ետ կանգնես սոսկալի վճռից:

– Լսե՛ք, սիրելի՛ բանաստեղծ, ես չեմ ուզում Չանղրրիի հայերի ճակատագիրը կիսել... Պարզամիտ շինականները կարծում էին՝ մեծ հերոսություն են անում, չգիտեին, որ նույն օրը՝ մի քանի ժամ հետո, էշ նահատակ են լինելու:

– Գիտեին, Հակոբի՛կ, գիտեին, այդ բարի և ազնիվ շինականները, և դա է նրանց մեծությունը:

– Ո՛չ, չգիտեին, նրանք համոզված էին, որ իրենց ոսկիներով պիտի փրկվեին, և Դուք էլ կուզեիք փրկվել, բոլորդ կուզեիք, սակայն ձեզ չեն առաջարկել. եթե առաջարկեին, առանց վարանելու՝ Մուհամմեդի հավատին կփարեիք:

– Դու գիտես, որ սխալ ես, Հակոբի՛կ, ինքդ քեզ խաբում ես, ուրիշներին մեղադրում, հոգուդ վրա մեղք վերցնում, որպեսզի հեշտացնես քո վճիռը, ուրեմն՝ գիտես, հասկանում ես, որ աններելի սխալ ես գործում: Արի՛ ինձ հետ, այսօր պիտի իմ կողքից չհեռանաս... Այսօր, վաղը, մնացած բոլոր օրերը:

Պատանին կտրուկ շրջվեց և քայլեց փողոցն ի վեր:

– Հակոբի՛կ:

– Ես այլևս Հակոբիկ չեմ, այլ Ահմեդ, Իսմայիլ, Ալի...

Ռուբենն արդեն վազում էր ետևից:

– Սպասե՛ք, չմոտենա՛ք... Մի հարց ունեմ Ձեզ տալու. երբ անունս դառնա Ալի, Իսմայիլ կամ Իբրահիմ, ինչպե՞ս պիտի կարողանամ կարդալ Ձեր բանաստեղծությունները, որ շատ եմ սիրում...

Ասաց, և մինչև Ռուբենն ուշքի կգար, անհետացավ ծուռումուռ փողոցներում:

* * *

– Վերջապե՛ս, վերջապե՛ս մի մարդկային պատասխան ստացավ: Այս քարուքանդվող աշխարհում գոնե մի բան մնացել է անխաթար՝ տղամարդկային ազնիվ, անշահախնդիր ընկերությունը: Ռայնհարդտի նամակը հակիրճ էր ու գործնական: Երևում էր, որ այդ մարդն ուզում է օգնել և անում է իր կարելին.

«Նամակդ ուշացումով կարդացի: Երկար ժամանակ բացակա էի: Երեկ վերադարձա և արդեն քայլեր եմ ձեռնարկել՝ փեսայիդ փրկելու համար.

1. Խոսել եմ այստեղի հոսպիտալի տնօրենի հետ, որպեսզի հնարավորին չափ շուտ փեսայիդ կանչեն Էրֆուրտ:

2. Հեռագրել եմ Բեռլին՝ նախարարություն և գլխավոր շտաբ, գենե-

ռալներ V.- ին և F.- ին: Անկարելի է, որ նրանք մերժեն:

3. Անձամբ դիմել եմ Ֆոն դեր Գոլցին և Ֆոն Սանդերսին: Նրանք էլ չեն կարող ինձ մերժել:

Անհավատալի բաներ եմ լսում Թուրքիայի մասին: Թուրքերն ամեն ինչով դեմ են գերմանական ոգուն. ճակատագրական սխալ էր դրանց հետ դաշնակցելը, նրանք մեզ վրա շատ թանկ են նստում բոլոր առումներով»:

Ստորագրությունից հետո մի հետգրություն կար, որ արտասվելու չափ հուզիչ էր. «Հիշո՞ւմ ես այն օրը, երբ առաջին նամակն էր եկել Լոզանից, երբ ինձ մոտ նստած՝ կոնյակ էինք խմում: Ինչպե՜ս էինք մտահոգված երկուսս. ո՞վ կմտածեր, թե ինչե՞ր ենք տեսնելու այս աշխարհի երեսին... Եվ դեռ ինչե՞ր են սպասվում»:

* * *

Առավոտ կանուխ դուռը թակեցին ճանկռելու պես: Բացեց և մի երեխա տեսավ շեմին՝ ձեռքին երկծալ մի թուղթ.

- Դոկտո՛ր էֆենդի, Ահմադը խնդրեց հանձնել Ձեզ:

Նախորդ օրվա քարկոծումից հետո անսովոր էր տեսնել մի թուրք երեխա, որը կարող էր լինել բարեկիրթ: Ավելին, երբ երեխային մի քանի մանրադրամ առաջարկեց, վերջինս հրաժարվեց վերցնել: Բայց զարմանալին միայն դա չէր. Ահմադը նրան դիմում էր հայերեն. «Մեծարգո՛ Տիար, Պաշտելի Բանաստեղծ, գիտեմ, որ ներում չկա այն ցավալի օրվա անարժան պահվածքիս համար, հուսամ՝ գոնե կհասկանաք հոգուս անագորույն խռովքը, որ մթագնել էր իմ տկար բանականությունը և մղել զազրելի բաներ ասելուն... Մնաք բարո՛վ, սիրելի՛ ուսուցիչներ, կամքս թույլ եղավ, սակայն հոգիս պահեցի անաղարտ. հուսամ Տերը կգնահատի երկնքում, բայց ներում կգտնի՞... Ձերդ՝ անարժան Հակոբոս»:

Տակը թուրքերեն ավելացրած էր. «Ի գիտություն տեղական իշխանությունների. ընդունածս վճռի համար խնդրում եմ ոչ մեկին չմեղադրել, միակ պատասխանատուն ես եմ, քանզի ես եմ մարմնիս տերը: Ահմադ»:

Ռուբենը, որ կարդում էր կիսաբաց դռան առջև, նետվեց փողոց՝ հուսալով, որ երեխան շատ հեռացած չի լինի: Եվ, իսկապես, թաղի իր հասակակիցների հետ կանգնած զրուցում էր:

- Այս նամակը քեզ ե՞րբ է տվել:

- Երեկ երեկոյան, դոկտո՛ր էֆենդի, մեր տանը հյուր էր:

Արդեն երեք օր էր՝ Չանղըրիի թուրքերը հանդիսավորապես նշում էին Հակոբիկի թլպատումը: Գավառական թմբիրի, կեղտի ու սնահավատ ատելության մեջ թաղված քաղաքում կարևոր իրադարձություն էր տեղի ունեցել. գյավուրն ընդունել էր իրենց կրոնը: Նրանք շատ վիրավորված էին, որ իրենց հետ տարիներով ապրած հայերից ոչ մեկը չուզեց Մու-

համմեդի ուղղափառ հավատն ընդունել: «Ապուշ են այդ գյավուրները, անարժան խոզեր, էսքան ապրեցին մեր հողի վրա, մեր հաց ու ջուրը վայելեցին, վերջը մեր հավատը վիրավորեցին... Թո՛ւ, խնզրներ[1]...»:

Հիմա հրաշալի առիթ էր ստեղծվել՝ ռևանշ վերցնելու: Հյուրասիրություններ էին անում, նորադարձին տնից տուն տանում, յուղալի և ծանրամարս թուրքական կերակուրների հետ օղի խմում առատորեն, չնայած «միակ ուղղափառ հավատը» խստիվ արգելում էր ոգելից խմիչքը: Հակոբիկ-Ահմադին, որպես դավանափոխության պարգև, հայերի դատարկված տներից մեկն էին նվիրել և նշանել տեղի աղաներից մեկի աղջկա հետ: Շուտով պիտի հարսանիքը լիներ:

Ռուբեն Սևակը Լոզանում

. . . . . .

– Շտապենք այնտեղ,– ասաց Վարուժանը.– հնարավոր է՝ դեռ չի իրագործել իր սոսկալի մտադրությունը:

– Անշուշտ, պետք է շտապել, չնայած շատ հույս չունեմ, թե կփրկենք,– գլուխը տխրագին ճոճելով՝ ասաց Ռուբենը:

– Սակայն բոլոր դեպքերում պիտի գնանք այնտեղ,– նկատեց Զարեվանդը:

– Կգնանք անպայման, բայց մինչ այդ պետք է խոսել Տիրան Քելեկյանի հետ:

Վերջինս խորհուրդ տվեց անպայման հայտնել իշխանություններին և ոստիկանի ուղեկցությամբ գնալ տղայի մոտ:

Տան տեղը ոչ ոք չգիտեր: Ոստիկանի առաջնորդությամբ մտան ներս և շվարած կանգնեցին: Ոչ ոք չկար:

– Հակոբի՛կ,– կանչեց հայերից մեկը:

Ի պատասխան՝ կատվի աղիողորմ մլավոց լսեցին: Բարձրացան վերև ու դեմ առան ննջարանի փակ դռանը: Փորձեցին բացել, բայց ապարդյուն: Ներսից փակված էր: Կատվի սաստիկ մլավոցին ավելացավ դռան ճանկռոցը:

---

[1] **խնզր** – թուրքերեն՝ խոզ:

Ոստիկանը հրացանի խզակոթով[1] զարկեց փականին և շրխկոցով բացեց: Կատուն դուրս ցատկեց և սրընթաց վազեց ներքև: Հակոբիկի բոբիկ ոտքերը երևացին, որ օդի մեջ թեթևակի երերում էին՝ հանց առաստաղից կախված լվացք: Ոտքերի տակ սեղան կար, կողքը՝ շրջված աթոռ:

Թուրք ոստիկանն աթոռը դրեց սեղանին և, հարևանների օգնությամբ դին իջեցնելով, պառկեցրեց խառնշտկված մահճակալի վրա: Հայերը փորձեցին մոտենալ, բայց հանդիպեցին ոստիկանի չար հայացքին:

– Հեռացեք այստեղից,– հրամայեց նա կոպտորեն:– Այս մեռելը ձերը չէ. գյավուրն ինչո՞ւ պիտի սգա մահմեդականի մահը:

* * *

Արաբաջիբաշի Իսմայիլը քաղաքի փաստացի տեր-տիրականն էր: Ոչ մի գայմագամ[2], ոչ մի մյութեսարիֆ[3] կամ վալի[4] չէր համարձակվի նրա դեմ որևէ քայլ ձեռնարկել: Լավագույն դեպքում պետության այդ ներկայացուցիչը կխայտառակվեր և ստիպված կլիներ հրաժարական տալ, իսկ վատագույն դեպքում նրան կգտնեին իր անկողնում մորթված: Բոլորը կիմանային, թե դա ո՛ւմ ձեռքի գործն է, սակայն ոչ ոք չէր համարձակվի օրենքի անունից նրան պատասխանատվության կանչել: Չանղըրի եկող պետական քիչ թե շատ բարձր պաշտոնյան աշխատում էր նախևառաջ իր հարաբերությունները լավացնել Արաբաջիբաշիի հետ, առնվազն՝ գոնե չեզոք մնալ և ոչ մի գործ չունենալ: Յուրատեսակ լուռ համաձայնագիր էր կնքվում. պաշտոնյան աչք էր փակում նրա ավազակությունների վրա, վերջինս էլ աշխատում էր չվարկաբեկել տեղական իշխանությունների հեղինակությունը:

Դատելով մասնագիտությունը նշող ազգանունից՝ Արաբաջիբաշին կառքերի և սայլերի կիսապաշտոնական համքարության գլխավորն էր: Այսինքն՝ քիչ է ասել, թե գլխավորն էր: Չանղըրիում կամ մերձակայքում որևէ անիվ չէր կարող դառնալ՝ առանց նրա գիտության և համաձայնության: Միայն այս գործը բավական էր, որպեսզի պատկառելի շահույթ ունենար: Սակայն գլխավոր սայլապանի օրինական պաշտոնը հրաշալի ծխածածկույթ էր նրա հիմնական գործունեության համար, որը լայն թափ առավ պատերազմի առաջին իսկ օրերից. դա ավազակությունն էր և հայերի ոչնչացումը: Նա «Թաշքիլասի մախսուսայի» պարագլուխներից մեկն էր և իր հրոսակախումբն ուներ, որի ուղղակի պարտականությունն էր բնակավայրերից հեռու, ճանապարհների վրա

---

[1] **խզակոթ** – հրացանի լայն, հաստ կոթը:

[2] **գայմագամ** – շրջանի, կազայի կառավարիչ:

[3] **մյութեսարիֆ** – գավառապետ, կառավարիչ:

[4] **վալի** – նահանգի քաղաքացիական գործերի կառավարիչ Թուրքիայում:

կոտորել տեղահանվող հայերին՝ անշուշտ, նրանց ունեցվածքի, կանանց ու երեխաների լիիրավ տերը դառնալու արտոնություններով: Սակայն միայն հայերով չէին բավարարվում. ժամանակ առ ժամանակ կողոպտում էին թուրքերին և նույնիսկ դաշնակից երկրների քաղաքացիներին: Նրա ավազակները հսկում էին Էնկյուրիից Կաստեմոնու ընկած ճանապարհները: Եվ Աստված մի արասցե, որ այդ ավազակներից որևէ մեկի մտքով անցներ գողոնը թաքցնել: Արաբաջիբաշին անձամբ իր կեռ դաշույնով նրա վիզը կկտրեր:

Սակայն այս գազանը մի թուլություն ուներ՝ իր տասնութամյա աղջիկը՝ Այշեն, որի ներկայությամբ իսպառ անհետանում էին նրա քարանձավային բնազդները, և անգութ ոճրագործը դառնում էր բամբակի պես փափուկ, աղջկա բոլոր քմայքները հանդուրժող, նույնիսկ խրախուսող գորովագութ մի հայր:

Այշեն արևելյան գեղեցկության տիպական մարմնավորում էր: Հայրը նայում էր նրան և հիացմունքով ասում. «Սուլթանի, փաշայի կին պիտի դառնաս, աղջի՛կս, ալլահի պարգևն ես դու»:

* * *

Հազիվ կարողացավ Արաբաջիբաշի Իսմայիլին համոզել, որպեսզի թույլ տա մի կես ժամով գնա մյութեսարիֆի մոտ: Նրա գոռգոռոցներն ու սպառնալիքները հնչում էին փողոցով մեկ: Ոստիկանին կոպտորեն դուրս հրեց և ասաց. «Դոկտորը մինչև իմ աղջկան չբուժի, էս տնից ոչ մի տեղ չի գնա, մյուս հիվանդները թող սպասեն»: «Բուժելու համար չի կանչում, հետը խոսելիք ունի»,- փորձում էր հասկացնել ոստիկանը: Բազմաթիվ թախանձանքներից ու երդումներից հետո վերջապես կարողացավ համոզել ու խոստանալ, որ այնտեղ երկար չի տևի:

Մյութեսարիֆը Ռուբենի առջև երկու հեռագիր դրեց՝ երկուսն էլ Թալեաթի ստորագրությամբ: Առաջինը պահանջում էր հայտնել Չանղըրիում մնացած աքսորական հայերի քանակը, երկրորդը կարգադրում էր նրանց փոքր խմբերով անհապաղ ուղարկել Այաշ:

- Ի՞նչ է նշանակում սա,- հարցրեց Ռուբենը:

- Սա նշանակում է, որ գործերը վատ են, որ դրությունը լրջանում է:

Մյութեսարիֆը, իր զրուցակցի հարցական հայացքը տեսնելով, շարունակեց.

- Առաջին հեռագիրը կարծես անմեղ մի հարց է. հայտնել, թե քանի՛ հայ է մնացել Չանղըրիում:

- Իսկ ինչո՞ւ է «մնացել»:

- Այո՛, Ձեր հարցը շատ ճիշտ է, որովհետև Թալեաթի տրամաբանությամբ այստեղ ոչ մի հայ չպիտի մնա,- բացատրեց մյութեսարիֆը:

- Իսկ որտե՞ղ պիտի մնան:

– Ոչ մի տեղ: Այստեղ գալուս առաջին օրն իսկ ճիշտ այդպիսի հեռագիր ստացա և տեղնուտեղը պատասխանեցի: Իհարկե, միամիտ ձևանալով, թե չեմ հասկանում Թալեաթի հարցի բուն իմաստը:

– Ո՞րն է այդ բուն իմաստը:

– Բուն իմաստը հետևյալն է. պակասեցրու՛ այդ թիվը. և որպեսզի ես՝ անհասկացողս, հասկանամ նրա ուզածը, մեկ ուրիշ հեռագիր է ուղարկել՝ պահանջելով, որ ձեզ փոքր խմբերով ուղարկեմ Այաշ:

– Իսկ ինչո՞ւ ուղղակի չի պահանջում միանգամից, հենց այստեղ ոչնչացնել. չէ՞ որ Չանղըրիի յոթ հարյուր հայերին մեկ օրում ոչնչացրին, յոթանասունն ի՞նչ է նրա համար:

– Թալեաթը տեղահանության սկզբում ուղղակի հրահանգներ էր տալիս՝ ոչնչացնե՛լ, սպանե՛լ, չխնայե՛լ ոչ մեկին, իսկ հիմա ուրիշ կերպ է խոսում, մի բան է ասում, ուրիշ բան է պահանջում:

– Ինչո՞վ բացատրել այդ փոփոխությունը:

– Նախ՝ բոլոր հայերին տեղահանեց, գցեց քրդերի ու ավազակների ձեռքը՝ չասած ճանապարհի դժվարությունների, սովի և հիվանդությունների մասին. այնպես որ ուղղակի հրահանգների կարիք չկա, մահվան մեքենան անխափան գործում է:

– Կարծում եք՝ միայն դա՞ է պատճառը,– հարցրեց Ռուբենը:

– Իհա՛րկե ոչ: Թալեաթը, հավանաբար, չէր պատկերացնում, որ Պոլսում նստած դիվանագետները կբողոքեն: Անգամ դաշնակից երկրների դեսպաններն են բողոքում. նրանց միջնորդությամբ բազմաթիվ հայեր են փրկվել:

– Եվ վերջապես,– ավելացրեց Ռուբենը,– գավառներում ազնիվ պաշտոնյաներ եղան, որոնք հրաժարվեցին Թալեաթի հրամանները կատարելուց, ինչպես՝ Դուք:

– Թերևս, բայց սա նաև ուրիշ բան է նշանակում,– շարունակեց մյութեսարիֆը.– Թալեաթն զգուշանում է ուղղակի հետքեր թողնելուց:

– Ուրեմն՝ վախենում է ապագա դատաստանից:

– Այո՛, վաղ թե ուշ դատաստան պիտի լինի,– համաձայնեց մյութեսարիֆը:– Բայց ի՞նչ օգուտ. զոհվածներին ետ չես բերի:

– Սակայն նոր զոհեր չեն լինի:

– Իրավացի ես, դոկտո՛ր, մտածենք ողջ մնացածներին փրկելու մասին: Հենց դրա համար եմ Ձեզ կանչել: Ջեմալ Օղուզն առավոտյան այստեղ էր: Սովորաբար բոլորին կանչում է իր մոտ, միայն ես եմ, որ չեմ ենթարկվում նրա կամայականությանը, որովհետև իշխանության ներկայացուցիչն այստեղ ես եմ, իսկ նա ընդամենը մի հանցավոր կուսակցության անդամ է... Պահանջում էր, որ վաղվանից իսկ հինգ-վեց հոգիանոց խմբերով ուղարկենք Այաշ, և պնդում, որ առաջին խմբի մեջ անպայման լինեք Դուք:

– Իսկ ինչո՞ւ հատկապես ես:

– Այդ մարդը մի առանձնահատուկ ատելություն ունի Ձեր հանդեպ: Ասում է, թե Ձեր ներկայությունը չափազանց վնասակար է տեղի բնակչության համար:

Ռուբենը ծիծաղեց.

– Որովհետև անվճար բուժում եմ այդ բնակչությանը, որը տարիներով բժշկի երես չի տեսնում:

– Մինչև հիմա չհասկացա՞ք իթթիհաթականների տրամաբանությունը: Նրանք ոչ միայն հայերին են ոչնչացնում, այլև այն ամենը, ինչ օգտակար է մեր երկրին:

– Եվ կարողացա՞ք համոզել:

– Կտրականապես մերժեցի, որ Ձեր անունը լինի որևէ խմբում, ավելին՝ հեռագիր ուղարկեցի Թալեաթին, գրեցի, որ Ձեր ներկայությունն այստեղ խիստ անհրաժեշտ է, որ Դուք մեծ օգնություն եք ցուցաբերում բնակչությանը, ուստի ցանկալի է, որ մինչև պատերազմի ավարտը մնաք այստեղ:

– Սակայն, ըստ Ձեր ասածի, եթե օգտակար եմ երկրի համար, նշանակում է ինձ առաջին հերթին պիտի ոչնչացնեն,– ծիծաղեց Ռուբենը:

– Ես գիտեմ, թե ի՞նչ եմ անում,– պատասխանեց մյութեսարիֆը:– Ես համոզված եմ, որ Օղուզը հիմա մի զրպարտագիր է շարադրում Ձեր դեմ, և չեմ զարմանա, որ վաղը Թալեաթի ստորագրությամբ մի հեռագիր ստանամ անձնապես Ձեր վերաբերյալ... Սակայն դարձյալ պիտի աշխատեմ հնարավորին չափ հետաձգել հրամանի կատարումը:

– Հետաձգել որքա՞ն:

– Մինչև որ Ձեր ընկերները կարողանան Ձեզ փրկել այստեղից:

– Կինս գրում է, որ արվում է ամեն ինչ,– մտածկոտ պատասխանեց Ռուբենը:– Բայց, ինչպես տեսնում եք, առայժմ այստեղ եմ:

– Այսօր իսկ հեռագրե՛ք, որ ավելի եռանդուն լինեն, բոլոր միջոցները գործադրեն, իսկ ես ամեն ինչ կանեմ, որպեսզի վտանգը Ձեզնից հեռու մնա:

* * *

Արաբաջիբաշին աղջկա առողջացման առիթով հրավիրել էր քաղաքի մեծամեծներին: Ջեմալ Օղուզին էլ էր կանչել: Օգոստոսյան զով երեկո էր: Պարտեզում սեղան էին բացել: Չնայած հոջայի ներկայությանը՝ օղին ու գինին հոսում էին առատորեն:

Ռուբենն ամեն ինչ արեց, որ խուսափի այդ հյուրասիրությունից: Ոչ մի կերպ չէր պատկերացնում իրեն այդ սեղանի մոտ: Ճիշտ է, անցած օրերի ընթացքում ստիպված էր հաշտվել Արաբաջիբաշիի մշտական ներկայությանը, սակայն Օղուզի և Նուրհանէդդինի հետ մի սեղան նստե՞լը... Արաբաջիբաշին չէր համոզվում. «Լուրջ խոսելիք ունեմ դրանց հետ, դու պիտի անպայման ներկա լինես: Ռուբենը կռահում էր, թե ինչի՞ն է վերաբերում «լուրջ խոսելիքը»: Դժնի արտաքինի տակ դի-

վանագետի հատկություններ ուներ: Նա միանգամից չանցավ բուն նյութին, այլ օղու հերթական շիշը դատարկելուց հետո միայն.

– Մեր հոգատար կառավարությունը գիտեր, որ Չանղըրիում բժիշկ չկա, այդ պատճառով էլ Պոլսի ամենալավ դոկտորին ուղարկեց այստեղ... Հիմար կլինենք, եթե թողնենք հետ գնա, ճիշտ չեմ ասո՞ւմ, հոջա՛:

– Լավ բժիշկը մեծ բախտավորություն է,– համաձայնվեց հոջան:– Ալլահը մեզ պարգևել է այդ բախտը, մնում է խելոք լինենք և մեր ձեռքից բաց չթողնենք:

– Կինս և հայրս երբ հիվանդանում էին,– ասաց ոստիկանապետը,– գնում հասնում էի Էնկյուրի՝ բժիշկ Զոհրապյանի մոտ: Հիմա որ նորից հիվանդանան, չգիտեմ, թե ի՞նչ պիտի անեմ, այնպես որ մեր դոկտորին երկու ձեռքով պիտի պահենք:

– Ճիշտ էիր անում, որ գնում էիր Էնկյուրի,– նկատեց Նուրհանէդդին բեյը:– Գալեջիկում ընդամենը երկու բժիշկ կա, ինչ հիվանդությամբ գնաս դրանց մոտ, նույն դեղը կգրեն՝ մեկը՝ լուծողական, մյուսը՝ քնաբեր:

Ջեմալ Օղուզը լուռ էր: Նա երեսունհինգ տարեկան էր, մարմնի ցավերը նրան դեռ չէին դիպել լրջորեն, բացի դրանից՝ մտադիր չէր հաստատվել այս կեղտոտ գյուղաքաղաքում, և, վերջապես, խոսքը հայի մասին էր...

– Դուք ի՞նչ կասեք, Օղո՛ւզ բեյ, դոկտորը հենց Ձեր կուսակցության նվերն է մեր քաղաքին, իսկ նվերը ետ չեն առնում, չէ՞:

– Ճիշտ է, նվերը ետ չեն առնում,– դժկամությամբ համաձայնվեց Օղուզը:– Բայց պետությունն իր շահերն ունի, պատերազմի մեջ ենք, դոկտորը ռազմական բժիշկ է, վաղը կարող է պետքական լինել մեկ ուրիշ տեղում, այնպես որ...

– Ճիշտ ես ասում, Օղո՛ւզ բեյ,– ընդհատեց մյութեսարիֆը.– պետության շահն է կարևոր, բայց որպեսզի պետությունն իր շահերը պաշտպանի, մենք այստեղից պիտի ճիշտ տեղեկություն տանք: Ահա ինչո՛ւ Թալեաթին հեռագիր ուղարկեցի՝ բացատրելով, թե դոկտորի ներկայությունը որքա՛ն օգտակար է Չանղըրիի բնակչության համար, խնդրեցի, որ իրավունք տա՝ մինչև պատերազմի ավարտը մնա այստեղ: Լավ կլիներ, Օղո՛ւզ բեյ, որ այդպիսի մի հեռագիր էլ Դուք ուղարկեիք Ձեր կուսակցության գրասենյակ:

– Ես չեմ կարող իմ վերադասներին թելադրել, թե ի՞նչ պիտի անեն:

– Դուք չհասկացաք ինձ, Օղո՛ւզ բեյ, որովհետև չուզեցիք հասկանալ:

– Ես միայն մի բան եմ հասկանում. ես այստեղ եմ, որպեսզի կատարեմ իմ կուսակցության հրահանգները:

– Նույնիսկ եթե սխա՞լ լինեն,– հարցրեց մյութեսարիֆը:

– Մեր կուսակցությունը չի կարող սխալվել:

Օղուզի բթամիտ վճռականությունը պատճառ դարձավ, որ մի ճնշող լռություն հաստատվի, որը, սակայն, շտապեց խախտել հոջան.

– Ալլահը գիտի իր անելիքը, մենք էլ կանենք այնպես, ինչպես նա կամենա:

Քիչ հետո հյուրերը վեր կացան, որպեսզի հրաժեշտ տան: Ռուբենն ուզում էր միանալ նրանց, սակայն Արաբաջիբաշին խնդրեց, որ մի քիչ էլ մնա. «Խոսելու բան կա»,– ասաց նա:

Հրաժեշտը բավական երկար տևեց: Վերջապես հյուրերին ճանապարհեց, վերադարձավ, կանանց պատվիրեց, որ սուրճ բերեն, նարգիլե և հարմար տեղավորվելով՝ դիմեց Ռուբենին.

– Տեսա՞ր այդ ավազակին, լսեցի՞ր դրան:

Ռուբենը հասկացավ, թե ո՛ւմ մասին է խոսքը, բայցևայնպես հարցրեց.

– Ո՞ր ավազակին, Արաբաջիբաշի՛:

– Ջեմալ Օղուզը, էլ ո՞վ:

– Ինձ համար դա նորություն չէր:

– Հա՛, բայց ես դիտմամբ սկսեցի այդ խոսակցությունը, որովհետև բոլորն ուզում են, որ դու էստեղ մնաս՝ այդ Օղուզից բացի:– Իսկ գիտե՞ս՝ ինչո՛ւ են ուզում. որովհետև ես եմ ուզում... Ես եմ պահում դրանց, ոչ թե պետությունը, դրա համար էլ լսում են ինձ, իսկ էդ Օղուզը դեռ խամ է, դեռ չի հասկանում, թե ո՛վ եմ... Ոչի՛նչ, կիմանա, նրան էլ խելքի կբերեմ, բայց մինչ այդ պիտի մտածենք, թե քեզ ո՞նց փրկենք էդ գազանից...

Նա լռեց, հետո հայացքը Ռուբենին հառելով՝ հարցրեց.

– Լսեցի՞ր ոնց էր խոսում: Վիճակդ շատ դժվար է, դոկտո՛ր, էդ Օղուզն ուզում էր քեզ հենց էսօր առավոտյան Այաշ ուղարկեի, իսկ դա գիտե՞ս, թե ի՛նչ է նշանակում:

– Գիտեմ, Արաբաջիբաշի՛, բոլորը գիտեն:

– Դա նշանակում է, որ Այաշ չես հասնի. քաղաքից դուրս գաք թե չէ, ձեզ բոլորիդ կմորթեն... Չանղըրիի հայերի հետ գիտես, չէ՞, ի՛նչ արեցին...

– Գիտեմ,– պատասխանեց Ռուբենը, որի ականջից չվրիպեց Արաբաջիբաշիի յուրօրինակ մեղմաբանությունը. «արեցինք» ասելու փոխարեն՝ գործածեց «արեցին» ձևը:

– Ուրեմն՝ ոչ մեկին մի՛ հավատա, այդ մյութեսարիֆին էլ մի՛ հավատա, գիտեմ՝ քաջ մարդ է, քեզ էլ սիրում է, բայց վերջիվերջո պիտի ենթարկվի Թալեաթին. ճարն ի՛նչ է, չենթարկվեց, կկանչեն Պոլսից կամ, ավելի վատ, վիզը կկտրեն:

– Ո՞վ:

Արաբաջիբաշիի ներսում նորից լավան քլթքլթաց.

– Դոկտո՛ր, խելացի մարդ ես, բայց միամիտ հարցեր ես տալիս, հիմա հարյուր հոգու կանչեմ, մի ոսկի տամ, վաղն ուզածդ մարդու գլուխը կկտրեն-կբերեն էստեղ,– Արաբաջիբաշին ղեյլանի մուշտուկը բերանից հանեց և ոտքերի տակը ցույց տվեց՝ ասես նշելով, թե գլուխը որտե՛ղ պիտի դրվի: Հետո խորամանկ ժպիտով շարունակեց.– հա՛, ես գիտեի, որ մյութեսարիֆը հեռագիր է ուղարկել քեզ համար, բայց...

– Որտեղի՞ց գիտեիր,– ընդհատեց Ռուբենը:

– Դոկտո՛րս, ինչ որ կատարվում է էս քաղաքում, ես տեղնուտեղն իմանում եմ: Պարտավոր եմ իմանալ, որովհետև քաղաքի տերը ես եմ, ոչ թե մյութեսարիֆը կամ Օղուզը կամ Նուրհանէդդինը... Դրանք բոլորն իմ ձեռքից կուտ են ուտում... Էսօր էստեղ են, վաղը կտանեն ուրիշ տեղ, իսկ Արաբաջիբաշի Իսմայիլը ոնց կար, էդպես էլ կմնա Չանղըրիի տերը: Հիմա հասկանո՞ւմ ես, որ ես պիտի փրկեմ քեզ, ոչ թե մյութեսարիֆը:

– Ինչպե՞ս պիտի փրկես:

– Շատ պարզ: Լա՛վ լսիր ինձ. որոշված է, որ մեր երկրում ոչ մի հայ չպիտի մնա, բոլորիդ պիտի սպանեն: Եթե էստեղ չսպանեցին, ճանապարհների վրա կմորթեն, եթե էնտեղ փրկվեցիք, ուրիշ տեղ կսպանեն, Պոլիս էլ հասնեք, դարձյալ չեք փրկվի:

– Ուրեմն՝ հանուն ինձ պիտի դե՞մ գնաս քո կառավարությանը:

– Չէ՛, ուրիշ ձևեր կան... Ես քեզ շատ սիրեցի, ոնց որ իմ հալալ եղբայրը լինես, և հետո՝ պարտական եմ քեզ. դու իմ աղջկան փրկեցիր:

– Ես բժիշկ եմ, պիտի փրկեի:

– Գիտեմ, գիտեմ, ուրիշ բան էլ կա... Ես անուսում մարդ եմ, բայց շատ բաներից եմ հասկանում. ես տեսնում եմ, որ աղջիկս սիրահարվել է քեզ... Այսօր տխուր պառկած էր, ասացի. «Աղջի՛կս, ի՞նչ կա, ուրախ չե՞ս, որ բուժվեցիր»: Ասաց՝ չէ՛, ու լաց եղավ: Հետո ասաց. «Երանի միշտ հիվանդ լինեի, որ դոկտորը կողքս լիներ. հիմա որ բուժվել եմ, դոկտորը պիտի գնա»:

Ռուբենը ծիծաղեց.

– Դա հաճախ է պատահում, որ ապաքինված հիվանդը սիրահարվի իր բժշկին, մանավանդ՝ ջահել աղջիկները, բայց ժամանակի հետ անցնում-գնում է:

– Երևի ճիշտ ես ասում, դոկտո՛րս, բայց էս մեկը, ոնց որ ես եմ տեսնում, անցնողներից չէ. իմ աղջկան մի հիվանդությունից ազատեցիր, գցեցիր մյուսի մեջ: Հիմա ոնց որ գցել ես, էնպես էլ պիտի հանես:

– Չեմ հասկանում, մտքի՞նդ ասա, ինչպե՞ս պիտի հանեմ:

– Շատ պարզ, ամուսնացի՛ր հետը, կդառնաս իմ փեսան, և Օղուզը չէ, Թալեաթն անգամ չի համարձակվի քո մազին դիպչել:

– Չեմ կարող, Արաբաջիբաշի՛, կին ունեմ, երեխաներ ունեմ:

– Ոչի՛նչ, մեր կրոնի համար դա արգելք չէ, կարող ես միաժամանակ չորս կին պահել:

– Բայց ի՛մ կրոնը թույլ չի տալիս:

– Կրո՞նդ փոխիր, դոկտո՛րս, ինչի՞դ է պետք էդ կրոնը, որ քեզ չի թողնում մարդավարի ապրել:

– Միայն կրոնի հարց չէ, ես իմ կնոջը չեմ դավաճանի, մենք հավերժական երդում ենք տվել, մենք սիրում ենք իրար:

– Միամիտ բաներ ես խոսում, ի՞նչ սեր, ի՞նչ երդում, հիմա կարևորը կյանքն է, ապրելը:

– Ո՛չ, ո՛չ, անկարելի է... Շնորհակալ եմ, որ ուզում ես ինձ օգնել, բայց ոչ այդ գնով:

– Հասկացի՛ր, դոկտո՛րս, գլխիդ վտանգ է կախված:

– Ես ուրիշ կերպ չեմ կարող ապրել, ես չեմ կարող ո՛չ իմ հավատից հրաժարվել, ո՛չ էլ ընտանիքից. այդպիսի կյանքն ինձ համար հարամ կլինի, մեռնելուց վատ:

– Շա՛տ տարօրինակ մարդիկ եք քրիստոնյաներդ, ձեր կյանքը դիտմամբ բարդացնում եք: Հավատն ի՞նչ է որ, կյանքից հո ավելի թանկ չէ:

– Արաբաջիբաշի՛, հիմա մեկը դանակը կոկորդիդ դներ և ստիպեր հավատդ փոխել, ի՞նչ կանեիր:

– Էդպիսի բաներ մի՛ ասա, դոկտո՛րս, քո տեղը մեկ ուրիշը լիներ, հիմա վիզը կտրել էի:

– Որովհետև հավատդ սուրբ է, չէ՞:

– Հապա ինչպե՞ս:

– Իսկ ինչո՞ւ չես ուզում ընդունել, որ իմ հավատն էլ սուրբ է:

– Ձեր հավատը սխալ է, դոկտո՛րս, աշխարհում մի ճշմարիտ հավատ կա՝ իսլամը:

– Դու Ղուրան կարդացե՞լ ես:

– Ես անուսում մարդ եմ, դոկտո՛րս, ինչպե՞ս պիտի կարդամ:

– Ղուրանում ասված է, որ մեր Հիսուսը ճշմարիտ մարգարե է, նշանակում է՝ նրա հավատն էլ ճշմարիտ է:

– Հապա եթե Իսայի հավատն էլ սուրբ է, Ղուրանում ինչո՞ւ է գրված, թե որքան շատ քրիստոնյա սպանես, էնքան ավելի հեշտությամբ կընկնես Ջեննեթ:

– Ղուրանում այդպիսի բան չկա գրված, ընդհակառակը, այնտեղ ասված է, որ քրիստոնյաներին չի կարելի բռնի իսլամացնել:

– Արաբաջիբաշին շվարած նստել էր:

– Ես չգիտեմ, դոկտո՛րս, Ղուրանում ինչպե՞ս է գրված. ես մի բան եմ հասկանում, որ կյանքդ փրկելու համար պիտի փեսաս դառնաս և իսլամ ընդունես:

– Պատասխանս արդեն տվեցի, չխոսենք այլևս այդ մասին:

– Լո՛ւրջ մտածիր:

– Մտածել եմ, ամբողջ կյանքս այդ մասին եմ մտածում:

– Կրակի հետ խաղ ես անում, դոկտո՛րս:

– Գիտեմ, բայց ուրիշ ելք չունեմ:

* * *

Ռուբենը ստիպված եղավ սպասել մինչև մութն ընկնելը, որպեսզի իր ուզած մարդկանց կարողանար մի տեղ հավաքել և խորհրդակցել: Այսինքն՝ ուրիշներից կարծիք լսելն անիմաստ էր, քանի որ ինքն արդեն վճռել էր: Վարուժանն էր որ պնդեց՝ ասելով, թե այս օրհասական վի-

ճակում մի բուռ հայ ենք մնացել, և այլևս մասնավոր խնդիր չկա: Բոլորին հնարավոր չեղավ կանչել: Թուրքերը գնալով ավելի չար հայացքով էին նայում հայերին, հսկում նրանց յուրաքանչյուր շարժումը: Մեծ խմբով որևէ տեղ հավաքվելը կարող էր կասկածներ հարուցել:

Մութն ընկնելու հետ տասը-տասներկու հոգի հավաքվեցին երկհարկանի տանը, որն ամբողջովին հայ բժիշկներն էին վարձում: Բոլորը լսել էին Արաբաջիբաշիի դստեր ապաքինման մասին, ոմանք նույնիսկ կարծում էին, թե այդքանն արդեն բավական էր, որ իր աղջկա բժիշկ Ռուբենը զերծ մնար բոլոր վտանգներից:

Ռուբենն ամենայն մանրամասնությամբ պատմեց իր զրույցն Արաբաջիբաշիի հետ:

– Վաղն առավոտյան սպասում է իմ պատասխանին:

– Ի՞նչ ես որոշել,– հարցրեց Բյուզանդ Քեչյանը:

– Պատասխանս արդեն տվել եմ՝ ո՛չ,– վճռական ասաց Ռուբենը:

– Սպասի՛ր, սպասի՛ր, պետք չէ տաք գլխով վճիռ ընդունել: Լրջորեն, հանգիստ, վերջապես առողջ տրամաբանությամբ մտածի՛ր հետևանքների մասին:

– Արդեն երկու ամիս է՝ այդ մասին եմ մտածում, գիշեր ու զօր, մանավանդ՝ Հակոբիկի ողբերգական պատմությունից հետո:

– Հակոբիկի պարագան ուրիշ էր,– առարկեց Տիրան Քելեկյանը. – մի սխալն անելուց հետո զգացական հողի վրա երկրորդն արեց: Ահա ինչո՛ւ քեզնից պահանջում եմ նախևառաջ պաղարյուն դատողություն: Ես ոչինչ չեմ կարող առաջարկել... Շատ ծանր և նրբին կացություն է. որքան էլ ուղղակիորեն առնչվում է բոլորիս, այնուհանդերձ մեզնից յուրաքանչյուրն ինքը պիտի պատասխան տա իր խղճի առջև... Դժվար է, Ռուբե՛ն, չգիտեմ՝ ի՞նչ խորհուրդ տալ...

– Ռուբե՛ն, կուզեի այնպես անեիր,– ասաց Վարուժանը,– որ և՛ մեր հավատը չլքեիր, և՛ ողջ մնայիր, սակայն գիտեմ, որ երկուսից մեկը պիտի զոհաբերվի... Չգիտեմ՝ ո՛րը... Երկուսն էլ թանկ են...

– Հարցն այնքան հավատին չի վերաբերում, որքան կյանքին ու մահվան, այս արհավիրքը վերապրելուն,– ճշտեց Բյուզանդ Քեչյանը:

– Իսկ ի՞նչ գնով,– հարցրեց Ռուբենը:

– Գինն այդքան կարևոր չէ,– պատասխանեց Բյուզանդ Քեչյանը:– Հիշի՛ր Վարդանանց օրինակը, եթե նրանք էլ քեզ նման մտածեին, հայտնի չէ՝ հայ ազգն այսօր գոյություն կունենա՞ր, թե՞ ոչ:

– Այո՛, Ռուբե՛ն, տեղին էր այս օրինակը,– միջամտեց բժիշկ Զարեվանդը:– Վարդանը և իր զինակիցները հանուն երկրի, ազգի փրկության գիտակցաբար, ես ընդգծում եմ՝ *գիտակցաբար* գնացին առերես ուրացման: Ճիշտ նույն պարագայում հիմա գտնվում ես դու, և ես գիտեմ, որ միակ ելքն առերես ուրացումն է:

– Ո՛չ, սիրելի՛ Զարեվանդ, Վարդանը և նրա զինակիցները պետա-

կան գործիչներ էին, ուստի հանուն իրենց ժողովրդի՝ պիտի գնային այդ քայլին: Պետական գործիչն այն ճյուղն է, որն ամեն անգամ ծռվելուց հետո անմիջապես ուղղվում է, մինչդեռ բանաստեղծի հոգին նուրբ անոթ է, ամեն մի անզգույշ քայլից կարող է փշրվել, ինչպես Հակոբիկի հետ եղավ... Ո՛չ, ո՛չ, անկարելի է: Դուք պատկերացնո՞ւմ եք հավատուրաց բանաստեղծ. դա հրեշավոր ոճիր կլինի Աստծո դեմ:

– Բայց, Ռուբե՛ն, խոսքը ժամանակավոր ուրացման մասին է,– փորձեց բացատրել Զարեվանդը:– Հոգիդ պահի՛ր անմատչելի տեղում, թող ոչինչ չդիպչի նրան:

– Եթե կարողանայի այդպես դյուրությամբ հոգիս թաքցնել, կդադարեի բանաստեղծ լինելուց, կդառնայի դիվանագետ... Վերջապես, պատկերացնո՞ւմ եք հայ բանաստեղծ ՝անունը Մեմեդ...

– Սոսկալի բաներ ես խոսում, Ռուբե՛ն,– պոռթկաց Վարուժանը:– Դու երբեք չես գնա այդ քայլին:

– Թող բանաստեղծները լռեն,– հրամայեց Բյուզանդ Քեչյանը.– խնդիրը զուտ քաղաքական հանգամանք ունի, ուստի հույզերը մի կո՛ղմ դրեք և եկեք սթափ հայացքով նայենք իրողությանը: Ասում ես՝ Վարդանանք պետական գործիչներ էին և վասն երկրի ու ժողովրդի գնացին առերես ուրացման: Շատ ճիշտ է: Իսկ ովքե՞ր ենք մենք այսօր՝ պարոն Քելեկյանը, ես, դու, Վարուժանը, վարդապետները, դոկտորները... Մենք նույնպես քաղաքական գործիչներ ենք, պարզապես, ի տարբերություն Վարդանանց, չունենք պետություն, անգամ երկիր, բայց ունենք հայրենիք, չունենք քաղաքացիներ, բայց ունենք ժողովուրդ, չունենք հայկական օրենքներ, բայց ունենք ծանրագույն պարտականություններ. ուստի մենք պետք ենք մեր ժողովրդին. մեր այսօրվա թշնամին անհամեմատ ավելի նենգ է և արյունախում. մենք պիտի նրանից ավելի խորամանկ լինենք... Ուստի իմ կարծիքը հետևյալն է. թող մեռնի բանաստեղծ Ռուբեն Սևակը. ի՞նչ արած, առանց զոհի չի լինի, բայց թող փրկվի Ռուբեն Չիլինկիրյանը:

Բյուզանդ Քեչյանի տրամաբանված խոսքը համոզել էր բոլորին: Մի պահ լռություն տիրեց, որն առաջինը խախտեց Զարեվանդը.

– Ռուբե՛ն, ես լիովին համաձայն եմ Բյուզանդ Քեչյանի հետ և այսքան մարդկանց ներկայությամբ ասում եմ, որ երբեք մեղադրանքի ոչ մի խոսք չեմ ասի քո հասցեին: Ավելին՝ կողջունեմ քայլդ:

– Ես՝ նույնպես,– ասաց բժիշկ Ալթունյանը:

– Ես՝ նույնպես,– կրկնեց Միքայել Շամտանճյանը:

– Ես՝ նույնպես...

– Ես՝ նույնպես...

– Սպասե՛ք, սպասե՛ք,– գոռաց Ռուբենը. – ժամանակները նույնը չեն, և կացությունը նույնը չէ. խնդիրը միայն Հայոց երկիրն ու պետությունը չէին, այլև այն, որ հայ ազգն ամուր ու հաստատուն նստած էր իր հողի վրա, իր տան մեջ, և Հազկերտը նրանց չէր քշում դեպի անապատները.



Ռուբեն Սևակը Լոզանում, 1911թ.

մինչդեռ այսօր մեր ժողովուրդն ամբողջովին մահվան երախն է նետված, մենք չգիտենք, թե քանի՛սն են փրկվել, պիտի որ լինեն փրկվածներ, նրանք ապրում են վերջին հույսով. եթե մենք այստեղ ուրանանք մեր հավատը, նրանք կզրկվեն այդ հույսից, վերջնականապես կկոտրենք նրանց կամքը: Մեր վճռականությունը մեր վերջին զենքն է... Այո՛, ճի՛շտ ասացիք, մենք ենք մեր ցեղի առաջնորդները, եթե հարկ լինի, պիտի մեռնենք, որ ազգն ապրի:

– Ռուբե՛ն, ի՞նչ թեթևությամբ ես խոսում մահվան մասին...

– Թեթևությամբ չեմ խոսում, Դանիե՛լ, պարզապես այդ կյանքը, ավելի շուտ ամոթալի գոյությունը, որ պիտի ձեռք բերեմ ուրանալու գնով, մահվանից ավելի վատ է լինելու... Ո՛չ, այդ առևտուրը չեմ ընդունում, ես չեմ կարող հոգիս անունիս պես սևացնել և հետո եղկելի գոյությունս քարշ տալ:

Նա լռեց, ներկաներին նայեց մեկ առ մեկ, հետո ավելացրեց.

– Գուցե վերամբարձ են խոսքերս, ներողամի՛տ եղեք...

– Այո՛, բայց լիովին համապատասխան են ողբերգական կացությանը,– վերջապես խոսեց Տիրան Քելեկյանը, որ ուշադիր հետևում էր բանավեճին:– Ինչո՞ւ են լռում մեր հոգևորականները. մի՞թե հավատի հարցերն այլևս չեն հետաքրքրում նրանց:

– Մեր հոգիներում հիմա փոթորիկ է, պարո՛ն Քելեկյան,– հուզմունքից խեղդված ձայնով պատասխանեց Հովհան վարդապետ Կարապետյանը:– Մենք սրտով Ռուբենի հետ ենք, այո՛, մեր նվիրվածությունը առաքելական եկեղեցուն, մեր լուսավորչական հավատին, վերջապես մեր վճռականությունը՝ հեռու մնալու ամոթալի առևտրից, մեր վերջին զենքն է և զորավոր զենք է... Ես հիացած եմ Ռուբենի հոգու զորությամբ և մաղթում եմ, որ միշտ այդպես անսասան մնա... Ահա՛, սա է իմ սրտի խոսքը... Բայց միտքս, բանականությունս նկուն մի ձայնով հուշում են, որ եթե վաղն Աստծո օգնությամբ վերադառնանք Պոլիս և Սուրբ ավազանով մկրտված Ռուբեն Հովհաննեսի որդի Չիլինկիրյանը ցանկանա իր սուրբ հավատի գիրկը վերադառնալ, ես չեմ լինի մերժողը:

– Լռեցրո՛ւ բանականությանդ ձայնը, հա՛յր սուրբ,– պաղատեց Ռուբենը:

– Սպասի՛ր, Ռուբե՛ն, թող վերջացնեն իրենց ասելիքը... Իսկ դո՞ւք, հա՛յր սուրբ,– դիմեց Քելեկյանը Գրիգորիս վարդապետ Բալաքյանին:

– Ես բառ առ բառ պիտի կրկնեմ Հովհան վարդապետի խոսքերը:

Տեր Հուսիկ և տեր Վարդան քահանաներն էլ համամիտ էին իրենց վարդապետ եղբայրներին:

– Հայր սուրբեր, տեր հայրեր, այդ դո՞ւք եք խոսում, թե՞ մեկ ուրիշը՝ ձեր բերանով: Ուրացումի գաղափարն անգամ չպիտի անցներ ձեր մտքով: Եթե մեր սուրբ նահատակներն այսպիսի դիվանագիտություն անեին իրենց խղճի հետ, մեր եկեղեցին արդեն վաղուց քանդվել էր, հավատն էլ՝ իսպառ անհետացել... Արժեքներ կան, որ ոչ մի բանով չի կարելի փոխարինել... Մեր քրիստոնեական հավատն այդ արժեքն է, և հանուն նրա, անհրաժեշտության դեպքում, զոհաբերվում է ամեն ինչ, այդ թվում՝ և կյանքը:

Հովհան Կարապետյանը ինքնաբուխ մի մղումով վեր կացավ և Ռուբենին ամուր գրկեց.

– Սիրելի՛ եղբայր, մենք բոլորս պատրաստ ենք մահվան, ես համոզված եմ՝ մեզնից ոչ մեկը ոչ մի զիջում չի անի, բայց ինչպիսի՜ ահավոր կորուստ կլինի ազգի համար, եթե քեզ նման ազնվագույն մտավորականը... Աստված մի՛ արասցե...

Արցունքները չթողեցին, որ ասելիքն ավարտի: Ռուբենը ժպտաց, մոտեցավ պատուհանին, որտեղից երևում էր Ոլու մզկիթը և, ձեռքն ուղղելով այդ կողմը, ասաց.

– Շնորհակալ եմ ձեր մտահոգության, ձեր բարի խորհուրդների համար, համոզված եմ, որ ամեն ինչ ասվեց մաքուր ու ազնիվ մղումներով: Սակայն ես արդեն վճռել ու պատասխանել եմ և գիտեմ, որ գիշերվա ընթացքում վճիռս չի փոխվի:

– Վճիռդ մի՛ փոխիր, Ռուբե՛ն,– ընդհատեց նրան Բյուզանդ Քեչյանը, բայց մի քիչ ճկո՛ւն եղիր, դիվանագե՛տ եղիր:

– Այսի՞նքն:

– Կարո՞ղ ես պատասխանը մի քիչ հետաձգել... Որևէ պատրվակով... Մեկ օր, երկու օր, եթե հնարավոր է, նույնիսկ երեք-չորս օր:

– Հասկացա, թե ի՛նչ ես ակնարկում, այո՛, հնարավոր է առաջիկա օրերին Պոլիսից մի փրկարար հեռագիր գա, գուցե... Բայց գիտեմ, որ հետաձգելն անկարելի է. Օղուզն է պնդում. ես արդեն պիտի Այաշի ճանապարհին լինեի, եթե... Արաբաջիբաշին է պահել ինձ՝ խոստանալով, որ պիտի մահմեդականություն ընդունեմ:

– Մեղավորը դու ես, Ռուբե՛ն, որ շուտ բուժեցիր նրա աղջկան,– կատակեց բժիշկ Զարեվանդը՝ հարուցելով բոլորի ծիծաղը և փոքր-ինչ թեթևացնելով ծանրացած մթնոլորտը:

Գիշերվա լռության մեջ մուեձինի միալար ձայնը հնչեց, որն ուղղափառ հավատացյալներին կանչում էր աղոթքի:

Նրանց թիվն այդ գիշեր չպիտի ավելանար:

* * *

Արաբաջիբաշին տանը չէր: Կինը դիմավորեց, առաջնորդեց պարտեզ և առաջարկեց տեղավորվել ստվերում դրված թիկնաթոռներին: «Եկան կանչեցին,– բացատրեց կինը:– Ասաց, որ չգնաք, իրեն սպասեք»:

Քիչ հետո սուրճի ախորժելի բույրն զգաց. մի դուռ բացվեց, պղնձյա կլոր մի մատուցարան երևաց, հետո մի ճերմակ ձեռք և, վերջապես, Այշեն՝ իր ամբողջ հասակով, չարաճճի ժպիտը դեմքին: Արևելյան սպիտակ շալվար էր հագին՝ նուրբ բեհեզից կարված, մերկ և ցանկահարույց ոտքերը քաղքենի տիկնոջ թավշյա կարմիր, բարձրակրունկ կոշիկների մեջ էին, սակայն ամենաարտառոցը մետաքսյա ծաղկազարդ շրջազգեստն էր, որ իջնում էր վար՝ ծնկներից քիչ ցած. փարիզյան վերջին նորաձևությունը, որի նպատակն էր ընդգծել մետաքսյա գուլպաների մեջ պարփակված կանացի գեղեցիկ ոտքերը, սակայն գալիս և դեմ էր առնում շալվարին: Արևելքն ու Արևմուտքը վիճում էին, թե ո՛վ ավելի լավ կներկայացնի կնոջը:

Կլայեկած ու դրվագված մատուցարանը համառորեն առաջարկում էր վայելել գոլորշի արձակող սուրճը, մեղրածոր փախլավան, Չանղրիի սառնորակ աղբյուրների ջուրը և այս ամենի հետ՝ գերագույն հաճույքով ծխել անգլիական սիգարետը, որ հայտնի չէ, թե ինչպե՞ս է ընկել Արաբաջիբաշիի ձեռքը: Այսինքն՝ լավ էլ հայտնի է: Քիչ հետո դրանց կողքին դրվեցին սեխն ու ձմերուկը, տեղական քաղցր պտուղները: Օգոստոսյան այս զով առավոտին անկարելի էր ավելի մեծ հաճույք երազել:

Մի պահ իրեն պատկերացրեց որպես տանտեր կամ որպես սիրված փեսա՝ ծույլ Արևելքի մեղկ ու քաշող մթնոլորտում մութաքային թիկնած թզբեհ գցելիս, նարգիլե ծխելիս և բութ ու անտարբեր հայացքով աշխարհին նայելիս: Այո՛, հենց այդպե՞ս կլիներ:

Քիչ հետո Արաբաջիբաշին հայտնվեց: Նա քրտնած էր, հավանաբար շտապելուց: Մոտեցավ, գլխով բարևեց հյուրին և ձմերուկի շերտն առնելով՝ սկսեց ագահաբար ուտել: Հետո ձեռքերը թաշկինակով սրբեց ու դիմեց Ռուբենին.

– Օղուզի մոտից եմ գալիս: Հրաման էր ստացել Թալեաթից, որ հինգ հոգու ուղարկի Այաշ: Քո անունն էլ կար մեջը...

– Լա՛վ լսիր, դոկտո՛ր, քո անունն էլ կար մեջը... Հասկանո՞ւմ ես, Օղուզը հատուկ կարդաց ինձ համար և ասաց, որ Թալեաթի հրամանն է: Վերևն՝ Ալլահ, ներքևը՝ Թալեաթ... Տեսնեիր՝ Օղուզը ո՞նց էր ուրախացել: Ինձ որ մնար, ես հիմա քեզ կփակեի, հաց ու ջրից կզրկեի, կպահեի էնքան, մինչև խելքդ գլուխդ գար: Բայց Թալեաթի դեմ չեմ կարող գնալ... Բոլորի դեմ կարող եմ, Օղուզ-մողուզ ինձ համար հաշիվ չեն, բայց նրա դեմ չեմ կարող...

– Պետք չէ, որ ինձ համար...

– Դու սո՛ւս կաց, Արաբաջիբաշին, որ մի բան որոշեց, պիտի անի, աշխարհը շուռ գա, պիտի անի: Հիմա լա՛վ լսիր: Վաղն առավոտյան ձեզ պիտի տանեն Այաշ: Օղուզը հատուկ կանչել էր, որ կառքեր ապահովեմ: Դու գիտես, որ առանց իմ օգնության՝ էս քաղաքից ոչ ոք չի կա-

րող դուրս գալ... Հա՛, էն էլ ասեմ, որ Չերքեզն էլ համաձայն է: Մինչև հիմա Թալեաթի հրամաններն ուշացնում էր, չէր կատարում, բայց էս անգամ համաձայնվեց, էլ տեղ չուներ... Ինձ լա՛վ լսիր, դոկտո՛ր... Մի երկու ժամ հետո ձեզ կկանչեն Չերքեզի մոտ՝ հայտնելու, որ վաղը մեկնում եք... Ալլահը քեզ մեկ օր էլ ժամանակ տվեց, գնա՛ տուն և լա՛վ մտածիր:

– Շնորհակալ եմ, Արաբաջիբաշի՛, որ այդպես մտահոգված ես ինձ համար ...

– Հավատում ես, չէ՞, որ ուզում եմ փրկել... Ես բարիքը հասկացող մարդ եմ, դոկտո՛ր, հետո՝ սիրեցի քեզ:

– Հավատում եմ, աչքովս եմ տեսնում, միայն թե մի՛ չարչարվիր, իզուր է:

– Ո՞նց թե՝ «իզուր» է, պիտի փրկեմ քեզ... Ասե՞մ, թե Օղուզի մտքինն ի՞նչ է:

– Գիտեմ, մի՛ ասա... Ես ու դու փրկությունը տարբեր կերպ ենք հասկանում:

– Ա՛յ դոկտորս, ի՞նչ տարբեր, կյանք կա, ապրել կա, պիտի փրկվես, որ ապրես:

Ռուբենը ժպտաց, գլուխն օրորեց ու ասաց.

– Երբեմն էլ մեռնել կա, որ քո ասած ապրելուց ավելի լավ է:

Արաբաջիբաշին ձեռքը սեղանին խփեց.

– Մութ բաներ ես խոսում, դոկտո՛ր, ես չեմ հասկանում: Գնա՛, գնա՛ տուն, քիչ հետո ձեզ պիտի կանչեն մյութեսարիֆի մոտ... Մտածի՛ր, մի օր էլ ունես:

* * *

Աքսորական հինգ հայեր նստած էին գրասենյակում: Մյութեսարիֆը, ձեռքերը ետևը դրած, ետուառաջ էր անում նրանց և գրասեղանի միջև:

– Չանղըրի գալուս առաջին օրվանից ամեն ինչ արեցի, որպեսզի աքսորական հայերը մնան այստեղ մինչև պատերազմի ավարտը: Ինձ ոմանք մեղադրում են հայասիրության մեջ, իսկ ես պատասխանում եմ, որ հայերին չէ, որ սիրում եմ, այլ նրանց, ովքեր օգուտ են տալիս մեր երկրին: Այս քաղաքը յոթ հարյուր տարի բժիշկ չուներ, իսկ հիմա միանգամից յոթը հայտնվեցին, յոթն էլ՝ հայեր, քաղաքում ընդամենը մի քանի ուսուցիչ կա, մինչդեռ միանգամից մի քանի հարյուր մտավորականներ եկան, որոնք երեխաներին անվճար գրել- կարդալ են սովորեցնում, նույնիսկ ճարտարապետ կա, որը հանրային պարտեզի նախագիծն է մշակել Չանղըրիի համար: Չերկարացնեմ, այս ամիսների ընթացքում ձեզնից ամեն մեկը մի օգտակար բան է արել քաղաքի համար, և ես շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ:

Վերջապես դադարեց գրասենյակը չափչփել, եկավ նստեց աթոռին և ներողություն խնդրելու պես ասաց.

– Բայց, ավա՜ղ, ցանկություններս հնարավորություններիս համապատասխան չեն... Վերևից եկող կարգադրություններ կան, որոնք կարող եմ որոշ ժամանակ անտեսել, ձգձգել, բայց չկատարել չեմ կարող, եթե նույնիսկ դրանք վնասակար են երկրի համար... Ուրեմն, այսպես, Պոլսից պահանջում են, որ ձեզ՝ հինգ հոգուդ, ուղարկենք Այաշ, ուստի վաղն առավոտյան, ցավոք սրտի, պիտի մեկնեք:

– Իսկ ճանապարհները վտանգավոր չե՞ն, բե՛յս,– հարցրեց հայերից մեկը:– Ասում են՝ ավազակներ են վխտում:

– Ես այդ մասին մտածել եմ: Ժանդարմների մի խումբ կուղեկցի ձեզ մինչև Էնկյուրի: Հատուկ նամակ եմ ուղարկում նրանց հետ այնտեղի մյութեսարիֆին, որպեսզի հետագա ճանապարհին նա ևս ապահովի ձեր անվտանգությունը:

– Մենք հավատում ենք Ձեր ազնվությանը, էֆենդի՛ս,– ասաց Ռուբենը:– Սակայն ժանդարմները ենթարկվում են Նուրհանէդդին բեյին, իսկ նա, ինչպես գիտեք, հայերին տանել չի կարող:

– Ճիշտ եք, դոկտո՛ր, բայց Նուրհանէդդին բեյը ենթարկվում է ինձ, ես առաջին դեմքն եմ այստեղ, չենթարկվել ինձ, նշանակում է դեմ գնալ կառավարությանը:

– Ուրեմն՝ Դուք համոզվա՞ծ եք, որ անվտանգ կհասնենք Էնկյուրի,– հարցրեց Վարուժանը:

– Եթե համոզված չլինեի, չէի ուղարկի: Պատվովս եմ երդվում, որ բոլորդ անվտանգ տեղ կհասնեք:

* * *

Հինգ հոգի էին՝ Ռուբեն Սևակ, Դանիել Վարուժան, Օննիկ Մաղազաճյան, Վահան Քեհյայան և դեռևս Պոլսից բոլորին քաջ ծանոթ հացթուխ Հարությունը: Մոլորված կանգնել էին կառավարչության շենքի առջև: Ոչ մեկը չէր խոսում: Կարծես ասելիք չէր մնացել:

– Դուք հավատո՞ւմ եք այս մարդու խոսքերին,– հարցրեց հացթուխը:

– Ես նրա ազնվությանը հավատում եմ,– պատասխանեց Ռուբենը:– Իսկապես պարկեշտ մարդ է, բայց գիտեմ նաև, որ Օղուզն ու Նուրհանէդդինը սրիկաներ են:

– Եվ այդ երկուսն են ներկայացնում օրվա քաղաքականությունը,– նկատեց Վարուժանը:– Հարցն այն է, թե ո՛վ ավելի ուժեղ դուրս կգա:

– Մի՞թե պարզ չէ,– զարմացած հարցրեց հացթուխը:

– Պարզ է ամբողջ երկրի առումով,– ասաց Ռուբենը:– Ամենուր ոճրագործներ են նստած, բայց այստեղ առայժմ հավասար պայքար է ընթանում: Ի վերջո փաստ է, որ նրա գալուց հետո հայերից ոչ մեկը չի տուժել:

– Այո՛, բայց մինչև ե՞րբ կարող է դիմադրել:

– Նոր է եկել,– պատասխանեց Ռուբենը,– կարծում եմ՝ դեռ մի քանի ամիս էլ կմնա, և այդ ընթացքում, համոզված եմ, օգտակար կլինի մեզ:

– Իսկ ճամփորդությունն ինչպե՞ս կանցնի, Ռուբե՛ն,– հարցրեց Վարուժանը:

– Վաղվա համար ես լավատես եմ,– պատասխանեց Ռուբենը:– Դու մտածի՛ր, թե ի՛նչ պիտի տանենք Սիամանթոյին. չէ՞ որ նա Այաշում է:

– Լավ հիշեցրիր, նա մրգերի խենթ է. հետս դեղձ կտանեմ:

– Դեղձ Այաշում էլ կլինի: Ես ուզում եմ հետս փախլավա տանել, այստեղինը շատ համեղ է:

– Ռուբե՛ն, կարծում եմ՝ մեր հայտնությունն այնտեղ ամենամեծ ուրախությունը կլինի նրա համար:

Սպասվածին հակառակ՝ Ռուբենը գիշերը հանգիստ քնեց: Միայն կողքի տան աքաղաղն էր, որ մինչև լուսաբաց, խախտելով ժամերը, երեք անգամ կանչեց՝ ամեն անգամ արթնացնելով օրվա ծանր տպավորություններից հոգնած ու խոր քուն մտած բժիշկներին: Երրորդ անգամ որ կանչեց, Ռուբենը չդիմացավ, գլուխը հանեց պատուհանից և, կատակով թե լուրջ, դիմեց աքաղաղին.

– Լսի՛ր, թռչո՛ւն, բավակա՛ն է, ես իմ Տիրոջը չեմ ուրանալու...

* * *

...Ծածկովի երկու կառք էր կանգնած, կողքին՝ հինգ ժանդարմ՝ իրենց ձիերի սանձերը բռնած, և մեկական զինված ոստիկան:

Ժանդարմների հիսնապետը մոտեցավ ճանապարհողներին ու ձեռքով նշան արեց, որ ետ քաշվեն: Հետո Ռուբենին տարավ մի կողմ և ասաց.

– Արաբաջիբաշին հարցնում էր, թե դոկտորը բան չունի՞ իրեն ասելու:

– Ե՞րբ տեսար նրան:

– Այսօր՝ լուսադեմին:

– Չէ՛, ասելիք չունեմ, արդեն ասել եմ:

Հիսնապետը նշան արեց, և ժանդարմները, հարձակվելով աքսորականների վրա, ձեռքերը կապեցին: Ռուբենը դիմեց նրան:

– Ինչո՞ւ եք կապում մեր ձեռքերը:

– Կանոնադրությունն է պահանջում, կալանավորներին տեղափոխում են կապված ձեռքերով:

Զինված ոստիկանը նստեց նրանց առջև: Մերկացված սվինը շողշողում էր առավոտյան արևի տակ: Ռուբենը նստած էր Վարուժանի և Օննիկ Մաղազաճյանի միջև: Այդպես ավելի հարմար էր: Երեքով կիպ սեղմվել էին իրար և կառքի ճոճվելու հետ միմյանց նեցուկ էին լինում: Ոչ մի տեղից բռնվել չէիր կարող: Եվ այդպես պիտի ճամփորդեին մի քանի օր:

Վարուժանի գլուխն իր ուսին էր: Նա քնած էր: Մինչև կառք նստելն

ասաց, թե գիշերը չի քնել և սաստիկ գլխացավ ունի: Մոտն ասպիրինի փոշի կար: Առաջարկեց, բայց ժամանակ չեղավ խմելու: Կառքը շարժվելուն պես կոպերը կախվեցին, հետո՝ գլուխը, որը հիմա հայտնվեց իր ուսին: Այդպես գուցե ավելի լավ եղավ, թող քնի. քունը բուժում է... Չնայած շատ կուզեր զրույցով ճանապարհը կարճել:

Ի՞նչ հասցրեց անել: Ինչո՞ւ նորից նույն հարցն սկսեց փայտփորի նման ուղեղը կտցել: Առաջին անգամ այդ հարցը հնչեց Հայդար փաշայի կայարանում՝ գարշահոտ և անշարժ գնացքի մեջ: Իսկ ինչո՞ւ այդ հարցին չի պատասխանում այսպես. «Այն, ինչ արել եմ, առանձնապես մի բան չէ, բայց կյանքն առջևս է, դեռ կհասցնեմ անել»: Բայց արդյո՞ք դա ճիշտ պատասխան կլինի... Հարցն այն չէ, որ այս ճանապարհն անստույգ է, անորոշ, որ իսկապես հավատալով Դալի Չերքեզի ազնվությանը՝ այլևս վաղուց չի հավատում այս երկրին: Դա հարցի մի կողմն է, քանզի անկախ այն բանից՝ ճանապարհը բարեհաջող կլինի թե ոչ, պետք է ներքուստ համոզված լինես, որ եղար անսխալ, չմեղանչեցիր վերին ճշմարտության դեմ... Առանց ինքդ քեզ խաբելու՝ իմանաս, որ կյանքիդ մի շրջանն ավարտվեց, իսկ դա նշանակում է՝ ճիշտ տեղում, ճիշտ ժամանակին վերջակետ դնես: Եվ դրեց այդ վերջակետը կամրջի մոտ՝ ժանդարմին հայտնելով, որ Արաբաջիբաշիին ոչ մի ասելիք չունի:

Ինչպե՞ս կուզեր այս բաների մասին խոսել Վարուժանի հետ, բայց քնած է... Արդյոք կուզե՞ր ինքն էլ այսպես քնով ընկնել մինչև ճանապարհի ավարտը և արթնանար միայն տեղ հասնելուց հետո կամ գուցե այլևս... Իսկ մի՞թե քնած չէր մոլորակը, մարդկությունը, վերջապես հայ ազգն այս մարդակուլ պատերազմից առաջ... Դժվար է արթուն ապրելը... քնածները չեն սիրում արթուն մարդկանց, քանզի խանգարում են նրանց անդորրը... Անգամ քնի մեջ՝ մշտապես արթուն, իսկ նրանք քնած են արթնության մեջ... Օ՜, հերոսական ոչինչ չկա դրանում, միայն տաժանելիության զգացում, որ իզուր է այդ ամենը... Երանի՜ աչքերդ հանած լինեին և չտեսնեիր ոչինչ... Գուցե կուզեր քնի մեջ պատսպարվել, որպեսզի ավելի թեթև տաներ այս ստորացումը, կապկպված ձեռքերով ճամփորդելը...

Սակայն հարցը շարունակում էր ուղեղը տանջել. ինչի՞ համար ապրեց, վասն ինչի՞. ընդամենն այդ պարզ գործողությունն անելու՞, ճի՜շտ տեղում, ճի՜շտ ժամանակին ճի՜շտ վերջակետը դնելու՞... Շա՞տ է, թե՞ քիչ: Շատ երբեք չի կարող լինել, քիչ՝ թերևս... Որովհետև դեպի վեր ձգտողին միշտ թվալու է, թե ինքը նույնիսկ գետնից չի կտրվել... Ինչի՞ համար... Կամրջի մոտ արտասանված այդ երկու բառի համա՞ր... Շա՞տ է, թե՞ քիչ... Ո՛չ շատ է, ո՛չ էլ քիչ... Ճիշտ այնքան, որքան պետք էր... Ուրիշ ոչինչ պետք չէր ասել... Այլևս նոր փորձություն չի կարող լինել: Հոգու վրա հիմա զարմանալի մի անդորր կա, աստվածային մի գոհություն, որ չխուսափեց իր ճակատագրից, արժանապատվությամբ ընդառաջ

գնաց և երբեք չվարանեց շիտակորեն նայելու իր առջև... Եվ չքարացավ սոսկումից...

Ինչի՞ համար ապրեց... Սիրո՞, գեղեցկությա՞ն... Ի՞նքը գտավ սերը, թե՞ սերն՝ իրեն... Ստույգ է, որ փնտրում էր տենդագին և միայն Յաննիին հանդիպելով՝ իմացավ, թե ի՞նչ է սերը և գեղեցկությունը... Ուրեմն՝ Յաննին սե՞րն էր... Ո՛չ, նրանք երկուսով ստեղծեցին իրենց սերը, որը գուցե (թող սրբապիղծ չինչի) դեռևս մանկությունից սիրելի Հիսուսի պես կարողանար ասել, թե «այս աշխարհից չէ», որովհետև աշխարհն ապրում էր՝ առանց սիրո, ահագնացող ատելության մեջ... Ութ տարի շարունակ ամեն ինչ արեցին՝ դիմադրելու այդ մահաթույն ատելությանը, ապացուցելու, որ սերը պիտի ապրի «այս աշխարհում», իսկ որպեսզի ապրի, չուզեցին այն հարմարեցնել առօրյային և այդ պատճառով փաստորեն մնացին կյանքից դուրս... Աշխարհն ուզում էր իր ատելությունը մատուցել՝ որպես սեր, նրանք մերժեցին այդ խաբեությունը, և նրանց ճշմարիտ սերը դարձավ մահ...

Իսկ եթե չլիներ սերը, կարո՞ղ է համաձայնվեր առաջարկված առևտրին և հոգին սևացնելով՝ փրկեր մարմինը: Ի՞նչ ծիծաղելի հարց տվեց... Ճակատագիրն ամեն ինչ նախապատրաստել էր միասին. Յաննին անբաժան էր այս ճանապարհից... Ամեն ինչ նախապատրաստված էր միանգամից, բայց մատուցվում էր հաջորդաբար... Իսկ վերջակետն արդեն դրել է:

Վարուժանն արթնացավ: Ասաց, որ գլխացավը թեթևացել է, բայց հիմա էլ վիզն է ցավում:

– Ձեռքերս ազատ լինեին, մի քիչ կշփեի, կանցներ,– ասաց Ռուբենը:– Բայց ինքդ էլ կարող ես օգնել քեզ. շարժի՛ր գլուխդ, և կթեթևանա...

Դիմացը նստած ոստիկանը խոժոռված նայում էր նրանց:

– Ռուբե՛ն, մի հարց կար, որ միշտ ցանկացել եմ քեզ տալ, բայց, չգիտեմ ինչո՛ւ, քաշվել եմ: Ճի՞շտ է, որ մինչև տասը տարեկանդ հայերեն ոչ մի բառ չես արտասանել:

Ռուբենը ժպտաց.

– Սխալ կլինի ասել, թե չեմ արտասանել, պարզապես թրքախոս էինք ամբողջ ընտանիքով, չնայած հայրս պատարագը ծայրեծայր անգիր գիտեր, հայերեն գրերը գիտեր, հայատառ թուրքերենով նամակներ էր ուղարկում ինձ Լոզան:

– Իսկ ինչպե՞ս սովորեցիր հայերեն:

– Տասը տարեկան էի, հայրս տարավ հայկական վարժարան, և պարզապես հրաշք կատարվեց. կարճ ժամանակում սովորեցի գրել ու կարդալ... Ասես այդ լեզուն ժամանակին իմացել էի, հետո մոռացել, և մի թեթև խթան էր պետք, որպեսզի վերհիշեի:

– Հիմա եմ հասկանում քո նախանձախնդրությունը. մեկ անգամ կորցրածը նորից գտնելուց հետո առավել թանկագին է դառնում:

Վերջապես վեց ժամ չարչարվելուց հետո հասան Թյունա գյուղի մոտ գտնվող պահակակետին, որտեղ նրանց կերակրեցին: Հիսնապետը հատուկ նշեց, որ այդ ճաշը կառավարության հաշվին է: Օննիկ Մաղազաճյանը, որ դիմացն էր նստած, աղամանը վերցնելու պատրվակով գլուխը մոտեցրեց և շշուկով ասաց.

– Լավ է, որ մեզ կերակրում են: Ես սրանց լավ գիտեմ. եթե մտադրություն ունենային մեզ... ապա ավելորդ ծախսեր չէին անի:

– Դու գտնում ես, որ սա մեծ ծախս է:

– Ինչո՞ւ ոչ, մեր հացին ցանված մեկ պտղունց աղն անգամ համարում են կորուստ:

Ձեռքերը նորից կապկպեցին և ճամփա ընկան: Երևում էր, որ շտապում է: Հիսնապետը, հավանաբար, շտապում էր մութն ընկնելուց առաջ լեռնանցքը կտրել:

Ընդամենը կես ժամ էր անցել, երբ մի սարահարթ հասան, որտեղ ճանապարհի եզրին աղբյուր կար: Հիսնապետը կարգադրեց կանգ առնել, ձիուց իջավ, ջուր խմեց և քրտնած երեսը լվաց: Այդ պահին դիմացից մի ձիավոր երևաց: Մոտեցավ, պտույտ գործեց կառքերի շուրջը, ուշադիր նայեց հայերին և խոսուն հայացքը հիսնապետին հառելուց հետո դարձավ եկած ճանապարհով: Իսկ հիսնապետը, աղբյուրի մոտ նստած, ծխախոտ էր փաթաթում՝ հանգիստ, անշտապ: Հետո բավական երկար կայծքարով ու թանձր պատրույգով փորձում էր վառել: Ժամը չորսը կլիներ: Չնայած հետմիջօրեի սաստիկ արևին՝ շոգ չէր: Լեռնային բարձունքներում իշխող մշտական զով քամիները հաճելի մի բարեխառնություն էին ստեղծել: Կատարյալ լռություն էր, միայն երբեմն-երբեմն արքայական թռչնի խրոխտ կռինչն էր լսվում երկնի խորքերից:

Հանկարծ սմբակների դոփյունը ցնցեց գետինը: Վերևի՞ց էր, թե՞ ներքևից՝ դժվար էր ասել, բայց դանդաղորեն մոտենում էր: Սիրտ մաշեցնող դանդաղությամբ: Ոստիկանները, որ իջել էին կառքից, զարմացած իրար նայեցին, հետո՝ հիսնապետին: Բայց նրա դեմքը ոչինչ չէր արտահայտում: Վերջապես հեծյալների խումբը երևաց: Մոտ տասը բաշիբոզուկ: Նրանց առջևից՝ որոշ հեռավորության վրա, ընթանում էր Արաբաջիբաշի Իսմայիլը:

Ոստիկաններն ակնթարթային արագությամբ հրացաններն ուղղեցին դեպի հեծյալները: Հիսնապետն աղբյուրի մոտից անմիջապես գոռաց.

– Հասա՛ն, Ֆարի՛դ, չկրակե՛ք:

Հետո ելավ, գնաց խմբին ընդառաջ: Հեծյալները ձիերից իջան, բարևեցին հիսնապետին, ինչ-որ բաներ ասացին, որից հետո կառապաններին իջեցրին և, չգիտես ինչու, նրանց ձեռքերը կապեցին: Աքսորյալներին ևս հրամայեցին կառքերից իջնել և սկսեցին գրպանները խուզարկել: Ամբողջ ավարը հանձնեցին Արաբաջիբաշիին, որը քիչ հեռվում կանգնած՝ խոսում էր հիսնապետի հետ: Նա թալանը դրեց գրպանը, հրա-

հանգներ տվեց ավազակներին և աքսորյալներին մոտենալով՝ կարգադրեց հետևել իրեն:

Սարահարթից ճանապարհը շարունակվում էր երկու ուղղությամբ: Մեկն ուղիղ գնում էր վեր՝ դեպի լեռնանցքը, մյուսն իջնում էր ձորը: Արաբաջիբաշին ընտրեց վերջինը: Քարքարոտ, անհարթ, ոլորապտույտ մի կածան էր, որ կտրուկ իջնում էր ներքև: Քայլելը դժվար էր ու վտանգավոր՝ մանավանդ կապված ձեռքերով:

– Որքա՜ն կուզեի, որ մեր ձեռքերը հիմա կապված չլինեին:

– Ոչի՜նչ, Դանիե՛լ, այդպես էլ կարելի է քայլել, միայն թե զգույշ, չընկնես, ուրախություն չպատճառես սրանց:

– Դրա համար չեմ ասում, Ռուբե՛ն, պարզապես շատ կուզեի, որ վերջին պահին իրար ձեռք բռնած դիմավորեինք մահը. այդպես ավելի դյուրին կլիներ:

– Դանիե՛լ, ես բռնել եմ քո ձեռքը, մի՞թե չես զգում, Օննի՛կ, Հարությո՛ւն, Վահա՛ն, սեղմե՛նք մեր ձեռքերը:

– Սեղմում եմ, դոկտո՛ր,– պատասխանեց Օննիկ Մաղազաճյանը:

– Մենք՝ նույնպես,– պատասխանեցին Վահանը և Հարությունը:

– Զգո՞ւմ եք, թե ինչպիսի՛ զորությամբ լցվեցինք. ավելի՛ ուժգին սեղմեք, ավելի՛ ուժգին:

Վերջապես իջան ձորակ և սկսեցին դիմացի լանջը բարձրանալ: Այստեղ քայլելն ավելի դյուրին էր: Անտառին մոտենալուն պես Արաբաջիբաշին ձեռքով նշան արեց կանգ առնելու, հետո, հայերի խմբին մոտենալով, Ռուբենին առանձնացրեց և, ավազակներին դիմելով, ասաց.

– Էս մեկին ձեռք չտա՛ք, սա իմն է:

Ասաց ու, իր զոհի թևը մտած, մի քանի քայլ հեռացավ և կողքին լուռ կանգնած՝ հայացքը հառեց դեպի մնացած չորսը: Ավազակները մերկացրին նրանց, կապեցին ծառերից և հարցական նայեցին իրենց պարագլխին: Վերջինս ձեռքով նշան արեց: Դաշույնները փայլեցին արևի տակ և տեղնուտեղը ներկվեցին արյունով: Նախ զոհերի աչքերը հանեցին: Աղաղակները լցվեցին ձորը և արձագանքվեցին չորս կողմից: Արաբաջիբաշին երեսը ծռմռեց.

– Դրանց ձենը կտրե՛ք:

Չորս հոգի մոտեցան, արյունոտված գլուխները բռնեցին, իսկ մյուս չորսը, դաշույնները բերանը խրելով, ատամները ջարդելով, լեզուները կտրեցին: Աղաղակները դարձան տնքոց, բայց հնչեցին ավելի սոսկալի: Հետո սկսեցին անպաշտպան մարմինները մաս առ մաս կտրատել: Դանդաղ, վարպետորեն, այնպես, որ միանգամից չմեռնեն:

– Դոկտո՛ր, տեսնո՞ւմ ես, լա՛վ նայիր:

Ոչ մի պատասխան:

– Դոկտո՛ր, չեմ ուզում, որ քեզ հետ նույն բանն անեն, դեռ ժամանակ ունես փրկվելու:

Ոչ մի պատասխան:

– Դոկտո՛րս, վերցրո՛ւ աղջկաս, ուր կուզես գնա, մեղք ես, դոկտո՛րս... Հաշվում եմ մինչև տասը. մե՛կ... երկո՛ւ... երե՛ք... Ինձ մի՛ կատաղեցրու... չո՛րս... հի՛նգ... վե՛ց...

Տնքոցներն արդեն դարձել էին հոգեվարքի խուլ հառաչներ... Ռուբենը հայացքը շրջեց, որ չնայի:

– Գլուխդ մի՛ շրջիր, նայի՛ր, դոկտո՛րս, լա՛վ նայիր... յո՛թ... ո՛ւթ... Նայի՛ր, նայի՛ր, դոկտո՛րս... ի՛նը... ի՛նը... ի՛նը... Լա՛վ, դոկտո՛րս, Արաբաջիբաշին բարի է, Արաբաջիբաշին լավությունը գնահատել գիտի, ես էլ քե՛զ լավություն կանեմ, դոկտո՛րս. չէ՛, դու էդպես չես տանջվի: Չէ՛, դոկտո՛րս, չեմ ուզում քեզ պարտական մնալ...

Տնքոցները շարունակվում են: Հայացքը մի փրկություն ունի լոկ. երկինքը՝ անսահման կապույտ... Գլուխը ետ գցեց, որպեսզի միայն երկինքը տեսնի, ուսերը ցնցեց, ձեռքերը փորձեց ազատել կոշտ պարանի կապանքներից... Եվ այդ պահին մի սուր ծակոց զգաց այնտեղ, ուր սիրտն է... Բանի տեղ չդրեց... Սրտի ծակոց վաղուց ուներ... Զգաց նաև, թե ինչպե՛ս կապանքներից ազատված՝ սլանում է երկինք... Եվ այդ ծակոցն անսպասելի սլացքի հրճվանքից էր գուցե և ոչ թե Արաբաջիբաշիի դաշույնից, որ մինչև կոթը մխրճվեց սիրտը...

* * *

Օգոստոսի 26-ին և 27-ին տեղի ունեցան հետևյալ դեպքերը: Կառքերը երեկոյան վերադարձան՝ առանց հայ աքսորյալների: Մի քանի օրվա ճանապարհը տևել էր մի քանի ժամ: Կառապաններից մեկը՝ Հասան անունով, ցնցված պատմում էր քստմնելի սպանության բոլոր մանրամասները: Չնայած ուշ ժամին՝ լուրը տարածվեց քաղաքով մեկ: Հասանը հազիվ էր մտել տուն և լվացվել ճանապարհի փոշիներից, երբ չորս ժանդարմ ներխուժեցին, գրեթե կիսամերկ հանեցին տնից և մութ փողոցներով տարան զորանոց: Այստեղ Նուրիանէդդին բեյի հրամանով սոսկալի ջարդ տվեցին նրան՝ «կառավարության հասցեին զրպարտություններ տարածելու համար»: Ծեծից քիչ հետո «ոսկոր փշրողին» իր մոտ կանչեց մյութեսարիֆը և պահանջեց պատասխանատվության կանչել բոլոր մեղավորներին:

Հինգ աքսորյալների սպանության լուրը հասավ նաև Ջաֆարին: Արդեն լավացել էր և ուզում էր առավոտյան գործի գնալ: Գիշերը, սակայն, նորից վատացավ, խղճի խայթը և սարսափը սկսեցին տանջել նրան: Եթե Էնվերի հեռագիրը ժամանակին հանձնած լիներ Չերքեզին, հիմա դոկտորը Հաջի բաբայի սրճարանում հանգիստ նստած սուրճ խմելիս կլիներ: Բայց Օղուզը կար մեջտեղը, Օղո՛ւզը... Հիմա Չերքեզը պատժում է մեղավորներին: Իսկ ինքը՝ Ջաֆարը, մեղավո՞ր է, թե՞ ոչ: Այո՛, Ալլահի առջև մեղավոր է, բայց մարդկանց առջև՝ ոչ: Ալլահը մեծ է

իսկապես, բայց աշխարհի գործերը մարդիկ են որոշում: Օղուզը կվկայի, որ ինքն ընդամենը հինգ րոպեով մտավ հեռագրատուն, այն էլ ի՞նչ վիճակում... Հերթապահ ոստիկանն էլ կվկայի, որ մտնելն ու դուրս գալը մեկ եղավ, որ հազիվ էր քարշ տալիս ոտքերը: Չէ՛, Ջաֆարը մեղավոր չէ ոչ մեկի առջև... Եթե խորը մտածես, նույնիսկ Ալլահի առջև... Էնվերի հեռագիրը եկել է իր դուրս գալուց հետո... Վերջապես, ինքն էլ մարդ է, կարո՞ղ է հիվանդանալ, թե՞ ոչ:

Առավոտ կանուխ, նույնիսկ ժամանակից մի քիչ շուտ, Ջաֆարը բացեց իր պաշտոնական սենյակի դուռը: Էնվերի հեռագիրն օղակ-օղակ ընկած էր սեղանին: Միայն թե հասել էր մինչև եզրը, քանզի դրանից հետո ուրիշ հեռագրեր էին եկել, որ հասցեագրված էին Չերքեզին: Այդ բոլորը խնամքով անջատեց իրարից և տարավ հանձնեց հասցեատիրոջը: Վերջինս, մանրամասն ծանոթանալով, առանձնացրեց Էնվերի կարգագրությունը և դիմեց նրան.

– Ինչո՞ւ ես այսօր ներկայացնում:

– Հիվանդ էի, բե՛յս, այսօր առավոտյան միայն կարողացա գործի գալ:

Չերքեզը չմտավ մանրամասների մեջ, չհամեմատեց Թալեաթի հեռագրի հետ: Պարզապես հարցրեց.

– Հիմա լա՞վ ես:

– Փա՞ռք Ալլահին, բե՛յս, վատ չեմ:

– Ափսո՞ս մեր դոկտորը. հիմա այստեղ լիներ, կխնդրեի, որ քեզ քններ... Շնորհակալ եմ, Ջաֆա՛ր, կարող ես գնալ:

Հետո դռան մոտ կանգնած ոստիկանին խոժոռ դեմքով կարգադրեց.

– Օղուզին բե՛ր այստեղ:

* * *

15 հոկտեմբերի, 1915թ.

«Պանկալթի, Նալբանդ փող. 1, Կոնստանդնուպոլիս»:

Այս հասցեն քաջ ծանոթ էր փոստատարին: Ճիշտ է, արդեն մեկ ամսից ավելի կլիներ, ինչ փոստային ոչ մի առաքում չէր բերել այստեղ, բայց լավ գիտեր տանտիրուհուն, որն ամեն անգամ հուզմունքով էր ընդունում Չանղըրիից եկող նամակները: Այս մեկն էլ Չանղըրիից էր գալիս, ավելի շուտ՝ ետ էր գալիս ուղարկողին, և ծրարի վրա հատուկ կնիք կար, որ ֆրանսերեն ասում էր. «Parti sans lesser l'adresse»[1]: Փոստատարն իզուր փնտրեց հետադարձ հասցեում ապրող անձին՝ տիկին Չիլինկիրյանին: Ի վերջո, իր պարտքը կատարած լինելու համար ծրարը թողեց նույն թաղում գտնվող «Քյուրքչյան» դեղատանը:

Յաննին փորձեց ամեն կերպ, արժանապատվությամբ, առանց իրենց սկզբունքներին դեմ գնալու՝ փրկել ամուսնուն: Նամակում նա գրում էր որպես վերջին պատգամ. «Ա՜հ, Ռուբե՛ն, պետք է սիրուց կառչենք. միայն նա

[1] Մեկնել է՝ առանց հասցե թողնելու (ֆրանսերեն):

Ռուբեն Սևակը կնոջ՝ Յաննի Ապել-Չիլինկիրյանի հետ, 1910թ., ապրիլ, Լոզան

կարող է պահել մեզ այս աշխարհում»: Այդ պատգամը հասցեագրում էր որքան Ռուբենին, նույնքան էլ իրեն: Մինչև կյանքի վերջը՝ 1967թ. դեկտեմբերի 27-ը, ամենայն արթնամտությամբ հավատում էր, որ Ռուբենը ողջ է և առասպելական հերոսուհիների հավատարմությամբ սպասում էր նրա վերադարձին: Նա ճշմարիտ էր յուրովի, քանզի այն սերը, որ ստեղծեցին միասին, պիտի ապրեր անգամ նրանց մահից հետո:

Նույն օրը՝ հոկտեմբերի 15-ին, Յաննին երկու զավակների և մոր հետ ճանապարհ ընկավ դեպի Շվեյցարիա՝ ընդմիշտ թողնելով այն երկիրը, որ գերեզման դարձավ մի ամբողջ ժողովրդի համար:

1915թ. հունիսի 22-ին, երբ Ռուբեն Չիլինկիրյանի դուռը ծեծեցին... նա տնից դուրս գալուց առաջ ասաց Յաննիին. «Երբեք մի՛ մոռնար, որ զավակներդ հայ են»: Ու Յաննին չմոռացավ...

Տիկին Սևակը հետագայում հրաժարվեց գերմանական հպատակությունից և իր զավակների՝ Լևոնի և Շամիրամի հետ հաստատվեց Ֆրանսիայում: Նա մինչև կյանքի վերջը Գերմանիա չգնաց, անգամ իր ծննդավայրը: Մինչև կյանքի վերջը հրաժարվեց գերմաներեն խոսել, իսկ զավակներին արգելեց գերմաներեն սովորել: Նա համոզված էր, որ կայզերական Գերմանիան օսմանյան Թուրքիայի հետ հավասար պատասխանատու է միլիոնավոր հայերի նահատակության համար:

Բանաստեղծի եղբորորդին՝ Հովհաննես Չիլինկիրյանը՝ Նիցցայից ոչ հեռու գտնվող Կանյ-սյուր-մեր քաղաքում հիմնեց «Ռուբեն Սևակի հիշատակի տունը» (Ալ. Թոփչյան), իսկ Էջմիածնում՝ Մայր Աթոռում՝ Ռուբեն Սևակի անվան թանգարան:

ՊԶՏԻԿ ՍԻՐՏԴ

Ես մերթ կխորհիմ թե աստղերն ի՞նչ են,
Սիրող աչերու պես քաղցր ու ջինջ են.
Ու ամպերն ի՞նչ են, ու Աստված ո՞վ է
Նախանյութն առջին մարմի՞ն է, հո՞վ է...

Ու չէ՞ կարելի մեծ փիեզերքին
Մրովի հասնիլ օր մը եզերքին.
Ու Անհունությունն իրավ անհո՞ւն է,
Ու Անմահությո՛ւնը լոկ անո՞ւն է...

Հիմար եմ, որ այսպէս խոր կխորհիմ,
Ես որ չի գիտցա դեռ, պաշտելիդ իմ,
Ինչո՞ւ օր մը զիս սիրով սիրեցիր,
Թե կսիրեիր՝ ինչո՞ւ լքեցիր...

Չկրցա ճանչնալ պզտըլիկ սիրտդ,
Իմ մեկ ափիս մեջ փշրելիք սիրտդ,
Բայց դեռ կխորհիմ՝ երազիս մեջեն՝
Թե աստղերն ի՞նչ են... Սիրո պես ջի՛նջ են...

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Երազիս մեջ կարոտավառ
Համբուրեցի հողն հայրենի,
Վարդերի հետ արտասվեցի՝
Արցունք դառավ ցողն հայրենի:
Մասիսն հեռվից նայում էր ինձ,
Արագածն էր ոտքերիս տակ,
Ծաղիկների թերթերի հետ
Սիրտս լվաց շողն հայրենի:
Երբ շուրթերս գետնին կպան,
Թվաց արևն եմ համբուրում,
Թվաց, թե իմ Հայաստանի
Բոլոր սարերն եմ համբուրում,

Մեր դյուցազուն նախնիների
Շիրմաքարերն եմ համբուրում,
Նվիրական նոր հույզերով
Սիրտս լցրեց հողն հայրենի:
Օտար մեղրից հազար անգամ
Քաղցր է ծիլը հայոց հողի.
Հայրենիքիս կաթիլ ջուրը
Մի օվկիանի հետ չեմ փոխի,
Սրբություն են քուլաները
Երդիկներից ելնող ծխի,
Թող հար-հավերժ կանաչ մնա
Նվիրական հողն հայրենի:

Դրաչյա Քոչար

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Մեսրոպ էր անունը, և որովհետև թուրքերենի ուսուցիչ էր, Մեսրոպ էֆենդի էին ասում բոլորը:

Ընդհանուրի կողմից ճանաչված ու ընդունված հեղինակություն էր նա, ամեն տեղ՝ հաճելի զրուցակից, բոլոր գրասերների, լեզվագետների ու լրագրողների համար՝ խորհրդատու, հայտնի ընտանիքներում՝ ցանկալի հյուր: Ամեն տեղ ու ամենուրեք հաճույքով, խորին բավականությամբ ու հիացմունքով ունկնդրում էին նրա թուրքերեն խոսակցությունը, լսում էին նրա գեղեցիկ, նրբին, դասականորեն ճիշտ առոգանությունը: Մեդրեսե[1] ավարտած արաբի պես նաև արաբերեն գիտեր և պարսիկ գիտուն ախունդի[2] պես՝ ֆարսերեն[3]:

Նա մեր թուրքերենի ուսուցիչն էր, և մենք, որ նախավերջին դասարան էինք հասել, դեռ ոչ մի անգամ նրա բերանից ոչ մի հայերեն բառ չէինք լսել:

Բարձրահասակ էր, տոհմիկ իշխանի կերպարանքով: Խոշոր-խոշոր սև աչքեր ուներ, միֆական հելլենացու դեմք, ուժեղ կամք արտահայտող ծնոտ, լայն կուրծք, երկար թևեր, մեծ, բայց գեղեցիկ ձեռքեր: Եվ ամենից գեղեցիկն այդ սպարտական մարմնի վրա նրա հոյակապ, կոթողական, հպարտ գլուխն էր:

...Հայ մեծ գրող, իրավագետ ու մեջլիսի[4] ոսկեբերան պատգամավոր Գրիգոր Զոհրապի ու բանաստեղծ Դանիել Վարուժանի ընկերը, սրտակիցն ու բարեկամն էր Մեսրոպ էֆենդին:

...Մեսրոպ էֆենդին, երկուսի մեջտեղով, հասակով երկուսից էլ բարձր, սրտով հավասար ու խոնարհ, քայլում էր՝ մտերմիկ զրույցներին նվիրելով թանկագին ժամեր իր բազմազբաղ առօրյայից: «Բայց նա ո՞ր լեզվով է խոսում հայ վիպագրի ու հայ բանաստեղծի հետ զբոսանքների այդ պահերին կամ ընտանեկան սեղանի շուրջը: Մի՞թե դարձյալ թուրքերեն»,- մտածում էինք մենք ու չէինք պատկերացնում ականավոր թուրքագետին հայերեն խոսելիս, որովհետև չէինք լսել երբեք, ո՛չ մի անգամ, ո՛չ դասարանից ներս, ո՛չ էլ դրսում, որ նա հայերեն խոսեր:

---

[1] **մեդրեսե** - մահմեդական միջնակարգ և բարձրագույն դպրոց:

[2] **ախունդ** - մահմեդական կրոնավոր:

[3] **ֆարսերեն** - պարսկերեն:

[4] **մեջլիս** - *այստեղ՝* Թուրքիայի պառլամենտը՝ Ազգային մեծ ժողովը:



Դանիել Վարուժան



Սիամանթո



Կոմիտաս վարդապետ

...Մեսրոպ էֆենդին իսկապես Ստամբուլի թուրք համալսարանի զարդն էր, իսկապես հեղինակ էր թուրքերենի քերականության ամենից լուրջ դասագրքի, իսկապես մաքուր թուրքերեն խոսելու և թուրքական առոգանության դասատու էր եղել սուլթանի որդիների համար: Նաև հայատառ թուրքերեն թերթ էր հրատարակում.... Ինչ՞ եր ասես չէին ասում Մեսրոպ էֆենդիի մասին: Մենք հպարտությամբ էինք լսում այդ պատմությունները, որովհետև այդ երևելին հայ էր և մեր ուսուցիչն էր, բայց չէինք սիրում, որովհետև ոչ մի անգամ նույնիսկ չժպտաց մեզ հայերեն: Չէինք սիրում, բայց հպարտ էինք զգում մեզ, որ թուրքական պետության մեջ կան այդպիսի հայեր, մեր ժողովրդի անունն ու համարումը պահող այդպիսի անձնավորություններ: Մեզ համար նա միայն թուրքերենի ուսուցիչ էր և թուրքի պես միշտ մռայլադեմ էր մեր աչքում:

...Այդպես հասանք մենք վերջին դասարան, երբ պատերազմը պայթեց:

Հազար ինը հարյուր տասնհինգի գարնանը Օսմանյան կայսրության հեռավոր ծայր գավառներից տեղահան էին անում քաղաքների, գյուղերի ամբողջ բնակչությանն ու քշում դեպի հարավ, դեպի Իրաքի ու Սիրիայի անապատները:

Ինչպես հետո գաղտնագրերը ցույց տվեցին, վաղուց ծրագրված ու պատրաստված ժողովրդասպանություն էր դա՝ պատմության մեջ չեղած ու չլսված: Վաղուց ծնված ու հիմա այնպես դաժանորեն գործադրվող թուրք պետական մտայնությունն էր հաղթանակում: Ամեն օր մեկը մյուսից առավել սոսկումնալի, ավելի անհավատալի ու ավելի սահմռկեցուցիչ լուրեր էին լսվում: Տեղահան ժողովրդին զանգվածաբար սպանում էին տարեգրության ճանապարհներին, ձորերը լցվում էին երեխաների, կանանց ու ծերունիների դիակներով, գետերը կարմրում էին նրանց արյունից:

...Հիմա արդեն հերթը քաղաքի մտավորականությանն էր հասել...

...Մի օր վաղ առավոտ, ծանրաքայլ ու պատկառելի, դասարան մտավ Մեսրոպ էֆենդին: Նրան տեսնելով՝ մենք սոսկումով իրար նայեցինք, մեր

մարմինները փշաքաղվեցին: Եկել է մեզ թուրքերենի քերականությունը սովորեցնելու՝ թուրքերեն մեզ «բարի առավոտ» մաղթելով:

...Բայց ահա ծանրաքայլ, գլուխը լայն կրծքին հակած՝ մոտեցավ ամբիոնին Մեսրոպ էֆենդին սովորականից ավելի մռայլ ու նայեց մեզ: Նայեց խելագարի հայացքով, որից բոլորս սարսռեցինք: Եվ սկսեց խոսել: Օ՜ զարմանք, նրա շրթունքները հայերեն բառեր էին արտասանում.

– Սիրելի՜ հայորդիներ... անուշի՜կ զավակներս...

Այդ խոսքերը շշնջաց ու շրթունքները դողացին, աչքերը լցվեցին, կրծքով հենվեց ամբիոնին: Վայելչատես, վսեմաշուք Մեսրոպ էֆենդին փոքրացել էր կարծես, փոքրացել էր ու խեղճացել:

Նայում էինք նրան, և թվում էր մեզ, թե սարսափը գիշատիչ թռչունի կերպարանքով սավառնում է մեր գլխավերևում:

– Զավակնե՛րս,– կրկնեց նա գունատված,– անողորմ է իրականությունը մեզի համար... Ազգովին նահատակվելու և պատմությունեն հեռանալու ենք. սև վտանգն է կախվեր հայոց ազգի վրա: Զավակնե՛րս, հայորդինե՛ր, այս գիշեր կալանքի են առնվեր Կոմիտաս, Զոհրապ, Սիամանթո, Վարուժան և բազո՛ւմ, բազո՛ւմ այլք... կեռ յաթաղանը պիտի անոնց հանճարեղ գանգերն ալ փշրե...

...Փլվեց ամբիոնին, երկու ափերով աչքերը ծածկեց: Մենք, որ ժպիտ չէինք տեսել նրա հայկական աչքերում, նրա հայերեն լացը տեսանք: Դասարանում լսվեցին հեծկլտոցներ: Ես հեկեկում էի ջղաձիգ ցնցումներով:

Քիչ հետո Մեսրոպ էֆենդին սթափվեց, վշտով և հուսաբեկ հայացքով նայեց մեզ:

Ու խոսեց.

– Հիմա ոչինչ չունինք մենք, զավակնե՛րս, ո՛չ հույս ու ապավեն, ո՛չ զենք ու զորություն: Ունինք միայն հայ լեզու ու հայ գիր... Պահպանեցե՛ք, որ չկորսվին, պահպանեցե՛ք հայ լեզուն և հայ գիրը, եթե փրկվի՛ք այս եղեռնեն: Եթե իմ հիշատակս հարգել ցանկանաք, սիրեցե՛ք և գալոց սերունդներուն ավանդեցե՛ք հայ լեզուն և հայ գիրը...

...Դարձյալ դողացին շրթունքները, դարձյալ աչ-



Տիրան Քելեկյան



Սմբատ Բյուրատ



Երուխան

քերը լցվեցին, խոշոր-խոշոր սև աչքերը, ու վերստին խոսեց.

– Մնաք բարյա՛վ, զավակնե՛րս... Մնաք բարյա՛վ: Այլևս երջանկություն պիտի չունենամ ձեզ տեսնելու...

Դարձյալ հեծկլտանքներ ու հեկեկոց լսվեցին դասարանում:

– Գիտցե՛ք միայն, զավակնե՛րս,– շարունակեց զարմանալի հանգիստ ձայնով,– որ ձեր թուրքերենի խիստ ուսուցիչը խիստ սիրտ չուներ: Ան կսիրեր ձեզ և բոլոր մանուկները, կսիրեր բոլոր ազգերու լեզուները և ամենեն ավելի՝ հայոց նվիրական լեզուն: Գիտցե՛ք, որ ան հայ էր ծնվեր, հայ ապրեցավ և հայ ալ պիտի մեռնի հպարտությամբ: Իսկ դուք չմոռնաք վերջին խնդիրքս՝ ապրեցուցե՛ք հայ լեզուն ու հայ գիրը: Մնաք բարյա՛վ...

Եվ երբ այդ խոսքերից հետո նա ծանրաքայլ ու լուռ դուրս եկավ դասարանից, հասկացանք, որ գնում է՝ մեռնելու, որ վաղը կամ գուցե հենց այսօր աշխարհը կկորցնի այդ մեծ մարդուն:

...Նշանավոր թուրքագետն ընդունելություն է խնդրում ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշայի մոտ:

Այո՛: Գայլի որջը, ամենակատաղի գայլի: Գնում է Թալեաթի մոտ ու դեռ ոտքի վրա՝ հուզմունքով ու զայրույթով դիմում է ներքին գործերի ամենազոր մինիստրին.

– Եկել եմ հարցնելու Ձեզի, Թալեա՛թ փաշա, այս ի՞նչ կկատարվի: Ինչո՞ւ վերադարձուցեր եք զուլումի տարիները, և ավելի ահավոր չափերով, քան տեսած էինք...

Ի՞նչ է կատարվում,– կրկնում է Մեսրոպ էֆենդին,– ես եկեր եմ՝ Ձեզմե բացատրություն պահանջելու...

– Դուք այդ իրավունքը չունեք,– պատասխանում է Թալեաթը,– բայց որպես հին բարեկամի՝ ես կարող եմ Ձեզ բացատրություն տալ. օսմանցիների տերության մեջ պիտի միայն օսմանցիներ ապրեն: Այդպես է մեր պետական կամքը: Հայերդ չուզեցիք օսմանցիներ համարվել, ուրեմն՝ չպիտի՛ ապրեք այս երկրում: Այդպես որոշված է Աստծու և Մարգարեի ողորմածությամբ: Չպիտի՛ ապրեք: Որոշումն անխախտելի է և ինձնից ու իմ գլխից բարձր...

Մեսրոպը շշմել էր: Նա այդքան բացարձակ խոստովանություն չէր սպասում նույնիսկ Թալեաթից:

Վերջին ուժերը հավաքելով՝ Մեսրոպը վերջին հարցն է տալիս.

– Իսկ ինչո՞վ եք Դուք տարբերվում արյունոտ Սուլթան Համիդից, փաշա՛, և ինչո՞ւ մենք միասին գահընկեց արինք Սուլթանին...

– Շատ բանով ենք տարբերվում, մալում[1], շատ ու շատ բանով: Նա միամիտ, հիմար ու վախկոտ մարդ էր՝ երեսուն տարի սուլթանական գահին նստած: Կարծում էր, թե հայերին մեկ-մեկ կամ խումբ-խումբ կո-

---

[1] **մալում** – թուրքերեն՝ ուսուցիչ:

տորելով կարող է գլուխն ազատել այսպես կոչված «հայկական հարցի» գլխացավանքից: Այդպես էր կարծում այդ սուլթանը: Իսկ մենք այդքան միամիտ ու վախկոտ չենք: Նրա փորձից մենք հասկացանք, որ ճիշտ միջոցը հայերին ազգովի վերացնելն է: Չլինեն հայեր՝ չի լինի և «հայկական հարց»: Հասկանո՞ւմ եք ինձ, մալում: Ինչո՞ւ եք գունատվել, ինչո՞ւ եք դողում այդպես: Ձեզ համար կարող եք չանհանգստանալ: Ես կարգադրություն կանեմ, որ նկատի ունենալով Ձեր ծառայությունները...

– Հիմա պատիվ չէ ինձ համար Ձեր հարգանքն ու գնահատությունը, հիմա անպատվում եք ինձ՝ կյանքս ինձ թողնելով...

Թալեաթ բռնակալի լայն դեմքին խաղում է միայն իրեն հատուկ դիվական ժպիտը, և շտապ իր մոտ է կանչում Ստամբուլի ոստիկանապետին.

– Մեսրոպ էֆենդին վիրավորված է, որ ուրիշ ականավոր հայեր չկան արդեն Ստամբուլում, իսկ ինքը ողջ առողջ է: Մեռնելն իր համար պատիվ է համարում նա... մի՛ զրկիր նրան այդ պատվից, Փեթի՛ր բեյ: Ես չեմ կարող մերժել Մեսրոպ էֆենդիի նման հարգելի մարդուն...

Պատմում էին, որ Մեսրոպ էֆենդին շատ ուրիշ ծանր խոսքեր է նետել ամենազոր Թալեաթի երեսին և այդպիսով արագացրել է իր նահատակությունը...

Տագնապ, Լևոն Թոքմաջյան, Էջմիածին, 2011թ.

Ըստ Վահան Մինախորյանի

ԱՐԴԱՐ ՎՐԵԺԻ ՈԳԻՆ

1921 թվականի մարտի 15-ն էր: Առավոտյան սովորականից շուտ արթնացա: Արևի շողերն արդեն հասել էին դիմացի տան պատուհանին: Հազիվ էի ավարտել նախաճաշս և ուզում էի բազկաթոռս մոտեցնել լուսամուտին, երբ հանկարծ դիմացի շքամուտքը բացվեց, և հայտնվեց Թալեաթը ու փղի պես ծանրորեն սկսեց իջնել փողոցով: Գրպանումս շոշափելով ատրճանակը՝ դուրս նետվեցի: Սիրտս հուշում էր, որ այս անգամ անկարող պիտի լինի ինձնից փախչել, բայց և հուզումը բազմալեզու աղաղակներով փոթորկում էր հոգիս: Ուղեղս գործում էր տենդագին: «Վազի՛ր, անցի՛ր մյուս մայթը և՝ ուղղակի՛ ճակատին: Շո՛ւտ, շո՛ւտ, շուտ վազի՛ր, անցի՛ր փողոցը»,- կարգադրում էր ներքին հզոր մի ձայն:

Հակառակ մայթով քայլելով՝ հավասարվեցի նրան, ապա արագընթաց առաջ անցա: Երբ բավական իջել էի, կտրուկ դիմեցի դեպի այն մայթը, որով գալիս էր Թալեաթը, և քայլեցի նրան ընդառաջ: Այժմ արդեն դեմ դիմաց մոտենում էինք միմյանց: Նա գալիս էր՝ ճեմելով և ձեռնափայտը անփույթ ճոճելով: Զարմանալի՜ բան: Փոթորկվող սիրտս միանգամից խաղաղվեց, և տարօրինակ անդորրություն համակեց էությունս: Գրեթե հավասարվել էինք, հրեշը շեշտակի նայեց ինձ. աչքերի մեջ առկայծեց մահվան սարսուռը: Նա վարանեց, մի քիչ թեքվեց, որ խուսափի, բայց զենքը դուրս քաշելս ու գլխին պարպելս մեկ եղավ: Թալեաթը հարվածից ցնցվեց, հզոր մարմինը մի ակնթարթ ձիգ պրկվեց, ապա օրորվեց և սղոցված կաղնու պես թնդյունով տապալվեց երեսի վրա: Բնավ չէի կարծում, թե այդպես դյուրին պիտի փռեի գետնին: Մի պահ մղում ունեցա բոլոր գնդակները պարպելու մեջքին, բայց, չգիտեմ ինչու, ատրճանակս նետեցի: Սև, թանձր արյունը վայրկենապես լճացավ Թալեաթի գլխի շուրջը: Կարծես ջարդված անոթից մազութ էր թափվում:

Ու այդ պահին՝

- Մա՛րդ սպանեց,- լսեցի:

- Բռնեցե՛ք, բռնեցե՛ք,- ականջիս հասավ ինչ-որ մեկի բամբ ձայնը:

Ամբոխն անմիջապես շրջապատեց ինձ:

Չէի հասկանում, թե ի՛նչ են ուզում:

Մեկն ինձ քաշքշեց, մյուսներն սկսեցին անխնա հարվածել: Աչքերս մթնեցին: Գլխիցս հոսող արյունը ակոսում էր դեմքս: Հասան ոստի-



Սողոմոն Թեհլերյանը և կինը՝ Անահիտ Թաթիկյանը, Փարիզ, 1924թ.

կանները, թևերս ոլորեցին ու տարան: Ոչինչ չէի զգում: Համակվել էի ներքին հրճվանքով, որի նմանը չէի զգացել երբեք:

Հաջորդ առավոտ, երբ քննիչը հարցրեց, թե՝

– Գիտե՞ք՝ ո՛վ էր այն մարդը, որին երեկ սպանեցիք:

– Այո՛, Թալեաթ փաշան, – ասացի:

– Ի՞նչը Ձեզ դրդեց այդ ոճիրը գործելու:

– Ոճրագործը ես չեմ, այլ՝ Թալեաթը: Նրա հրամանով էր, որ սպանվեցին մայրս, եղբայրս, ազգականներս և իմ ժողովրդի մի մեծ հատվածը: Այդ օրից ես ապրել եմ միայն նրանից վրեժ լուծելու տենչով:

– Ընդունո՞ւմ եք, որ կատարել եք կանխամտածված սպանություն:

– Իհա՛րկե:

– Ձեր խիղճը չի՞ տանջում Ձեզ, որ մարդ եք սպանել:

– Ընդհակառակը, սիրտս լցվում է ուրախությամբ, որ մեկ միլիոն հայերի վրեժը վերջապես լուծված է: Ես երդվել էի մորս անհայտ գերեզմանով և երդումս կատարեցի:

– Գիտե՞ք, որ օրենքով Ձեզ մահապատիժ է սպառնում:

– Գիտե՛մ: Բայց վրեժս լուծված է, հիմա ինչ լինում է, թող լինի:

Չորս ամիս տևեց իմ գործի քննությունը: 1921 թվականի հունիսի 6-ին Բեռլինի միջազգային դատարանում բանավեճն ավարտվեց: Նախագահը, երդվյալները առանձնացան՝ խորհրդակցելու և դատավճիռ արձակելու:

Քիչ անց դատական կազմը դահլիճում զբաղեցրեց իր տեղը, ապա հանդիսավոր հնչեց երդվյալներից մեկի ձայնը.

– Հանցավո՞ր է ամբաստանյալ Սողոմոն Թեհլերյանը՝ 1921 թվականի մարտի 15-ին Թալեաթ փաշային սպանելու համար: Ո՛չ, հանցավոր չէ՛:

Սրահը դղրդաց որոտընդոստ ծափահարություններից: Երբ աղմուկը դադարեց, երդվյալը շարունակեց.

– Բանտարկության հրամանը ամբաստանյալի նկատմամբ ջնջված է: Սողոմոն Թեհլերյանն արդարացված է:

ՎԱՐՊԵՏԸ՝ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ, ՆԱԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ...

Ըստ Վիգեն Իսահակյանի «Դայրս» հուշագրության և համացանցային տվյալների՝ ներկայացրին Անժել Քյուրքչյանը և Լիլիթ Տեր-Գրիգորյանը

Վարպետը՝ Ավետիք Իսահակյան մեծ բանաստեղծը, նաև մեծ հայրենասեր և քաղաքական-հասարակական իրատես գործիչ էր:

Քաղաքական գործունեության հետևանքով 1908-1909 թվականներին կայսերական իշխանությունների կողմից ձերբակալվում է և մի շարք այլ գործիչների հետ նետվում Թիֆլիսի տխրահռչակ Մետեխի բանտը: Հայկական շրջանների գրավականի դիմաց նրան մինչև դատավարության սկսվելն ազատ են արձակում:

Թիֆլիսի հայ համայնքն իր գործիչների դատը պաշտպանելու համար վարձում է նշանավոր փաստաբան Ալեքսանդր Կերենսկուն՝ փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծված ժամանակավոր կառավարության ապագա նախագահին: Նա Իսահակյանի գործը (մոտ 6000 էջ) ուսումնասիրելուց հետո խորհուրդ է տալիս միառժամանակ թողնել Ռուսաստանը, քանզի ակնհայտ էր, որ նրան կդատապարտեն ու կաքսորեն Սիբիր՝ տաժանակիր աշխատանքի:

Ավետիք Իսահակյանի դիմանկարը, Մարտիրոս Սարյան, 1940թ.

Ահա այսպես սկսվում են Իսահակյանի վտարանդիության տարիները: 1911 թվականի հունիսին նա անլեգալ անցնում է ռուս-թուրքական սահմանը, ապա ոտքով գնում Կարին, Էրզրում, լեռների, անտառների միջով, Եփրատի ու Ճորոխի ափերով՝ Տրապիզոն, որտեղից օսմանյան մի շոգենավով՝ Կոստանդնուպոլիս: Որոշ ժամանակ ստիպված է լինում այնտեղ

մնալ՝ ներման որոշման սպասումով, որպեսզի վերադառնա Կովկաս: Պոլսում գոյությունը պահպանելու համար թերթերի համար պատմվածքներ ու հոդվածներ էր գրում, երբեմն անվճար թարգմանություններ էր կատարում, ընդ որում՝ նաև Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության հանձնարարությամբ: Հովհաննես Թումանյանին ուղղված նամակներից մեկում գրում է. «Այս նամակը գրում եմ քեզ՝ քար սեղմելով սրտիս վրա... Այստեղ բոլորովին մենակ եմ և ընկերներ չունեմ»:

1912 թվականի հուլիսի 10-ին Իսահակյանը Պոլսից մեկնում է Վիեննա, որտեղ իրեն են միանում կինը՝ Սոֆյան, և որդին՝ Վիգենը, ապա տեղափոխվում է Շվեյցարիա՝ Ժնև. այստեղ հայ և ռուս քաղաքական վտարանդիներից կազմված մեծ գաղութ կար: Ժնևում Իսահակյանը ծանոթանում է պարսկահայ Հովհաննես Խան-Մասեհյանի հետ, ով՝ որպես Գերմանիայում Պարսկաստանի դեսպան, հետագայում շատ էր օգնելու Իսահակյանին: Հովհաննես Խան-Մասեհյանը մեծ հեղինակություն էր վայելում հայ գաղութում և գրականագետների շրջանում՝ որպես Շեքսպիրի ողբերգությունների հայերեն կատարյալ թարգմանությունների հեղինակ:

... Շվեյցարիայում Իսահակյանի նյութական վիճակը վատանում է, քանի որ չի աշխատում և դրսից ոչ մի օգնություն չի ստանում: Սակայն հանկարծ մի նոր հեռանկար է բացվում նրա համար. 1914 թվականին դոկտոր Յոհաննես Լեփսիուսի նախագահությամբ Բեռլինում հիմնվում է «Հայ-գերմանական ընկերությունը»: Այն, չեզոք լինելով իր բնույթով, արժանացել էր նաև Բեռլինում ռուս դեսպանի հավանությանը: Եվ Իսահակյանն անսպասելի հրավիրվում է Բեռլին, որ աշխատակցի այս ընկերությանն ու խմբագրի նրա «Մեսրոպ» ամսագիրը, որը պետք է ունենար երկու բաժին՝ գերմաներեն և հայերեն, որպեսզի երկու ազգերին ծանոթացնի միմյանց:

Իսահակյանը ուրախ էր, որ մի կայուն ծառայություն կունենա և կկարողանա աշխատել ու ընտանիքի գոյությունն ապահովել (քիչ անց՝ Բեռլին է կանչում նաև ընտանիքին):

Իսահակյանի համար ճակատագրական եղավ այցելությունը Հովհաննես Խան-Մասեհյանին, ով այն ժամանակ արդեն Պարսկաստանի դեսպանն էր Բեռլինում: Իմանալով Իսահակյանի՝ «Հայ-գերմանական ընկերակցությանն» աշխատակցելու մասին՝ Մասեհյանն անդամագրվում է այդ ընկերությանը և խոստանում հնարավորինս օգնել: Իսկ տեղեկանալով Իսահակյանի ընտանիքի վտարանդիության կարգավիճակի մասին՝ օգնում է Պարսկաստանի անձնագիր ստանալուն, որը Իսահակյանին հնարավորություն էր տալու անարգել ապրելու որտեղ որ ցանկանար: Անձնագիրը Ավետիս Բայազիդ ծածկանվամբ էր, որն Իսահակյանն ընտրել էր՝ ի հիշատակ նախնիների քաղաքի: Իսահակյանի և Մասեհյանի բարեկամությունը շարունակվում է մինչև 1931 թվա-

կանը՝ միչև վերջինիս անժամանակ մահը, որը վրա է հասնում Ճապոնիայից (որտեղ նա այդ ժամանակ Պարսկաստանի դեսպանն էր) Եվրոպա վերադարձի ճանապարհին:

... Իսահակյանը ուզում է վերադառնալ Կովկաս, բայց ներման թուղթը ուշանում էր: Այդ պայմաններում Իսահականի ընտանիքին օգնում է պարսկահպատակի անձնագիրը, քանի որ Գերմանիայում հալածում էին ռուսահպատակներին, և Ռուսաստանի հետ կապը կարող էր լուրջ անախորժություններ պատճառել:

Ահա այդ ժամանակ Իսահակյանը որոշում է Գերմանիայից ընտանիքով տեղափոխվել Շվեյցարիա՝ մի չեզոք, խաղաղ երկիր, ինչը իրագործում է Խան-Մասեհյանի օգնությամբ, այլև ուղեկցությամբ:

... Ժնևում Իսահակյանի տունը հոգևոր կենտրոն է դառնում այդտեղ ապաստան գտած հայերի համար: Շատ էին գերությունից ազատված հայ զինվորները, որոնց մեջ կային հայ հեղափոխական դաշնակցությանը հարող հայրենասեր տղաներ, ովքեր ծրագրում և նախապատրաստում էին հայ ազգի դահիճ Թալեաթ փաշայի սպանությունը: Այս գործում իր մասնակցությունն է բերում նաև մեծ հայրենասերը՝ Իսահակյանը: Նրան հանձնարարվում է տեղեկություններ հավաքել Թալեաթի տեղաշարժերի վերաբերյալ, իմանալ ծածկանունները, քանզի ոճրագործը զգում էր, որ գալու էր հատուցման արդար ժամը, և ընդհատակ էր անցել:

Կովկասից հասնող լուրերը տագնապալից էին. թուրքերը ներխուժել էին Արևելյան Հայաստան, 600000 փախստականներ կային: Մեծ մասը թաքնվում էր լեռներում՝ քաղցի, համաճարակի, կորստի մատնված: Երևանում, Ալեքսանդրապոլում քաոս էր, սով էր մոլեգնում: Էնվեր փաշան եկել էր Կովկաս՝ նոր կոտորածներ կազմակերպելու: Իսահակյանը հուսահատված էր՝ տեսնելով Հայաստանը բոլորից լքված, իսպառ ոչնչացված:

... Ժնևի հայկական կոմիտեն կազմակերպել էր մի երեկույթ: Հրավիրել էր քաղաքի մեծավորներին՝ նրանց ծանոթացնելու Հայկական հարցին:

Դահլիճը լեփ-լեցուն էր. այստեղ էին Ժնևի քաղաքագլուխը, Շվեյցարիայի, Ֆրանսիայի ճանաչված պաշտոնյաներ, ռուս, հրեա մտավորականներ, հայ անվանի մարդիկ՝ Ավետիս Ահարոնյանը, Լևոն Շանթը, Ալեքսանդր Բեգլարյանը, Ռաֆֆու որդին՝ Արամը, ամբողջ հայ գաղութը:

Ժնևի բոլոր հայ երեխաների մասնակցությամբ «Մայր Հայաստանը» պատկերող գեղարվեստական բաժնին հաջորդում են հռետորական ճառերը: Շվեյցարացիք խոսում էին հանդարտ՝ շեշտելով իրենց ավանդական չեզոքությունը, ֆրանսիացիք՝ ճառում վերամբարձ, ռուսները ամբաստանում էին Կերենսկուն և նրա ժամանակավոր կառավարությունը, հայերը հուզիչ, բոցավառ խոսքեր էին ասում: Սակայն դժվար

էր այդ կուշտ հասարակությանը հուզել և կարեկցություն գտնել: Այնուամենայնիվ բոլորը խարանում էին գերմանական իմպերիալիզմը և նրա ստոր ծառային՝ Թուրքիային:

Իսահակյանն այդ օրերին է գրել հետևյալ ցասումնալից բանաստեղծությունը, որը մինչև վերջին ժամանակներս մնացել էր անտիպ և տպագրվել է 1990 թվականին բանաստեղծի թոռան՝ Ավիկ Իսահակյանի կազմած *«Հայդուկի երգեր»* գրքում:

Ասա՛ մեզ, Եվրո՛պ, ո՞ւր ես շտապում՝
Ձեռներդ ներկած հայի արյունով.
Դու հոշոտեցիր սուրբ Հայաստանը,
Այժմ ո՞ւր ես փախչում արնոտ ձեռներով:

Քո խիղճը երբեք չխայթեց, Եվրո՛պ,
Փշրելով գանգեր բյուրավոր հայի.
Անաստվա՛ծ Եվրոպ, բարբարո՛ս Եվրոպ,
Անե՛ծք սերնդիդ՝ անե՛ծք դարերի...

Դեպի ծովերն ես շտապում հիմա,
Որպեսզի լվաս ձեռներդ արնոտ.
Ծովերը՝ փոքր են, օվկիանը՝ չնչին,
Որ մաքրեն խի՛ղճդ, խի՛ղճդ արյունոտ:

Հանցանքդ մեծ է, և ավելի շուտ
Ծովերն ու օվկիան արյուն կդառնան՝
Ձեռներիդ արնով, հայի արյունով՝
Անե՛ծք քեզ, Եվրո՛պ, անե՛ծք հավիտյան:

... Մեծ եղեռնը և Հայաստանի Հանրապետության անկումը հայերի ոգին կոտրել էին. այլևս ոչնչի չէին հավատում:

Իսահակյանը, գազազած, անիծում էր, այսպես ասած, քաղաքակիրթ ազգերին, որոնք իրենց ագահությամբ ու շահամոլությամբ ոչնչով չէին զիջում տաջիկ ու սելջուկ հորդաներին: Միայն մի զգացում էր տիրում՝ վրեժխնդրության զգացումը...

Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին դատապարտեցին մահվան և քաղաքական հուզումներից խուսափելու համար անգլիական կողմը նրանց տեղափոխեց Մալթա, որ այնտեղ հանգիստ պայմաններում իրականացնի նրանց մահապատիժը: Սակայն այնտեղ նրանց փոխանակեցին անգլիացի բանտարկյալների հետ և ազատ արձակեցին: 1919-ին արդեն սկսվեց կազմակերպվել հայ վրիժառուների խումբը և մշակվել հատուկ օպերացիա, որն անվանվեց «Նեմեսիս»:

Ավետիք Իսահակյանը, կինը՝ Սոֆիկը, որդին՝ Վիգենը, հարսը՝ Իզաբելլան, Երևան, 1938թ.

Այս օպերացիայի շրջանակներում մեծ հայրենասերի ծավալած գործունեության շատ մանրամասներ բացահայտվեցին բանաստեղծի մահվանից տասնյակ տարիներ անց և հիմնականում նրա անձնական նամակներից: Շահան Նաթալը, ով «Նեմեսիս»[1] օպերացիայի հիմնական կազմակերպիչներից էր համարվում, բանաստեղծին ուղղված նամակներում նրան դիմում էր ուղղակի *Ավո*: Փաստերը մատնանշում են այն հանգամանքը, որ Իսահակյանը ոչ միայն կապ ուներ, այլև հենց ինքն էր կազմակերպիչներից և ոգեշնչողներից մեկը, նա՛ էր ֆինանսական միջոցներ հայթայթում գործողություններն իրականացնելու համար:

Նամակներից պարզ է դառնում, որ Ավետիք Իսահակյանը հետևել է Թալեաթի տեղաշարժերին: 1919 թվականի նոյեմբերի 26-ին Վահան Զաքարյանին Ժնևից հղված նամակում գրում է.«Վերջերս Բեռլինի գազանը, հրեշը մի քանի օրով եկած է եղել Զվիցերիա, մինչև իմացանք, արդեն վերադարձել էր Բեռլին: Ժողով են ունեցել Բեռն... նույն անունով էր եկել, ինչ-որ Բեռլին ուներ»:

1919 թվականի աշնանը Իսահակյանը երեք ամսով Բեռլինում էր. նրան մի գաղտնի հանձնարարություն էին տվել: «Վրեժով լցված հայ տղերքի հետ պիտի հետևեր հայ ազգի դահիճ Թալեաթ փաշային, որը ուրիշի անվան տակ թաքնվում էր Բեռլինում և շարունակ բնակարաններ էր փոխում,- գրում է Վիգեն Իսահակյանը:- Ինչպես գիտենք, այս հրեշն իր արժանի պատիժն ստացավ. քաջ Սողոմոն Թեհլերյանը ինչպես մի կատաղած շուն սատկեցրեց նրան Բեռլինում՝ ասֆալտի վրա: Եվ հայրս հատուցման այդ սուրբ գործում նույնպես ուներ իր ավանդը»: «Դաշնակցության հին անդամները հիշում էին Ավոյի ավանդն այդ գործում. թող մեր երիտասարդներն էլ իմանան»,- գրում է Իսահակյանի որդին՝ Վիգենը:

---

[1] **Նեմեսիս** - հունական դիցաբանության մեջ վրիժառության աստվածուհին, որը պատժում էր հասարակական և բարոյական նորմերը խախտելու համար:

Իսահակյանի տանը բազմիցս խոսվել է Սողոմոն Թեհլերյանի մասին: Իսահակյանի պատմածներից հայտնի է դառնում, որ Բեռլինում նա բազմիցս հանդիպել է Թեհլերյանին և միասին զննել են Թալեաթի լուսանկարները: Հավանաբար այդ զննումները 1921 թվականի սկզբներին Բեռլինում հաստատված և Ալի Սալի բեյ վաճառականի կեղծանվան տակ ներկայացող Թալեաթին հայտնաբերելու համար են եղել:

1921 թվականի մարտի 15-ին Հարդենբուրգ փողոցի մյուս կողմում կանգնած էր Իսահակյանը, ով պատրաստ սպասում էր, որ եթե հանկարծ Թեհլերյանը չկարողանար սպանել, նա՛ էր սպանելու Թալեաթին: Թալեաթի սպանությունից հետո Իսահակյանը գրառում է.«Սողոմոնի հետ փողոց կիջներ ոչ միայն ինքը. ան ինքը չէր, որ փողոց կիջներ. իր մեջ կիջնեին դարերը, միլիոնավոր սպանվածները: Նա կտաներ իր առջև դրոշակը ամբողջ ժողովրդի պատվին...»:

Այն, որ Ավետիք Իսահակյանը Թալեաթի սպանության կազմակերպիչներից էր և գտնվում էր իրադարձությունների կիզակետում, հաստատում են նրա ուղարկած, այլև նրան հասցեագրված բազմաթիվ նամակներն ու գրառումները: Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվել են Իսահակյանին հասցեագրված երեք նամակներ. «Սիրելի՛ Ավո, այս րոպեին մի թուղթ գրեցի քո հասցեին, որով խնդրում եմ Մուշեղի, Հակոբի և իմ անունով, որ դու Բեռլինում եղած ատենդ աշխատես մեզ համար, որ մեզի թողնին Գերմանիայի, Ուկրաինայի վրայով Կովկաս գնալ: Այստեղից երևի Աշոտն էլ մեզ կընկերանա: Խնդրում ենք, ուրեմն, այս ուղղությամբ ավելին անել...»: Նամակի հեղինակը խոտորջուրցի վրիժառու Արտաշես Գևորգյանն է, ով 1922-ի ամռանը Ստեփան Ծաղիկյանի և Պետրոս Տեր-Պետրոսյանի հետ Թիֆլիսում սպանեց Խոտորջուրի ջարդերի անմիջական կազմակերպիչ Ջեմալ փաշային: Այն, որ Իսահակյանը մասնակցել է «Նեմեսիս» օպերացիային, կասկած չի հարուցում:

Իսահակյանը մեծ դեր ունեցավ նաև Թեհլերյանի արդարացման գործում: Սակայն նրա ցանկությամբ այս և մյուս բոլոր փաստերի մասին գրեթե չխոսվեց:

... Տեսնելով, որ ժնևում այլևս անելիք չունի՝ 1920 թվականին Իսահակյանը ծրագրում է տեղափոխվել Վիեննա կամ Վենետիկ, որտեղ կային հայկական դպրոցներ և մշակութային կյանք:

Որոշվում է, որ պետք է տեղափոխվեն Վենետիկ:

Վենետիկում Իսահակյանի ստեղծագործական կրակը կարծես արթնացել էր. սեղանին դրեց իր անկրկնելի *«Լիլիթը»*, մշակեց *«Սասնա Մհեր»* պոեմը, հրատարակեց բանաստեղծական մի ժողովածու՝ *«Աշնան ծաղիկներ»* խորագրով...

Լուրեր էին հասնում Հայաստանից, որ հայրենիքը կամաց-կամաց

ավերակներից վերականգնվում է, վերքերը դարմանվում են: Իսահակյանը նոր հույսերով էր լցվում, նորից հավատում մի հրաշքի: Այս մասին իր ծոցատետրում գրում է.«Հայ ազգը չի մեռնի, նա պիտի ապրի, պիտի ապրի ձեր գերեզմանների վրա՝ նոր, ազատ կյանքով»:

1925 թվականի գարնան սկիզբն էր: Վենետիկ այցելած հայ մեծերի հետ (Մարտիրոս Սարյան, Երվանդ Քոչար, Եղիշե Չարենց, Պողոս Մակինցյան...) շփումն ու զրույցները Իսահակյանին ավելի էին զգալ տալիս հայրենիքի կարոտը: Ի դեպ, Չարենցը Իսահակյանի ընտանիքի առաջին հայրենակից բարեկամներից էր, ով եկել էր Հայաստանից և Իսահակյանի համար դարձավ առաջին գրչընկերը՝ նոր Հայաստանից:

Երիտասարդ Չարենցի և արդեն մեծ գրող վարպետի զրույցների ժամանակ Չարենցը, բոցավառված, ասում էր, որ նա պետք է վերադառնա հայրենիք.«Ավետի՛ք, եկ, միացի՛ր մեր գործին. գիտեմ, որ դու երազում ես քո Արազը, քո ջաղացը. լավ, կտանք քեզ քո ջաղացը,- կատակով ասում էր Չարենցը,- այնպես որ մշակես և՛ հողը, և՛ գրականությունը»: Իսահակյանի այն մտորումներին, թե ինքն արդեն այրել է անցյալի հետ կամուրջները, և թե արդյո՞ք «նոր հասարակությունը» կկարդա, կհասկանա իրեն, Չարենցը, ներշնչված, պատասխանում է. «*Նոր հասարակությունում* բոլոր հոգեկան արժեքները իրենց տեղն ունեն՝ սկսած Նարեկացուց մինչև Թումանյան, մինչև պրոլետարական գրողները»:

Հայրենիք վերադառնալու գաղափարն արդեն իրական ձև էր ստանում Իսահակյանի մտքում: Գիտեր՝ ո՛ւր էր գնալու, սակայն ուզում էր իր աչքերով տեսնել, մասնակից լինել և իր բարեկամների հետ կիսել այդ օրերի դժվարությունները:

Դա իրականություն դարձավ 1926 թվականի սեպտեմբերի 26-ին, ըստ որում՝ ընտանիքը պիտի հաշտվեր օջախի մեծից բաժանվելու մտքի հետ, այն էր՝ առաջին անգամ ու երկար ժամանակով. այդ բաժանումը պետք է տևեր 4 տարի...

«Հայրս մտածկոտ էր երևում, հուզված,- գրում է որդին՝ Վիգենը:- Առաջին անգամ էր, որ ինձ հետ խոսելիս լուրջ խորհուրդներ էր տալիս...- Լսի՛ր, տղա՛ս, լսի՛ր հորդ: Պետք է իմանաս, որ մենք աղքատ մարդիկ ենք, ոչ մի բան չունենք, որի վրա հույս դնենք: Ես մի փոքր, դժբախտ ժողովրդի բանաստեղծ եմ: Դու հույսդ դի՛ր միայն քեզ վրա, համբերի՛ր...գլխավորն այն է, որ դու լավ սովորես, լսես քո ուսուցիչներին: ...Կարևոր է, որ լավ սովորես, որ... կարողանաս հասարակության մեջ մտնել, ինչպես հավասարը հավասարի: Գիտելիքները, կուլտուրան ջնջում են այն անարդարությունները, որ գոյություն ունեն մարդկանց միջև. գիտելիքներով զինված՝ դու կարող ես քեզ զգալ ավելի բարձր, քան այն մարդիկ, որոնք դրամի շնորհիվ են միայն գրավում ավելի բարձր սոցիալական դիրք: Լա՛վ սովորիր, հույսդ դի՛ր միայն քեզ վրա»: Նրանց հանդիպումը տեղի ունեցավ 1930 թվականին՝ որդու՝ Մուրադ

Ռաֆայելյան վարժարանն ավարտելուց հետո:



...Փարիզում Իսահակյանը, որպես ՀՕԿ-ի փոխնախագահի, բանաստեղծի՝ գրչի մարդու կորցրած տարիների հաշվին մեծապես օգտակար գործ էր կատարում՝ ներգաղթի կազմակերպում, Հայաստանի համար բնակելի շենքեր կառուցելու միջոցների հայթայթում, Երևանում հյուրանոցի կառուցման ծրագիր (ներկայիս՝ «Արմենիա»), հաստոցների, ավտոմեքենաների, գրամեքենաների առաքում, Փարիզի հայ ուսանողների հետ հանդիպումներ՝ իրենց գիտելիքներով հայրենիքին օգտակար լինելու թեմայով...

Իսահակյանը ողջ կյանքում հարստացրել է Հայաստանի գրադարանները՝ ամեն տեղից, որտեղ որ եղել էր, գրքեր էր ուղարկում: Իսկ Հայաստան վերադառնալիս իր հետ Պետական գրադարանի (ներկայիս՝ Ազգային գրադարանի) համար բերել էր 22 սնդուկ հայ քաղաքական պատմության վերաբերյալ ընտիր գրքեր.«Թող Երևանում երիտասարդ գործիչները,- ասում էր Իսահակյանը,- կարդան և իմանան հայոց հարցի մասին, հայոց նորաձև պատմության մասին»:

Իսահակյանը Փարիզում ծավալում էր նաև գրական, մշակութային, լուսավորական գործունեություն, պրոպագանդում էր գիտական և գրական այն արժեքները, որոնք ստեղծվում էին հայրենիքում: Այսպես, Երուսաղեմում ներկայացնում է Հրաչյա Աճառյանի *«Հայոց լեզվի պատմություն»* աշխատությունը, որն արժանանում է մրցանակի:

Այդ շրջանում Փարիզում արդեն հռչակի արժանացած Երվանդ Քոչարին Իսահակյանն էր խորհուրդ տվել ուսումնասիրելու հայկական դյուցազներգությունը՝ *«Սասնա ծռեր»* էպոսը, քանդակելու նրա հերոսների կերպարները: Իսահակյանի այս խորհուրդը նոր հորիզոններ էր բացել Երվանդ Քոչարի առաջ՝ կապված իր հարազատ, իր հայ հողի, հայ ազգի հետ: «Պարո՛ն Ավետիք, ինչ լավ գաղափար տվիք ինձ. իսկույն, հենց վաղվանից կսկսեմ ուսումնասիրել նյութը: Իրոք, իմ երկիրը թողած՝ ո՞ւր եմ դես ու դեն ընկնում»,- խոստովանել էր Քոչարը: Փարիզում կատարված բազմաբնույթ ուսումնասիրություններն ու ստեղծագործական որոնումները Քոչարին հանգեցրել էին այն վճռական որոշման, որ այդ գաղափարը, մտահղացումները կարելի էր իրականացնել

ոչ թե կոսմոպոլիտ Փարիզում, այլ միայն հայրենիքում: Եվ ահա Երվանդ Քոչարի ստեղծագործական մտքի ու հոգու թռիչքի արդյունքում է որ այժմ Երևանում ՝ կայարանամերձ հրապարակում, վեր է խոյանում «մեր դարի ամենահաջող ձիարձաններից մեկը»՝ Սասունցի Դավթի արձանը, որը դարձավ Երևանի յուրովի խորհրդանիշը:

Փարիզում Իսահակյանին վիճակված էր ծանոթանալ հայրենանվեր մի երիտասարդ բանաստեղծի՝ Միսակ Մանուշյանի հետ: Մերձավոր Արևելքից գաղթած որբ, քչախոս, ուսումնատենչ մի տղա էր նա. տարվա մի կեսը աշխատում էր ավտոգործարանում, ծանր, հյուծիչ աշխատանքներ էր կատարում, որ մի քանի ֆրանկ խնայեր, մյուս կեսն անցկացնում էր գրադարաններում, դասախոսություններ էր լսում Սորբոնի համալսարանում: Նա իսկական ինքնուս մտավորական էր: Իսահակյանը նկատում է նրան, քաջալերում նրա գրական առաջին քայլերը, տպագրում «Զանգու» ամսաթերթում:

Ահա այդ համեստ, սակավախոս տղան՝ մեր հայրենակիցը, պիտի դառնար գերմանական ֆաշիզմի դեմ ֆրանսիական դիմադրության հերոսներից մեկը՝ իր երիտասարդ կյանքը զոհելով Ֆրանսիայի ազատագրության համար: Ցեղասպանությունից փրկված հայ տղան դարձավ Ֆրանսիայի ազգային հերոս և հետմահու պարգևատրվեց Պատվո լեգեոնի շքանշանով:

* * *

Վարպետը՝ խորաթափանց քաղաքագետ-հասարակական գործիչ, մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, *«Աբու-Լալա Մահարիի»* իր ստեղծած հերոսի նման հեռանալով իրեն անչափ հարազատ հայրենի միջավայրից, շրջապատից, ոչ թե մխրճվեց բորբ արևի բոցերի մեջ՝ հրկիզվելու, այլ վերադարձավ հայրենիք՝ իր համախոհ հայրենակիցների հետ մխրճվելու և «այրվելու» իր հայրենիքի հոգսերի ու ցավերի մեջ, սատարելու իր ժողովրդին՝ քաջ գիտենալով, թե ինչ դժվարություններ պետք է հաղթահարեր:

Խորհրդային Հայաստանում Իսահակյանը չդավաճանեց իր սկզբունքներին: Մի անգամ գրողների միությունում, ուր իրեն կանչել էին՝ «մշակելու» և « հարցաքննելու» այն կապակցությամբ, որ հայրենիքում իր առաջին այցելությունները կատարել էր Էջմիածին՝ Խորեն կաթողիկոսին և Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին, ապա և Եղիշե Չարենցին, Իսահակյանն արժանավայել այսպիսի պատասխան տվեց իր գործընկերներին. «Այդ ձեր անվանած մարդիկ իմ վաղեմի և սիրելի բարեկամներն են, և ես ինձ պարտական պիտի զգայի իմ առաջին այցելությունները նրանց հատկացնելու: Ես ձեզ նման չեմ, որ այսօր մեկի հետ ընկերություն անեմ, վաղը՝ մյուսի, և դեռ հրաժարվեմ ու պախարակեմ ընկերներիս»:

Ահա այսպիսին էր Վարպետը՝ սկզբունքային քաղաքական-հասարակական գործիչ Ավետիք Իսահակյանը:

Ըստ Աննա Պետրոսյանի «Եղերապատում» գրքի

ՀԱՏՈՒՅՈՒՄ

1915 թվականի ապրիլին Արևմտյան Հայաստանի տարածքում թուրքերը գազանաբար սպանեցին ավելի քան 1,5 միլիոն հայերի, շատերին տեղահան արեցին իրենց ծննդավայրերից ու քշեցին դեպի Դեր Զոր: Ընդամենը մի քանի տարի անց ոտքի կանգնեցին հայազգի քաջորդիները. ***ժամն էր հատուցման:***



Արշավիր Շիրակյան

Ազգի ահավոր մորմոքը մեղմելու համար հարկավոր էր ինչ-որ բան անել, որովհետև մեծ, անդարմանելի կորուստներից բացի վտանգված էր նրա ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ: Ազգը պարզապես չէր կարող ապրել՝ իր ժողովրդի, հայրենիքի կորստի ահռելի, անմխիթար ցավի կուտակումները հոգում, ապա և նսեմացած Արժանապատվության հետ ներս ներսի: Նա ամեն կերպ պիտի իր գիտակցությունից, իր մտածումներից, իր սրտից, իր զգացումներից դուրս կորզեր նրանց, որոնք կարող էին սպեղանի դնել իր վիրավոր հիշողության վրա:

Նրանք՝ մի խումբ վրիժառուներ, չմտածելով իրենց կյանքի ապահովության մասին, թափառում էին՝ աշխարհի ապահով անկյուններում պատսպարված ոճրագործներին հայտնաբերելու և արդար վրեժի ցասումով պատուհասելու համար:



Արմեն Գարո

Նրանք՝ հպարտ ու գեղեցիկ մահապարտ վրիժառուները, որոնք ոչինչ չունեին ազգի ողջակիզումի սրբազան խորանի առջև զոհաբերելու՝ եթե ոչ իրենց երիտասարդ կյանքերը միայն... Որովհետև նրանք բնավ էլ վստահ չէին, որ կվերադառնան կենդանի:

Հիշի՛ր նրանց անունները, իմ պատանի բարեկամ:

1920 թ. մայիսին ԱՐԱՄ ԵՐԿԱՆՅԱՆԻ և ՄԻՍԱՔ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ձեռքով պատուհասվեց Ադրբեջանի վարչապետ և արտաքին գործոց նախա-



Արամ Երկանյան



Սողոմոն Թեհլերյան

րար Խան-Խոյսկին, որի կեղտոտ հոգին լողում էր կովկասահայերի ու Բաքվի հայերի կոտորածների արյան ծովում...

Սա սկիզբն էր:

Հետո ԹԵՀԼԵՐՅԱՆԻ ձեռքով սպանվեց Թալեաթը 1921թ. մարտի 15-ին, որին հետևեցին վրիժառուների մյուս գործերը:

Նույն 1921թ. հունվարի 19-ին Ստամբուլում գրեթե պատանի ՍԻՍԱՔ ԹՈՌԱՔՅԱՆԻ վրիժառու գնդակով սպանվեց Բաքվի ջարդարար Ջիվանշիրը:

1921թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում նույնպես գրեթե պատանի ԱՐՇԱՎԻՐ ՇԻՐԱԿՅԱՆԻ ձեռքով սպանվեց Թուրքիո նախկին վարչապետ Սայիդ Հալիմ փաշան:

1922թ. ապրիլի 17-ին Բեռլինում նույն ԱՐՇԱՎԻՐ ՇԻՐԱԿՅԱՆԻ և ԱՐԱՄ ԵՐԿԱՆՅԱՆԻ ձեռքով իրենց վերջը գտան Բեհաեդդին Շաքիրը և Ջեմալ Ազմի բորենիները:

Երեք ամիս հետո Թիֆլիսում ՍՏԵՓԱՆ ԾԱՂԻԿՅԱՆԻ, ՊԵՏՐՈՍ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆԻ և ԱՐՏԱՇԵՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ բացառիկ հանդգնությամբ Չեկայի շենքի մոտ սպանվեց Ջեմալ փաշան:

Ապա և քիչ ժամանակ անց Միջին Ասիայում հայ երիտասարդ զինվորական ՀԱԿՈԲ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ձեռքով իր կյանքի անփառունակ ուղեծիրն ավարտեց Էնվեր փաշան...

Աշոտ Տեր-Գրիգորյան

ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԱՆԻԱՅԻ ԾՆՈՂՆԵՐԸ

1967թ. մայիսի 2-ին մեկնում էի Մոսկվա՝ այնտեղից Դանիա թռչելու համար: Ճանապարհորդությունը կազմակերպել էր սովետա-դանիական ընկերությունը: Մոտենում էր մեկնելու ժամը: Տղաս, որ դրսում դեռ խաղում էր, ընկերներին ասում է իմ՝ Դանիա մեկնելու մասին: Տղաներից մեկը՝ Հովիկը, որ այսօր էլ մեր հարևանն է ու տղայիս ընկերը, վազում է տուն և մորը հաղորդում իմ՝ Դանիա մեկնելու մասին: Քիչ անց արցունքն աչքերին՝ գալիս է մայրը՝ տիկին Աստղիկը:

– Ընկե՛ր Աշոտ, իմ մայրը Դանիայում է ապրում, և մենք վաղուց նրանից նամակ չունենք: Արդյոք չե՞ք կարող տեսնել նրան և մեզանից տեղեկություններ հաղորդել...

Ես խոստացա և, վերցնելով հասցեն, մեկնեցի՝ վստահ, որ դա առանձին դժվարության հետ կապված չէ:

Դանիայում դիմեցի դանիա-սովետական ընկերության նախագահին՝ խնդրելով օգնել ինձ՝ գտնելու Յանսենների: Նա նայեց հասցեին և ծիծաղելով ասաց, որ այդ ազգանունը Դանիայում ամենատարածվածն է. գրեթե երեք մարդուց մեկը Յանսեն է: Նույնպիսի անորոշություն կար նաև բնակավայրի հարցում: Ասաց, որ այդ որոնումը գրեթե անարդյուք կլինի, սակայն ինքը կփորձի օգտակար լինել...

Անցան օրեր, ես հույսս կտրեցի և մոռացա Յանսենների մասին: Արդեն Օրխուսում էինք, երբ մի առավոտ հյուրանոցի աշխատողը մոտեցավ և ասաց, որ ինձ մարդիկ են սպասում:

Թարգմանչուհու հետ մոտեցանք ինձ հարցնողներին. երկու կանայք էին՝ տարեց և երիտասարդ: Թարգմանչուհին ներկայացրեց ինձ և իր ծառայությունն առաջարկեց՝ մեր հա-

Հայ երեխաների դանիացի մայրիկը՝ տիկին Յասենը

ղորդակցմանը նպաստելու համար: Ծեր կինը նրան ինչ-որ բան պատասխանեց, ապա դառնալով իմ կողմը՝ մաքուր արևմտահայերենով ասաց.

– Ես կխոսիմ հայերեն, կկարծեմ՝ թարգմանչի կարիք չունինք:

Եվ այսպես սկսվեց իմ զրույցը տիկին Յանսենի ու նրա քրոջ աղջկա միջև: Երբ ես հաղորդեցի տիկին Աստղիկի և նրա ամուսնու՝ Կարապետի հղած ողջույներն ու բարեմաղթությունները, նրա աչքերում արցունքներ երևացին՝ իր որդիների կարոտի ու բաժանման իրական արտահայտությունները: Եվ նա պատմեց տխուր, բայց նույնքան էլ ուրախ պատմությունը իր հայ զավակների, անցած-գնացած օրերի, նրանց հետ հաղթահարած ծանր դժվարությունների ու երջանիկ պահերի մասին:

«Մեծ եղեռնի ծանր օրերն էին,- պատմեց տիկին Յանսենը. – եվրոպական մամուլը հեղեղված էր անհավատալի դաժան և անմարդկային հաղորդումներով ու սահմռկեցուցիչ պատմություններով. ազատ աշխարհի մեծ պետությունների աչքի առջև թուրքերը սրախողխող էին անում մի ամբողջ ժողովուրդ... Իրարամերժ ու հակասական այդ հաղորդումների քաոսի մեջ պարզ լսվում էր մորթվող ժողովրդի հուսահատական և ողբալից կանչը, օգնության աղերսանքը, որը, սակայն, հապաղում էր:

Ամուսինս՝ Անդրեսը, մի օր ինձ առաջարկեց վերցնել մեր բոլոր խնայողությունները և մեկնել Արևելք՝ կռվին և ողբերգությանն ընդառաջ՝ մանուկ հոգիները փրկելու: Մենք սկսեցինք լուրջ պատրաստություններ տեսնել, օգնություն խնդրել մեր բարեկամներից ու ծանոթներից, նաև անծանոթ մարդկանցից, որոնք հոժարությամբ անվերադարձ օգնություն ցույց տվեցին մեզ: Եվ երբ ամեն ինչ պատրաստ էր, մեկնեցինք Հունաստան:

Տիկին Յասենը ամուսնու՝ Անդրես Յանսենի շիրիմի մոտ

Այստեղ էին փախստականները՝ մազապուրծ եղած հայերը՝ վշտի, կարիքի ու ծանր աղքատության մեջ: Ահա նրանց էլ մենք որոշեցինք օգնել: Սակայն հենց այստեղ վշտին ընդառաջ էլ ծագեց հիմնական գաղափարը՝ մանկատուն հիմնելու վերաբերյալ:

Փնտրեցինք ու գտանք մի հարմար տուն, վարձակալեցինք այն, կահ-կարասի գնեցինք և, երբ որոշակի գործ արդեն արված էր, սկսեցինք փողոցից հավաքել անտեր ու անխնամ երեխաներին: Նրանց

լողացնում, մաքրում, հագցնում և ըստ առանձին սենյակների՝ տեղավորում էինք մեր ձեռք բերած շենքում, մեր անմիջական հոգածության ու հսկողության տակ: Շուտով մենք լավ օգնականներ ունեցանք համեմատաբար ավելի մեծ երեխաներից, ովքեր սիրով մասնակցում էին մաքրության կազմակերպմանը, կերակուր պատրաստելուն, իսկ ավելի ուշ՝ նաև ուսուցմանը:

Մի քանի տարի մենք մնացինք Սալոնիկում, մինչև որ մեր երեխաները մեծացան, թևեր առան ու թռան աշխարհի տարբեր կողմերը՝ իրենց գտնված հարազատների ու ազգականների, պարզապես իրենց ազգակիցների մոտ: Մնացին ամենափոքրերը՝ Աստղիկն ու Հակոբը, որոնց որոշեցինք որդեգրել և մեզ հետ տանել Դանիա:

Անդրեսը գնացքի տոմսեր գնեց, պատրաստվում էինք երկար ճանապարհորդության և մի առավոտ գնացք բարձրացանք: Տեսնեմ Աստղիկը հոնգուր-հոնգուր լաց է լինում: Հետաքրքրվեցի. պարզվեց, որ նա սիրում է մեր նախկին սաներից մեկին՝ Կարապետին, ով մի հայ կոշկակարի մոտ աշխատանքի էր անցել, և չի ուզում նրանից բաժանվել: Տոմսերը ետ վերադարձրինք, Կարապետին ու Աստղիկին ամուսնացրինք և նոր բռնեցինք վերադարձի ճանապարհը»:

Հակոբի մասին տրված իմ հարցին նա այսպես պատասխանեց.

«Աստված հայ որբերի նկատմամբ իմ գործած բարությունը հազարապատիկ վարձատրեց: Հակոբն օրինավոր տղա դարձավ ինձ համար. ճիշտ է, ամուսնալուծվել է, որը չի կարող Աստծո հավանությանն արժանանալ, բայց շատ ծնողասեր, օրինապահ, բարեխիղճ ու լավ մարդ է: Հաճախ է գալիս ինձ այցելության, օգնում է, սիրում ու հարգում է ինձ. թող Աստված նրան առողջություն ու հաջողություն տա...»

Իմ այն հարցին, թե անցած երկար ու ձիգ տարիների ընթացքում նա ինչպե՞ս է պահել հայերենի իր իմացությունը, տիկին Յանսենը պատասխանեց.

«Հայերենը սովորել եմ իմ հայ զավակներից, որոնց հետ ես պետք է նրանց մայրենի լեզվով խոսեի, որ կարողանայի նրանց վիշտը ամոքել, ցավերը փարատել, ձեռք բերել նրանց վստահությունը: Իսկ կարդալ և գրել սովորեցի հայ վարժուհուց, որին հրավիրել էինք երեխաներին սովորեցնելու: Առանց որևէ վարձատրության՝ ծառայում էր իր ազգի զավակներին՝ նրանց հետ բաժանելով բոլոր դժվարություններն ու դառնությունները...

Արդեն շատ վաղուց ես հայ մարդ չեմ տեսել՝ նրա հետ հայերեն խոսելու համար, Աստղիկին գրածս նամակները հետզհետե թվով ու ծավալով պակասում են, սակայն հայերենը չեմ մոռանում, չեմ ուզում մոռանալ, որովհետև Աստծո հետ ուզում եմ այդ դժբախտ ժողովրդի լեզվով հաղորդակցվել, այն աշխարհում իմ որդիների և դուստրերի հետ իրենց լեզվով խոսել, դրա համար ես Ավետարանը կարդում եմ հայերեն:

Հաճախ է պատահել, որ եկեղեցում քահանան զարմանքով նայել է իմ ձեռքի գրքին ու հարցրել, թե ի՞նչ գիրք է, ու ես հպարտությամբ պատասխանել եմ, որ այն հայերեն Ավետարանն է՝ աշխարհի ամենահին Ավետարաններից մեկը»:

Այսպես ես ծանոթացա հայ որբուկների դանիացի մայրիկի հետ, ով երեխաներից սովորած հայերենը չմոռանալու համար տասնամյակներ շարունակ՝ մենախոսության մեջ կամ Աստծո հետ խոսելիս, կարդացել է հայերեն Ավետարանը, լսել է իր հայերեն ձայնը, որ լեզուն հետ չվարժվի հայերեն բառերն արտասանելուց և ականջը չխլանա հայերեն հնչյունների նկատմամբ: Եվ Ավետարանը նրան «հայ է պահել»...

Տիկին Յանսենն ինձ ցույց տվեց իր ամուսնու նկարը երեխաների հետ, որոնցից ամեն մեկին նա առանձին-առանձին անվանում էր՝ խոսքը քնքշացնելով, կարծես մտովի հանդիպելով իր երբեմնի որդիների հետ, ովքեր թևեր առած՝ թռել, հեռացել էին իրենց բնից և այժմ թևածում էին աշխարհով մեկ...

Ամբողջ ընթացքում անհուն երախտագիտությամբ նայում էի ծերությունից ցամաքած այդ կնոջը, հետո ծունկի իջա նրա առաջ ու համբուրեցի հոգատար ձեռքերը, որոնք այնքան խնամք ու գուրգուրանք էին տվել անապաստան հայ երեխաներին՝ նրանց ազատելով կործանումից:

Հավերժ հանգստություն տեր և տիկին Յանսենների տանջված ոսկորներին և անսահման շնորհակալություն նրանց՝ Մեծ հոգու համար...

ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

1271 թվականի հունվարի 6-ին՝ Աստվածահայտնության օրը, Տարսոն քաղաքի Սուրբ Սոփիա տաճարում Կիլիկյան Հայաստանի թագավոր օծվեց Լևոն Բ-ն: Թագադրության ժամանակ արքունի ատենադպիր, իմաստասեր Վահրամ Ռաբունին շնորհավորանքի իր խոսքում ասաց.

– Հայոց արքան ոչ թե մեկի, այլ իր ամբողջ ժողովրդի տերն է: Նա պատասխանատու է և՛ շինականի ու զորականի, և՛ իշխանավորի ու գործավորի, և՛ խելոքի ու խենթի համար: Թագավորի անելիքը պիտի լինի՝ հաստատուն պահել իր տիրապետության տակ ապրող մարդկանց միությունը, պաշտպանել երկիրն ու մարդկանց, զորական ուժով հաղթել թշնամուն կամ հնարամիտ հաշտությամբ հեռացնել նրան մեր երկրի սահմաններից: Թագավորը պետք է իր հպատակների հանդեպ արդարամիտ ու արդարադատ լինի, իր իշխանությունն իրականացնի ոչ թե կամայականորեն, այլ առաջնորդվելով երկրի օրենքներով, դրանց համաձայն էլ պատվի արժանացնի արժանավորներին և պատժի չարագործներին:

Թագավորը պարտավոր է հեռու մնալ այլընդայլո մոլորություններից: Եվ գիտցի՛ր, Լևո՛ն արքա, որ Երկրի ղեկավարի բերանից սուտ չպիտի լսվի:

Հայկ Խաչատրյան

Հայկ Խաչատրյան

Մինուա

Մինուա թագավորը եղել է խիզախ նժույգավար: Վան քաղաքի ժայռազանգվածի և Վարագա լեռների միջև կա մի տափարակ, որը հին հայկական ձիարշավարան է եղել: Այստեղ գյուղական եկեղեցու շարվածքի մեջ հայտնաբերվել է հետևյալ արձանագրությունը. «Խալդեյան զորությամբ Մինուա Իշպուինորդին ասում է. հենց այս տեղից նժույգը՝ Արծիբե անունով, Մինուայի տակ ցատկեց քսաներկու կանգուն...»:

Կանգունը երկարության չափ է, որը հավասար է 51,8 սանտիմետրի: Այս հաշվով Մինուայի նժույգը ցատկել է 11 մետր 39 սանտիմետր: Դա եղել է բացառիկ թռիչք, որի համար էլ վավերացվել է վիմական արձանագրության մեջ: 1914թ. նժույգի ցատկի սահմանված համաշխարհային ռեկորդը 11 մետր 28 սանտիմետր է: Նրա հեղինակը հունգարացի Չանդլերն է: Մինուայի Արծիբե (Արծիվ) նժույգի ցատկը մնացել է չգերազանցված մինչև 1975 թվականը, այսինքն՝ 2800 տարի, երբ գերմանացի Կ.Բերդմանը իր Ավինգեր նժույգով ցատկեց 22 մետր 16 սանտիմետր:

Ուրարտական թագավորներ. Ք.ա. 810–785թթ.

Հայկ Խաչատրյան

Արգիշտի Բ

Վանի թագավոր Արգիշտի Բ-ն եղել է անգերազանցելի նետաձիգ: Վան քաղաքի Հայկավանք թաղամասում գտնվել է մի փոքրիկ սեպագիր քար: Նրա վրա արձանագրված է, որ Ռուսաորդի Արգիշտին Տուշպա քաղաքին մերձ Գիլուրա գյուղի անտառի առջևից նետն արձակեց, որը հասավ մինչև Իշպիլե Բատուորդու այգին՝ ինը հարյուր հիսուն կանգուն:

Այդ հաշվով՝ Արգիշտի Բ-ն նետն արձակել է 492 մետր: Դա համաշխարհային ռեկորդ է մնում բոլոր ժամանակների համար:

Մաքսիմալիստն է մ.թ.ա. 715–685թթ.



Արգիշտի Ա թագավորի սեպագիր արձանագրությունը
Էրեբունի-Երևանի հիմնադրման մասին

Հայկ Խաչատրյան

Ռուսա Գ

Վանա ծովակի ափին գտնվող Թիլկի ավանում կար արհեստավորաց մի տուն, ուր վանակատ[1] էին մշակում, դրանից պատրաստում պերճանքի իրեր և վաճառքի հանում մերձակա երկրների շուկաներում: Այդ թանկարժեք քարը Տուշպա-Վանի անունով կոչվում էր *վանակատ:*

Մի անգամ Էրիմենաորդի Ռուսա արքային իմաց տվեցին, որ վանակատի արհեստավորաց տան տնօրենը էժան գնով քառասուն տոպրակ վանակատի հումք է վաճառել օտարերկրացիներին: Լսելով այդ մասին՝ արքան անմիջապես պատժեց արհեստավորաց տան գլխավորին և ազատեց նրան իր պաշտոնից:

– Բայց մի՞թե նրա արածը հանցանք է,– ասաց արքունականներից մեկը:

Եվ Ռուսան պատասխանեց.

– Այո՛, հանցա՛նք է, երբ դու զարդեղենի փոխարեն զարդեղենի հումքն ես վաճառում. դրանով դու դրսևորում ես քո անզորությունը: Ճարտար ձեռք ունեն տուշպացիները. աշխարհում հազիվ թե այնպիսի զարդ լինի, որ նրանք չկարողանան պատրաստել: Ուզում եմ ասել, արքունակա՛ն, որ զարդեղենի հումք վաճառելը նույնն է, ինչ որ ցորենի փոխարեն ցորենի արտը վաճառես հարևանին:

Ցորենի արտը հայրենիքի մի մասն է. այդպիսին է նաև մեր վանակատի հումքը, քանի դեռ այն զարդ չի դարձել:

Ռուսա Գ-ի սեպագիրը

[1] **վանակատ** – օբսիդիան՝ մուգ գույնի ապակենման հրաբխային լեռնային հանքաքար:

Հայկ Խաչատրյան

ՀՅՈՒԴԱՐՆԵՍ Գ ԵՐՎԱՆԴՈՒՆԻ

Ասքն ասում է, որ հայոց Հյուդարնես կամ Հիդարնես Գ Երվանդունի արքան արտասովոր սեր է ունեցել կոստնտոտիկ[1] նժույգների հանդեպ: Երբ ինքը փոքր էր, դայակը նրան ասել էր.

– Վահագնից առաջ հայոց հաղթության աստվածուհին ոսկեմայր և ոսկեծղի Անահիտն էր: Նա ամենից շատ հովանավորում էր այն քաջերին, որոնք թշնամու դեմ գրոհի էին դուրս գալիս կոստնտոտիկ նժույգ հեծած:

Եվ ահա գլխին թագ դնելուց հետո Հյուդարնես արքան ստեղծեց իր մատյան գունդը՝ կազմված հազար կոստնտոտիկ նժույգ վարող հեծյալներից: Կարծում եք՝ դա դյուրի՞ն բան է. չէ՞ որ աշխարհում ձիերի շատ երամակներ՝ կան, որոնց մեջ չես գտնի սպիտակապուտ ոտքերով սև կամ շառատ ձի: Իսկ ա՛յ, Հյուդարնեսը գտել է՝ այն էլ ոչ թե մեկ-երկուսը, այլ հազարը: Հավատացնում են, որ թշնամու հեծյալները հայոց կոստնտոտիկ հեծելագնդից շփոթվում էին և խուճապի մատնվում: Մեր նժույգների սպիտակապուտ ոտքերից հակառակորդի աչքերը շաղվում էին:

Բայց ի՞նչ զորություն ունեին հայոց կոստնտոտիկները, որոնց առջև ընկրկում էին թշնամու հեծյալները: Այդ գաղտնիքը գիտեր Անահիտ աստվածուհին, որի մասին նա չի հայտնել նույնիսկ իր պատգամախոսին[2]:

– Հայկական զորության մասին ամեն բան չէ որ պետք է բարձրաձայն ասել. այս մեկն էլ թող գաղտնի մնա,– ասել է ոսկեմայր և ոսկեծղի Անահիտը մեզնից շատ ու շատ հազարամյակներ առաջ:

---

[1] **կոստնտոտիկ** – սպիտակապուտ ոտքերով սև կամ շառատ (թուխ կարմիր) գույնի ձի:

[2] **պատգամախոս** – հին աշխարհում աստվածների պատգամները՝ կտակը կամ պատվերը հայտնող գուշակ:

Հայկ Խաչատրյան

ԵՐՎԱՆԴ Գ ԵՐՎԱՆԴՈՒՆԻ

Երվանդ Գ Երվանդունին մ.թ.ա. 336-331 թվականներին եղել է Հայաստանի սատրապ, այնուհետև՝ թագավոր՝ հաջորդելով Վահե Երվանդունուն: Աքեմենյան բանակում հայկական զորքով մասնակցել է մ.թ.ա. 331 թվականի հոկտեմբերի 1-ին տեղի ունեցած Գավգամելայի ճակատամարտին: Նրա թագավորության տարիներին Հայաստանը մեծ երկիր էր, որի մեջ էր մտնում նաև հայ ժողովրդի հնագույն բնօրրաններից մեկը՝ Կոմմագենեն: Երկրի սահմանները ձգվում էին Կոմմագենեից մինչև Կուր գետը, Տիգրիսից մինչև Պոնտական լեռները: Տերության մայրաքաղաքը Արմավիրն էր:

Աքեմենյան Պարսկաստանի և հունա-մակեդոնական զորքերի միջև մ.թ.ա. 331 թվականի հոկտեմբերի 1-ին տեղի ունեցած Գավգամելայի ճակատամարտից մի քանի տարի անց հայոց Երվանդ Գ Երվանդունի արքան մի հույն գիտունի հարցնում է.

- Ալեքսանդր Մակեդոնացին ինչո՞ւ չհարձակվեց Հայքի վրա:

- Պիտի հարձակվեր, բայց Գավգամելայի ճակատամարտը խանգարեց:

- Ինչպե՞ս թե, ինչո՞ւ պիտի Գավգամելայի ճակատարտը խանգարեր. չէ՞ որ այն ավարտվեց Ալեքսանդր Մակեդոնացու հաղթանակով:

- Այո՛, դա այդպես է: Այդ ճակատամարտի ժամանակ հայերի քաջությունն այնպես փայլատակեց, որ Մակեդոնացին հրաժարվեց Հայքի վրա արշավելու իր մտադրությունից՝ զորապետներին ասելով. «Եթե հայերը Դարեհի փառքի համար այսպիսի արիություն են ցուցաբերում, ապա իրենց հողի համար մարտնչելիս մի-մի առյուծ կդառնան: Պետք չէ սրանց հետ գլուխ դնել: Հայերը կարող են մեզ հանկարծակիի բերել և ոտի տակ տալ մինչև այժմ մեր ձեռք բերած փառքը:

Հայքը թողեք՝ մնա մեր հաղթության ճանապարհների եզրին»:

Հայկ Խաչատրյան

Սամոս Բ Երվանդունի

Կոմմագենեի Սամոս Բ Երվանդունի արքան մի գեղանի դուստր ուներ, որի բոլոր քմահաճությունները կատարում էր՝ առանց առարկելու: Եվ ահա այս արքայադուստրը հավանեց մի հույն իշխանի և ամուսնացավ նրա հետ:

Արքան դստերը տվեց մեծ օժիտ, որի մեջ էին մտնում նաև Սամոսատ քաղաքից ոչ հեռու գտնվող յոթ հայկական գյուղեր: Պատահեց այնպես, որ արքայադուստրը հանկարծամահ եղավ, և հույն դստրայրը հայոց արքայի համար դարձավ մի տեսակ օտար մարդ: Աներոջ ու փեսայի միջև սկսված խորթությունը ավելի մեծացավ, երբ հույնը ամուսնացավ մի հույն իշխանադստեր հետ, որն իր հետ մի քանի հույն ընտանիքներ բերեց: Սրանք եկան և հայերին դուրս քշեցին հայկական յոթ գյուղերից, ու իրենք դարձան հայ շինականներին պատկանող հողերի տերերը: Սամոս արքան գլխի ընկավ, որ իր նախկին փեսան դարձել է վտանգավոր թշնամի: Արքան առաջարկեց նրան հեռանալ հայկական գյուղերից, բայց հույնը ծաղրեց Սամոսին և նրա քթին դեմ տվեց այն վավերագիրը, որով Սամոս Բ Երվանդունին այդ յոթ գյուղերը հանձնում էր իր փեսային՝ որպես նրա հավիտենական սեփականություն: Արքան ստիպված կռվի դուրս եկավ հույների դեմ և զորական ուժով վռնդեց նրանց հայկական հողից:

Այս դեպքից հետո Սամոս Բ Երվանդունին հետնորդներին պատգամ թողեց իր խրատանին.

«Հողն օժիտ չեն տալիս»:

Մաքսիմիանոս I Կոմմագենցի թագավորությունը մ.թ.ա. 2-րդ դարում

Կոմմագենեի Անտիոքոս Ա Երվանդունի թագավորի կառուցած դամբարան-սրբավայրը

Հայկ Խաչատրյան

Անտիոքոս Դ Երվանդունի

Մի անգամ Անտիոքոս Երվանդունի արքային լուր տվին, թե հռոմեացիները պատրաստվում են հարձակվել Կոմմագենեի հայկական թագավորության վրա: Անտիոքոսը որոշում է հնարամտությամբ կանխել հռոմեացիների հարձակումը և, ժամանակ շահելով, նախապատրաստվել կռվի: Եվ ահա, երբ հռոմեացիներն իրենց գնդերն էին պատրաստում Կոմմագենեի սահմաններին մոտեցնելու համար, լուր է տարածվում, թե Անտիոքոս Դ Երվանդունի արքան մի քանի օր հետո զորահանդես է անելու Կոմմագենեի Սամոսատ մայրաքաղաքում: Հռոմեացիներն իրենց լրտեսներին ուղարկում են Սամոսատ և պատվիրում ճշտել, թե հայերն ինչքա՞ն զորք ունեն, ո՛ր մասն է հեծյալ, ո՛րը՝ հետևակ, քանի՛ մարտակառք ու քանի՛ բաբան ունեն:

Զորահանդեսի օրը լրտեսները զարմանում են իրենց տեսածից. նրանք չէին պատկերացնում, թե հայերն այսքան զորք ունեն: Դա հռոմեացիների համար անսպասելի էր:

Բայց ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ էին զարմացել հռոմեացի հետախույզները. Անտիոքոս արքան նրանց գցել էր խաբկանքի մեջ: Սամոսատ մայրաքաղաքի կենտրոնում՝ Արքունական կոչվող հրապարակում, հայկական զորքերի երթը վերջ չուներ: Ոչ միայն հռոմեական խուզարկուները, այլև Սամոսատի հայ բնակիչները գլխի չէին ընկնում, որ հայոց բանակի զորաշարերը, ձգվելով, դուրս էին գալիս քաղաքից, փոխում իրենց հանդերձն ու զենքերը և նորից երևում հրապարակում: Նույն զորականը հրապարակով անցնում էր չորս անգամ, և դիտողների աչքին հայկական բանակը չորս անգամ ստվարաթիվ էր երևում:

Հռոմեացիները, Սամոսատից վերադարձած իրենց հետախույզ-լրտեսներից տեղեկանալով, թե հայերը զորական ինչպիսի՛ ուժ ունեն, հրաման են տալիս իրենց գնդերին ետ քաշվել և պատրաստվել՝ ավելի մեծ ուժերով հարձակվելու Կոմմագենեի վրա:

Հայկ Խաչատրյան

Տիգրան Ա

Տիգրան Առաջին արքան ընտիր նժույգների սիրահար էր: Երբ լսում էր, թե հրաշալի նժույգ են վաճառում, շտապում էր նժույգավաճառանոց և առանց սակարկելու՝ գնում դուր եկած նժույգը: Աշխարհի բոլոր մարդիկ իրենց երջանկությունը կապում են սրտահաճ մարդկանց հետ, իսկ Տիգրան Առաջին արքայի համար երանությունն սկսվում ու վերջանում էր նժույգով:

Նա 400 ընտիր նժույգ ուներ: Իրենից բացի՝ ոչ ոք իրավունք չուներ հեծնել այդ ձիերից մեկը:

Բայց ահա թե ի՛նչ եղավ մի անգամ: Արտաշատ մայրաքաղաքի մոտ տեղի ունեցած մի ճակատամարտի ժամանակ հայկական այրուձին ընկրկեց և մեծ կորուստներ չտալու համար մտավ մայրաքաղաքի պարիսպներից ներս: Երկյուղն ասես սողոսկել էր հայ հեծյալների սրտերը:

Հայ ռազմիկների մարտունակությունը բարձրացնելու և նրանց խիզախության մղելու համար Տիգրան արքան իր բոլոր 400 նժույգները բաժանեց հեծյալներին և ասաց.

– Թռե՛ք իմ նժույգների վրա, նրանք հաղթանակ կբերեն ձեզ, օ՛ն, ա՛նդր, դեպի թշնամի՛ն...

Արքայի խոսքերից ոգևորված՝ հայ հեծյալները խիզախաբար մարտի նետվեցին և հաղթելով՝ թշնամուն վռնդեցին հայրենի հողից:

Հայկ Խաչատրյան

Տիգրան Բ Մեծ

Թագավորել է մ.թ.ա. 95–55թթ.

Մի անգամ հույն գրող Մետրոդորոս Սկեփսացին, որն ապրում էր հայոց արքունիքում, դիմում է Տիգրան Բ Մեծին և ասում.

– Արքայի՛ց արքա, հայկական նժույգների խրխնջյունները քո փառքն ավելի հեռու տարան, քան Մասիսի կատարից բացվող տեսածիրները: Աստվածները բարեհաճ եղան քո հանդեպ, և այս աշխարհում դու հասար ամեն ինչի: Ի՞նչ կուզենայիր, որ հավերժեր քեզնից հետո՝ քո աշխարհացունց հաղթությունների փառաբանությունն ու աստվածների բարյացակամությո՞ւնը, թե՞ գանձալեցուն քո ամրոցները:

– Այդ ամենի փոխարեն կուզենայի, որ ինձնից հետո հավերժեր Հայքը,– պատասխանում է արքայից արքան:

Տիգրան Մեծ և չորս արքաներ, Ջուլիանո Ֆուզարոյի, 1885թ.

Հայկ Խաչատրյան

Արտավազդ Բ

Թագավորել է մ.թ.ա. 55–34թթ.

Արտավազդ Բ-ի պատկերով մետաղադրամ

Արքայից արքա Արտավազդը Տիգրան Բ Մեծի որդին է, հաջորդել է հորը: Դաշնակցել է պարթևների հետ, իր քրոջն ամուսնացրել պարթև գահաժառանգ Բակուրի հետ: Եղել է հելլենիստական մշակույթի ու թատրոնի սիրահար:

Պլուտարքոսը հաղորդում է, որ մ.թ.ա. 53 թվականին Արտաշատ մայրաքաղաքում բեմադրվել է Եվրիպիդեսի *«Բաքոսուհիները»*, և նշում, որ թատերգություններ է գրել նաև ինքը՝ Արտավազդ Բ արքայից արքան:

Հռոմեացի զորավար Մարկոս Անտոնիոսը նենգությամբ ձերբակալել է նրան և ընտանիքի անդամների հետ, որպես գերի, տարել Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը: Անտոնիոսի և Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի հրամանով գլխատվել է մ.թ.ա. 31 թվականին և ահա թե ինչո՛ւ:

Նույն թվականի սեպտեմբերի 3-ին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի հանցանաց խուց է մտնում Կլեոպատրայի և Անտոնիոսի հավատարմատարը[1] և դիմելով մահվան դատապարտված Մեծ Հայքի արքայից արքա Արտավազդին՝ ասում է.

– Արքայից արքա՛, առավոտյան դահիճը կգլխատի քեզ:

– Գիտեմ,– հանգիստ պատասխանում է Արտավազդը:

– Դու կարող ես փրկվել մահից:

– Ինչպե՞ս:

– Համաձայնվի՛ր համբուրել թագուհի Կլեոպատրայի շրջազգեստի քղանցքը, և քեզ ազատություն կշնորհեն:

– Չեմ կարող:

– Ինչո՞ւ չես կարող:

– Որովհետև կաշիս փրկելու և մորթապաշտի անուն հանելու փոխարեն՝ ես պարտավոր եմ իմ հետնորդներին ժառանգություն թողնել հայկական *հպարտությունը* և *արժանապատվությունը*:

---

[1] **հավատարմատար** – որևէ մեկի անունից գործելու՝ հանդես գալու իրավունքով պաշտոնապես լիազորված անձ:

Հայկ Խաչատրյան

Էրատո

Հնագույն ժամանակներից սկսած՝ գահատոհմերում արքաների հերթագայության մեջ առաջին անգամ երկրի տիրակալ է հռչակվում կին արարածը: Հայոց թագուհի Էրատոն Արտաշեսյան գահատոհմի վերջին գահակալն է՝ Տիգրան Գ-ի դուստրը: Թագավորել է եղբոր՝ Տիգրան Դ-ի հետ:

Հռոմի Օգոստոս կայսրը մ.թ.ա. 5 թվականին բռնությամբ հայոց գահին է բազմեցրել Արտավազդ Գ-ին: Հայերն ապստամբել են, գահընկեց արել Արտավազդ Գ-ին և գահը նորից հանձնել Տիգրան Դ-ին ու Էրատոյին: Էրատոն գահազրկվել է մ.թ. 11 թվականին:

Էրատոն հայոց 141 թագավորների մեջ միակ տիրակալն է, որը գահ է բարձրացել երեք անգամ: Ժամանակի սովորույթներին հետևելով՝ նրան կոչել են *Էրատո*, որը հունական դիցարանում Ապոլլոնի 9 մուսաներից մեկն է՝ սիրային երգերի մուսան, եթե կարճ ասենք՝ *Էրատո* նշանակում է *սեր*:

Երբ հարցրին հայոց թագուհիների թագուհի Էրատոյին.

- Դու արժանացմ՞ր քո անվանն արժանի սիրո վայելքին:

- Ո՛չ,- պատասխանեց Էրատոն:

- Ինչո՞ւ:

- Տերության գործերը սիրո համար բաժին չթողեցին: Աշխարհին ու մարդկանց Էրատո անունով ներկայացա՝ որպես կին, բայց ուսերիս վրա կրեցի յոթ տղամարդ արքաների բաժին բեռ:

Էրատո թագուհու պատկերը

Թագավորել է մ.թ.ա. 8-5թթ. ն մ.թ.ա. 2 թվականն մ.թ. 2թթ., մեկ 9-11թթ.

Հայկ Խաչատրյան

Վաղարշակ

Հայոց պատմիչները հավաստում են, որ Վաղարշակը Պարթևաց Արշակունի թագավոր Արշակ Մեծի կամ Միհրդատ Առաջին Մեծի եղբայրն է և վերջինիս օգնությամբ 31 տարի գահակալել է Հայաստանում:

Նրա թագավորության տարիներին Հայաստանի մայրաքաղաքն էր Մծբինը: Քերթողահայր Մովսես Խորենացին նրան է վերագրում Հայաստանում կատարված ամենանշանակալի բարենորոգումները:

Ասում են՝ հայ ժողովրդի համար քաղաքակրթության ոստյուն են եղել Վաղարշակ թագավորի քառասուն հրովարտակները: Դրանցից մեկը նվիրված էր միս ուտելուն: Մինչ այդ Հայաստանում ամեն տեսակ միս էին ուտում: Վաղարշակն իր հրովարտակում թվարկեց բոլոր այն կենդանիների ու թռչունների անունները, որոնց միսը կարելի էր ուտել: Արքան սկզբում թվարկեց արգելվածները, որոնց մեջ էին բոլոր սողունները, իսկ ընտանի կենդանիներից՝ ձին, ջորին և էշը: Այդ հրովարտակից հետո Հայաստանում ոչ ձի մորթվեց, ոչ ջորի, ոչ էշ:

Այդ օրվանից Հայաստանում նրանք աշխարհին հրաժեշտ են տալիս սատկելով:

Հայկ Խաչատրյան

Զենոն եվ Արտաշես

Պատմություն I 18-34թթ.

Տասնութ թվականի ամռան մի օր Հայքի քաղաքամայր Արտաշատին էր մոտենում հայկական ու հռոմեական զորական պճնազարդումներով շողշողացող մի ասպախումբ[1]: Հռոմի Տիբերիոս կայսեր եղբորորդի ու որդեգիր զորավար Գերմանիկոսը Պոնտոսի Պոլեմոն թագավորի որդի Զենոնին տանում էր՝ ներկայացնելու հայ ավագանուն և հռչակելու նրան Հայքի թագավոր:

Գերմանիկոսը խորհում էր այն մասին, թե ինչ հնարքներ կարելի է գործադրել՝ Արևելքում Հռոմի սասանված հեղինակությունը վերականգնելու և Հայքը Հռոմի ազդեցության ոլորտներում պահելու համար: Նա մեծ հույսեր էր կապում Զենոնի հետ, որը Պոլեմոնի երկրորդ կնոջ՝ Տիբերիոս կայսեր ազգականուհի Պյութագորայի որդին էր, և որի մանկությունն անցել էր Հռոմում:

Բայց ի հեճուկս մոր կողմից հռոմեական, իսկ հոր կողմից պոնտական ծագման՝ Զենոնի պատանեկությունն անցել էր Փոքր Հայքում: Նա կրթվել ու դաստիարակվել էր հայկական միջավայրում և ամեն ինչով ավելի շատ հայ էր, քան հռոմեացի կամ պոնտացի:

Երբ հասան Արտաշատին և անցնում էին Երասխի վրայի Տափերական կամրջով, Գերմանիկոսը դիմեց իր կողքով շարժվող, նժույգի վրա վեհորեն նստած Զենոնին ու ասաց.

– Հայերը ոչ միայն չեն հանդուրժում իրենց գահի վրա բազմելու փորձ անող օտարազգի հզորներին, այլև արյունակից, բայց հայերեն չիմացող հային: Նրանց համար հավասարապես դրածո է և՛ օտարազգին, և՛ օտարախոս հայը: Տվածս հանձնարարություններից բացի՝ դու ի՞նչ պիտի անես նրանց սիրտը շահելու համար:

– Ես ոչ թե կձևացնեմ, այլ կդրսևորեմ ինձ որպես հայ,– պատասխանեց Զենոնը:

– Դա ինչպե՞ս պիտի անես:

– Հայավարի ապրելով:

– Դու կարծում ես, թե կարող ես հայավարի ապրել ու չտարբերվե՞լ հայից:

– Այո՛:

Այս զրույցից երկու ժամ հետո սկսվեց Զենոնի թագադրությունը: Զենոնը կանգնեց Արտաշատի վիթխարի մրցատան բեմում և սքան-

[1] **ասպախումբ** – ձիավորների՝ հեծյալների խումբ:

չելի հայերենով դիմեց հայ երևելիների մեկտեղված բազմությանը.

– Տիա՛րք և տիկնա՛յք Հայոց աշխարհի, այս փառապանծ քաղաքի դեմքին տարին բոլոր որդան կարմիրի ժպիտ կա: Ես կցանկանայի, որ իմ թագավորության բոլոր տարիներին այդպիսի ժպիտ լիներ ամենքիդ դեմքին:

Մի անգամ իմաստուններից մեկը այս անզուգական քաղաքի հիմնադիր Արտաշես արքային հարցնում է. «Իրարից ի՞նչ հեռավորության վրա են գտնվում թագավորն ու հպատակը»: Եվ հանճարեղ Արտաշեսը պատասխանում է. «Թագավորն ու հպատակը նժույգի ու լկամի[1] պես կպած են միմյանց: Արքան նժույգն է, հպատակը՝ լկամը: Լկամն զգաստացնում և չափավորում է նժույգի ախորժակը: Բայց նժույգն էլ իր հերթին պետք է այնպես ծամծմի լկամը, որ կուլ չտա և տրտինգ տալով դուրս չգա իր ճամփից»:

Լսելով այս հարց ու պատասխանը՝ մրցատան բազմությունը ծափողջույններով «կեցցե՛» հռչակեց և վանկարկեց *Արտաշես* անունը:

Դե արի իմացի՛ր, թե ո՛վ է փառաբանվում այդ ծափողջույններով՝ դեռ գլխին թագ չդրած Զենո՞Նը, թե՞ հարյուր յոթանասունութ տարի առաջ աշխարհին հրաժեշտ տված Արտաշես Բարի թագավորը:

Զենոնը հնարագետ այր էր և իրադարձությունների սահանքներում չէր կորցնում գլուխը: Նա դիմեց բազմությանն ու ասաց.

– Ես հասկացա ձեզ, այրե՛ր ու տիկնա՛յք հայկազուն: Կատարելով ձեր ցանկությունը՝ ես այս պահից հրաժարվում եմ իմ *Զենոն* անունից և ընդունում ձեր սրտին այնքան հաճելի *Արտաշես* անունը:

Դահլիճում ավելի ուժգին թնդաց նոր արքայի անունը.

– Ար-տա-շես, Ար-տա-շես...

Հենց այդ ժամանակ զորավար Գերմանիկոսը թագը դրեց Արտաշես դարձած Զենոնի գլխին և նրան հռչակեց Հայքի թագավոր: Ոտքի կանգնելով և թագը գլխի վրա ամրացնելով՝ Զենոնն ասաց.

– Ես շնորհակալ եմ իմ բարեկամ Գերմանիկոս զորավարից, որը թագադրելով ինձ՝ Տիբերիոս կայսեր անունից հավաստիացնում է, թե այս պահից, ի լուր համայն աշխարհի և ի տես բոլոր տերությունների՝ միավորված եմ համարում Մեծ Հայքն ու Փոքր Հայքը: Մենք՝ հայերս, պետք է այնպես ապրենք, որ միասնական դարձած մեր հայրենիքից ոչ մի կորու[2] չափ հող չկորցնենք: Եվ թող մեզ հովանի լինի ոսկեմայր ու ոսկեծղի Անահիտ աստվածուհին:

Զենոն-Արտաշեսը թագավորեց տասնվեց տարի՝ 18-34 թվականներին: Այդ տարիներին խաղաղություն էր տիրում հայկական բոլոր հողերն իր մեջ միավորած Հայքում:*

Այս տասնվեցը երանելի տարիներ էին հայ ժողովրդի հազարամյա ճանապարհին:

---

[1] **լկամ** – սանձի մետաղյա ձողիկը, որը դրվում է ձիու բերանը՝ սանձելու:

[2] **կորի** – ակոս:

* Արտաշեսի ժամանակ Հայաստանի տարածքը 400000 քառ. կմ էր:

Հայկ Խաչատրյան

Տրդատ Գ Մեծ

Թագավորել է 287–330թթ.

Տրդատ Գ Մեծը Հայոց թագավոր Խոսրով Ա Արշակունու որդին է: Խոսրովի դավադրական սպանությունից հետո Արտավազդ Մանդակունի նախարարը մանկահասակ արքայազն Տրդատին փախցնում է Հռոմ, որտեղ էլ նա կրթվում ու դաստիարակվում է: Ագաթանգեղոս և Մովսես Խորենացի պատմիչները հավաստում են, որ նա եղել է քաջակորով, ահռելի ուժի տեր այր և աչքի է ընկել կրկեսամարտերում ու պատերազմներում:

Հռոմի Դիոկղետիանոս կայսրը 287 թվականին Տրդատին հռչակում է Հայոց թագավոր: Հռոմեական զորքերի օգնությամբ նա Հայաստանից վտարում է պարսիկ նվաճողներին: Երկար տարիներ կռվել է Պարսկաստանի դեմ:

Ամուսնացել է Ալանաց թագավոր Աշխադարի դուստր Աշխենի հետ:

Տրդատ Գ Մեծի, կնոջ՝ Աշխենի, և քրոջ՝ Խոսրովդուխտի մկրտությունը, Նաղաշ Հովնաթան, XVII դ.

298 թվականին Մծբինում կնքվել է հռոմեապարսկական քառասնամյա խաղաղության պայմանագիրը, որով Սասանյանները ճանաչել են Տրդատ Գ Մեծ Արշակունու գահակալումը: Աչքի է ընկել բարեկորոգչական գործերով:

Սկզբում հալածել է քրիստոնեության հետևորդներին: Սակայն շատ չանցած՝ քրիստոնեությունը դիտել է որպես հայ ժողովրդի ու Հայաստանի ինքնուրույնությունը պահելու հզոր զենք և 301 թվականին քրիստոնեությունը հռչակել է պետական կրոն:

Տրդատ Գ Մեծ Արշակունու անմիջական մասնակցությամբ կործանվել են Հայաստանի հեթանոսական մեհյանները, և դրանց տեղում կառուցվել քրիստոնեական վկայարաններն ու եկեղեցիները: Նրա հրովարտակով Գրիգոր Ա

Լուսավորիչը մեկնել է Կեսարիա և ձեռնադրվել հայոց եպիսկոպոսապետ:

Կյանքի վերջին տարիները անցկացրել է Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան Մանյա այրք կոչված վայրում, որտեղ թունավորվել է իր հակառակորդ նախարարների ձեռքով: Նրա աճյունը արծաթապատ դագաղով թաղվել է Բարձր Հայք նահանգի Դարանաղի գավառի Թորդան ավանում, որը գտնվում է Սեպուհ լեռան արևելյան լանջին:

Սբ Տրդատ Գ արքա,
Հովնաթան Հովնաթանյան, XVIII դ.

* * *

Մի անգամ Երասխի ափով զբոսնելիս Տրդատ արքան նկատեց գետի հորձանուտում քշվող մեկին: Արքան նետվեց գետը և խեղդվողին դուրս հանեց ջրից:

– Ո՞վ ես,– հարցրեց Տրդատը:

– Շինական: Իսկ դո՛ւ ով ես:

– Տրդատ արքան:

Գետի մեջ խեղդվելուց փրկված մարդը զարմանքով աչքերը չռեց իր փրկարարի վրա ու ասաց.

– Իբր թե ի՞նչ ստացվեց: Հիմա իմ շինական տեղով ես ինչպե՞ս պիտի դուրս գամ քո բարության տակից: Մեր գեղջավագին[1] տասը ձիաբեռ ցորեն եմ պարտք: Մի քանի տարի է, ինչ չեմ կարողանում պարտքս տալ: Հուսահատությունից ինձ գցեցի Երասխի մեջ, որ մեռնեմ-պրծնեմ, ազատվեմ իմ պարտքերից և ինքս ինձնից: Իբր թե գեղջավագը քիչ էր, հիմա էլ հայոց արքային եմ մնում պարտք: Մի՞թե խեղդվելն ավելի լավ չէր իմ այս վիճակից:

– Չէ՛, շինակա՛ն, չէի ասի, թե խելքդ խելքի նման է. շինականը պիտի ոչ թե հուսահատությունից իրեն ջուրը նետի և խեղդվի, այլ իր գործը շարունակի, բարիք արարի: Եթե էն գլխից քեզ նման մտածեին, հիմա աշխարհում ոչ մի շինական չէր լինի, իսկ եթե շինական չլիներ, թագավոր էլ չէր լինի:

– Ի՞նչ, եթե շինական չլիներ, թագավոր չէր լինի՞:

– Այո՛, ես պիտի ասեմ, որ հնուց բոլոր թագավորներն էլ շինականներին պարտք են: Ուրեմն՝ ոչ թե դո՛ւ ես ինձ պարտք, այլ ես եմ քեզ պարտք: Վերցրո՛ւ այս ոսկիները ու մարի՛ր քո պարտքը,– ասաց Տրդատը և մի քանի ոսկի լցրեց շինականի բուռը:

---

[1] **գեղջավագ** – գեղջի՝ գյուղի ավագ:

Հայկ Խաչատրյան

ԽՈՍՐՈՎ Գ

Թագավորել է 385–388 թթ.

Պարսից Շապուհ Երրորդ Սասանյան արքան հայ նախարարների պահանջով հայոց գահին է բազմեցրել պատանի Խոսրով Գ Արշակունուն՝ նրան կնության տալով իր քույր Զրվանդուխտին:

Ասում են՝ պատանի Խոսրովն ու դեռատի դշխո Զրվանդուխտն իրենց ամուսնության առաջին տարում միմյանց հետ չէին խոսում և բավարարվում էին ժպիտներ փոխանակելով: Մի անգամ արքայի խնամակալը Խոսրովին հարցնում է.

– Արքա՛, դու ե՞րբ պիտի խոսես դշխոյի հետ:

– Երբ նա սովորի հայերեն,– պատասխանում է Խոսրովը:

– Իսկ երբևիցե համբուրե՞լ ես նրան:

– Ո՛չ, չեմ համբուրել,– պատասխանում է արքան, ապա կատակով ավելացնում.– դե իմ շրթունքները հայախոս են, Զրվանդուխտինը՝ պարսկախոս. մեր շրթունքների հպումից ի՞նչ համբույր դուրս կգա: Համբուրելու համար կամ պիտի ես պարսկախոս դառնամ, կամ ինքը՝ հայախոս: Ավելի լավ է՝ ինքը հայախոս դառնա:

Դայկ Խաչատրյան

Աշոտ Գ Ողորմած

Թագավորել է մ.թ. 953–977թթ.

Հայոց թագավոր Աշոտ Գ Ողորմածը հաջորդել է հորը՝ Աբաս Բագրատունուն: Կատարելագործել է տերությունը կառավարելու համակարգը: 958 թվականից որդուն՝ Սմբատ Բ-ին, կարգել է գահակից: 961 թվականին Հայաստանի քաղաքամայր է հռչակել Անին և արքունիքը Կարսից փոխադրել այնտեղ:

Մի անգամ մայիսին Անիում ընկուզաչափ կարկուտ տեղաց և քարուքանդ արեց Ծաղկոցաձոր թաղամասում ապրող մի քանի գործավորների տները: Կարկտահարված տների բնակիչները՝ մեծ ու փոքր, հարյուրից ավելի մարդ, գիշերը մնացին բաց երկնքի տակ:

Առավոտյան Աշոտ Բագրատունի թագավորը, ով աչքի է ընկել իր շինարարական գործունեությամբ, մի քանի արքունականների հետ եկավ Ծաղկոցաձոր և իր աչքով տեսնելով ամեն բան՝ հրաման տվեց անօթևան մնացած բոլոր մարդկանց տեղավորել արքունի կացարաններում:

– Դուք այստեղ կմնաք և արքունի խոհանոցի բարիքներից կօգտվեք այնքան ժամանակ, մինչև կնորոգվեն ձեր քանդված տները,– ասաց արքան:

Ասում են՝ այս դեպքից հետո անեցիներն իրենց արքային կնքեցին *Ողորմած* մականունով և կոչեցին *Աշոտ Ողորմած*:

Աշոտ Ողորմածն իրապես մեծ բարեգործ էր: Նա երկրի գլխավոր քաղաքներում բացել էր դպրոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ և բավականաչափ գումար էր հատկացնում դրանք պահելու համար, ինչը բացառիկ երևույթ էր այդ ժամանակների համար:

Անի քաղաքի նկարչական վերակազմությունը, Ռուբեն Ղևոնդյան, 2005-2010թթ.

Հայկ Խաչատրյան

Լեվոն Բ Մեծագործ

1187–1198թթ. եղել է Կիլիկիայի Հայաստանի մեծ իշխան, 1198թ. հուլիսի 6–ից մինչև 1219թ. մայիսի 2–ը՝ Հայոց թագավոր

Լևոն Բ Մեծագործը Կիլիկյան Հայաստանի թագավորության հիմնադիրն է: Կոչվել է նաև *Լևոն Բազմահաղթ*, *Լևոն Բարեպաշտ*: Իշխան Ստեփանեի կրտսեր որդին էր: Որպես իշխան՝ հաջորդել է եղբորը՝ Ռուբեն Գ-ին: Բյուզանդացիները նրա հորը՝ Ստեփանեին, խաշել-սպանել են եռացրած ջրով լեցուն կաթսայի մեջ:

Լևոնը թագադրվել է 1198-ի հունվարի 6-ին՝ Աստվածահայտնության օրը, Տարսոն քաղաքի Սուրբ Սոֆիա Մայր տաճարում: Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսը օծել է նրան հայկական ծեսով և կոչել «թագավոր ամենայն հայոց և նահանգին Կիլիկյացոց և Իսավրիո»: Հռոմի պապի ներկայացուցիչ Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտելբախը նրան թագավոր է օծել լատինական ծեսով: Լևոնի գահակալումով վերականգնվել է հայոց կործանված թագավորությունը:

Լևոն Բ Մեծագործը աչքի է ընկել իր ողջախոհ քաղաքականությամբ, խիզախությամբ ու հեռատեսությամբ: Բազում ճակատամարտերում հաղթել է թշնամիներին, հզորացրել Կիլիկիայի հայկական իշխանությունը, այն հասցրել թագավորության կարգավիճակի և արժանացել *Մեծագործ* տիտղոսին: Մահից առաջ գահաժառանգ է կարգել իր դեռահաս դուստր Զաբելին:

Մահացել է 1219 թվականի մայիսի 2-ին:

Լևոն Բ Մեծագործը

* * *

Կիլիկյան Հայաստանի հզոր թագավոր Լևոն Մեծագործը տառապում էր հոդացավով: 1219թ. մայիսի 2-ին նրա ցավերը սաստկացան: Զգալով մոտալուտ մահը՝ Լևոնն իր մերձավորներին խնդրեց իրեն տանել Ակ-

ների վանք, որը նրա ամենասիրած վայրն էր համայն Կիլիկիայում: Ակների փառահեղ բնաշխարհը, բազում աղբյուրների քչքչոցը, թռչունների երգահանդեսը նրա սիրտը լցնում էին այնպիսի երանելի զգացումով, որ թվում էր, թե ողջության ժամանակ ինքն ընկել է դրախտ:

Ակներ վանք, XIII-XIV դդ.

Եվ ահա արքայական մարտակառքը սուրում է դեպի Ակներ: Սակայն թագավորը տեղ չի հասնում: Նա մեռնում է Ակներից մի քանի հարյուր ոտնաչափ հեռու:

Կատարելով թագավորի կտակը՝ հայերը նրա մարմինը թաղում են Կիլիկյան Հայաստանի քաղաքամայր Սիսում, իսկ սիրտը՝ Ակներում:

Լևոն Մեծագործի դրամներից

Հայկ Խաչատրյան

ԶԱԲԵԼ

Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոն Բ Մեծագործը արու զավակ չուներ: Այդ պատճառով նա կտակով թագաժառանգ էր կարգել իր անչափահաս դուստր Զաբելին, որը խնամակալների միջոցով երկիրը ղեկավարել է 1219-1222 թվականներին: Հայոց պատմության մեջ դա առաջին դեպքն է, երբ թագուհու տիտղոսով թագաժառանգի իրավունք է ստանում կինը, ավելի ճիշտ՝ մի քանի տարեկան աղջնակը: Հետագայում Զաբելն ամուսնացել է Անտիոքի դքսի որդի Ֆիլիպի հետ, որը դավաճանել է հայոց տերությանը և մահվան դատապարտվել:

Նրա մահից հետո Զաբելն այրիացել է՝ դեռևս 11 տարեկան չդարձած:

1226 թվականին Զաբելը երկրորդ անգամ ամուսնանում է Կիլիկյան Հայաստանի պայլ[1] Կոստանդին Լամբրոնացու որդի Հեթումի հետ: Եվ քանի որ Զաբելը թագուհի էր, ամուսինն էլ կնոջ տիտղոսով հռչակվում է թագավոր: Չնայած Զաբելը դեռատի տարիքում տառապանքներ կրելուց հետո է ամուսնացել Հեթումի հետ, այնուամենայնիվ դա երջանիկ ամուսնություն էր: Քանզի այն հիմնված էր փոխադարձ անձնվեր սիրո վրա, որը զորավիգ էր դառնում նրանց՝ իմաստնաբար վարելու Կիլիկյան Հայաստանի թագավորությունը:

Զաբել թագուհու վերադարձը, Վարդգես Սուրենյանց, 1909թ.

1241թ. Զաբելը Սիսում հիմնել է բարեգործական հիվանդանոց, որտեղ մեծ սիրով հիվանդներին խնամել են Զաբել թագուհին և իր դուստրերը:

Զաբելը մահացել է 1252 թվականին:

Հեթումի ու Զաբելի թագավորության տարիներին Կիլիկյան Հայաստանը հզոր վերելք է ապրել:

---

[1] **պայլ** – պարոնի կամ ասպետի փոխանորդ Կիլիկյան Հայաստանում:

Դայկ Խաչատրյան

Լեվոն Գ

Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոն Գ-ն հաջորդել է հորը՝ Հեթում Առաջինին: Մոր կողմից Ռուբինյան է. նրա մայրը Լևոն Մեծագործի դուստր Զաբելն էր, հոր կողմից՝ Հեթումյան:

1262-ին նա ամուսնացել է Լամբրոնի իշխան Հեթումի դուստր Կեռանի (Կիռ Աննա) հետ:

Լևոն Գ արքայի տիկնանց տիկին Կեռանը հայոց 150 թագուհիների մեջ ամենաբազմազավակ թագուհին է. 21 տարվա մեջ ունեցել է 15 (այլ աղբյուրներում՝ 14) զավակ՝ 8 տղա և 7 աղջիկ, որոնցից 3-ը խեղեփ՝ երկվորյակ էին:

Առաջին զույգը՝ ուստր և դուստր. արքայազնին, ի պատիվ Սմբատ սպարապետի, կոչեցին *Սմբատ*, իսկ արքայազնուհուն տվեցին *Սիպիլ* անունը, երկրորդ զույգը դուստրեր էին, որոնց անվանեցին *Ռիթա* և *Թեոֆանե*, երրորդ զույգը ուստրեր էին, որոնց անվանեցին *Օշին* և *Ալինախ*:

Հայոց թագավորներից միայն Լևոն Գ արքայի և տիկնանց տիկին Կեռանի 8 որդիներից 5-ը եղբայրներ էին, որ թագավոր դարձան՝ հաջորդելով միմյանց:

Լևոն Գ-ի թագավորության տարիներին Կիլիկյան Հայաստանը մշակութային մեծ վերելք է ապրել: Լևոն Գ-ն եղել է արվեստի մեծ հովանավոր:

1266 թվականի օգոստոսի 23-ին տեղի ունեցած Մառիի ճակատամարտում հայկական բանակը պարտվում է, և Կիլիկյան

Լևոն III (II) արքայի, Կեռան թագուհու և նրանց զավակների երկրպագությունը Հիսուս Քրիստոսին, Թորոս Ռոսլին, 1272թ.

Մատենադարան Կիլիկիայի Կաթողիկոսության ձեռագիր 1226-1270թթ.

Հեթում Ա-ի դրամներից՝ պետական զինանշանով

Հեթում Ա-ի և Զաբել թագուհու պատկերներով դրամ, արծաթ, XIII դ.

Հայաստանի արքա Հեթումի ավագ որդի Լևոնը գերի է ընկնում Եգիպտոսի սուլթանության զորքին: Երկու տարի հետո հոր ջանքերով ազատվում է գերությունից մեծ փրկագնով և գալիս ու բազմում հայրական գահին:

Թագավոր օծվելուց հետո մի ամբողջ տարի թագը գլխին չի դրել: Մի անգամ խաչակիր ասպետներից մեկը Լևոնին ասում է.

– Հայկական սովորությունները զարմացնում են ինձ: Մի տարի է անցել, ինչ դու թագավոր ես հռչակվել, բայց գլխիդ թագ չես դնում. դա ի՞նչ է նշանակում:

– Դա նշանակում է,– պատասխանում է Լևոնը,– որ հայերիս մեջ գործում է հարգս հարգավորաց, պատիվս արժանավորաց սկզբունքը: Ես սիրում ու հարգում եմ հորս: Ճիշտ է, նա գահը զիջեց ինձ, բայց դեռ ողջ է, ես չեմ կարող հորս ողջության ժամանակ նրա թագը գլխիս դնել:

– Բայց հայրդ հրաժարվել է արքայությունից, նա կրոնավորյալ է:

– Հետո ինչ, կրոնավորյալ դառնալով՝ նա չի դադարում իմ հայրը լինելուց:

Լևոն Գ–ի և Կեռան թագուհու 15 զավակներից հինգը թագավորներ են դարձել և բազմել հայոց գահին: Հայոց պատմության մեջ դա միակ դեպքն է, երբ հինգ հարազատ եղբայրներ թագավորում են իրար հետևից:

Հայկ Խաչատրյան

ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ

Կիլիկյան Հայաստանի թագավոր Կոստանդին Դ-Ն հաջորդել է Կոստանդին Գ Լուսինյանին: Հեթումյան տոհմի ազգականն էր, Նղր[1] բերդի տեր Բաղդինի որդին: Հայերը նրան անվանել են *մեծ արքա*: Փորձել է համախմբել երկրի հայրենասիրական ուժերը և վերականգնել Կիլիկյան Հայաստանի հզորությունը:

Կիլիկյան Հայաստանի թագավոր Կոստանդինը իր թագավորության տասներորդ տարում շատ քարագործներ և այլ գործավորներ է վարձել արքայական մի պերճ ապարանք կառուցելու համար: Չհասցրեց ավարտել: Շինությունը դեռ կիսով չափ չկառուցած՝ եգիպտական մամլուքները ասպատակեցին Կիլիկյան Հայաստանի շատ վայրեր և ավարի մատնեցին քառասունչորս ձեռագիր հաստափոր մատյաններ:

Կոստանդինը, տեղեկանալով այդ մասին, իր ունեցած բոլոր գանձերը տվեց, փրկագնեց հայատառ գրքերը և դրանք վերադարձրեց տերերին: Իսկ ապարանքը մնաց կիսատ:

Եվ մարդիկ ասացին.

– Ա՛յ թե ինչպիսի՛ այր էր Կոստանդին արքան. նա հպարտացել է, որ գերությունից քառասունչորս հայերեն գիրք է փրկել: Այդ գրքերից յուրաքանչյուրը հայության համար ավելին արժե, քան ցանկացած շքեղ ապարանք:

Թագավորել է Կիլիկիայում 1343–1344թթ.

[1] **Նղր** – նշանավոր բերդ Կիլիկյան Հայաստանում:

ԽՈՍՈՒՄ ԵՆ ԱՐՔԱՆԵՐԸ

ԿՈՏԻՍ

(թագավորել է 37-43թթ.)

Գիտուններից մեկը դիմեց Կոտիս արքային.

- Ամեն արքա մի անտեսանելի հարստություն ունի. քո կարծիքով՝ ո՞րն է այդ հարստությունը:

- Ողջախոհությունն ու շրջահայացությունը,- պատասխանեց Կոտիս արքան:

ԱՐՇԱԿ Գ

(թագավորել է 378-390թթ.)

Մի անգամ հայոց դեռահաս թագավոր Արշակ Գ Արշակունին դիմում է սպարապետ Մանվել Մամիկոնյանին.

- Սպարապե՛տ, բոլոր որդիները պարտավո՞ր են հպարտանալ իրենց հայրերով և երդվել նմանվել նրանց:

- Տե՛ր արքա, քո հարցին ես կարող եմ պատասխանել հնուց եկած մի խոսքով. ինչպիսին էլ լինի հայրդ, հարգի՛ր նրան, որովհետև քո ծնողն է, հպարտացի՛ր նրա անունով, եթե նա օգնել է ուրիշ մարդկանց, ջանա՛ նմանվել նրան, եթե նա երևելի է:

ՍՄԲԱՏ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

(թագավորել է 890-914թթ.)

Մի անգամ Սմբատ Առաջին Բագրատունի թագավորին հարցրին.

- Մարդ կյանքում ամենից շատ ո՞ւմ խորհուրդներով պիտի առաջնորդվի:

Եվ արքան պատասխանեց.

– Մինչև տասնհինգ տարեկանը պիտի լսել խնամակալին, մինչև երեսունը՝ իմաստուններին, հետո՝ ինքդ քեզ:

Միայն մայրական խորհուրդն է, որին մարդ պարտավոր է անսալ[1] ծննդյան օրից մինչև մահ:

ՍՄԲԱՏ Բ ՏԻԵԶԵՐԱԿԱԼ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

(թագավորել է 977-989թթ.)

Եվ հարցրեց իմաստունն իմաստունին.

– Աշոտ Ողորմածի որդի Սմբատ Բագրատունի թագավորը ինչի՞ համար է *Տիեզերակալ* մականունն ստացել. չէ՞ որ ոչ ինքն էր աշխարհակալ մեծություն, ոչ էլ նրա օրոք Հայաստանն էր դարձել տիեզերական տերություն:

Եվ պատասխանեց իմաստունն իմաստունին.

– Նրան *Աշխարհակալ* են կոչել կառուցումների համար: Զորեղներ կան, ովքեր զենքով կարող են աշխարհի կեսը նվաճել և *Աշխարհակալ* կոչվել, զորեղներ էլ կան, ովքեր հանճարակերտ կառուցումներով շինարար երևելիների մեջ *Տիեզերակալ* են կոչվում:

Սմբատը շինարար Տիեզերակալներից է:

ՍԵՆԵՔԵՐԻՄ-ՀՈՎՀԱՆՆԵՍ

(թագավորել է Վասպուրականում 968-1025թթ.)

Վասպուրականի թագավոր Սենեքերիմ – Հովհաննեսի կնոջը՝ դշխո Խուշուշին հարցրին.

– Դշխո՛, քո ամուսինը պերճ գանձեր ունի, բայց դու ամբողջ կյանքումդ չփայլեցիր պերճ հանդերձներով:

– Ամուսինս,– պատասխանեց դշխոն,– իր պերճ գանձերը բաշխել է հայ քարագործներին, որոնք քարեղեն պերճ հանդերձներով են զուգել մեր տիրույթները:

Դա նաև ի՛մ սրտով է. ավելի լավ է գեղեցկանա Հայրենիքը, քան մի քանի զարդ ավելանա թագուհու հանդերձի վրա:

Պիտի նաև ի միտ առնել, որ թագուհու հանդերձը մաշվում է, իսկ տաճարացած քարեղեն հանդերձը դարերով ու հազարամյակներով չի կորցնում իր փայլը:

---

[1] **անսալ** – լսել և հնազանդվել:

ԱԲԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

(թագավորել է Կարսում 984-1029թթ.)

Մի անգամ Կարսի Աբաս Բագրատունի թագավորը խնջույքի է հրավիրում իր տերության մեջ ապրող բոլոր իմաստասերներին: Գալիս են ընդամենը չորս մարդ: Աբասը դիմում է նրանցից մեկին և ասում.

- Ես չեմ կարծում, որ իմ տերության մեջ իմաստասերներն այսքան քիչ են: Մյուսներն ինչո՞ւ չեն եկել. ես բոլորին կհյուրասիրեի ընտիր ըմպելիքներով և ուտելեղենով: Նրանք անչափ գոհ կմնային, վերջում էլ մեկական ոսկի կստանային՝ որպես նվեր:

- Այդ ամենի մասին գիտենք մենք՝ չորսս, և նրանք, ովքեր չեն եկել,- պատասխանում է իմաստասերը,- երկյուղել են, որ քո ծով իմաստության դիմաց իրենց գիտեցածը բանի պետք չի լինի, և կխայտառակվեն քո առաջ:

Տե՛ր արքա, իմաստասերի համար դժվար բան է հյուր գնալ այն տիրակալին, որն իմաստասերների իմաստասերն է:

ԳՈՒՐԳԵՆ

(թագավորել է 966-991թթ.)

Լոռու Գուրգեն կամ Կյուրիկե թագավորը շատախոսներին չէր սիրում: Արքունականները ամեն կերպ ջանում էին թագավորի հետ խոսելիս սեղմել իրենց ասելիքը, ավելորդ բառ չասել:

Մի անգամ սենեկապանը գահասրահ է մտնում ու ասում.

- Տե՛ր արքա, Ձորագետ մեծագետ:

- Ի՞նչ,- հարցնում է արքան:

Սենեկապանը կրկնում է իր ասածը:

- Լսի՛ր, եթե չես ուզում, որ այս նիզակով դաղեմ հետույքդ, ասելիքդ մարդավարի՛ ասա,- զայրանում է արքան:

- Տե՛ր արքա, Ձորագետը հորդացել է, դուրս է եկել իր ափերից և դարձել Երասխի պես հորդառատ մեծ գետ:

- Իսկ դա չէի՞ր կարող սկզբից ասել:

- Դու պահանջում ես սեղմել ամեն բան:

- Բայց սեղմել չի նշանակում խոսքի հերն անիծել և աղավաղել ասելիքը,- ասում է արքան:

ԴԱՎԻԹ

(թագավորել է Լոռիում 1090-1113թթ.)

Լոռու հայ թագավոր Դավիթը իշխել է եղբոր՝ Արաս Առաջինի հետ: Նա մի սովորություն ուներ. ամեն օր արթնանալուն պես լվացվում էր և նախքան որևէ բան անելը՝ ձեռքը դնում էր Ավետարանի վրա, մի քանի ակնթարթ պահում, ապա սկսում իր գործը:

- Երբ ձեռքդ դնում ես Ավետարանի վրա, մտքումդ ի՞նչ ես ասում,- հարցնում են Դավիթին:

- Մտովի ինքս ինձ խոստանում եմ արդարադատ լինել թագավորական գործերում,- պատասխանում է Դավիթը:

ՍԵՆԵՔԵՐԻՄ

(թագավորել է Փառիսոսում 958-1003թթ.)

Մի անգամ Փառիսոսի թագավոր Սենեքերիմին հարցրին.

- Դու ավելի շատ գանձ ունես, քան Պարսից արքան. ինչո՞ւ չես փողերդ ծախսում աշխարհային վայելքների համար, ինչո՞ւ ես քո անբավ հարստությունը ծախսում ամրություններ կառուցելու և զենքեր կռելու համար:

- *Թագավորական հարստությունը նրա համար է, որ գահակալը նրա օգնությամբ պահպանի իր հողի և իր ժողովրդի ինքնությունը, հայկական դիմագիծը ու հետնորդներին փոխանցի բարգավաճ տիրություն և ոչ թե վայելքներից ճաքճքված զվարճատեղի,*- լինում է Սենեքերիմ գահակալի արժանավայել պատասխանը:

ՏՐԴԱՏ

(ժողովրդական զրույց)

Տրդատ Ա թագավորի արձանը Վերսալում

Հայաստանի թագավոր Տրդատը գալիս է Հռոմ՝ Ներոնից թագ ստանալու: Տեղի իշխանները նրան զարմացնելու համար ման են ածում քաղաքում և ցույց տալիս գեղեցիկ ու մեծ շենքերը, այդ թվում նաև այն հսկայական շենքը, ուր գտնվում էր ծերակույտը, և ուր պահվում էին օրենքների բազմաթիվ գրքերը:

Երբ Տրդատը ճաշի է նստում, Ներոնը նրան հարցնում է.

– Հայոց աշխարհո՞ւմ էլ այսպիսի օրենքներ կան:

– Հայոց աշխարհի օրենքները քիչ են, բայց լավն են,– պատասխանում է Տրդատը,– մեր երկրում ամեն մարդ պարտավոր է իմանալ դրանք: Եվ եթե հայոց ազգն իր օրենքները լավ պահի, հռոմեացիք չեն կարող մոտենալ Հայաստանին:

– Իսկ որո՞նք են Հայաստանի այդ օրենքները, որ մենք երբևէ չենք լսել,– հարցնում է Ներոնը զարմանքով:

– Առաջին օրենքն այն է, որ մեր թուրը ժանգոտ լինի, իսկ մանգաղը՝ հայելու նման փայլուն: Երկրորդ օրենքն այն է, որ դատարանի դռանը չփրորված կանաչ խոտ լինի բուսած, և դրա փոխարեն՝ տաճարի դռան խոտը միշտ տրորված լինի: Եվ երրորդ՝ մեզ պարտադրված կռվի ժամին բոլորս միասին լինենք, խաղաղ օրերին՝ ամեն մեկս մեր գործին՝ վարենք, ցանենք ու կառուցենք,– պատասխանում է Տրդատը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.
- Քեզի ընծա՛, իմ հայրենի՛ք -
Սոսյաց անտառեն էի զայն կտրեր,
- Քեզի ընծա՛, հին հայրենիք -
...Եղեգնյա գրչով վրեժ երգեցի,
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ...

Դանիել Վարուժան





Ստեփան Կուրտիկյան

Արարատ

Արշավում էին բազմամբոխ բարբարոսները: Այրուձիի սմբակները տրորում էին ցորյանի ոսկի արտերն ու մրգառատ այգիները, արյուն ու ավեր բերում Հայոց աշխարհին:

Այդ դաժան օրերին ժողովրդյան վշտի, ցասման ու ծով արյան միջից ծնվեց բոցահեր ու բոցակն մի մանուկ, որին կոչեցին *Արարատ*: Հրաշք մանուկ էր նա, որ աճում էր ժամ առ ժամ: Մնում, կերակրում էին նրան Հայոց աշխարհի բոլոր մայրերն ու այրերը, ամբողջ շինական ժողովուրդը:

Շուտով մի հսկա դարձավ մանուկը: Նրա սոսկավիթխար[1] հասակն ու լեռնակուտակ ուժը տեսնելով՝ ժողովուրդը փառք տվեց Արև աստծուն, որ վերջապես ամենազոր փրկիչ պահապան էր պարգևել իրեն:

Հսկայատիպ պատանուն ժողովուրդը նվիրեց նախնիներից ժառանգություն մնացած հայկյան լայնալիճ աղեղը, նետն ու թուրը: Վահանի կարիք չուներ, քանզի ժողվրդի ցասումից, վշտից և արյունից ծնված՝ անխոցելի էր:

Արարատի անհնարին քաջ գործերը տեսնելով՝ Հայոց երկրի ալևոր թագավորը կամեցավ իր զորաց սպարապետ կարգել նրան:

Թագավորի կամքը լսելով՝ քաջակորով պատանին ասաց.

– Երդվում եմ ծառայել Արև աստծուն ու արքային. միայն աղաչում եմ, տե՛ր իմ արքա, արձակի՛ր շինական զորագնդերը բոլոր, արձակի՛ր ստրուկներին, թող գնան խաղաղ աշխատեն ու ապրեն: Ինձ բավական են երեսունինը քաջեր: Երդվում եմ բոլոր աստվածների անունով՝ անպատիժ չթողնել մաճկալի արտն ու արոտը տրորող ոչ մի բարբարոսի...

Ծերունի թագավորը լսեց ահագնացած Արարատին, հպարտ եղավ.

– Թող քո կա՛մքը լինի, ո՛վ քաջազուն, և թող արևը անպակա՛ս լինի գլխիցդ,– ասաց նա:– Հետայսու քեզ եմ վստահում Հայոց աշխարհի պաշտպանությունը...

Այնժամ Արարատը հանեց իր թուրը և հուզված դրեց թագավորի առջև:

Ալեհեր թագավորը երկյուղածությամբ իր ձեռքն առավ հայկյան թուրը, գլխից վեր բարձրացրեց և կրկին հանձնեց Արարատ սպարապետին:

---

[1] **սոսկավիթխար** – սոսկալիորեն վիթխարի, ահռելի մեծությամբ:

* * *

Այդ օրերին հեռավոր Հռովմից սուրհանդակներ ժամանեցին Հայոց աշխարհ և թագավորին մատուցեցին մի հրովարտակ: Բարբարոսները արշավի էին ելել Հռովմի մեծ կայսրության վրա և կայսերական բանակն ի զորու չէր կործանարար հեղեղի առաջն առնելու: Աղերսում էր կայսրը, ի կատարումն երկու երկրների հնօրյա դաշինքի, հայոց այրուձին շտապ ուղարկել Հռովմ՝ միատեղ դիմադարձ լինելու վանդալներին[1]:

Գարնանային օր, Մարտիրոս Սարյան, 1929թ.

Կարդալով աղերսագիրը՝ ծերունի թագավորն ընկավ մտքի մեջ: Ինչո՞վ զորավիգ լինել Հռովմին: Չէր ուզում դրժել հնավանդ դաշինքը, երդմնազանց լինել, բայց այրուձիի գնդերը ցրել էր ու միայն քառասուն աղեղնավոր ուներ:

Ալեհեր թագավորը խորհրդի կանչեց իր սպարապետին:

– Թագավորն ապրա՛ծ կենա, հրամայեցե՛ք երեսունինը քաջերի հետ գնամ օգնության,– խոսեց սպարապետը հայոց:

Թագավորը խոժոռեց դեմքը. սրտովը չէր, որ սպարապետն անպաշտպան թողնի հայրենի երկիրը և գնա Հռովմ: Հետո՝ առանց հայրենի հողից ուժ ստանալու՝ դժվար էր կռվել բարբարոս հորդաների դեմ, որոնք պարտության էին մատնում Հռովմի մեծահռչակ լեգեոններին:

– Հրամայեցե՛ք, որ այսօր իսկ ճանապարհվեմ, արքա՛ իմ,– կրկնեց սպարապետը:

Երկար խորհեց ծերունի թագավորը և վճռեց.

– Գնա՛, որդյա՛կ իմ, գնա՛: Մեր նախնիների հրաշագործ թուրը և հայրենիքի սերը՝ քեզ ո՛ւժ ու զորավի՛գ: Գնա՛ ու միշտ հիշի՛ր՝ ժողովուրդը հայոց քո քաջերի հաղթական դարձին է սպասում...

---

[1] **վանդալ** – բարբարոս, վայրենաբարո մարդ:

* * *

Քառասուն կտրիճները, հրեղեն ձիեր նստած, առաջ էին սլանում դաշտավայրով, թռչում էին ձյունագագաթ լեռների և անհատակ անդունդների վրայով, և հողմը չէր հասնում նրանց ետևից:

Անցան ցամաքներ ու ծովեր, անցան ամպրոպային Զևսի երկրից՝ Օլիմպոսի անմահ աստվածների մոտով, հասան Յուպիտերի երկիրն ու ներկայացան կայսերը:

Հայոց քառասուն աղեղնավորներին տեսնելով՝ կայսրը գազազեց սաստիկ ու՝

– Դրուժա՛ն[1],– գոռաց Հայոց թագավորի հասցեին:

Բարբարոսներն ահա մոտենում էին Հռովմին, իսկ Հայոց թագավորը չարաչար ծաղրի էր առնում իրեն: Մի՞թե ամենակործան հեղեղի առաջ կարելի էր պատնեշ կանգնել քառասուն այրուձիով... Հեգնանք էր դա, անարգանք կայսեր հանդեպ:

– Ե՛տ դարձեք անհապաղ, քանի դեռ հրաման չեմ արձակել գլխատելու բոլորիդ և ձեր քառասուն գլուխներն ուղարկելու նենգադավ ծերունուն,– գոռաց կայսրը Արարատ սպարապետի երեսն ի վեր.– ե՛տ դարձեք և ասացե՛ք ուխտադրուժին, որ նվազագույնը հիսուն հազար այրուձի էի սպասում ես... Իմ սրբազան հողի վրա չեմ ուզում թափել ձեր արյունը: Բայց կգա՛մ ձեր երկիրը շուտով, և այն ժամանակ վա՛յ ձեր թագավորին:

Արարատ սպարապետը, սակայն, ետ չդարձավ հայրենիք, այլ կայսրից թաքուն գնաց ընդառաջ Հռովմի վրա արշավող բարբարոսներին:

Երբ բարբարոսների առաջնորդը տեսավ քառասուն աղեղնավորներին, որ իր դեմ էին գալիս՝ ձիերը խաղացնելով, հրամայեց հազար հոգի ուղարկել՝ նրանց հետ մարտի բռնվելու:

Մարտը բորբոքվեց ու հազարն էլ ջարդվեցին: Այդ տեսնելով՝ բարբարոս զորավարն այս անգամ երկու հազար հեծյալ ուղարկեց այրուձիի դեմ: Բայց իր բանակատեղից ահով նկատեց, որ այդ երկու հազարն էլ բնաջնջվեցին: Երրորդ անգամ նա ուղարկեց տասը հազար ձիավոր: Եվ ահեղ մարտում սրանք էլ անշնչացած, դիտապաստ[2] ընկան ռազմադաշտի մեջ:

– Ո՞ր հողից են այս քառասուն քաջերը, որտեղի՞ց են եկել,– կատաղության մեջ գոռաց բարբարոսների ահաբեկված առաջնորդը:

– Հայոց այրուձի՛ն է... Հեռու-հեռավոր Հայոց աշխարհից են օգնության եկել Հռովմին,– պատասխանեց սուրհանդակը, ով անցել էր քաջերի մոտով:

Այս անգամ բարբարոսների առաջնորդը, իր հարյուրհազարանոց

---

[1] **դրուժան** – ուխտադրուժ եղող, խոստումը՝ պայմանը դրժող, խախտող:

[2] **դիտապաստ** – դիակի պես գետնին փռված:

զորքի գլուխն անցած, իբրև սանձազերծ մի մրրիկ, սլացավ քառասուն աղեղնավորների դեմ:

Հանգիստ ու անսասան՝ իր քաջերի առաջն էր կանգնել սպարապետը և, հաղթալանջ կուրծքը թշնամուն դեմ արած, մնում էր անխոցելի:

Քառասուն քաջերը, նետերի տարափն արհամարհելով, ոչնչացնում էին թշնամուն:

Շուտով լիճ կապեց բարբարոսների արյունը, և նետահարվածների դիակները ծածկեցին ռազմադաշտը:

Վիրավորների հառաչը լսելով՝ Արարատ սպարապետը հուզվեց սաստիկ, վճռեց վերջ տալ արյունահեղությանը: Երկինք պարզեց իր հայկյան թուրը, սլացավ բարբարոսների առաջնորդի վրա և մի հարվածով թռցրեց գլուխը:

Խուճապ ընկավ թշնամու շարքերը, և անձնատուր եղան բարբարոսները:

Արարատն ազատ արձակեց գերիներին, որ խաղաղությամբ գնան իրենց տները, իսկ բարբարոս առաջնորդի գլուխը վերցնելով՝ հաղթական երթով Հռովմ մտավ ու ներկայացավ կայսերը:

Թշնամու չարաչար պարտության լուրը լսելով՝ անհուն ուրախություն ու անսահման երկյուղ զգաց կայսրը: Ուրախությո՛ւն, որ թշնամին ոչնչացված էր, և Հռովմը՝ փրկված, երկյո՛ւղ՝ կայսրության վիճակից, եթե պատերազմ ծագեր հայերի ու իր միջև:

Եվ այն ժամանակ կայսրը նենգամտեց...

* * *

Հռովմայեցոց կայսրը մեծ խնջույք սարքեց՝ ի պատիվ հաղթողների: Քառասուն գեղեցկուհի ըմպելիք էին մատռվակում քաջերին, պարում կիսամերկ ու հարուցում տարփատենչ[1] զգացումներ, որոնց դեմ կռվելն ավելի դժվար էր, քան բարբարոսներին հալածելը:

Գեղեցկուհիների թագուհին բոցակեզ գինի ու համադամ խորտիկներ էր մատուցում դյուցազունների դյուցազունին:

Գիշերվա կեսին ընկնում էին քաջերն իրար ետևից՝ գինուց ու հաղթանակից պարտված... Անհետացել էր կայսրը, որ մասնակցում էր կայսրության փրկիչների մեծ խրախճանքին: Անհետացել էին նաև բաքոսուհիները: Ու դավադիր լռություն էր տիրում մարմարակերտ դահլիճում...

Այնժամ սյունազարդ սրահ եկավ գեղեցկուհիների թագուհին, մերձեցավ սպարապետին, որ զգաստ էր միայնակ և հրավիրեց հետևել իրեն՝ ասելով.

– Կարիք ունեմ քո օգնության, ո՛վ մեծ սպարապետ:

---

[1] **տարփատենչ** – շատ տենչալի՝ բաղձալի:

Հազիվ էին թողել սրահը և անհետացել մութ կամարների տակ, երբ կայսեր դահիճները, սրահ ներխուժելով, սրախողխող արեցին քնած քաջերին:

Գեղուհիների թագուհին, հմայված Արարատ սպարապետի ուժով ու առնականությամբ, բաց արեց նրա առջև կայսեր դավադրությունը և իր կամքը հայտնեց՝ մեծ գանձ վերցնել և փախչել միասին դեպի հեռու երկիր:

Արարատը փոթորկվեց սաստիկ, ահեղորեն զայրացավ: Մերժեց գեղեցկուհու առաջարկը, հեծավ հրեղեն ձին և իբրև մրրիկ՝ սլացավ դեպի հայրենի երկիր:

Երբ իր քաջերի սխրանքի ու նենգ սպանության լուրը հայտնեց նա շինականներին, դառնակսկիծ հառաչ անցավ երկրով մեկ: Վիշտը ամպացավ, ու թուխպը պատեց հայոց երկնակամարը: Ալեզարդ թագավորի թավ հոնքերը մռայլ ստվեր գցեցին աչքերին, և նա ահեղաձայն որոտաց.

– Ո՞վ պիտի լուծի հայոց վրեժը նենգավոր կայսրից...

Արքայի ձայնը արձագանքեց լեռից լեռ ու ձորից ձոր և թունդ հանեց բոլոր սրտերը:

Մի պահ ծառ ու ծաղիկ, մարդ ու գազան քարացան:

Այդ միջոցին, ինչպես լեռնային ամպրոպ, թնդաց ահեղագոչ մի պատասխան.

– Ես...

Եվ վրեժով ու արտասուքով հազար-հազար աչքեր սևեռվել էին Արարատ սպարապետին...

* * *

Վերստին հավաքեց սպարապետը երեսունինը հաստաբազուկ մաճկալ ու խաշնարած, թուրը կապեց մեջքին, ձեռքն առավ հայկյան լայնալիճ աղեղն ու քաջերի գլուխն անցած՝ փրփրաբաշ ձին աշտանակեց դեպի Հռովմ:

Երեք օր, երեք գիշեր ամպրոպում էր երկինքը, օձագալար փայլատակում էին կայծակներն ու մեխվում մթին ժայռերի ծոցը...

Շինական ժողովուրդը զոհ էր մատուցում Արև աստծուն:

Չորրորդ օրը լուսաբացին խաղաղվեց երկինքը, արևը ծիրանավորեց հայոց դաշտավայրը, և թևավոր ձիեր հեծած, գլուխները խրոխտ՝ երևացին քաջերը:

Արարատ սպարապետը կայսեր թրահար գլուխը դրեց հայոց թագավորի առաջ և հայտարարեց, որ ազատ է արձակել Հռովմի բոլոր ստրուկներին:

Արքայական պալատի ու սրբազան մեհյանի առաջ շինական ժողովուրդը հավաքվեց: Եղավ տոնախմբություն մեծ: Ողջակեզների ծուխը բռնեց դաշտավայրն ու ամպածրար երկինք բարձրացավ:

Քառասուն օր ու քառասուն գիշեր տևեց խնջույքը: Շինականները փառաբանում էին Արարատ քաջազունին ու նրա երեսունինը կտրիճներին: Փառաբանում էին Արև աստծուն, որ ուժ ու իմաստություն էր ընծայել Հայոց երկրի պաշտպաններին:

* * *

Այնուհետև հաշտ ու խաղաղ էր ապրում շինական ժողովուրդը: Մաճկալ ու սերմնացան, այգեպան ու խաշնարած տերն էին իրենց արդար վաստակին: Իսկ քաջերի համբավը Հայոց երկրից հեռու էր վանում բարբարոս ասպատակներին:

Անցավ շատ ժամանակ, ու մի օր էլ հայոց սպարապետը բոլորեց իր հարյուր տարին: Թեև էլի հաղթ էին նրա բազուկները, խրոխտ՝ լայնալանջ կուրծքը, սոսկավիթխար՝ հասակը, բայց ձյուն էր նստել գլխին, և փոքր-ինչ մարել էր արծվենի հայացքը...

Մի անգամ, երբ մենության մեջ նա փառաբանում էր Արև աստծուն՝ ճաճանչներով լցվեց շուրջբոլորը, և խաղաղ մի ձայն լսվեց խորին անդորրի մեջ.

– Արարա՛տ նահապետ, սպարապե՛տ հայոց, կամոքն Արև աստծո ժամն է թողնել հողը հայրենի, հայկյան աղեղը լայնալիճ և թուրը հրաշագործ... Այսօր վախճանին է հասնելու քո կյանքը երկրային... Հայցի՛ր Արև աստծուց քո աղերսը վերջին...

Սպարապետը ծունկ չոքեց հայրենի հողի վրա, որն այլևս երբեք չէր տեսնելու, համբուրեց սրտագին, համբուրեց կարոտով, իր հարյուրամյա կյանքում առաջին անգամ արցունք թափեց, ապա վեր պարզեց բազուկները բազմահաղթ և աղերսեց.

– Տե՛ր, լեռնացրո՛ւ ինձ Հայոց աշխարհում՝ ըստ արժանվույն իմո... Ու թող իմ քաջերն էլ լեռնանան...

Հազիվ էր արտասանել վերջին բառը, երբ արեգնաճաճանչ դաշտավայրի կենտրոնում լեռնացավ Արարատը, լեռնացա՛վ, լեռնացա՛վ ու բարձրացավ կապույտի մեջ, լայնալանջ կուրծքը պարզեց աշխարհին և երկնակամարին մխրճեց ձյունապսակ գլուխը... Ու նրա քաջերն էլ, որպես իրենց սպարապետի բազուկներ, լեռնացա՛ն, լեռնացա՛ն ու պաշտպանության շղթայով գրկեցին հայոց ամբողջ դաշտավայրը... Եվ անխոցելի եղավ այլևս լեռնացած Արարատն իր ժայռեղեն կրծքով, մինչդեռ ախոյանները նրա՝ դաշտային Ասորեստանն ու Բաբելոնը մեծազոր, իսպառ չքացան դարերի խորքում...

Լաց եղավ շինական ժողովուրդը սպարապետի համար, և նրա արցունքից գոյացավ Մայր Արաքսը, որ սահեց առաջ՝ աշխարհին պատմելու փառքն ու հավերժությունը ձյունակատար ու արեգնասիրտ Լեռ-հսկայի, որ ժողովրդյան կամքով կոչվեց *Արարատ*, իսկ երկիրը՝ *աշխարհ Արարատյան*:

* * *

Փրկարար, բիբլիական լեռ դարձավ Արարատը: Դրա համար էլ Արև աստվածը սիրում է նրան, առաջինը նրա՛ ճակատն է համբուրում լուսաբացին, և վերջինը նրա՛ն է թողնում-հեռանում Հայոց աշխարհից:

Եվ արար աշխարհում հավերժացավ Արարատ հսկան, ու նրա հովանու տակ հավերժացավ ժողովուրդը հայոց...

Արարատը գարնանը, Մարտիրոս Սարյան, 1945թ.

Արշալույս Սարոյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇՔ

(լեգենդ)

Ասում են, թե մեկն իր լուսամուտից
Միշտ լուռ նայում էր մայր Արարատին...
Սիրտն էր տրոփում կոպերի տակից,
Ու կարոտն անհագ փոխվում էր խինդի,
Երբ բիբերի մեջ թանձրանում էր նա՝
Վեհորեն ծուլված երկնի կապույտին:

Տարիներ անցան... Մի օր էլ հանկարծ
Լուսամուտի դեմ կանգնեցրին մի շենք,
Կանգնեցրին կարծես, որ հեռվից անգամ
Էլ նա չտեսներ Արարատը սեգ:
Կանգնեցրին, բայց նա առաջվա նման
Տեսնում էր լեռը՝ վեհ ու գեղեցիկ...

Երբ աչքերը փակ նայում էր նրան,
Շենքը դառնում էր ասես թափանցիկ,
Քարե պատնեշն էր չքանում մի պահ,
Չէր տեսնում ոչինչ՝ Մասիսից բացի:
Եվ այդպես անվերջ... Մի օր էլ սակայն
Նա հավերժորեն աչքերը փակեց:

Եվ մահից առաջ մի վերջին անգամ
Նա Արարատը կոպերով գրկեց:
Ու երբ կոպերը բացեցին հանկարծ,
Տեսան աչքերի սառած բիբերում
Առաջվա նման վեհորեն կանգնած՝
Մեր Արարատը՝ կատարն ամպերում:

Ստեփան Կուրտիկյան

Գեղամա լեռներ, Գեղամա ծով

Նրա աչքերի կապույտը մով երկնից ու լեռնաշխարհի փիրուզ լճակից էր, ծամերի ոսկին՝ արևից ու լուսնից, իսկ Խոսրովանուշ անունը՝ հին-հին նախնիներից:

Հազիվ էր բոլորել գեղանի աղջիկն իր տասնութ տարին, լճափնյա գյուղերից կանաչ-կտրիճ ջահելներ եկան՝ նրա ձեռքը խնդրելու: Բայց Խոսրովանուշը միևնույն պատասխանն էր տալիս բոլորին.

– Գնացեք՝ ուրիշ տեղ փնտրելու ձեր բախտը:

Այդ գիտեր և Գեղամը՝ Տորք Անգեղի ուժով պարթևահասակ մի քաջարի որսկան: Ամեհի գազանների հետ էր շատ անգամ կռիվ տվել Գեղամը ու գետին տապալել նրանց, գայլերի ամբողջ ոհմակ էր խեղդամահ արել և ազատել ոչխարը, հովազի հետ էր մենամարտի բռնվել ու ճեղքել երախը...

Խոսրովանուշի ականջին էլ հասել էր քաջ որսկանի համբավը, և երբ Գեղամը վստահ, համարձակ եկավ՝ նրա ձեռքը խնդրելու, աղջիկը պատասխանեց.

– Գիտեմ, ուժեղ ես դու և քաջ, չեմ կոտրի ես քո սիրտը, մի պայման ունեմ միայն. կատարեցիր՝ քոնն եմ ես հավիտյան:

Գեղամը նայեց Խոսրովանուշի լազուր աչքերին, նոր ուժ առավ աղջկա հմայիչ հայացքից և անվարան պատասխանեց.

– Քո սրտի ուզածը նվիրական է ինձ համար, Խոսրովանո՛ւշ: Եվ խոստանում եմ պայմանդ ի կատար ածել:

Ձեռքը հեռուն պարզեց չքնաղ աղջիկը և ասաց.

– Տեսնո՞ւմ ես դիմացի լերկ, քարքարոտ սարը, պատուհաս է դա շինականի գլխին. հեղեղը քարավազ է բերում այդ սարից ու տակով անում շինականի արյուն-քրտինքով մշակած արտը, սովի մատնում աշխատավորին: Կանաչեցրո՛ւ այդ սարը, որ է՛լ քարե կարկուտ չթափվի շինականի արտը, և թող կանաչ գոտի կապի մեր զուլալ լճակն իր մեջքին: Եվ ես քոնը կլինեմ:

Մտքի մեջ ընկավ Գեղամը, խոժոռվեց մի պահ, թանձրացան հոնքերն արծվենի աչքերի վրա:

– Ծա՞նր է քո ուզածը, Խոսրովանո՛ւշ, բայց ես կկատարեմ քո սրտի ցանկությունը, միայն թե մեկ պայման էլ ես ունեմ... Դու պետք է խոսք տաս ինձ, որ կսպասես տասը տարի...

– Կհամբերեմ ես տասը տարի,– հանձն առավ Խոսրովանուշը,– և

երդվում եմ Անահիտի ու Աստղիկի անունով՝ չեմ դրժի խոստումս:

Գեղամը մեկ էլ նայեց Խոսրովանուշի կապույտ աչքերին, սիրտը լցվեց սիրով, յոթ փղի ուժ զգաց իր կռներում... Եվ անխոս ճամփա ընկավ:

Մինչև որ արևը հանգստի իջավ և էլի բարձրացավ լեռան թիկունքից, Խոսրովանուշի պայմանը հայտնի եղավ մերձակա բոլոր գյուղերում:

- Խելացի պայման է,- ասացին ալեմորուս ծերունիները,- թող սիրո ուժով կանաչի մեր ապառաժ սարը:

Իսկ անմուրազ ջահելները, խանդից վառվելով, քրթմնջում էին.

- Ապառաժ սարը չի՛ կանաչի, ամայի քարուտը չի՛ դալարի:

...Առավոտը վաղ, երբ դեռ չէին ծխացել գյուղի երդիկները, ու լեռնային լճակը չէր զարթնել գիշերվա նինջից, Գեղամը, ծանրածանր քթոցը մեջքին, նեղ կածանով քայլում էր լեռնիվեր: Նրա ջլուտ մկանները պրկվել էին, երեսը կաս-կարմիր էր կտրել:

Դիք զառիվերը անց կենալով՝ նա հասավ վերջապես լեռան գագաթը ու երկնահաս այդ բարձունքից շուռ տվեց իր քթոցը՝ սևաթանձր տիղմը թափելով քարոտ լեռնալանջին:

Տեսան այդ բանը լճափնյա գյուղից որսկանին հետևող ծերունիները, ուրախացան և գովեցին նրան, իսկ թերահավատները քմծիծաղ տվեցին.

- Քթոցով տիղմ կրել ու ծածկել լեռը նույնն է, թե գավաթով լիճը պարպել կամ հոր փորել գնդասեղի ծայրով. ա՛յ քեզ որսկանի խելք:

Իսկ Գեղամը, անուշադիր այդ խոսքերին, լուսադեմից գիշերամուտ տիղմ էր կրում լեռնիվեր ու թափում ժայռերի վրա:

Շատ օրեր անցան, տիղմը բռնեց ժայռերի արանքը, և Գեղամը մի մատղաշ կաղնի տնկեց տիղմի մեջ:

- Առաջին ծիծեռնա՛կը,- ասացին գյուղացիները:

- Թող դալարի՝ որպես մեր սերը դալար,- ասաց Գեղամը:

...Գլորվեցին տարիները, ընձյուղներ արձակեց կաղնին խոր ժայռերի արանքում ու բոցկլտաց իբրև կանաչ մի խարույկ:

Տեսավ Խոսրովանուշը, սիրտը սիրով լցվեց:

Էլի անցան տարիներ, քթոցը մեջքին՝ քարայծի արահետներով ամպերին էր հասնում Գեղամն ու էլի այնտեղից վայր թափում տիղմը գորշ ժայռերի վրա:

Մի օր էլ, երբ ահեղ մրրիկներ էին շառաչում վերևը, ու խավարել էր երկինքը, Գեղամը լեռան գագաթից իջնելիս սայթաքեց թեք լեռնալանջին, ու հենց այն է գահավիժում էր մթամած անդունդը, երբ դեմ առավ իր տնկած կաղնուն ու փրկվեց:

* * *

Նորից բացվեց գարունը: Այս անգամ Գեղամը քթոցով սերմ փոխադրեց լեռան գագաթը և շաղ տվեց լանջնիվար:

Թռչունները տեսան նրա տքնությունը և օգնության եկան. կտուցով սերմ վերցնելով՝ իրենք էլ շաղ տվին ամեն կողմ...

Ամռան խաղաղ առավոտ էր: Խոսրովանուշն իր օթևանի շեմից աչք ածեց լեռը. չկար այլևս գորշ ու աղետաբեր քարքարուտը: Կանաչ թավիշ էր փռվել լեռան լանջերին, զովասուն ստվեր էր գցել տասը տարին բոլորած կանաչ կաղնին, ու լեռնային լիճն էլ հիմա ավելի գեղեցիկ էր, քան առաջ:

Ճշմարիտ են ասել՝ սրտով քարի վրա էլ գնաս, կկանաչի...

Իրիկունն ամպերը ծածկեցին լեռնաշխարհը, լիճն ալեկոծվեց ու փրփրաբաշ արշավեց ափերի վրա: Լճի մեջ բարձրացող կղզին, որտեղ բագիններն էին ծխում դեռ, անհետացավ մառախուղի մեջ: Փոթորիկ պայթեց, հորդ անձրև եկավ, բայց այս անգամ անձրևը քարավազ չբերեց այլևս շինականի արտերը, այլ իբրև երկնառաք շնորհ՝ սփռվեց լճամերձ ցանքերի վրա...

Խոսրովանուշի սիրտը լցվեց խանդաղատանքով: Հրճվեց շինականն էլ ու զոհ մատուցեց Վանատուրին, որ բերքառատ լինի տարին:

Երկինքը պարզվեց էլի, մայրամուտ թեքվող արևը բոցավառեց կանաչ լեռնաշխարհը, ու Գեղամը Խոսրովանուշի մոտ գնաց:

Գեղեցկուհու աչքերը փայլեցին, սիրտը տրոփեց. նա իր գիրկն առավ քաջակորով երիտասարդին ու ժպտաց երջանիկ արցունքի միջից.

– Քո՛նն եմ ես հիմա, Գեղա՛մ, և թող միշտ դալա՛ր լինի մեր սերը, ինչպես՝ այն լեռը, որ դալարեց քո աշխատանքով...

* * *

Ամբողջ գյուղը խնդակցելու էր եկել Խոսրովանուշի ու Գեղամի հարսանիքին:

– Դալա՛ր մնա արևդ, ինչպես լերկ սարը դալարեց քո կռների ուժով. ճամփիդ ծաղի՛կ բուսնի թող, և ոտքդ երբեք քարի դեմ չառնի՛. դու, քա՛ջ տղա, արժանի ես իմ աղջկան,– օրհնեց ծերունի շինականը Գեղամին ու համբուրեց նրա պայծառ ճակատը:

Այդ օրից շինականները դալարած սարն անվանեցին *Գեղամա լեռ*, մենավոր լիճը՝ *Գեղամա ծով*:

Իսկ լճափին՝ կղզու դիմաց, քարակոփ քաղաք կառուցեցին ու մեծագործ Գեղամի անունով այն էլ կոչեցին *Գեղարքունի*:

Արամ Ղանալանյան

Սևանա լիճ

Ա

Սևանա լճի տեղը առաջ ցամաք էր՝ անտառապատ բլուրներով, ծաղկավետ դաշտերով ու բերրի հողով:

Գյուղի մոտի բլրի տակ մի առատ աղբյուր է եղել, որտեղից ջուր վերցնելու ժամանակ գյուղացիները բարձրացնում էին մեծ կափարիչը, ջուրը լցնում և ապա ամուր փակում աղբյուրի բերանը:

Մի երեկո հարսներից մեկը աղբյուր ջրի է գնում, վերցնում է կափարիչը, կուժը լցնում և տուն է գալիս՝ մոռանալով աղբյուրի բերանը փակել: Ջուրը դուրս է հորդում, տարածվում է չորս կողմը: Երբ ջուրը հասնում է տներին, բնակիչները սկսում են փախչել՝ գոչելով. «Քա՛ր դառնա աղբյուրի բերանը բաց թողնողը»:

Եվ մոռացկոտ հարսը քար է դառնում, իսկ ջուրը, անընդհատ հոսելով, կազմում է Սևանա լիճը, որի մակերեսից հազիվ վեր է բարձրանում քարացած հարսի գլուխը՝ *Հարսնաքարը*:

Բ

Վանեցիները գաղթում և բնակություն են հաստատում Սևանի ափերին՝ որոշելով, թե դա էլ մի Վան է: Սակայն հետո նեղվում են տեղի ցուրտ օդից, կարոտով հիշում իրենց երկրի մեղմ ու տաք բնությունը և սրտի ցավով կանչում. «*Սև Վան* եկավ մեր գլխին, *սև Վան*»:

Եվ այդպես էլ լճի անունը մնաց *Սևան*:

Առավոտը Սևանում, Գևորգ Բաշինջաղյան, 1920թ.

Ըստ տարբեր աղբյուրների

ԶՐՈՒՅՑՆԵՐ ՍԵՎԱՆԱ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Իր քարոզչական գործունեության ընթացքում Սևանա կղզի է եկել Գրիգոր Լուսավորիչը: Նա կղզու ամենաբարձր կետում կառուցված հեթանոսական տաճարի տեղում հիմնադրել է Սուրբ Հարություն անվանվող եկեղեցի և հավելել. «Սա է վանք»: Սևանա վանքի մասին տարբեր զրույցներ են մեզ հասել: Ահա դրանցից մի քանիսը:

Ա

874 թվականին Մաշտոց Եղվարդեցին (հետագայում՝ 897-898թթ., Ամենայն հայոց կաթողիկոս) Աշոտ Բագրատունու դուստր և Սյունյաց Վասակ Գաբուր իշխանի կին Մարիամի հովանավորությամբ կառուցում է Սուրբ Առաքելոց վանքը:

Պատմագիր Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ այդ ժամանակաշրջանում, երբ Մաշտոցը ճգնավոր էր, երազ է տեսնում Սուրբ Առաքելոց վանքը կառուցելու մասին: Միևնույն երազը տեսնում է նաև իշխանուհի Մարիամը, որն իր ամուսնու մահից հետո գտնվում էր Ցամաքաբերդի Կուսանաց վանքում: Նա պատվիրում է Մաշտոց Եղվարդեցուն՝ վանք կառուցել: Վերջինս փայտե մատուռները վերակառուցում է երկու եկեղեցիների՝ Սուրբ Առաքելոց և Սուրբ Կարապետ: Այսպիսով՝ Մաշտոց Եղվարդեցին փաստացի դառնում է Սևանա կղզու մենաստանի հիմնադիրը:

Կանանց մուտքը կղզի խստիվ արգելվում էր, այնուհանդերձ, քանի որ իշխանուհի Մարիամը ցանկանում էր մասնակցել պատարագին, նրա համար եկեղեցու դրսի կողմից կառուցվում է փոքրիկ պատուհան ունեցող մի խուց: Բացի նրանից (և այն կանանցից, ովքեր հավաքվում էին այստեղ պատերազմների տարիներին Ներսես Աշտարակեցու հրամանով)՝ ուրիշ կանայք իրավունք չունեին այստեղ ոտք դնելու:

Բ

Միջին դարերում Սևանը դարձավ կրթության ու գրչության արվեստի և լուսավորության կենտրոն: Մի հայտնի զրույց է մեզ հասել հնուց, ըստ որի՝ երեք անգամ Սևանա կղզի ուխտի գնալը հավասար էր մեկ անգամ Երուսաղեմ ուխտի գնալուն: Սա խոսում է այն մեծ ազդեցության մասին, որ ուներ այն ժամանակ Սևանի մենաստանը[1] եկեղեցու և ժողովրդի վրա:

---

[1] **մենաստան** – մարդկանց բնակավայրից առանձնացված վանք, որտեղ ապրում են կրոնավորները:

Գ

Պատահական չէ, որ Սուրբ Էջմիածնի գանձարանի ամենանշանավոր մասունքներից մեկը Սևանի Սուրբ նշանն է՝ Աշոտ Բագրատունու երկաթյա խաչը, որը, համաձայն ավանդության, Թադեոս առաքյալը պատրաստել էր այն սափորից, որն Աստվածամայրն օգտագործում էր փոքրիկ Հիսուսին լողացնելիս: Այդ սափորից երեք խաչ է պատրաստված եղել:

Մյուս կարևոր մասունքը Սևանի Սուրբ Տիրամոր սրբապատկերն է, որի առջև աղոթելով՝ դեռևս 16 դարեկան հասակում բժշկվել է Մխիթար Սեբաստացին՝ Մխիթարյան միաբանության հիմնադիրը: Հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս Մխիթար Մկրտիչ Խրիմյանի հրամանով սրբապատկերը տեղափոխվում է Սուրբ Էջմիածին:

Սևանի Աստվածամայր, անհայտ հայ նկարիչ, XVII դ.

Դ

11-րդ դարի առաջին կեսին Սևանա վանքում սկսել է փայլել վանահայր Սարգիս վարդապետ իմաստասերը՝ Գրիգոր Մագիստրոսի արժանավոր թղթակից և Բագրատունիների թագավորության ժամանակ հայոց գլխին եկած աղետների ողբասացը: Հավանաբար Սարգիս վանականի ժամանակ՝ 13-րդ դարում, երբ լեզգիները հաճախ էին հարձակում գործում Հայաստանի վրա՝ կողոպուտի նպատակով, Սևանա ծովակի շրջակա բնակիչներն ապաստանել են կղզում: Այդ հարձակումներից մեկի ժամանակ լեզգիներից մի խումբ փորձում է խորամանկությամբ մուտք գործել վանք:

Երկու լեզգի ներկայանում են Սևանի վերակացուին՝ իբրև վաճառականներ, և համոզում նրան, որ թույլ տա միառժամանակ կղզում պահել 40 արկղերի մեջ դարսված ապրանքը, մինչև երկիրը կխաղաղվի ավազակներից:

Զարմանալի զուգադիպությամբ հենց այդ ժամանակ դպրանոցի պատժված սաներից մեկը, առանձնանալով այս արկղերի մոտ, նրանց միջից մարդկային ձայներ է լսում, ինչի մասին անմիջապես տեղյակ է պահում ուսուցչին: Վանականները բացում են արկղերից մեկը և նրա մեջ հայտնաբերում երկու զինված լեզգիների: Բացահայտելով դավադրությունը՝ վանականները վանքում հավաքված ժողովրդի օգնությամբ բոլոր արկղերը գլորում են լիճը:

Այժմ էլ պատմելով այս զրույցը՝ ցույց են տալիս Առաքելոց եկեղեցու այն տեղը, որտեղ թաղված են այդ դավադիր խմբի առաջնորդ կեղծ վաճառականները:

Ե

Սևանի վանքի մասին պատմում են նաև մեկ այլ զրույց.

Սևանի վանքի վանահայր Հովհաննես վարդապետ Նորադուզցու ժամանակ՝ 1747 թվին, երբ Նադիր շահի ասպատակությունից հետո նրա զորքերը զանազան խմբերով ցրվել էին Հայաստանի զանազան կողմերը՝ ասպատակելու, մոտ տասը հազար հոգուց բաղկացած մի խումբ էլ մտել էր Սյունյաց աշխարհ՝ կողոպտելու: Այդ միջոցին Գեղարքունիքի բնակիչներն իրենց երևելիներով ապաստանել են Սևանա կղզում: Ասպատակողները, գյուղերում բնակիչներ չգտնելով, մոտեցել են Սևանին հունվարի 5-ին, երբ լիճը սառած էր, և նրա վրայով կարելի էր անցնել: Հայերը, նկատելով ասպատակողներին, կամեցել են հակառակ կողմից փախչել, սակայն Հովհաննես վարդապետը, որ այդ ճրագալույցի[1] երեկոյին պատարագում էր, ձեռքն է վերցրել սուրբ խաչը և պատվիրել ժողովրդին հանդարտվել ու աղոթել, ապա շտապ պատրաստվել կենաց ու մահու կռվի:

Ասպատակողները, փողեր հնչեցնելով, դեպի կղզին էին արշավում: Ու երբ նրանք առաջ են եկել, կանանց ու երեխաների լացն ու աղաղակը բարձրացել է երկինք, և սառույցը հանկարծ կոտրվել է: Ասպատակողների խումբը լցվել է ջուրն ու անհետացել լճի խորքերում:

Զ

Պատմում են նաև, որ ժամանակին Սևանա կղզում եղել է մի քար, որի մեջ ուխտավորները մեխեր էին խփում:

Հիմա այդ քարն այլևս չկա: Բայց նման մի քար կա Գեղարքունիքի Սուրբ Հովհաննես ուխտատեղիում, որի վրա նույնպես բազմաթիվ մեխեր են ցցված: Քարի կողերը մրոտված են մոմի բոցից: Դա հավաստում է, որ այն մի ժամանակ պաշտամունքի առարկա է եղել: Ուխտավորներն այս քարի հանդեպ այն համոզմունքն են ունեցել, որ եթե խփածդ մեխը խրվում է քարի մեջ, ապա դա նշան է, որ ուխտդ կկատարվի, իսկ եթե չի խրվում ու ծռվում է, նշան է, որ քո ուխտը չի կատարվելու:

---

[1] **ճրագալույց** – եկեղեցիներում Ծննդյան և Հարության նախատոնակներին բազմաթիվ ճրագներ ու ջահեր վառելը:

Արամ Ղանալանյան

Զանգեզուր

Լենկթեմուրը մոնղոլ թագավոր էր:

Երբ նա գալիս-հասնում է Արաքսի ափը, դեռևս գետը չանցած՝ Մեհրի անունով մի իշխան է ներկայանում նրան և ասում.

- Լենկթեմուրն ապրա՛ծ կենա, եկել եմ, որ ծառայեմ քեզ:

- Ինչո՞վ կարող ես ինձ ծառայել,- հարցնում է Լենկթեմուրը:

Իշխանը պատասխանում է.

- Քանի դեռ Խոտ գյուղի վերևում գտնվող վանքի մեծ զանգը կա, դու չես կարող այս երկիրը գրավել. թշնամուն հեռվից տեսնելուն պես հնչեցնում են այդ զանգը և ժողովրդին հանում նրա դեմ:

Լենկթեմուրը մի քիչ մտածելուց հետո ասում է.

- Գնա վառի՛ր և ջարդուփշո՛ւր արա այդ զանգը. շատ ոսկի և իշխանություն կտամ քեզ:

Դավաճանը գիշերով գնում է, զանգի տակը կրակ է վառում և կտրում է նրա ձայնը:

Լենկթեմուրը զորքով անցնում է Արաքսը:

Իմանալով այդ մասին՝ վանահայրը կանչում է զանգակահարին և կարգադրում է անմիջապես հնչեցնել զանգը: Սակայն զանգակահարը որքան փորձում է, զանգը ձայն չի հանում...

Լենկթեմուրը գրավում է ամբողջ երկիրը:

Գյուղերի բնակիչները զարմանքով հարցնում են իրար, թե ինչո՛ւ զանգը չեն հնչեցրել: Ոմանք պատասխանում են.

- Զանգը զո՛ւր է, զանգը զո՛ւր է...

Այդուհետև գավառի անունը մնում է *Զանգեզուր*:

* * *

Ըստ մեկ ուրիշ ավանդության՝ շատ գյուղեր կային Որոտան գետի ձորերում. յուրաքանչյուր գյուղ ուներ մեկ-երկու եկեղեցի: Առավոտյան զանգերը հնչեցնում էին, և ձորը լցվում էր նրանց ղողանջով: Ժողովուրդն ասում էր. *«Զանգի ձոր է, զանգի ձոր է»*:

Այդպիսով՝ անունը դրել են *Զանգի ձոր*, որը բերնից բերան անցնելով՝ դարձել է *Զանգեզուր*:



Որոտնավանք, XII-XIII դդ.

Սուրեն Մուրադյան

Ակներ

(լեգենդ)

1

Գյուղն է բազմել լեռան վրա՝
Աչքը հառած հին Հաղպատին,
Գիշեր-ցերեկ լսում է նա
Լեգենդները Կայան բերդի:
Ծերունիներ կան դարավոր՝
Վկաները հին աշխարհի,
Եվ ձորեր կան անդնդախոր,
Ալ ծաղիկներ դաշտի, սարի:
Անտառներն են կապել գոտի,
Սարից իջնող մի ջինջ առու,
Այգիներին ջուր ցողելով,
Ձորն է իջնում չքնաղ Լոռու:
Գնում է նա գլոր-գլոր
Ու խառնվում հորդ Դեբեդին,
Տանում հեռու աշխարհներին
Լեգենդն անմահ Կայան բերդի:
Շատ դարեր է հյուսել իր մեջ
Սարից իջնող աղբյուրը պաղ...
Հիմա նստել են նրա մոտ
Պապն ու թոռը մշտածիծաղ:
-Նայի՛ր, պապի՛կ, ի՞նչ տուն է սա,
Ո՞վ է արդյոք այն կառուցել,
Ո՞վ է տանն այս ապրել, ասա՛,
Ժայռով ինչպե՞ս վեր բարձրացել:
Իսկ մեր գյուղը, ասա՛, պապի՛կ,
Ինչո՞ւ *Ակներ* են անվանել:
- Հե՛յ վախ, տղա՛ս, զրույցն այդ հին
Դարերից է սկիզբ առել:-
Պապն է սուզվում մտքերի մեջ
Ու չիբուխը լցնում դանդաղ
Եվ թոռնիկին իր հարցասեր
Մտքով հետ է տանում յոթ դար:

2

– Դարեր առաջ այս ձորերում
Ապրել են մեր պապերը,
Տուն ու տեղն են եղել նրանց
Մութ այրերն ու ծերպերը:
Հարձակվել են նրանց վրա
Լեզգի, մոնղոլ ու թաթար,
Ավերել են ու ավարել,
Ահաբեկել անդադար:
Դարեր առաջ դրկից գյուղեր՝
Հաղպատ, Ակներ, Սանահին,
Նենգ թշնամու ճամփան փակել,
Կռվել, հաղթել են մահին:
Այդ գյուղերը, եղբայրացած,
Այս լեռների վրա ծեր՝
Որպես հզոր ապաստարան,
Կայան բերդն են կառուցել:
Ու մոտակա շատ գյուղերից
Մարդիկ փախել են այստեղ՝
Թշնամու դեմ պատրաստ պահած
Քարակույտեր, նետ-աղեղ:
Լսում է այս բերդի մասին
Չարմաղանը արնախում,
Կայան բերդի վրա մի օր
Սև-սև ամպեր են կախվում:
Արշավում է Չարմաղանը՝
Ձորք հավաքած անքանակ,
Հնչում է նենգ հրամանը՝
– Բերդը անել ոտնատակ:
Արշավում են ամեն կողմից
Թաթարները բիրտ, վայրագ,
Ձիեր հեծած՝ կտրում-անցնում
Գետեր, լեռներ ու ձորակ:
Բայց թռչում են սուր նետերը,
Հեծյալներին գլորում,
Հառաչում են թաթարները,
Շունչը փչում են ձորում:
Երբ ծեր Վարդան Բարձրաբերդցին,
Մանուկներին հավաքած,
Նոր տառերն էր ուսուցանում,
Դասն ընդհատում է հանկարծ:

Փոքրիկները, սարսափահար,
Խցիկից դուրս են փախչում,
Վազվզում են ոտաբոբիկ,
«Մայրիկ, հայրիկ» են կանչում:
- Մի՛ վախեցեք, մանչուկներս,-
Արտակ իշխանն է գոչում,-
Չարմաղանի զորքը, տեսեք,
Դեպի ձորն է նահանջում:
Սարաժայռեր են թռչում ցած.
Խելակորույս թշնամին,
Խոր ձորերում ցրիվ եկած,
Ոռնում է զերդ խենթ քամին:

3

Միտք է անում Չարմաղանը՝
Ինչպես առնի բերդ Կայանը...
Չարմաղանի զորքերի մեջ
Մի զինվոր կար՝ կյանք տեսած:
-Թող շատ երկար ապրի Տերը,-
Առաջ գալով նա ասաց.-
Թեկուզ մեծ է քո բանակը,
Բայց բերդն ամուր է իրավ.
Պիտի գտնել ջրի ակը
Ու թողնել բերդը ծարավ:
Սա է, մեծ Տեր, միակ ելքը՝
Ջուրը կտրել ակունքից...

* * *

Զինվորների մի խումբ արագ,
Ձիեր հեծած, հասավ գյուղ,
Խուժեց դատարկ տուն ու մարագ,
Բայց չգտավ մի շեն ծուխ:
Փախել էին մանուկ ու ծեր,
Գյուղն ամայի էր դարձել
Մի աքաղաղ ծառի ճյուղին
Կուչ էր եկել, մնացել:
Թաթարական նետի զարկից
Երբ աքլորը թպրտաց,
Ծառերի մեջ խարխափելով՝
Մի ծերունի երևաց:

Թաթարներից մեկը իսկույն
Ձիուց թռավ նետի պես.
- Ծերո՛ւկ, հարցիս պատասխանի՛ր,
Թե չէ կանեմ երկու կես.
Ո՞րն է ակը այն աղբյուրի,
Որ դեպի բերդ է հոսում:
Թե ուզում ես ապրել, ծերո՛ւկ,
Ցո՛ւյց տուր տեղը... չե՞ս խոսում:
- Ես չգիտեմ...- ծերուկն ասաց,-
Կույր եմ... ես չեմ իմանում...
- Ա՛ռ քեզ, քավթա՛ռ, չգիտե՞ս, հա՞,
Միամի՞տ ես ձևանում:
Հարց եմ տալիս վերջին անգամ՝
Ո՞րն է ակը, ասա՛ շուտ,
Լա՛վ իմացիր, որ թաթարը
Չունի ո՛չ խիղճ, ո՛չ էլ գութ:
Լուռ է ծերուկն, ինչպես՝ քարը.
Ձայրանում է նենգ թաթարը.
- Շուտ տաքացրե՛ք երկու շամփուր,
Միտքը կգան ակն ու աղբյուր.
Այնպե՞ս դաղեմ սրա լեզուն,
Ու կտեսնեք՝ ո՞նց է խոսում:
Ճարճատում է թեժ կրակը,
Շամփուրներն են կաս-կարմրել:
- Ծերո՛ւկ, ո՞րն է ջրի ակը,
Սպասում ենք, ի՞նչ ես լռել:
Ծերունին է գալիս առաջ,
Նետում խոսքերն՝ ինչպես շառաչ.
- Թեկուզ դարձնեք մոխիր ու բոց,
Ակն աղբյուրի չեք իմանա,
Շուտ չքվեցե՛ք հողից Հայոց,
Հայը երբեք ծունկի չի գա:
Դահիճների ձեռքով խոցված,
Շամփուրներով այլանդակված
Կույր ծերունուն՝ աչքում արցունք,
Հասցնում են մինչև բարձունք,
Գլորում են այնտեղից ձոր՝
Մահասարսուռ, անդնդախոր...

* * *

Թաթարները հուսահատված
Ետ դառնալիս տեսան հանկարծ
Սար գնացող ճամփի վրա
Կուժը ուսին մի աղջկա:
Հետևեցին գաղտագողի,
Իսկ աղջիկը ետ չնայեց,
Չնկատեց չար ոսոխին,
Հասավ աղբյուր, կուժը լցրեց:
Թաթարները օձերի պես
Օղակեցին ակն ու աղբյուր,
Մի հարվածով քարերի մեջ
Կուժն արեցին փշուր-փշուր:
Վայրենաբար ու տմարդի
Ավերեցին ակ ու կարաս
Ու, կտրելով ջուրը բերդի,
Հեծան ձիերն արագավազ:
Իսկ աղջիկը, լեղապատառ,
Շատ լաց եղավ հոնգո՛ւր-հոնգո՛ւր,
Պոկվեց տեղից, փախավ անտառ,
Դեպքը պատմեց շնչակտուր:

Կայան Բերդ, XIII դ.

* * *

– Մոտ է, մեծ Տեր, հաղթանակը.
Կտրված է ջրի ակը,–
Ձեկուցեցին Չարմաղանին.–
Սպասում ենք հրամանիդ:

4

Ու յոթ գիշեր ու յոթ ցերեկ
Ջուր չեն խմում Կայան բերդում,
Ու յոթ գիշեր ու յոթ ցերեկ
Կայան բերդն է կռվում արթուն:
Մանուկներն են գնում-գալիս,
Լաց են լինում ու ջուր ուզում,
Կանայք ճչում են ու լալիս,
Աղոթք անում, ջուր աղերսում:
– Մի՛ վիատվեք, կռվե՛ք, քաջե՛ր,–
Արտակ իշխանն է համոզում,–
Թեև քիչ ենք մենք քանակով,
Բայց մարտնչե՛նք ոնց դյուցազուն:

* * *

Սուրբ լույս-լեռան վեսս կատարին
Սև-սև ամպեր են խտանում,
Նորից խուժանը թաթարի
Կայան բերդին է մոտենում:
Հանկարծ երկինքն արցունքով լի
Հորդ անձրև է վերից տեղում,
Ջուր է ճամփում հայ քաջերին,
Բերդի վրա բախտն է շողում:
Մի աղբյուրի տեղ երկինքը
Ցած է թափում հազար աղբյուր,
Մանուկներն են աշխուժացած
Անձրևաջուր խմում բուռ-բուռ:
– Տե՛ր, փառքդ շա՛տ, մեզ փրկեցի՛ր.–
Աղջիկ ու կին առնում են ուժ
Ու շարում են անձրևի տակ
Կարաս ու թաս, կճուճ ու կուժ...
Արիանում են պաշտպանները,
Լարում ուժգին նետ ու աղեղ,
Սլանում են սուր նետերը
Ձորերնիվար՝ դիպուկ, անշեղ:

Հայ քաջերի հարվածներին
Թաթարները չեն դիմանում,
Անիծելով անձրև, աղբյուր՝
Թողնում են բերդն ու հեռանում:

* * *

Բերդը այսպես ծունկի չեկավ
Դարերի մեջ քանի՜-քանի՜,
Անպարտելի, կանգուն մնաց
Ջորքերի դեմ Չարմաղանի:
Գյուղն այդ օրից կոչվեց *Որնակ*՝
Հանը բուլաղ[1] թաթարերեն.
Կայան բերդն էլ կոչվեց *Կայուն*,
Որ կանգնած է հպարտորեն:
Մնացածը ինչ պատմեմ քեզ,
Դու ինձանից շատ լավ գիտես:
Հին *Որնակը* վերափոխվել՝
Մի մեծ գյուղ է դարձել ահա,
Նոր անուն են մարդիկ տվել.
Ակներ գյուղ է կոչվում հիմա:

[1] **Հանը բուլաղ** թաթարերեն նշանակում է՝ ոՐն է աղբյուրը, *ոՐն է ակը*. այստեղից էլ՝ *Որնակ* անունը:

Ստեփան Կուրտիկյան

ԴԻԼԻՋԱՆ

(Դալի ջան)

Անտառի բացատում, ուր ամռանը վայրի ծաղիկներն արևելյան խայտաճամուկ[1] գորգ են հյուսում, իր հոտն էր արածեցնում հովիվ Հազրոն: Ցափնջին ուսին, ծանր մահակը ձեռքին՝ նա արձանանում էր ժայռի վրա և հսկում հոտը:

Հազրոյի հետ ոչխարներին էր հսկում նաև վիթխարի սպիտակ գամփռը: Մերթ տիրոջ մոտ կանգնած՝ պոչը ոլորուն, ականջները խլշած, մերթ պառկած՝ առանց, սակայն, հայացքը կտրելու հոտից:

Օրվա ժամերի հետ փոխվում էր և գամփռի տրամադրությունը: Առավոտը նա խաղաղ էր լինում, նույնիսկ քիչ ծանրաշարժ ու թախծոտ, կեսօրին՝ մտահոգ, իսկ գիշերները գժվում էր ասես, պտույտ գալիս շարունակ ոչխարների շուրջը, հոտոտում օդը և վտանգ զգալով՝ այնպես էր գազազում ու փրփրում, որ Հազրոն Դալի[2] էր դրել նրա անունը:

Բարձր, մառախլապատ լեռներում ու բքաշունչ ձորերում տարիներ շարունակ, իբրև անբաժան ընկերներ, դժվարին օրեր էին անցկացրել հովիվն ու շունը, բաժանել ամեն ուրախություն և տխրություն:

Շրջակա բոլոր գյուղերում ու յայլաներում էլ հռչակվել էր Հազրոյի գայլախեղդ Դալին:

... Աշնան մի երեկո գամփռը մեկեն անհայտացավ Հազրոյի մոտից ու առժամանակ հետո վերադարձավ՝ ծեծված և գզգզված, արյունոտված ու ցավից կլանչելով: Նրա ետևից մահակը թափ տալով եկավ հասավ մի սարվոր: Նա բղավում էր, թե գամփռը մահվան դուռն է հասցրել օրորոցում քնած իր զավակին: Դալին փախել էր նրա մահակի տակից և, վնգստալով, պաշտպանություն էր հայցում Հազրոյից:

Հազրոն հուզվել էր, այլայլվել, լայնատարած բեղերը դողում էին.

– Անաստվա՛ծ, այս ի՞նչ ես արել շանը,– թնդաց Հազրոն:– Դալին երեխի վնաս տվողը չի, գնա՛նք, գնա՛նք, անխի՛ղճ:

Գամփռը խուլ մռռում էր, պոչը գետնին քսքսելով՝ քարշ գալիս Հազրոյի ետևից:

Ներս մտան ուրթը[3]: Կծոտված, արյունլվա երեխան լաց էր լինում օրո-

---

[1] **խայտաճամուկ** – բազմաթիվ գույներով, գույնզգույն:

[2] **դալի** – թուրքերեն՝ խենթ:

[3] **ուրթ** – թաթարերեն՝ տաղավար կամ վրան՝ վերևից ծխի համար բացվածքով:



Հայկական գամփռ

րոցում: Անմեղ երեխայի տեսքը շատ հուզեց Հազրոյին: Ա՛խ, Դալի՛, Դալի՛, այս ի՞նչ ես արել...

Այդ րոպեին ահա՛ ուրթի անկյունում Հազրոն նկատեց մի արյունոտ գազան, որն անշարժ ընկած էր տաշտի ետևը: Դա գայլ չէր: Հազրոն հեռվից կճանաչեր գայլին:

Մոտ գնաց հովիվը, շուռ տվեց սատկած գազանին. բծավոր բորենի էր դա, երեխաներ հափշտակող մարդագել. նոր էր խեղդվել, և տաք էր մարմինը դեռ:

Հովիվն ու սարվորը լուռ նայեցին իրար:

Հազրոյի սիրտը փոթորկվեց.

– Դալի ջա՛ն,– վշտագին գոռաց նա և ուրթից դուրս գալով՝ շտապեց գամփռի մոտ՝ նրա ցավին դարման անելու:

Գամփռի վերքը խորն էր: Հազրոն լեռնային ծաղիկներից բալասան պատրաստեց, կապեց վերքը: Մի շաբաթ հետո ոտքի կանգնեց Դալին, թեթև կաղում էր միայն:

Հազրոն երջանիկ էր:

Փրկվել էր անդավաճան ընկերոջ կյանքը:

* * *

Մի օր էլ Հազրոյի մոտ եկավ գյուղում հայտնի ունևոր Լևոն բեկը և հինգ ոչխար առաջարկեց Դալիի փոխարեն:

– Հիսունն էլ տաս, չե՛մ տա. Դալին ծախու ապրանք չէ,– վիրավորված պատասխանեց հովիվը:

Գամփռը ասես հասկացավ տիրոջ պատասխանը և ուրախ կլանչելով՝ տարուբերեց բրդոտ պոչը:

Հազրոյի քունը չտարավ այդ գիշեր. երկար չիբուխը ծխելով՝ դարդոտել, միտք էր անում.

«Աշխարհն՝ արոտ, մենք՝ մեջը կարոտ»:

Լուսնյակ գիշեր էր. Հազրոն և իր Դալին անձայն, աչքերով զրույց էին անում իրար հետ, երբ իրարանցում ընկավ հոտի մեջ: Խլշկոտած գամփռը սլացավ մթության մեջ:

Մահակն առած՝ Հազրոն շտապեց գամփռի ետևից:

Անի. եկեղեցուն շղթայված հայկական գամփռ

Մակաղած[1] հոտից քիչ հեռու՝ բացատի կենտրոնում, Հազրոն նկատեց գամփռին, որ անհավասար կռվի էր բռնվել երեք գայլի հետ: Դալին բարձրացել էր երկու ոտքի վրա, ժանիքները խրել գայլի կոկորդը, ու թեև փորը պատռել էին, բայց չէր թողնում թշնամուն:

Հազրոն օդում ճոճեց իր մահակը և վրա տվեց գայլերին: Ուժգին հարվածով նա ջախջախեց մեկի գանգը, զարկեց երկրորդին և լուսնալույսի տակ տեսավ, որ Դալին խեղդամահ է արել երրորդ գայլին, բայց ինքն էլ արնաթաթախ՝ օրհաս է ապրում:

– Դալի ջա՛ն,– լացակումած գոչեց Հազրոն, գրկեց իր գամփռին և կրծքին սեղմեց նրա թուլացած գլուխը:

Գամփռը մարող աչքերով վերջին անգամ նայեց տիրոջը, արյունոտ լեզվով լիզեց նրա ձեռքերը, թույլ վնգստաց և անշնչացած փռվեց խոտերի վրա...

– Դալի ջա՛ն, Դալի ջա՛ն, ինձ որբ ու մենակ թողիր էս սարերում, Հազրոն քեզ մատա՛ղ, Դալի ջա՛ն...– լսվում էր Հազրոյի մորմոքը և արձագանք տալիս յոթ սարից այն կողմ:

Ասում են՝ այդ օրվանից թախիծով լցվեցին ոչխարների աչքերն ու տխրագին հնչեց նրանց մայունը, իսկ այն անտառոտ, գետափնյա բացատը կոչեցին *Դալի ջան*, որ հետո՝ ժամանակի ընթացքում, դարձավ *Դիլիջան*...

[1] **մակաղել** – հանգստանալու նստել ասվում է ոչխարների համար:

Ստեփան Կուրտիկյան

Արագածի չորս կատարները

Այն հին, անհիշելի ժամանակներում՝ աստղածորան մի գիշեր, հանկարծ երկինք ու երկիր իրար խառնվեցին, հուր ու կրակ ժայթքեց Արագած լեռը, հրեղեն մի սյուն ձգվեց մինչև աստղերը՝ շառագունելով[1] արհավիրքով սևացած երկնակամարը:

Սասանվում էր երկիրը, վայում էին լեռներն ու ձորերը: Ահից կուչ եկած ոչխարների մոտ չարագուշակ կլանչում էին գամփռերը:

Սասանվում էր երկիրը, ահեղ դղիրդով վիթխարի ժայռեր գլորում լեռների բարձունքներից, ավերում խրճիթ ու ապարանք:

Ահուսարսափի մատնված մարդիկ փրկություն էին որոնում: Սակայն ո՞վ կարող էր փրկել նրանց. ո՞վ կարող էր սանձել երկիրը ցնցող ցասումնալի կրակը, որ սպառնում էր բնաջինջ անել ամեն ինչ:

Խելք խելքի տվեցին ահաբեկված մարդիկ, շատ միտք արեցին: Բայց իզո՞ւր:

– Յոթ ոչխար մատաղ անենք Աստծուն, գուցե խաղաղվի երկիրը,– առաջարկեց մի խաշնարած:

Կատարեցին առաջարկը. յոթ ոչխար գետնեցին ու զոհ մատուցեցին, բայց չխաղաղվեց երկիրը: Հողը նորից երերում էր մարդկանց ոտքերի տակ:

Տանջալից միտք էին անում մարդիկ, երբ մթին քարանձավից դուրս գալով՝ նրանց մոտեցավ մի իմաստուն մենակյաց, որ հասկանում էր հողմերի ու աստղերի լեզուն և մարդկանց բախտն էր գուշակում:

Մինչև ուսերը իջած խռիվ, ձյունափրփուր մազերը հարդարելով՝ նա մի պահ անխոս դիտեց երկնակամարի խորքը սուզված հրեղեն սյունը, ապա բազուկները երկինք պարզելով՝ երեք քայլ առաջ գնաց և հանդիսավոր շեշտով ասաց.

– Մահկանացունե՛ր, զարթնել է Արագածի ծոցում դարերով քուն մտած Վիշապ-կրակը, զայրացել է և զոհեր է պահանջում...

Ահաբեկված մարդիկ, փրկություն հայցող հայացքները սևեռած, լսում էին ծերունուն:

– Զոհաբերի՛ր քո գեղանի Շամանդուխտին և մյուս երեք աղջիկներիդ, իշխա՛ն Մլեհ, և Վիշապ-կրակը կխաղաղվի Արագածի ծոցում,–

[1] **շառագունել** – շառագույն՝ մուգ կարմիր դարձնել:

Քառագագաթ Արագածը

Շիրակի իշխանին դիմեց ալեհեր ծերունին:

Շամանդուխտն ու քույրերը լսեցին ծերունուն և հեկեկալով ընկան իրենց հոր գիրկը:

– Ես կգտնեմ ուրի՛շ աղջիկներ, կգտնեմ չորս ռամիկ աղջիկ, ես կստիպեմ...– խոսեց Մլեհ իշխանը՝ սարսափած ծերունու պահանջից:

– Զոհաբերությունը կամավոր պետք է լինի, իշխա՛ն, և ոչ հարկադրանքով, որպեսզի սրբազան զոհն ընդունվի, և Վիշապ-կրակը խաղաղվի,– զգուշացրեց ծերունին:

Ահաբեկված իշխանը դուստրերի հետ կամաց հեռացավ դեպի իր կիսաքանդ ամրոցը:

Ավելի ուժգին երերաց հողը մարդկանց ոտքերի տակ, երկնակամարում մեծացավ հրեղեն այունն, ու ամենակործան կրակի տեղատարափ սկսվեց:

Լաց էին լինում երեխաները, ողբում էին մայրերը, անզորությունից կծկվել էին այրերը: Եվ Վիշապ-կրակը, վիթխարի կլափը[1] բացած, արշավում էր...

Այդ ժամանակ հանդես եկան մաճկալ Դավթի չորս աղջիկները՝ Շաղոսկին, Շողակաթը, Շամամն ու Շաղամանը, հրաժեշտ տվեցին բոլորին ու հողմի նման սլացան դեպի Արագածի գագաթը:

Շամախաթունը խավարի մեջ անտեսանելի հետևեց իր աղջիկներին:

---

[1] **կլափ** – (գավառական) երախ՝ կենդանիների բերան:

Երբ չորս քույրերը թեթևաքայլ տեղ հասան, ձեռք ձեռքի տված կանգնեցին բարձունքում, սկսեցին երգել հրաժեշտի մի սրտառուչ երգ, որ տարածվեց լեռնաշխարհով մեկ: Վերջին անգամ նրանք հիշեցին իրենց ծնողներին, իրենց սիրած մաճկալ ու խաշնարած տղաներին, որոնց այլևս երբեք չէին տեսնելու, հետո երգը շրթունքներին՝ շուրջ-պար բռնեցին լեռան կատարին ու այդպես էլ ուրախ պարելով՝ իրար ետևից նետվեցին Վիշապ-կրակի անդնդախոր կլափը...

Տեսնելով իր աղջիկների զոհվելը՝ մայրը արտասվեց, արտասվեց դառնագին և մոտենալով անդունդի եզրին՝ մայրական սիրտը պարզեց Վիշապ-կրակին ու վար նետվեց աղջիկների ետևից:

Եվ նույն պահին խաղաղվեց Վիշապ-կրակը. գետինը դադարեց ցնցվելուց, երկնակամարից անհայտացավ հրեղեն սյունն, ու Արագած լեռան վրա գոյացան չորս վեհատեսիլ կատարներ: Իսկ այդ երկնասույզ կատարների վերևում՝ խավարի մեջ, շողշողաց մի պայծառ աստղ...

Ասում են՝ *Արագածի* այդ չորս կատարները չորս քույրերի հավերժության հուշարձաններն են, որ բարձրացել են նրանց սրտերի մեծության չափ, իսկ Արագածի վրա կախված Լուսաստղն էլ մոր տրտմաթաթավ[1] աչքն է, որ կարոտով գիշեր-ցերեկ նայում է իր աղջիկներին, կարոտով նայում է Վիշապ-կրակի ավերածություններից հավերժ փրկված Հայոց աշխարհին:

Եվ մայրն ամեն օր իր երկնային բարձունքից Արագածի վրա ուրախության արցունքներ է շաղ տալիս... կաթիլ առ կաթիլ...

---

[1] **տրտմաթաթավ** – տրտմությամբ թաթախված՝ լցված:

Արամ Ղանալանյան

Աղավնատուն

Աղավնատունը գտնվում է Լոռիում:

Մի հարուստ իշխան շատ է հավանում այդ վայրը և որոշում է մի գեղեցիկ շենք կառուցել այդտեղ: Շատ վարպետներ ու բանվորներ է վարձում և անմիջապես գործի անցնում:

Որոշ ժամանակ անց իշխանն այցելում է շինարարության վայրը: Տեսնելով, որ բավական մեծ գործ է կատարված, կարգադրում է ճաշ տալ վարպետներին ու բանվորներին:

Մի ծերունի վառում է օջախը և կաթսան դնում է կրակի վրա:

Ըստ ավանդության՝ քարաժայռի մոտ գտնվող այդ վայրը Շահմար անունով մի օձի տիրապետության տակ էր: Երբ օձը նկատում է, որ իր սահմաններում մարդիկ են հայտնվել, օձերից մեկին հրամայում է թույն թափել կաթսայի մեջ:

Եռացող ջրի գոլորշին շշմեցնում է օձին, և նա ընկնում է կաթսայի մեջ:

Մարդիկ կեսօրին գալիս են ճաշելու: Ծերունին սկսում է ամանների մեջ ճաշ լցնել, որ բաժանի նրանց: Այդ ժամանակ մի ճերմակ աղավնի է հայտնվում և թևերով ուժգին հարվածում է ծերունու ձեռքին: Կավե ամանն ընկնում է և ջարդուփշուր լինում: Ծերունին դարձյալ մի աման է վերցնում և սկսում լցնել: Այս անգամ աղավնին ծղրտալով նետվում է կաթսայի մեջ:

Ճաշը թափում են, և ամեն ինչ պարզ է դառնում...

Մեծ հուզումով ու սիրով աղավնուն թաղում են հենց նույն տեղում, վրան մի մատուռ են կառուցում և անունը դնում *Աղավնատուն*:

Ըստ «Ո՞վ է, ի՞նչ է» հանրագիտարանի և «Շողիկ» մանկական հանդեսի

Գեղարդ[1]

Ավանդությունը պատմում է, որ Լենկթեմուրը, ոտնատակ տալով աշխարհի կեսը, եկել հասել էր Հայոց աշխարհ՝ Գառնիի ձոր:

Ահա և Այրիվանք-Գեղարդը, ուր հայ քանդակագործ-ճարտարապետ Գալճագը մեկ կտոր ժայռի մեջ քանդակել է երկու եկեղեցի:

– Հրաշք շինություն է, ժայռափոր տաճար,– ասում են Լենկթեմուրին:

– Մեր ինչի՞ն է պետք. ո՛չ կարող ենք ավերել, ո՛չ էլ շալակել-տանել:

– Ասում են, թե այստեղ պահվում է Հայոց աշխարհի յոթ ձիաբեռ ադամանդը, – պատմում են զինվորները:

Լսելով այդ մասին՝ Լենկթեմուրի աչքերն ուրախությունից փայլատակում են, և նա որոշում է անձամբ հափշտակել այդ մեծ հարստությունը:

Մոտենում է ժայռափոր տաճարին ու ներս է նայում: Մութ տաճարում մի լուսափունջ էր փայլփլում. այո՛, ադամանդը միայն կարող էր այդպես փայլփլել: Լենկթեմուրը, հազիվ զսպելով ուրախությունը, իսկույն նետվում է ներս ու ձեռքերը մեկնում դեպի լուսափունջը: Բայց, մ՛այ հրաշք, լուսափունջը հանկարծ անհետանում է: Լենկթեմուրը վերադառնում է դեպի տաճարի մուտքը, ադամանդը նորից սկսում է փայլատակել: Մի քանի անգամ փորձում է. ձեռքերը երկարում է դեպի ադամանդը, բայց ամեն անգամ էլ լուսափունջը անհետանում է:

Լենկթեմուրը, քմծիծաղ տալով, ասում է.

– Ադամանդափայլ այս տաճարը և փայլատակող ադամանդը մարդ միայն պիտի տեսնի ու անցնի:

Դրանից հետո օտարները Այրիվանք-Գեղարդն անվանեցին *Տե՛ս ու անցի՛ր:*

Դարերի ընթացքում շատ նվաճողներ եկան Գառնիի ձոր, տեսան ու անցան, իսկ հրաշք շինությունը մնաց:

Եվ հիմա քիչ մարդիկ գիտեն, որ հայկական ճարտարապետության այս եզակի հուշարձանախումբը ժամանակին կոչվել է *Տե՛ս ու անցի՛ր*:

Իսկ ի՞նչ էր այն լուսափունջը, որ Լենկթեմուրը չկարողացավ բռնել. տաճարի ճարտարապետը շարժական մի քար էր սարքել, որի շնորհիվ կեսօրին մի ճեղք էր բացվում դեպի դուրս: Արևի ճաճանչները, ներս ընկնելով, մթան մեջ այնպիսի լուսափունջ էին կազմում, որ կարծես ադամանդ շողար:

---

[1] **գեղարդ** – նիզակ՝ փայտե երկար կոթով և սլաքաձև վերջավորությամբ խոցող՝ վիրավորող զենք:

1679-ին այդ քարը երկրաշարժից տեղաշարժվեց և կորցրեց լուսափունջ ստեղծելու իր հատկությունը:

Գեղարդը ունի հայկական կրկնակի անվանում՝ *Այրիվանք* ու *Գեղարդ:*

Իսկ ինչո՞ւ է կոչվել *Այրիվանք* և ինչո՞ւ՝ *Գեղարդ*:

4-13-րդ դարերում այն կոչվել է *Այրիվանք*՝ այրի՝ քարայրի մեջ կառուցված լինելու պատճառով:

13-րդ դարից սկսած՝ ստացել է իր երկրորդ՝ *Գեղարդ* անվանումը, քանի որ այս վանքում պահվում էր սուրբ համարվող մի գեղարդ:

Հիսուսի խաչելությունից հետո զինվորներից մեկը այդ գեղարդով է խոցել Նրա կողը՝ ստուգելու համար, թե արդյոք նա մեռա՞ծ է արդեն:

Ըստ ավանդության՝ այդ գեղարդը Թադևոս Առաքյալն է Հայաստան բերել:

Երկար տարիներ այն պահված է եղել Այրիվանքում, որտեղից տեղափոխվել է Սուրբ Էջմիածին և մինչև հիմա պահվում է Սուրբ Էջմիածնի Գանձատանը:

Ըստ ավանդության՝ Գեղարդը կառուցվել է քրիստոնեության ընդունման առաջին տարիներին՝ 4-րդ դարի սկզբում՝ ժայռափոր խաչքարերով և բարձրարվեստ քանդակներով:





Գեղարդավանք, XIII դ.

Ըստ Արամ Ղանալանյանի

ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Երևանից քառասուն կիլոմետր դեպի հարավ-արևելք՝ ժայռակոփ բարձունքի վրա, կանգուն է մի հազվագյուտ կոթող: Տասներեքերորդ դարում կառուցված Գեղարդի վանքն է: Այս սրբավայրի մասին ժողովուրդը բազում զրույցներ է ստեղծել և վանքին վերագրել է աստվածային հրաշագործ զորություն:

Մի զրույցում պատմվում է, որ եղել են ազնվատոհմ քույր ու եղբայր: Նրանք փափագում էին իրենցից հետո աշխարհին թողնել անմահ հիշատակարան:

Երկար դեգերելուց[1] հետո քույր ու եղբայր գալիս են այն կիրճը, ուր գոռում-գոչյունով թավալվում էր լեռնային գետը, իսկ վիթխարի ապառաժները մխրճվել էին երկնքի կուրծքը: Երկմտում են՝ որտեղ կառուցեն տաճարը: Եղբայրը ծնկաչոք աղոթում է և դիմում Աստծուն.

– Տե՛ր, ցո՛ւյց տուր մեղավորիս քեզ ընծայվող տաճարի տեղը:

Հաջորդ առավոտ արթնանալով քնից՝ եղբայրը տեսնում է, որ մուրճը դրված է հսկայաբեկոր մի ապառաժի վրա:

Սկսվում է տաժանակիր աշխատանքը: Քույր և եղբայր փորում են ապառաժը, ճեղքում են վեմը, ուղղակի քարի սրտի մեջ կառուցում հրաշալի տաճարը:

Անցնում են տարիներ: Վառվռուն երիտասարդը դառնում է ալեզարդ տղամարդ, իսկ փթթուն օրիորդը՝ սպիտակահեր ու խորշոմապատ դեմքով, ճաքճքած ձեռքերով տարեց կին: Սակայն նրանք երջանիկ էին. իրենց մարմնավորված էին տեսնում վիմափոր տաճարի յուրաքանչյուր հյուլեի մեջ: Քույր ու եղբայր սպասավորում են[2] հրաշակառույց տաճարում և այնտեղ էլ կնքում իրենց մահկանացուն[3]:

Աշխարհակալ Լենկթեմուրը լսել էր Գեղարդի վանքի հրաշագործ հատկությունների մասին: Իր անթիվ-անհամար զորքով դիմում է դեպի վանքը՝ հափշտակելու սուրբ գեղարդի նշանը: Սակայն վրա է հասնում երկնային պատիժը: Հենց որ բարբարոսները իրենց ձեռքերը մեկնում են նշանավոր սրբությանը, անմիջապես նրանց ձեռքերը գոսանում են[4], աչքերը կուրանում, ընկնում են գետին, թպրտում հոգեվարքի մեջ:

Սարսափահար Լենկթեմուրը թողություն է խնդրում Աստծուց, վանքին մեծագին ընծաներ է տալիս և անվերադարձ հեռանում նշանավոր վանքից:

---

[1] **դեգերել** – թափառել:

[2] **սպասավորել** – սպասարկել՝ ծառայել:

[3] **մահկանացուն կնքել** – մեռնել:

[4] **գոսանալ** – գոս՝ չոր դառնալ, չորանալ:

Ստեփան Կուրտիկյան

Տաթեվ

Ա

Քաղաքամայր Անիից հայրենի գյուղ վերադարձան երկու ալևոր վարպետ. մեկը բազում վանքեր ու դպրոցներ էր կառուցել, մյուսը՝ աղբյուրներ ու ջրանցքներ:

Երբ շինականները դիմեցին նրանց՝ իրենց մոտ ևս ջրանցք ու վանք կառուցելու, վարպետներն ասացին.

– Հենց այդ մտքով էլ եկել ենք ու էլ ետ չենք գնա: Ահա հիսուն տարի է որ մենք կառուցում ենք: Բայց ահելությունը հաղթում է ջահելությանը, և մարդու կռները թուլանում են: Հիմի մենք էլ որոշել ենք վերջին վանքն ու ջրանցքը կառուցել հայրենի գյուղում, հետո հանգիստ թողնել էս աշխարհը... Եվ պայման ենք կապում. մեզանից ով շուտ ավարտի իր գործը, նա էլ ժողովրդի օրհնությունն ստանա և արդար անուն վաստակի...

Այսպես պայման կապեցին վարպետները, իսկ ժողովուրդն ուրախությամբ վկա եղավ այդ պայմանին:

Հետևյալ օրը նրանք անցան աշխատանքի:

Վարպետ Վաշտակը մի խումբ շինականներով մեկնեց Կապույտ լիճ՝ այնտեղից ջրանցքը սկսելու, իսկ վարպետ Տիրիթը ելավ ձորից վեր՝ գյուղի վրա իշխող բարձունքը՝ վանք ու դպրոց կառուցելու:

Տաթևի վանքային համալիրը՝ հիմնադրված IX դ.

* * *

Լեռնային լճից սկսվեց ջրանցքի շինարարությունը: Ամառվա կիզիչ արևին թե ձմեռվա սառնամանիքին քլունգներով ու բահերով զինված՝ հողի մշակները վարպետ Վաշտակի գլխավորությամբ քանդում էին քարերն ու ժայռերը և ճանապարհ բացում Կապույտ լճի ջրերի համար, որ դարեր շարունակ Վարարակն գետակով հոսում էր անօգուտ:

– Ցաքուտը[1] վարդուտ պիտի դարձնենք,– ասում էր վարպետ Վաշտակը:

Իսկ վարպետ Տիրիթը կառուցում էր մի այնպիսի վանք, որ թե՛ համալսարան էր լինելու, թե՛ պաշտպանության ամրոց և թե՛ ճարտարապետական հուշարձան:

... Անցնում էին ամիսներն ու տարիները, և ժողովուրդը հուսալի հայացքը պահում էր երկու ժայռեղեն բարձունքներին, որոնցից մեկով պիտի գահավիժեր հեռավոր լճի ջուրը, մյուսի վրա՝ բարձրանար վանքը:

Մի անգամ ճարտարապետ Տիրիթի աշակերտ Գազրիկը գնաց Կապույտ լիճ, դիտեց ջրանցքի շինարարությունը և վերադարձին ասաց.

– Վարպե՛տ Տիրիթ, ետ ենք մնում, շտապե՛նք: Վարպետ Վաշտակն արդեն ջրանցքը հասցրել է Աղավնաձոր...

Ճարտարապետը մտահոգվեց. կիտվեցին որձաքարի[2] փոշիով ծածկված հոնքերը: Հետո ինքնամփոփվեց, խաղաղվեց և դառնալով աշակերտին՝ հանգիստ պատասխանեց.

– Պետք է շտապել, որդի՛ս, ճիշտ ես ասում, պետք է շտապել, բա՛յց... կամաց-կամաց շտապել... *Մենք դարերի համար ենք կառուցում...*

Շինականները հաճախ գալիս դիտում էին վարպետի աշխատանքը, նրա նրբագեղ քանդակներն ու կառուցած շարժական սյունը, հրաշք սյունը, որ մինչև այսօր էլ կանգուն է:

Դա եզակի շարժական սյունն էր ամբողջ երկրում:

Վարպետ Տիրիթի ճարտարապետական հմտության համբավը Շիրակից և Անիից գալով՝ տարածվում էր այս հեռավոր լեռնաշխարհում:

Երբ շինականները վիճում էին, թե ո՛վ է առաջինն ավարտելու գործը, վարպետ Տիրի՞թը, թե՞ վարպետ Վաշտակը, շատերը խոսում էին՝ հօգուտ վարպետ Վաշտակի՝ գուցե և նրա համար, որ շա՛տ-շա՛տ էին ծարավ ջրի:

Ժայռերի վրա հետզհետե բարձրանում էին վանքի շենքն ու առանձին խուցերը:

Վարպետ Տիրիթը մի կողմից՝ խրախուսում էր շինականներին, մյուս կողմից՝ քանդակում էր ցորենի հասկեր, լեռնային ծաղիկներ, այծյամներ ու արծիվներ:

Նա կենդանացնում, շունչ էր տալիս քարերին, որ դարեր հետո մարդիկ հմայվեն իր արվեստով ու հիշեն բարի անունը...

---

[1] **ցաքուտ** – ցաքիներով՝ փշոտ թփերով առատ տեղ, ցաքիների թփուտ:

[2] **որձաքար** – շատ կարծր քար:

Բ

Տասը տարի էր՝ մուրճերի ու քլունգների ձայնը արձագանքում էր լեռներում ու ձորերում:

Շինականները ոգևորությամբ պատմում էին, թե ջրանցքն արդեն վաղուց է անցել կես ճանապարհը, հասել մոտակա Գյազբել սարի լանջերը, իսկ վանքի գմբեթն արդեն ուրվագծվում էր կապտալույս երկնակամարում...

Այդ օրերին Գազրիկը մի անգամ նորից զգուշացրեց վարպետին.

– Վարպե՛տ Տիրիթ, վարպետ Վաշտակն արդեն մոտեցել է Կաքավաձորին. մի քանի ժամվա ճանապարհ է այստեղից, լավ չի՞ լինի՝ մի քիչ քանդակներն ու նախշերը քչացնենք, որ չտարվենք...

Վարպետը դադարեց քանդակելուց, սրբեց ճակատի քրտինքը և խաղաղ նայելով աշակերտին՝ պատասխանեց.

– Սա իմ վերջին գործն է, Գազրի՛կ, իսկ քո՝ առաջին... Ես շատ եմ սիրտ մաշել, աչքիս լույսը չեմ խնայել և շինել եմ գեղեցիկ ու ամուր... Այս մեկն էլ այնպես եմ շինելու, որ սիրտս հանգիստ լինի... Դու դեռ ջահել ես, շատ տաճարներ ու դպրոցներ, ջրանցքներ ու կամուրջներ ես շինելու, որդի՛, աշխատի՛ր այնպես, որ սիրտդ քանդակվի քարերի վրա, և շենքը դարերին դիմանա, ինչպես՝ Տրդատ ճարտարապետինը, որի լավ գործերի համբավը մինչև Բյուզանդիոն է հասել... Իսկ գործը, անհո՛գ կաց, մենք կավարտենք, երբ հարկավոր է...

Գ

Աշնան մի օր՝ երկար բացակայությունից հետո գյուղ վերադառնալիս, վարպետ Վաշտակը տեսավ վանքի ավարտվող գմբեթն ու դպրոցի խցիկները, աշակերտների համար պատրաստված քարե նստարաններն ու սեղանները: Մի կողմից՝ ուրախացավ վարպետ Տիրիթի հաջողություններով, մյուս կողմից՝ մտահոգության մատնվեց:

Մի՞թե ինքը սխալվել է վարպետ Տիրիթի նկատմամբ, այն էլ՝ յոթանասունամյա հասակում...

Այս մտքերից հուզված՝

Տաթևի համալիրի Սուրբ Պողոս -Պետրոս եկեղեցին, 895-906թթ.



Ժայռապատկեր Որոտանի կիրճում

վարպետ Վաշտակը իր աշակերտ Բաբիկի հետ նույն օրն ևեթ վերադարձավ՝ ջրանցքի շինարարությունն արագացնելու:

...Լուսաբացին, երբ մշուշը ցրվեց, ճարտարապետ Տիրիթը բարձրացրեց գլուխը, սրբեց կնճիռներով ակոսված ճակատի քրտինքը և հայացքն ուղղեց Շահանդուխտի ժայռին: Այստեղ ջրանցք էր փորում իր հետ հիսուն տարի աղուհաց կերած վարպետ Վաշտակը... Արդյոք ինչպե՞ս էին գնում նրա գործերը, հո ետ չէ՞ր մնում...

Վարպետ Տիրիթը դիտում էր Շահանդուխտի ժայռը, երբ տագնապեց մեծ անակնկալից, աչքերը խոշորացան, լարվեցին, ու մուրճն ընկավ ձեռքից... Չէր ուզում հավատալ իր տեսածին... Այդպիսի բան չէր կարող պատահել... Բայց տեսանելի իրականություն էր. վաղորդյան անէացող մշուշի միջից արդեն պարզ երևում էր, թե ինչպե՛ս սպիտա՛կ-սպիտա՛կ հորձանք է տալիս ջուրը և անհետանում ժայռերի մեջ... Ուրեմն՝ ինքը տարված է... Բայց մի՞թե Վաշտակը...

Ճարտարապետի սևեռուն հայացքը մեխվեց, սառեց, երկար անշարժացավ: Եվ նա, մտամոլոր, ձեռքերը վեր պարզելով, բացականչեց.

– Երկինքը *փա՛թև,* երկինքը *փա՛թև*, թևեր առնեմ, թռչո՛ւն դառնամ, թռչեմ-գնա՛մ...

«Տա՛թև, փա՛թև»,– արձագանքեց ձորամիջում:

Այդ միջոցին Տիրիթը փոքրացավ. փոքրացա՛վ ու սևացա՛վ, թևեր առավ, ծիծառ դարձավ: Սևացավ ամբողջովին, բայց ուղիղ սրտի վրա մնաց սպիտակ մի կոհակ[1], լույսի մի կոհակ՝ սև մարմնի վրա... Ու նա թռավ, տագնապով երեք անգամ շրջան կատարեց վանքի գմբեթի շուրջը, ողբագին ճիչեր արձակեց, հետո սուզվեց երկնակամարի խորքն ու անհետացավ հեռավոր հորիզոններում...

Գազրիկին թվաց, թե իր սիրտը սևացավ, սգավոր թռչուն դարձավ ու թռավ-գնաց: Ապա ինքն էլ չհավատալով աչքերին՝ դանդաղ քայլերով գնաց Շահանդուխտի ժայռը՝ մոտիկից տեսնելու հրաշքով ավարտված ջրանցքն ու ջրվեժը:

Երբ նա տեղ հասավ ու տեսավ «ջրվեժը», զարմանքից դուրս ըն-

1 **կոհակ** – այստեղ՝ ալիքանման բիծ:

կան աչքերը. Շահանդուխտի ժայռի վրայով սպիտակ երկար կտավ էր փռված, և չորսբոլորը բամբակի քուլաներ էին շաղ տված...

– Վարպե՛տ Վաշտակ, վարպե՛տ Վաշտակ, ի՞նչ արեցիր,– Գազրիկի ձայնը տխուր ու տագնապալի արձագանքեց լեռներում ու ձորերում:

Բայց մի՞թե վարպետ Վաշտակը կարող էր դիմել նման միջոցի...

Գազրիկը չիմացավ, որ դա վարպետի աշակերտ Բաբիկի գործն էր, որի սարքած «ջրվեժը» չարաչար խաբել էր իր սիրելի վարպետին...

Ավա՜ղ, խաբված Տիրիթն արդեն ծիծառ էր դարձել, թռել, անհետացել...

Մեծ վիշտ պատճառեց դա վարպետ Վաշտակին, որ նպատակ էր դրել աշխատանքն ավարտելու Տիրիթի հետ միևնույն օրը...

Նույնն էր մտածել և վարպետ Տիրիթը:

Դ

Վշտահար ժողովուրդն օրհնեց թռչուն դարձած Տիրիթ ճարտարապետին և նրա վերջին խոսքերը հիշելով՝ վանքի անունը դրեց *Տաթև*:

Ասում են, որ մինչև օրս էլ ծիծեռնակ Տիրիթն ամեն տարի հեռավոր երկրներից գալիս իր բույնն է հյուսում Տաթևում, այնտեղից դիտում դաշտերն ակոսող ջրանցքները, ավարտուն ու կանգուն վանքը, շարժական սյունը, գյուղերում տեսնում է գեղաքանդակ շինություններ և լուսադեմին թե մթնշաղին ուրախությունից սուզվում է երկնակամարի լազուրում, ու նրա սպիտակ կրծքից դուրս են թռչում բերկրանքի կանչեր, կարոտի կանչեր...

Ստեփան Կուրտիկյան

Արզնի

Արամ նահապետի որդի Արայի գեղեցկության համբավը մինչև Ասորեստանի մայրաքաղաք էր հասել:

Տարփատենչ Շամիրամ թագուհին կորցրել էր քունն ու հանգիստը: Մոլեգնել էր սերը սրտում և Արա Գեղեցիկին տիրանալու մարմաջից հալումաշ էր լինում:

Իր ամուսին Նինոս աշխարհակալի մահից հետո, երբ Շամիրամը բազմեց գահին, մեծ ընծաներով պատգամաբերներ ուղարկեց Նաիրի երկիրը՝ Արայի մոտ: Նրանք Արա Գեղեցիկին հանձնեցին Շամիրամի աղերսագիրը, որ գրված էր աղյուսի վրա.

«Առնագեղ Արա,- գրում էր թագուհին,- կամոքն աստծո դու պետք է դառնաս իմ ամուսինը: Տիրացի՛ր Աշուրի մեծ գահին և եղի՛ր աշխարհակալ... Ինձ հետ հզորազոր կլինես դու երկրի վրա, և բոլոր թագավորներն իրենց գլուխը կխոնարհեն քո փառքի զորության առաջ»:

Կարդաց Արան չքնաղ ու հզոր Շամիրամի աղերսագիրը, կարդաց, զայրացավ և մերժեց ընդունել թանկարժեք ընծաները:

- Գնացեք ասացեք ձեր տիրուհուն,- գոչեց նա՝ խաժ աչքերը շողացնելով,- որ ինձ չեն գրավում ո՛չ Ասորեստանի հարստությունները ծովածավալ, ո՛չ իշխանությունը բռնավոր, ո՛չ էլ փառքը երկրային: Կրկի՛ն ասացեք Ասորեստանի և Բաբելոնի տիրակալ թագուհուն, որ ես պատկանում եմ իմ հայրենիքին և իմ Նվարդին: Եվ թող իմանա աշխարհակալը, որ իմ Նաիրի աշխարհը չեմ փոխի Աշուրի մեծ երկրի ու գահի հետ...

Արայի լեռը

Պատգամաբերները լսեցին Արա Գեղեցիկին, հուսահատ ու գլխիկոր վերադարձան Նինվե և Արայի գեղեցկության գովքն անելուց հետո հայտնեցին, որ նա մերժել է ընդունել թանկարժեք ընծաներն ու արհամարհել թագուհու ցանկությունը:

Հուզվեց Շամիրամը, դառնացավ, զայրացավ սաստիկ, վճռեց բռնությամբ տիրանալ առնագեղ արմենին, որ իրենից խլել է քունն ու հանգիստը: Անթիվ-անհամար զորք կապեց նա և մարտակառքավորներով, հեծելազորով ու հետևակով արշավեց հյուսիս՝ Նաիրի երկրի վրա:

Հյուսիսային Միջագետքից, գետափնյա Նինվե մայրաքաղաքից մինչև Նաիրի աշխարհը երկար ու դժվարին ճանապարհ անցավ Ասորեստանի գոռոզ թագուհին: Բայց այդ դժվարություններն առ ոչինչ էր համարում նա:

Հասնելով Արարատի ստորոտները՝ Շամիրամը նորից պատգամաբերներ ուղարկեց Արայի մոտ՝ ավելի ճոխ ու թանկարժեք ընծաներով: Եվ նորից աղերսեց նրան իր ամուսինը դառնալ ու տիրանալ երկրային ու երկնային փառքին:

Արան կրկին լսեց պատգամաբերներին, կրկին փոթորկվեց ու աներկմիտ պատասխանեց.

– Շամիրամը սրով է հասել Նաիրյան աշխարհը և չարաչար սխալվել է. հայտնեցե՛ք նրան, որ մեր լեռնաշխարհից սրով ոչինչ չի կարելի տանել... Իսկ սիրտը երբե՛ք չի ենթարկվի սրին...

Այնժամ Շամիրամը, հուսահատված, հրաման արձակեց գրոհելու Արայի զորագնդի վրա՝ խստիվ պատվիրելով, որ չդիպչեն Արայի մազին անգամ, այլ կենդանի բռնեն ու մոտը բերեն անվնաս:

Իր փոքրաթիվ քաջերով Արան դուրս եկավ Աշուրի բազմագունդ զորքի դեմ և Հուրաստանի[1] փոքր գետահովտում ճակատամարտի բռնվեց Արքայական գնդի հետ: Անթիվ-անհամար նետեր էին սլանում դեպի մի ափից մյուսը:

Գոտեպնդված Արա Գեղեցիկի քաջագործություններով՝ նրա սակավաթիվ ռազմիկներն արիությամբ դիմադրում էին աշխարհակալ զորքին:

Սակայն կռվի թեժ պահին իր շատ ռազմիկների հետ նետահար ընկավ Արա Գեղեցիկը:

Ընկավ Արա Գեղեցիկը, նրա արյունը հորդաբուխ հոսեց ու կարմիր ներկեց հայրենի հողը:

Արյունաներկ այդ հողը քառասուն օր ու քառասուն գիշեր ծխում էր՝ սուգի շղարշ գցելով Նաիրյան երկնակամարի վրա: Քառասուն օրից հետո միայն ծուխը վերածվեց բոցի, որից շառագունեց երկնքի խավարը: Ապա բոցը վերածվեց ջրի հզոր շատրվանի: Եվ մինչև այժմ էլ բուժիչ շատրվան է խփում Արայի ընկած տեղում...

Արա Գեղեցիկի սպանության լուրը փոթորկեց Շամիրամ թագու-

---

[1] **Հուրաստան** – այժմ՝ Հրազդան:



Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ, Վարդգես Սուրենյանց, 1899թ.

հուն: Դժգունեց նա, խամրեցին աչքերը, վշտից պոկեց մազերը, ապա քրմապետերին և մոգերին պատվիրեց աղոթել աստծուն, որ կյանքի դարձնի Արային: Ինքն էլ հերարձակ ընկավ Արայի անշնչացած մարմնի վրա, աղեկտուր լաց եղավ: Հետո քառասուն հարալեզների[1] առաջ դրեց Արա Գեղեցիկի դիակը, որ լիզեն ու բուժեն նրա վերքերը, կենդանացնեն անշնչացած թագավորին:

Արա Գեղեցիկի նահատակության լուրը լսելով՝ սուգ ու շիվանի մատնվեց ժողովուրդը հայոց և անիծեց Շամիրամին: Անիծեց ու նրա պաշտպան կախարդական ուլունքը ոչնչացնելու համար գոչեց.

– Ուլունք Շամիրամա ի ծով...

Եվ իսկույն Շամիրամի վզից անհետացավ ու ծովն ընկավ կախարդական ուլունքը: Անզոր դարձավ տարփատենչ Շամիրամը և ժողովրդի անեծքից տեղնուտեղը քարացավ...

Ահ ու սարսափի մատնված ասորական զորքը գլխիկորույս[2] նահանջեց՝ բացի Շամիրամի մի քանի հարազատներից, որոնք չցանկացան հեռավոր լեռնաշխարհում մենակ թողնել Ասորեստանի չքնաղ թագուհուն և բնակություն հաստատեցին քար կտրած Շամիրամի մոտ՝ Հուրաստան գետի բարձունքին:

Ավանդական այդ ժամանակներից մինչև օրս էլ այնտեղ ապրում են ասորիները, իսկ գյուղից ներքև՝ ձորամիջում՝ Արայի ընկած վայրում, ուր հանքային ջրերի շատրվաններ են խփում, կառուցվեց մի առողջարան, որը, որպես ավանդական հարալեզ, այսօր բուժում է մարդկանց վերքերը...

Երախտապարտ ժողովուրդը անմահացրեց Արա Գեղեցիկի հիշատակը և վեհանձն գտնվեց Շամիրամի նկատմամբ:

Այն վայրը, ուր Շամիրամը զննեց Արայի վերքերը, մինչև այսօր էլ կոչվում է *Արա – զննի – Արզնի*. Արզնու հանդիպակաց լեռը՝ *Արայի լեռ*. իսկ այն սարը, որի ստորոտին քարացավ Շամիրամը, շինականները կոչեցին Շամիրամի անունով:

Արայի և Շամիրամի հիշատակին նորակառույց ջրանցքն էլ անվանվեց *Արզնի – Շամիրամի ջրանցք*...

---

[1] **հարալեզ** – առասպելական շնակերպ կենդանի, որ լիզելով կենդանացնում էր պատերազմում զոհվածներին:

[2] **գլխիկորույս** – գլուխը կորցրած:

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

(հատված դիցապատմական ողբերգությունից)

ՎԱՇՏԱԿ

Այն, ինչ ասում ես դու,
Իրավ է ամենայն փիեզերաց համար,
Եվ քրմերի իմաստությանն է լոկ հասու:
Իսկ ես խորհում եմ իբր զորավար.
Եթե դու հավատաս Շամիրամի սիրուն
Եվ նրանով դյութված՝ գնաս Ասորեստան,
Այդ կլինի հոգու կործանարար փկարություն:
Նա՛ քեզ կիշխե և ոչ թե դու՝ նրան,
Նա՛ քեզ կիշխե և կսպանի շուտով կամ ուշ,
Կասպատակե նաև աշխարհքդ բարելից,
Եվ յուր նախնյաց նման ուխտադրուժ՝
Քո պերճ քաղաքներից և քո կոթողներից
Կարտաջնջե սեպագիրներդ սեփական,
Ապա կարձանագրի լեզվով ասորական.
«Այս քաղաքները ես եմ կառուցել»,
«Այս ջրանցքները ես եմ կառուցել»...

ԱՐԱ

Չեմ հավատում,Վաշտա՛կ. մռայլատես է քո հոգին:
Նախ մի՛ կարծիր, թե ես կարող եմ կատարել մի բան,
Որ հակառակ է Հայրենյաց շահին:
Օ՜, ինձ Վիշապաքաղ Վահագն է պահապան:
Չեմ հավատում, որ ինձ նենգել կարող է Շամիրամ.
Նա դաշնակից է ինձ և բարեկամ:
Ինչո՞ւ ես ծիծաղում...

ՎԱՇՏԱԿ

Որ զայրացնեմ իմ արքային:
Մանո՛ւկ, լսի՛ր ինձ. աշխարհում
Հարգում են լոկ հզոր բարեկամին,
Իսկ թույլ բարեկամին՝ արհամարհում,
Որքան իսկ նա ազնիվ լինի:

ԱՐԱ

Հանգամանքները դու խառնում ես, ծերունի՛,
Ազնիվ եմ ես, բայց թույլ՝ ամենևին:

ՎԱՇՏԱԿ

Կթուլանաս, եթե ազնվությանդ ոսկեկար
Չավելացնես զգուշությունն իբրև աստառ:
Անդրադառնանք դարձյալ քո երազին.
Կրկնում եմ, ահավոր գուշակություն էր դա,
Շամիրամից քեզ մահառիթ վնաս կգա:
Սիրի՛ր նրան, եթե այդքան ծարավ է քո հոգին,
Սիրի՛ր, սակայն մի՛ հավատա:
Եթե նա քեզ դարձյալ յուր մոտ հրավիրե,
Մերժի՛ր երկրորդ անգամ, երրորդ անգամ՝ մերժի՛ր:
Եթե սիրում է նա, ինչո՞ւ է քեզ տանում Նինվե.
Թո՛ղ գա նա ինքը՝ Արմավիր:

(Մտնում է Վարուժանը):

ԱՐԱ

Մայրս կամենում է գուսանաց երգով
Իմ խելահեղ հոգին սանձահարել:
Եկել են իմ հրդեհը մարելու նպատակով,
Սակայն կբորբոքեն ինձ առավել:

(Մտնում են արքայամայր, Նուարդ, քրմապետ, իշխաններ, քուրմեր, պալատականներ, գուսաններ, Կաթմոս և Արբակ: Արան բազմում է գահին: Արքայամայր ու Նուարդ՝ նրա կողքին):

ՁԱՅՆԵՐ

Ողջո՛ւյն, աշխարհաշե՛ն արքա:
Ողջո՛ւյն քեզ, մե՛ծ Արա:
Քեզ հա՛շտ խարտյաշն Անահիտ:

ԱՐԱ

Շնորհակա՛լ եմ ձեզանից, ազնի՛վ բարեկամներ,
Տանուտերե՛ր, քուրմե՛ր և գուսաննե՛ր,
Ուրախ եմ՝ տեսնելով ձեզ բոլորիդ:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

Իսկ արդ, վահագնասե՛րդ, բա՛ց հանդեսը տոնական:

ՔՐՄԱՊԵՏ
Ո՜վ ոսկեմայրդ Անահիտ, ո՜վ Դերկեդո,
Բաշխի՛չդ սրբազան ջրի և ոռոգման,
Դու, որ սատարն ես բյուրասպանյա սիրո,
Հզոր հովանավորդ մայրության,
Որ վայելում ես Վահագնի փեսայությունը ջինջ:
Համայնափայլ արևի տակ չի կատարվում ոչինչ,
Որ հակառակ է Վահագնի և քո հավանության:
Վարդավառի քո սրբազան այս հանդիսին
Ահա դիմում եմ քեզ և Վահագնին վիշապաքաղ,
Որ է աստված, և հայր, և ամուսին,-
Պահե՛ք հայոց աշխարհը ձեր՝ երանությամբ խաղաղ,
Պահպանեցե՛ք ամուսնության երդումն անքակտելի,
Տվե՛ք հայոց անդաստանին բերքի առատություն,
Պայծառացրե՛ք անունը հայկազյան քաղաքների,
Հովանավո՛ր եղեք թագավորին և թագուհուն:

(Մտնում է պալատական մունետիկը):

ՊԱԼԱՏԱԿԱՆ ՄՈՒՆԵՏԻԿ
Ազնի՛վ Ասուր-Գաբբու և իմաստո՛ւն Նիրար:

ԱՐԱ
Թո՛ղ ներս բարեհաճեն:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Անիծվածնե՛ր...

ԱՐԱ՛
Արքայամա՛յր...

(Մտնում են Նիրար և Ասուր-Գաբբու՝ թիկնապահների ուղեկցությամբ):

ՆԻՐԱՐ
Ողջո՛ւյն ձեզ, մեծագո՛րծ Արա,
Արքայամայրդ վեհ և թագուհի՛,
Բերել եմ ձեզ պատգամը վեհափառ Շամիրամա
Եվ շնորհքները Նեբուի:

ԱՐԱ
Բարո՛վ ժամանեցիք, ո՛վ բաղձալի բարեկամներ,

Ուրախ եմ ձեր այցելությանը բարեհաճ:
Ինչպե՞ս է ասպողը Նինվեի և դաշնակիցը մեր:

ՆԻՐԱՐ
Պայծառապայլ է առավել, քան էր առաջ,
Եվ առաքել է ամենայն մաղթանք
Ձեր բարեշեն երկրին:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Եվ անարգանք:

ԱՐԱ
Արքայամա՛յր... Ազնի՛վ կոչնականներ,
Տանուտերե՛ր, քուրմե՛ր և գուսաննե՛ր,
Վահագն այնպես կարգեց ժամերը մեր օրվա,
Որ մենք հարկադրված ենք՝ ակամա
Ձրկվել մի պահ ձեր ընկերությունից:
Դու կա՛ց, Վաշտա՛կ, դու հարկավոր ես ինձ:

(Բազմությունը դուրս է գնում):

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Նուա՛ռդ, իսկ դու ինչո՞ւ ես դուրս գնում:

ՆՈՒԱՌԴ
Արքայամա՛յր, փերունական գաղտնի զրույցներում
Անփորձ, գուցե նաև անօգտակար եմ ես:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Արքա՛, հրամայի՛ր, որ թագուհին մնա:

ԱՐԱ
Եվ չեմ իսկ պահանջել, Նուա՛ռդ, որ դու բացակայես:
Վերադարձի՛ր, նստի՛ր գահիդ վրա:

ՆԻՐԱՐ
Ների՛ր, արքա՛, որ հանդգնում եմ ես
Ինձ թույլ տալ մի խոնարհ դիտողություն.
Ինձ Արմավիր բերող պատգամը բարձրագույն
Կարոտ է մի՛ ունկրնդրության՝ սասփիկ սահմանափակ:

ԱՐԱ

Ազնի՛վ Նիրար, Հայոց արքունիքում
Չէիր գտնի դու առավել գաղտնի օթյակ։
Ուստի պատմի՛ր, թե ի՞նչ է Շամիրամ առաջարկում։

(Նիրար բաց է անում պապիրաթուղթը, համբուրում է և հանձնում Ասուր-Գաբբուին, որն սկսում է կարդալ)։

ԱՍՈՒՐ-ԳԱԲԲՈՒ

«Նեբուն է մեծ հավերժափառ աստված,
ՈրդինՆուգիմուտի և սիրեցյալը Բահալի,
Ով իսկ լինես, արքա կամ հպատակ ծնված,
Պաշտի՛ր լոկ Նեբուին և Նեբուից ի բաց՝
Մի՛ վստահիր մի այլ երկնակալի։
Նեբուն ասաց և ես, Շամմուրամատ,
Արքա Սենաարի և աշխարհի,
Անզուգական, անմրցակից, անպարտ,
Անհիշաչար և անսահման բարի,
Ես քեզ ասում եմ. ո՛վ գեղատեսիլ Արա,
Թեպետ և հակառակ եղար դու իմ առաջարկին,
Չկամեցար դառնալ ինձ ամուսին
Եվ թագավոր Սենաարի և աշխարհի վրա,
Թեպետ և սիրտդ կարծր է առավել
Արարատի հավերժական սառույցներից,
Դու սերը չիմացար սիրով գնահատել
Եվ սառնությամբդ այրեցիր դու ինձ,
Բայց իմացի՛ր, որ ես դարձյալ սիրում եմ քեզ
Եվ տենչալով տենչում եմ քեզ։
Նեբուն ասաց, և ես վճիռս փոխեցի.
Արա՛, եթե այդքան սարսափելի էր քեզ համար
Իմ հարստությունը սիրատենչ և գահն ասուրների,
Ապա թագավորենք խոհեմաբար՝
Դու՝ քո Հայոց ադամանդյա բարձունքներում,
Ես՝ Թիգլատի արևակեզ ափին...»։

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

Շամմուրամատ խելոք և մեծասիրտ է երևում։
Թշնամության ամպերը արդ փարատվեցին։

ՆԻՐԱՐ

Արքայամա՛յր, նամակն ունի դեռ վերջաբան։

Շարունակի՛ր, ազնի՛վ դեսպան:

ԱՍՈՒՐ-ԳԱԲԲՈՒ

«Սակայն հանուն սիրո և բարեկամության
Եվ մեր աշխարհների երջանկության,
Առաջարկում եմ քեզ, ո՛վ այրդ անբասիր,
Արի՛ վեհանձնաբար ինձ հետ հանդիպելու,
Մեր սուրբ դաշինքը նոր երդմամբ ամրացրո՛ւ,
Ապա խաղաղությամբ վերադարձի՛ր:
Քեզ չեմ հրավիրում Ասորեստան,
Որպեսզի անհնար դավադրության
Արտապատկերը քեզ չվախեցնի:
Դու ի՛նքդ որոշիր անունը ոստանի
Հայոց և ասորաց սահմանների վրա,
Ուր դու նշում ես բաղձալի տեսակցությունը մեր:
Վերցրո՛ւ քեզ հետ, ինչքան ուզում ես դու, զորագնդեր,
Եվ ինչ որ հարկ է զգուշության համար, արա՛,
Եվ ինչ պայման, որ դու առաջարկես, Արա՛,
Ես այդ իսկ պայմանով քեզ ընդառաջ կգամ:
Արդ ո՛ղջ եղիր և հաղորդիր սրտանվեր ողջույն
Արքայամորդ բարեկաթ և թագուհուն:
Քեզ միշտ հավատարիմ դաշնակիցդ՝
Շամիրամ»:

(Երկարատև լռություն):

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ

Դու լուռ ես, թագավո՛ր. պատասխանի՛ր:

ՎԱՇՏԱԿ

Ների՛ր, արքայամա՛յր, և թո՛ւյլ տուր ինձ, արքա՛,
Առաջ, քան դու խոհերդ հավաքես ծանրակշիռ,
Ես հանդգնեմ դատել: Առաջարկված է նոր խնդիր,
Եվ լուծելու դժվարություն չկա:
Շամմուրամատ ասպվածուհին
Փոխել է յուր պահանջը նախնական
Եվ արդ կանչում է մեր թագավորին
Մի սիրալիր տեսակցության:
Եվ մեր արքան, ըստ իս, չունի պատճառ
Այդ հրավերը մերժելու:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Մեղա՛ քեզ, ոսկեմա՛յր...
Եվ դու, Վաշտա՛կ, բազմահամբավ խելքիդ ի հաստատում
Այդ ուխտադրուժ խորհուրդը մեզ պարգևեցիր:
Չէի սպասում, Վաշտա՛կ, չէի սպասում:
Իսկ դու, լռում ես, թագավո՛ր, մերժի՛ր:

ՆԻՐԱՐ
Ո՜վ բարեխոհ Արքայամա՛յր, լսի՛ր դու ինձ մի պահ:
Ես բարեկամ եմ ձեր աշխարհաշեն ժողովրդին:
Եվ թող կոչվեմ անարգ մի խաբեբա,
Եթե խոսքերս հակառակ են իմ սրտին:
Եթե Հայոց արքան Շամիրամին ընդառաջե,
Այդ կլինի տերունական խոհեմագույն մի քայլ:
Եվ այդ բնավ անպատվաբեր ու ծանր չէ,
Ինչպես կարող է քո առաքինի սրտին թվալ:
Եվ բազմափորձ Վաշտակ այդ կռահեց:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Շնորհակալ եմ քեզանից, ազնի՛վ Նիրար,
Գնահատում եմ խոսքերիդ անկեղծությունը մեծ:
Բայց խոհերով տարբեր ենք մենք դժբախտաբար:
Դու՝ ասորաց դեսպան, ես՝ կին եմ հայկազուն,
Երկու տարբեր աշխարհ, տարբեր իմաստություն:
Դու պարտքդ անկասկած ազնիվ կատարեցիր:
Իսկ դու, լռո՞ւմ ես, թագավո՛ր, մերժի՛ր:

ՎԱՇՏԱԿ
Արքայամա՛յր, անսա՛ քո Արամա նիզակակցին...
Ների՛ր ինձ, թագուհի՛, խոսքերս ակամա
Կխոցեն նաև քո նրբազգաց հոգին:
Բայց հարկ է, որ մեկնաբանեմ, զի այլ հնար չկա:
Առաջարկված այցելությունը արքայի
Կարող է հաշտություն բերել և ամոքել նրան,
Վերադարձնել մեզ այն, ինչ ամենքիս է ցանկալի:
Այսպես է հանդգնում դատել ձեր հեզ ծառան:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Վաշտա՛կ, չավելացրիր մի նոր իմաստություն:
Բարիք ես ցանկանում դու իմ որդուն:
Սակայն կարո՞ղ է իմ զավակը երջանիկ լինել

Եվ յուր աշխարհը, փերությունը պահպանել,
Եթե դավաճանի սիրույն, ընտանիքին:
Պարծանք է աշխարհի գեղեցկուհուն տիրել,
Բայց այրմարդը պանծալի է առավել,
Երբ նա նրան զիջում է հայրենյաց պատվին:
Իսկ դո՛ւ, արքա՛, լռո՞ւմ ես տակավին:
Մերժի՛ր՝ հանուն Բիայնայի պայծառության:
Մերժի՛ր, անմի՛տ, ապա թե ոչ, քեզ կանիծեմ...

ԱՐԱ
Մա՛յր, ես եմ ինքնակալ արքայազուն արքան
Եվ սարսափին խոնարհվելու սովոր չեմ:

(Արքայամայրը բաց է անում կուրծքը՝ անիծելու համար):

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Ձեզ հետ եմ, ո՛վ տարտարոսի խավար դիցուհիներ,
Երբ նա որսի կբարձրանա ազատ Մասիսն ի վեր...

ՆՈՒԱՐԴ
Մի՛ անիծիր նրան, Արքայամա՛յր...
Սարսափելի է մայրական անեծքը, մահաբեր,
Եվ ե՛տ վերցրու, ինչ որ մտքով իսկ ցանկացար,
Քանզի ուժերը չարության գործում են անխնա,
Այնինչ դանդաղ է կատարվում բարին:
Մի՛ անիծիր: Եթե Արան տենչում է, թող գնա,
Գուցե և այդ է հարկ աստվածներին:
Եթե սիրո բոլոր խոսքերը բոցեղեն,
Որ ինձ ասել է մեր նախնյաց լեզվով նվիրական,
Նա կամենում է այժմ մրմնջալ ասորերեն,
Եթե Վահագնատիպ իմ ամուսին Արան
Թողնում է ինձ և մեր դեռաձաղիկ որդուն,
Մի՛ անիծիր նրան և տո՛ւր ազատություն,
Ջի սերը հակառակ է բռնության:
Եթե տենչում է, թող գնա: Ես կներեմ նրան
Ու վերադարձը կողջունեմ սրտով մաքուր...
Իբրև սիրող և կարոտած մի քույր...

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Անգի՛ն գոհար, որ վիճակված ես անգետին:

Քո կինն, Արա՛, յուր հեզ իմաստությամբ ինձ ողոքեց:
Գնա՛ ու շնորհակա՛լ եղիր նրա վսեմ սրտին:
Գնա՛: Ներում եմ:
Անահի՛տ ընդ քեզ:

(Նուարդ շքախմբով վեհաքայլ դուրս է գնում,
տիրում է տևական լռություն):

ԱՐԱ
Վահագն է վեհ ասփված վիշապաքաղ
Եվ Անահիտ է ոսկեմայր յուր ամուսին:
Արան, արքան հայոց և Արամա որդին
Եվ թոռնորդին Հայկա,–
Արան ասում է,
Ո՜վ ազնիվ Նիրար,
Վերադարձի՛ր Նինվե և պատասխանս տար
Սենաարի աշխարհափայլ արեգակին:
Ասա՝ սառույցս միմիայն կեղևն է արտաքին...
Ես միշտ հավատարիմ ու դաշնակից եմ քեզ:
Բայց իմ սրտում, ինչպես իմ լեռներում արևակեզ,
Խորունկ արմատ է արձակել Արմավիրի բարդին:
Եվ փոխարեն անմահություն անգամ առաջարկես,
Ես չեմ նվաստացնի իմ Նուարդին:
Այսպե՛ս խոսիր Շամիրամին, ազնի՛վ Նիրար:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Փա՜ռք Վահագնին...

ԱՐԱ
Ապա ավելացրո՛ւ վեհանձնաբար.
Մեր սերը թող մնա իբրև ավանդ սրբանվեր
Հայոց և ասորաց աշխարհներին,
Թող նա սրբագործե դաշնադրությունը մեր
Եվ դարեդար լուսավորե սերունդների ուղին...
Այսպե՛ս պատասխանիր, ազնի՛վ Նիրար:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Փա՜ռք Վահագնին, մռայլը փարատվեց:

ՆԻՐԱՐ
Օ՜, ո՛չ, Արքայամա՛յրդ մեծ,

Մռայլը խփացավ դժբախտաբար,
Ձի Շամիրամ չունի սովորություն
Յուր առաջարկների մերժումը հանդուրժել:
Եվ բախտ էր վիճակված լոկ ձեր որդուն՝
Առանց պատժվելու՝ Շամիրամին մերժել:
Բայց մեկ անգամ: Երկրորդ մերժումը խիստ էր անխոհեմ.
Թեպետ ես կանխելու ջանքեր գործադրեցի:
Ուստի ես արդ ուրիշ իմաստություն չունեմ,
Շամիրամա վերջին պատգամը հայտնելուց բացի:
Ազնի՛վ դեսպան, շարունակի՛ր խնդրեմ:

(Մեկնում է Ասուր-Գաբբուին պապիրաթուղթը,
որ բաց է անում և սկսում է կարդալ):

ԱՍՈՒՐ-ԳԱԲԲՈՒ

«Նեբուն է մեծ հավերժափառ աստված,
Որդին Նուգիմուտի և սիրեցյալը Բահալի
Եվ այլն և այլն և այլն...
Շամիրամ ասաց.
Արա՛, եթե գոռոզությամբ ապառաժված՝
Չկամենաս ընդառաջել դու իմ բարի
Եվ հույժ ներողամիտ առաջարկին,
Ապա դու ինձ կհանդիպես կրկին,
Բայց այս անգամ՝ նշմարելով իմ երեսի վրա
Ոչ թե սիրո ժպիտ, այլ պատերազմական կնճիռ:
Ես կփշրեմ ոգիդ, թեպետ և պաղ երկաթ է նա,
Բաբաններիս թափով քինախնդիր
Կխորտակեմ բերդերդ, փղերով կտրորեմ
Ծաղիկը բարձրաքիթ քո լեռների,
Քանի որ դու չեղար համեստորեն խոհեմ՝
Իմ կողքը բազմելու, պիտի կանգնես իմ դեմ՝
Իբրև շղթայակապ գերի:
Եվ արդ հանուն մեր սուրբ դաշնագրության՝
Դարձյալ առաջարկում եմ...»:

ԱՐԱ

Բավակա՛ն է: Վերջացրե՛ք:
Այսպես... Եվ փարատվեց մշուշը դյութական...
Եվ նենգությունը մեր դիմաց կանգնած է մերկ:
Ուրեմն Շամիրամ ազատ բարեկամից

Գերադասում էր սրրուկին կամակատար...
Սիրո շռայլ խոսքումներով նա կախարդել էր ինձ
Եվ երազներս խորտակեց անարգաբար:

ՆԻՐԱՐ
Արքա՛, գուցե կշռադատես քո ոճն ամեն անգամ,
Երբ նյութն է քո խոսքի աշխարհակալն Շամիրամ:

ԱՐԱ
Վերադարձե՛ք Նինվե և ասացե՛ք Շամիրամին,
Թե բռնության շնչից սիրո ծաղիկը թառամեց,
Եվ նրա տեղ աճեց ատելության կաղնին:
Եվ ասացե՛ք՝ Արան սիրում է Նուարդին,
Պատրաստ է պահպանել նրա պատիվն անեղծ:
Եթե անապատի հեղեղն է Շամիրամ,
Նուարդ Հայոց Երասխ է մաքրաջուր,
Եթե մոլեգնության հրդեհն է Շամիրամ,
Նուարդ արևն է հեզության ու բագնի հուր:
Եվ ասացեք՝ Արան չունի սովորություն
Գոռոզ ոճին պատասխանել ոճով խոնարհության:
Ահա՛ ձեզ ոճս, պատասխանս բարձրագույն,
Եվ արդ վերադարձե՛ք Ասորեստան:

ԱՐՔԱՅԱՄԱՅՐ
Քեզ աջակից Վահագն չարխափան,
Եվ աղոթքներս թիկնապահ և սիրտս քեզ վահան,
Իմ վեհանձնյա՛ որդի, իմ թանկագի՛ն...

ՆԻՐԱՐ
Ավա՜ղ, հարբել ես դու պատանությամբ և մոռացել,
Թե ո՛վ է Շամիրամ և յուր բանակն սպառնագին:

ԱՐԱ
Գնա՛ Ասորեստան և հիշեցրո՛ւ, թե ո՛վ էր Բել,
Չմոռանաս նաև աղեղնավոր Հայկին...

(Ասուրները գնում են):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քալող Հայաստան. *Արշավիր Գաբուճյան* 4

ՄԵՐ ԴՅՈՒՅԱՁՈՒՆ ՆԱԽՆԻՆԵՐԸ

Ջրհեղեղ. *Ըստ Աստվածաշնչի* 6
Հայկ. *Հայկ Խաչատրյան* 13
Հայկ և Բել.*Սողոմոն Տարոնցի* 19
Հայկի վրանը. *Արշալույս Սարոյան* 22
Ծիրանի հայրենիքը Հայաստանն է. *Հայկ Խաչատրյան* 25
Հայկի զավակներն ու թոռները. *Սարգիս Հարությունյան* 27
Հայոց հնագույն մայրաքաղաքը. *Կարեն Մուսայելյան* 29
Սիսակ. *Հայկ Խաչատրյան* 32
Արամ. *Հայկ Խաչատրյան* 35
Արա Գեղեցիկ. *Հայկ Խաչատրյան* 37
Արցախյան ավանդություն 39
Տորք անգեղ. *Ըստ Ղազարոս Աղայանի* 40

ՈԳՈՒ ՈՒԺԸ

Հայոց զանգը. *Ստեփան Կուրտիկյան* 56
Հողի բույրը. *Ըստ Սերո Խանզադյանի* 59
Պատգամ. *Ըստ Հայկ Խաչատրյանի* 61
Ջրույց ամենազոր սրբի մասին. *Ըստ Արամ Ղանալանյանի* 64
Շահանդուխտ. *Ըստ Ստեփանոս Օրբելյանի* 67
Անի քաղաքը. *Ըստ Հայկ Խաչատրյանի* 69
Քարեղեն երգ. *Ռուբինա Նազարյան, Թամար Ալեքսանյան* 71
Հեքիաթ երգի մասին. *Ըստ Վանիկ Սանթրյանի* 75
Արյունոտ մատյանը. *Ըստ Կիմ Բակշիի* 77
Լենկթեմուրի զարմանքը. *Վարդգես Պետրոսյան* 80
Թորոս Ռոսլին. *Ըստ Հայկ Խաչատրյանի* 82
Մարդն անմահ է գործով. *Ըստ Հայկ Խաչատրյանի* 84
Վաչագան. *Ըստ Ջարգանդ Դարյանի* 85
Վարդան զորավարի կաղնին. *Արտաշես Նազինյան* 87

Դրվագներ. *Ըստ Բյուզանդ Քեչյանի* 89
Իմաստուն թագուհին. *Ըստ Հայկ Խաչատրյանի* 91
Խոսքի ուժը. *Ըստ Հայկ Խաչատրյանի* 93

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ՀԱՅԻ ՈԳԻՆ

Տիգրանուհի և Աժդահակ. *Սողոմոն Տարոնցի* 96
Արտավազդ և Կլեոպատրա. *Ռուբինա Նազարյան, Թամար Ալեքսանյան* 100
Արտավազդ և Կլեոպատրա. *Սողոմոն Տարոնցի* 103
Տրդատ. *Ըստ Ագաթանգեղոսի* 105
Հայրենի հողը. *Ստեփան Կուրտիկյան* 106
Ի փառս ճերմակաձիուն. *Ըստ Ռաֆֆու* 116
Անվերնագիր. *Ըստ Ստեփան Զորյանի* 118
Կրակապաշտական օծում. *Ըստ Ստեփան Զորյանի* 121
Կրակից զորեղը. *Ստեփան Կուրտիկյան* 124
Բազուկն ու թուրը. *Ստեփան Կուրտիկյան* 128
Գայլ Վահան. *Ստեփան Ալաջաջյան* 132
Հանուն հայրենիքի. *Մուրացան* 135
Անիի հերոս պաշտպանները. *Արամ Ղանալանյան* 138
Այծյամն. *Ստեփան Կուրտիկյան* 140
Ամենափրկիչ. *Ստեփան Կուրտիկյան* 143
Աղավնու վանքը. *Հովհաննես Թումանյան* 146
Ասպետ Լիպարիտ. *Սողոմոն Տարոնցի* 148
Խոյ Հակոբը. *Ամբատ Բյուրատ* 158
Հայոց հաշիվը. *Ստեփան Կուրտիկյան* 160
Եվ անգամ մահից հետո (հատվածներ). *Ալեքսանդր Թոփչյան* 167
Պզտիկ սիրտդ. *Ռուբեն Սևակ* 201
Հայրենի հող. *Ռուբեն Սևակ* 201
Ուսուցիչը. *Հրաչյա Քոչար* 203
Արդար վրեժի ոգին. *Ըստ Վահան Մինախորյանի* 208
Վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, նաև քաղաքական-հասարակական գործիչ 210
Հատուցում. *Ըստ Աննա Պետրոսյանի «Եղերապատում» գրքի* 219
Հայ երեխաների դանիացի ծնողները. *Աշոտ Տեր-Գրիգորյան* *221*

ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Հայկ Խաչատրյան

Մինուա 226
Արգիշտի Բ 227
Ռուսա Գ 228
Հյուդարնես Գ Երվանդունի 229
Երվանդ Գ Երվանդունի 230
Սամոս Բ Երվանդունի 231
Անտիոքոս Դ Երվանդունի 232
Տիգրան Ա 233
Տիգրան Բ Մեծ 234
Արտավազդ Բ 235
Էրատո 236
Վաղարշակ 237
Զենոն և Արտաշես 238
Տրդատ Գ Մեծ 240
Խոսրով Գ 242
Աշոտ Գ Ողորմած 243
Լևոն Բ Մեծագործ 244
Զաբել 246
Լևոն Գ 247
Կոստանդին Դ 249

ԽՈՍՈՒՄ ԵՆ ԱՐՔԱՆԵՐԸ

Հայկ Խաչատրյան

Կոտիս 250
Արշակ Գ 250
Սմբատ Ա Բագրատունի 250
Սենեքերիմ - Հովհաննես 251
Աբաս Բագրատունի 252
Գուրգեն 252
Դավիթ 253
Սենեքերիմ 253
Տրդատ 254

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արարատ. *Ստեփան Կուրտիկյան*..... 256
Հայկական հրաշք. *Արշալույս Սարոյան* 263
Գեղամա լեռներ, Գեղամա ծով. Ստեփան Կուրտիկյան 264
Սևանա Լիճ. *Արամ Ղանալանյան* 267
Զրույցներ Սևանա վանքի մասին. Ըստ տարբեր աղբյուրների 268
Զանգեզուր. *Արամ Ղանալանյան* 271
Ակներ. *Սուրեն Մուրադյան* 272
Դիլիջան. *Ստեփան Կուրտիկյան* 279
Արագածի չորս կատարները. *Ստեփան Կուրտիկյան*..... 282
Աղավնատուն. *Արամ Ղանալանյան*..... 284
Գեղարդ. *Ըստ «Ո՞վ է, ի՞նչ է» հանրագիտարանի և «Շողիկ» մանկական հանդեսի* 286
Գեղարդավանք. *Ըստ Արամ Ղանալանյանի*..... 288
Տաթև. *Ստեփան Կուրտիկյան*..... 289
Արզնի. *Ստեփան Կուրտիկյան*..... 294
Արա գեղեցիկ (հատված). *Նաիրի Զարյան* 297

ՀԱՅՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմողներ՝ Լիլիթ Աշոտի Տեր - Գրիգորյան
Անժել Ներսեսի Քյուրքչյան

Հրատարակչության խմբագիր՝ Գալյա Հովհաննիսյան-Կիրակոսյան
Համակարգչային ձևավորումը՝ Լիանա Մինասյանի
Կազմի ձևավորումը՝ Արաբո Սարգսյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am